| Թեմա | Հարցի համարը | Հարց | Պատասխան |
|---|---|---|---|
| Օրենսդրություն | 1 | Համաձայն «ՀՀ Կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի, եթե ՀՀ Կենտրոնական բանկի մյուս խնդիրները հակասում են իր հիմնական խնդրին, ապա ՀՀ կենտրոնական բանկը պետք է առաջնությունը տա | ՀՀ-ում դրամի փոխարժեքի կայունության ապահովմանը, |
| | | | ՀՀ բանկային համակարգի կայունության, իրացվելիության, վճարունակության, բնականոն գործունեության ապահովմանը, |
| | | | ՀՀ-ում մակրոտնտեսական կայունության ապահովմանը, |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ: |
| | 2 | Համաձայն «ՀՀ Կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի, ՀՀ կենտրոնական բանկի հիմնական խնդիրը | ՀՀ-ում մակրոտնտեսական կայունության ապահովումն է, |
| | | | ՀՀ  բանկային համակարգի կայունության ապահովումն է, |
| | | | ՀՀ-ում գների կայունության ապահովումն է, |
| | | | ՀՀ-ում ֆինանսական կայունության ապահովումն է: |
| | 3 | Նշել սխալ պատասխանը.<br>Կենտրոնական բանկի կողմից վարկային կազմակերպությունում ստուգում իրականացնելիս վարկային կազմակերպությունը պարտավոր է | ապահովել ԿԲ վերսգող խմբի անարգել մուտք և ելք վերստուգվող վարկային կազմակերպության շենք կամ նրա առանձին ծառայողական տարածքներ, այդ թվում` սերվերային և համակարգչային, ծրագրային ապահովման այլ սենյակներ, |
| | | | ԿԲ վերստուգող խմբին տրամադրել վարկային կազմակերպության հաճախորդներից և մասնակիցներից ստացված բողոքները և առաջարկությունները, |
| | | | ԿԲ վերստուգող խմբին հատկացնել աշխատանքային տարածք, որն ապահովված է աշխատելու համար բավարար պայմաններով, ինչպես նաև տեխնիկական, կապի և այլ անհրաժեշտ միջոցներով, |
| | | | կատարել վերստուգող խմբի ղեկավարի և անդամների ցանկացած պահանջները: |
| | 4 | Վարկային կազմակերպությունները չեն կարող թողարկել. | բանկային վկայագրեր, |
| | | | փոխանցելի մուրհակներ, |
| | | | հասարակ մուրհակներ, |
| | | | արտոնյալ բաժնետոմսներ: |
| | 5 | Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, վարկային կազմակերպությունը  չի կարող ստեղծվել. | սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կազմակերպաիրավական ձևով, |
| | | | բաժնետիրական ընկերության կազմակերպաիրավական ձևով, |
| | | | առևտրային կոոպերատիվ ընկերության կազմակերպաիրավական ձևով, |
| | | | լրացուցիչ պատասխանատվությամբ ընկերության կազմակերպաիրավական ձևով: |
| | 6 | Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, վարկային կազմակերպությունը, բացառությամբ խնայողական միությունների, կարող է ստեղծվել, որպես. | սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն, |
| | | | բաժնետիրական ընկերություն, |
| | | | առևտրային կոոպերատիվ ընկերություն, |
| | | | տնտեսական ընկերակցություն: |

| | | | |
|---|---|---|---|
| | 7 | Ու՞մ կողմից կարող են սահմանափակվել «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքով նախատեսված ֆինանսական գործառնությունները. | ՀՀ արժեղթերի հանձնաժողովի կողմից, |
| | | | ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կողմից, |
| | | | ՀՀ կենտրոնական բանկի կողմից, |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ: |
| | 8 | Նշել սխալ պատասխանը.<br>Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, Կենտրոնական բանկը վարկային կազմակերպության գործունեության համար կարող է սահմանել սահմանափակումներ | թույլատրելով նրանց կողմից օրենքով սահմանված ֆինանսական գործառնությունների մի մասի իրականացումը, |
| | | | արգելելով նրանց կողմից օրենքով սահմանված բոլոր ֆինանսական գործառնությունների իրականացումը, |
| | | | սահմանափակելով այն անձանց շրջանակը, որոնցից վարկային կազմակերպությունը կարող է միջոցներ ներգրավել, |
| | | | սահմանափակելով այն անձանց շրջանակը, որոնց շրջանակում վարկային կազմակերպությունը կարող է միջոցներ տեղաբաշխել |
| | 9 | Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, Կենտրոնական բանկի կողմից վարկային կազմակերպության գործունեության համար սահմանվող սահմանափակումները պետք է նույնը լինեն. | բոլոր վարկային կազմակերպությունների համար, |
| | | | միևնույն տիպի վարկային կազմակերպությունների համար, |
| | | | միևնույն ֆինանսական գործառնություններ իրականացնող վարկային կազմակերպությունների համար, |
| | | | միևնույն կազմակերպաիրավական ձևով ստեղծված վարկային կազմակերպությունների համար: |
| | 10 | Նշել սխալ պատասխան.<br>Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, վարկային կազմակերպությունների տիպեր (խմբեր) են համարվում. | խնայողական միությունները, |
| | | | լիզինգային կազմակերպությունները, |
| | | | ֆակտորինգային կազմակերպությունները, |
| | | | որպես վարկային կազմակերպություն վերագրանցված կազմակերպությունները: |
| | 11 | Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, վարկային կազմակերպության տիպեր (խմբեր) չեն համարվում. | վարկային միությունները, |
| | | | խնայողական միությունները, |
| | | | ներդրումային ընկերությունները, |
| | | | ֆակտորինգային ընկերությունները: |
| | 12 | Նշել սխալ պատասխանը.<br>Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, վարկային կազմակերպության գործունեություն է համարվում, որպես ձեռնարկատիրական գործունեություն. | ավանդների ներգրավումը |
| | | | վարկերի տրամադրումը |
| | | | վճարային արժեթղթերի հրապարակային թողարկումը (բացառությամբ ներդրումային հիմնադրամների կողմից թողարկված |
| | | | փոխառությունների ներգրավումը |

| | | | |
|---|---|---|---|
| | 13 | Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, խնայողական միությունները դրամական միջոցներ են ներգրավում. | Հայաստանի Հանրապետությունից, |
| | | | բացառապես իրենց մասնակիցներից, |
| | | | իրենց մասնակիցներից, իսկ Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով նախատեսված դեպքերում՝ նաև այլ անձանցից, |
| | | | միջազգային կազմակերպություններից: |
| | 14 | Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, խնայողական միությունները դրամական միջոցներ են ներգրավում իրենց մասնակիցներից | իսկ Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով նախատեսված դեպքերում՝ նաև այլ անձանցից և դրանք տրամադրում իրենց մասնակիցներին և այլ անձանց, |
| | | | իսկ Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով նախատեսված դեպքերում՝ նաև այլ անձանցից և դրանք տրամադրում իրենց մասնակիցներին, |
| | | | և դրանք տրամադրում նրանց, իսկ Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով նախատեսված դեպքերում՝ նաև այլ անձանց, |
| | | | և դրանք տրամադրում նրանց: |
| | 15 | Նշել սխալ պնդումը.<br>Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, արգելվում է վարկային կազմակերպության լիցենզիա չունեցող անձանց կողմից «Վարկային կազմակերպություն» բառակապակցության կամ դրա ածանցյալների օգտագործումը | հրապարակային օֆերտայում, |
| | | | գովազդներում, |
| | | | իրենց անվանման մեջ, բացառությամբ այն դեպքերի, երբ վերոնշյալ բառակապակցության օգտագործման իմաստից բխում է, որ խոսքը վարկային գործունեությանը չի վերաբերվում, |
| | | | գովազդներում, և նմանատիպ գովազդ իրականացնողներին աջակցումը: |
| | 16 | Վարկային կազմակերպության գործունեության  կանոնակարգը հաստատվում է | ՀՀ կենտրոնական բանկի կողմից, |
| | | | վարկային կազմակերպության կառավարման բարձրագույն մարմնի կողմից, |
| | | | ՀՀ ֆինանսների նախարարության կողմից, |
| | | | վարկային կազմակերպության գործադիր մարմնի կողմից: |
| | 17 | Վարկային  կազմակերպության  գործունեության կանոնակարգով, չի սահմանվում վարկային կազմակերպության | միջոցների ներգրավման և տեղաբաշխման մեթոդները |
| | | | գործունեության տեսակը, ոլորտը, |
| | | | գործունեության կարգը |
| | | | կանոնադրական կապիտալի չափը: |
| | 18 | Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, վարկային կազմակերպությունների կանոնադրական կապիտալը վճարվում է. | Կենտրոնական բանկում բացված ընթացիկ հաշվին, |
| | | | ՀՀ տարածքում գործող առևտրային բանկում բացված ընթացիկ հաշվին, |
| | | | օտարերկրյա առևտրային բանկում բացված ընթացիկ հաշվին, |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ: |
| | 19 | Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, վարկային կազմակերպությունների կանոնադրական կապիտալը վճարվում է. | Կենտրոնական բանկում բացված ընթացիկ հաշվին, |
| | | | այլ վարկային կազմակերպությունում բացված կուտակային հաշվին, |
| | | | որևէ առևտրային բանկում բացված կուտակային հաշվին, |

| | | | |
|---|---|---|---|
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ: |
| | 20 | Նշել սխալ տարբերակը.<br>Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, վարկային կազմակերպության գրանցումը և լիցենզավորումը մերժվում է, եթե. | ամբողջությամբ վճարված չէ վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալը, |
| | | | վարկային կազմակերպությունը դրան նախորդող մեկ տարվա ընթացքում խախտել է հիմնական տնտեսական նորմատիվներից գոնե մեկը |
| | | | վարկային կազմակերպության գործունեության վայրը չի համապատասխանում Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված տեխնիկական հագեցվածության պահանջներին, |
| | | | վարկային կազմակերպությունում նշանակալից մասնակցություն ունեցող անձինք չեն ստացել Կենտրոնական բանկի |
| | 21 | ԿԲ-ն գրանցում և լիցենզավորում է վարկային կազմակերպությանը կամ մերժում է դրա գրանցումը և լիցենզավորումը օրենքով սահմանված փաստաթղթերը և տեղեկությունները ստանալու պահից | երկու ամսվա ընթացքում, |
| | | | երկու շաբաթվա ընթացքում, |
| | | | մեկ ամսվա ընթացքում, |
| | | | 15 օրվա ընթացքում: |
| | 22 | Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, վարկային կազմակերպությունը ձեռք է բերում իրավաբանական անձի կարգավիճակ. | ՀՀ պետական ռեգիստրում նրա գրանցման մասին համապատասխան գրառում կատարելու պահից, |
| | | | Կենտրոնական բանկում գրանցվելու պահից երեք օր հետո, |
| | | | Կենտրոնական բանկ գրանցման դիմում ներկայացնելու պահից, |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ: |
| | 23 | Նշել սխալ պատասխանը.<br>Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, Կենտրոնական բանկը մերժում է վարկային կազմակերպության գրանցումն ու լիցենզավորումը, եթե՝ | ներկայացվել են կեղծ տեղեկություններ, |
| | | | ներկայացվել են անարժանահավատ տեղեկություններ, |
| | | | վարկային կազմակերպության ղեկավարները չեն ստացել Կենտրոնական բանկի  համաձայնությունը, |
| | | | վարկային կազմակերպությունում նշանակալից մասնակցություն ունեցող անձինք չեն ստացել Կենտրոնական բանկի |
| | 24 | Նշեք սխալ տարբերակը.<br>ԿԲ-ն մերժում է վարկային կազմակերպության գրանցումն ու լիցենզավորումը, եթե՝ | ներկայացվել են կեղծ կամ անարժանահավատ տեղեկություններ, |
| | | | ներկայացված փաստաթղթերը թերի են, |
| | | | ներկայացված փաստաթղթերը ամբողջական չեն, |
| | | | վարկային կազմակերպության ղեկավար անձինք անցյալում վարկային գործունեությամբ չեն զբաղվելը: |
| | 25 | Վարկային կազմակերպության լիցենզիան տրվում է՝ | տաս տարով, |
| | | | երեք տարով, |
| | | | հինգ տարով, |
| | | | անժամկետ: |
| | 26 | Նշել սխալ պատասխանը.<br>Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, Վարկային կազմակերպության լիցենզիան չի կարող՝ | օտարվել, |
| | | | գրավադրվել, |
| | | | այլ անձանց տրվել օգտագործման, |
| | | | անվավեր ճանաչվել: |

| | | | |
|---|---|---|---|
| | 27 | Նշել սխալ պատասխանը.<br>Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, վարկային կազմակերպության լիցենզիայում նշվում են. | լիցենզիայի համարը, |
| | | | վարկային կազմակերպության լրիվ ֆիրմային անվանումը և կրճատ տարբերակը, |
| | | | պետական գրանցման համարը, |
| | | | թույլատրվող գործառնությունները: |
| | 28 | Նշել ճիշտ պնդումը.<br>Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, Կենտրոնական բանկը վարում է տրամադրված լիցենզիաների գրանցամատյան, | որը անվճար տրամադրվում է Հայաստանի Հանրապետությունում գործող բոլոր բանկերին և վարկային կազմակերպություններին |
| | | | որը բաց է համընդհանուր ծանոթացման համար, |
| | | | որում ներառվում են բանկային գաղտնիք կազմող տեղեկություններ, |
| | | | որում ներառվող տեղեկությունների տրամադրման կարգը սահմանում է կառավարության նորմատիվ ակտերը գրանցող կառավարության լիազորած մարմինը: |
| | 29 | ՀՀ տարածքում գործող վարկային կազմակերպությունը կարող է  ՀՀ տարածքում կամ օտարերկրյա պետություններում բացել մասնաճյուղեր և ներկայացուցչություններ, որոնք կարող են գործել | ՀՀ ԿԲ դրանց գրանցման դիմումի ներկայացման պահից, |
| | | | ՀՀ ԿԲ-ի կողմից լիցենզավորման պահից, |
| | | | ՀՀ պետական ռեգիստրում գրանցման պահից, |
| | | | ՀՀ ԿԲ-ում գրանցման պահից |
| | 30 | Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, վարկային կազմակերպության մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գրանցման կարգը սահմանվում է. | Կենտրոնական բանկի ներքին իրավական ակտերով, |
| | | | Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով, |
| | | | Կենտրոնական բանկի անհատական բնույթի իրավական ակտերով, |
| | | | բոլոր պատասխանները սխալ են: |
| | 31 | Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, վարկային կազմակերպության մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գրանցման դիմումը Կենտրոնական բանկը բավարարում կամ մերժում է. | երկու ամսվա ընթացքում, |
| | | | երկու շաբաթվա ընթացքում, |
| | | | մեկ ամսվա ընթացքում, |
| | | | մեկ ամսվա ընթացքում, սակայն Կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ դիմումի քննության մեկամսյա ժամկետը կարող է |
| | 32 | Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, վարկային կազմակերպության մասնաճյուղերի գրանցման դեպքում Կենտրոնական բանկը տալիս է. | գրանցման վկայական |
| | | | համապատասխան լիցենզիա, |
| | | | հաշվառման վկայական, |
| | | | իր համաձայնությունը: |
| | 33 | Նշել ճիշտ պնդումը.<br>Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, վարկային կազմակերպության մասնաճյուղերի գրանցման դիմումի մերժման դեպքում  Կենտրոնական բանկը | ետ է վերադարձնում դիմումը վարկային կազմակերպությանը, |
| | | | եռօրյա ժամկետում հիմնավորում է իր որոշումը, |
| | | | մերժման հիմքերի մասին հնգօրյա ժամկետում տեղեկացնում է վարկային կազմակերպությանը, |
| | | | ետ է վերադարձնում դիմումը և մերժման հիմքերի մասին եռօրյա ժամկետում տեղեկացնում է վարկային կազմակերպությանը: |

| | | | |
|---|---|---|---|
| | 34 | Նշել սխալ պատասխանը. Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, Կենտրոնական բանկը մերժում է մասնաճյուղի գրանցման դիմումը, եթե` | ներկայացվել են կեղծ տեղեկություններ, |
| | | | ներկայացվել են անարժանահավատ տեղեկություններ, |
| | | | ներկայացված փաստաթղթերը ամբողջական չեն, |
| | | | մասնաճյուղի հիմնադրումն աննպատակահարմար է: |
| | 35 | Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, Կենտրոնական բանկի կողմից վարկային կազմակերպության մասնաճյուղը  գրանցումից հանվում է` | վարկային կազմակերպության հիմնադիրների ժողովի որոշման հիման վրա` որոշման ընդունման պահից մեկշաբաթյա ժամկետում, |
| | | | մասնաճյուղի լուծարման դեպքում, |
| | | | վարկային կազմակերպության դիմումի հիման վրա` դիմումի տրման պահից հինգ աշխատանքային օրվա ընթացքում, |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ: |
| | 36 | Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, վարկային կազմակերպությունը չի կարող. | տրամադրել երաշխիքներ, |
| | | | ընդունել ցպահանջ և ժամկետային ավանդներ, |
| | | | մատուցել ֆինանսական խորհրդատվություն, |
| | | | գնել և վաճառել արտարժույթ, այդ թվում` կնքել դրամի և արտարժույթի ֆյուչերսներ, օպցիոններ և նման այլ գործարքներ: |
| | 37 | Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի` վարկային կազմակերպությունը կարող է տրամադրել | բացառապես ձեռնարկատիրական վարկեր կամ փոխառություններ` Կենտրոնական բանկի սահմանած կարգով և պայմաններով, |
| | | | բացառապես ձեռնարկատիրական վարկեր կամ փոխառություններ, իսկ սպառողական վարկերը կամ փոխառությունները` Կենտրոնական բանկի սահմանած կարգով և պայմաններով, |
| | | | բացառապես սպառողական վարկեր և փոխառություններ, իսկ ձեռնարկատիրական վարկեր կամ փոխառությունները` Կենտրոնական բանկի սահմանած կարգով և պայմաններով, |
| | | | բոլոր պատասխանները սխալ են |
| | 38 | Վարկային կազմակերպությունների գործունեությունը կարգավորող օրենսդրության իմաստով սպառողական վարկի կամ փոխառության տրամադրում է համարվում այն գործարքի կնքումն ու կատարումը, որով | պարտապանը ստացված միջոցները կարող է օգտագործել ինչպես սպառողական, այնպես էլ ձեռնարկատիրական նպատակներով, |
| | | | պարտապանը ստացված միջոցներն օգտագործելու է բացառապես սպառողական նպատակներով, որոնք կապված չեն իր ձեռնարկատիրական գործունեության հետ, |
| | | | պարտապանը ստացված միջոցներն օգտագործելու է բացառապես ձեռնարկատիրական նպատակներով, |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ: |
| | 39 | Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, վարկային կազմակերպությունը չի կարող. | տրամադրել վարկեր և փոխառություններ, |
| | | | իրականացնել արտադրական, առևտրային կամ լիցենզավորման ենթակա այլ գործունեություն, |
| | | | մատուցել ֆինանսական գործակալի ծառայություններ, |
| | | | տրամադրել երաշխիքներ: |
| | 40 | Նշել սխալ պատասխանը. Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, վարկային կազմակերպությանն արգելվում է իրականացնել | առևտրային գործունեություն, |
| | | | արտադրական գործունեություն, |
| | | | պարտքերի հետստացման գործունեություն |
| | | | ապահովագրական գործունեություն: |

| | | | |
|---|---|---|---|
| | 41 | Նշել սխալ պատասխանը.<br>Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, վարկային կազմակերպության ղեկավարներ են վարկային կազմակերպության. | գործադիր տնօրենը, |
| | | | վերստուգիչ հանձնաժողովի անդամները, |
| | | | գլխավոր հաշվապահը, |
| | | | մասնաճյուղի կառավարիչը: |
| | 42 | Նշել սխալ տաբերակը.<br>Վարկային կազմակերպության ղեկավարներ են վարկային կազմակերպության` | խորհրդի (տնօրենների կամ դիտորդ խորհրդի) նախագահը, նրա տեղակալը և խորհրդի անդամները, |
| | | | գործադիր տնօրենը, նրա տեղակալը, |
| | | | գործադիր տնօրենը, նրա տեղակալը, վարչության նախագահը, նրա տեղակալը, վարչության  անդամները, մասնաճյուղի գլխավոր հաշվապահը, մասնաճյուղի գլխավոր հաշվապահի տեղակալը, |
| | | | վարչության նախագահը, նրա տեղակալը, վարչության  անդամները: |
| | 43 | Նշել սխալ տարբերակը.<br>Վարկային կազմակերպության ղեկավար չեն կարող լինել. | դիտավորությամբ կատարված հանցագործությունների համար դատվածություն ունեցող անձինք, |
| | | | դատարանի կողմից ֆինանսական, բանկային, հարկային, մաքսային, առևտրային, տնտեսական, իրավական ոլորտներում պաշտոններ վարելու իրավունքից զրկված անձինք, |
| | | | սնանկ ճանաչված և չմարված (չներված) պարտավորություններ ունեցող անձինք, |
| | | | անձինք, որոնք քրեական գործով ներգրավված են որպես վկաներ |
| | 44 | Նշել սխալ պատասխանը.<br>Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, վարկային կազմակերպության ղեկավարներ չեն կարող լինել` | դիտավորությամբ կատարված հանցագործությունների համար դատվածություն ունեցող անձինք, |
| | | | սնանկ ճանաչված և չմարված պարտավորություններ ունեցող |
| | | | քրեական գործով որպես կասկածյալ, մեղադրյալ , վկա կամ ամբաստանյալ ներգրավված անձինք |
| | | | ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով  սահմանափակ գործունակ ճանաչված անձինք |
| | 45 | Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, նշված անձանցից որի որակավորման և մասնագիտական  համապատասխանության չափանիշները չի սահմանում ՀՀ կենտրոնական բանկը` | վարկային կազմակերպության վարչության նախագահի տեղակալի, |
| | | | վարկային կազմակերպության գլխավոր հաշվապահի տեղակալի, |
| | | | վարկային կազմակերպության վերստուգիչ հանձնաժողովի նախագահի տեղակալի, |
| | | | կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարի: |
| | 46 | Նշված պնդումներից որն է սխալ.<br>Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, | անձը կարող է վարկային կազմակերպության ղեկավար աշխատել Կենտրոնական բանկում գրանցվելու պահից, |
| | | | վարկային կազմակերպության ղեկավար գրանցվելու համար անձը պետք է ունենա վարկային կազմակերպության ղեկավարի որակավորման, մասնագիտական համապատասխանության վկայական, |
| | | | վարկային կազմակերպության ղեկավարի գրանցումը կատարվում է դիմելու պահից երեք աշխատանքային օրվա ընթացքում, |
| | | | վարկային կազմակերպության վերստուգիչ հանձնաժողովի անդամների որակավորման, մասնագիտական համապատասխանության չափանիշները և կարգը սահմանում է Կենտրոնական բանկը: |
| | 47 | Նշել սխալ պատասխանը.<br>Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, վարկային կազմակերպությունները պարտավոր են իրենց կանոնադրության մեջ պարտադիր ներառել դրույթներ. | տնօրենների խորհրդի և վերստուգիչ խմբի ֆունկցիաների տարանջատման վերաբերյալ, |

| | | | |
|---|---|---|---|
| | | | արտաքին աուդիտի  իրականացման մեխանիզմների վերաբերյալ, |
| | | | հաշվապահական հաշվառման, հաշվետվությունների ներկայացման սկզբունքների վերաբերյալ, |
| | | | գլխավոր հաշվապահի և գլխավոր ֆինանսական մասնագետի ֆունկցիաների վերաբերյալ: |
| | 48 | ՀՀ տարածքում գործող վարկային կազմակերպությունները պարտավոր չեն ՀՀ կենտրոնական բանկի գրանցմանը ներկայացնել՝ | գործադիր տնօրենի փոփոխությունը, |
| | | | կանոնադրությունում կատարված փոփոխությունները, |
| | | | վարկային կազմակերպության վարկային վարչության պետի փոփոխությունը, |
| | | | վերստուգիչ հանձնաժողովի անդամների կազմում կատարված փոփոխությունները: |
| | 49 | Անձը կամ փոխկապակցված անձինք մեկ կամ մի քանի գործարքների հետևանքով վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալում կարող են նշանակալից մասնակցություն ձեռք բերել. | վարկային կազմակերպության հիմնադիրների նախնական համաձայնությամբ, |
| | | | Կենտրոնական բանկի և  ՀՀ արդարադատության նախարարության նախնական համաձայնությամբ, |
| | | | առանց Կենտրոնական բանկի նախնական համաձայնության, |
| | | | միայն Կենտրոնական բանկի նախնական համաձայնությամբ: |
| | 50 | Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, նշանակալից մասնակցություն ունեցող անձ է համարվում վարկային կազմակերպության | ընդհանուր կապիտալի 10 և ավելի տոկոսը գերազանցող մասնակցություն ունեցող անձը, |
| | | | կանոնադրական կապիտալի 10 և ավելի տոկոսը գերազանցող մասնակցություն ունեցող անձը, |
| | | | հիմնական կապիտալի 10 և ավելի տոկոսը գերազանցող մասնակցություն ունեցող անձը, |
| | | | ճիշտ տարբերակը նշված չէ: |
| | 51 | Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի իմաստով նշանակալից է համարվում վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալում այնպիսի մասնակցությունը, որի դեպքում մասնակիցն ունի կանոնադրական կապիտալի | տաս և ավելի տոկոսը կազմող մասնակցություն, |
| | | | տասնմեկ տոկոսը գերազանցող մասնակցություն, |
| | | | մինչև տաս տոկոսը, սակայն Կենտրոնական բանկի կարծիքով այդ մասնակցությամբ ուղղակիորեն կամ անուղղակիորեն հնարավորություն ունի կանխորոշել վարկային կազմակերպության կառավարման մարմինների որոշումները, |
| | | | մինչև քսան տոկոսը կազմող մասնակցություն: |
| | 52 | Նշանակալից մասնակցություն ձեռք բերելու համար ՀՀ  ԿԲ կողմից սահմանած կարգով փաստաթղթերը և տեղեկությունները ստանալու պահից,  Կենտրոնական բանկը քննում է | մեկամսյա ժամկետում, որը կարող է ՀՀ ԿԲ խորհրդի որոշմամբ կասեցվել, բայց ոչ ավելի, քան 3 ամիս ժամկետով, |
| | | | եռամսյա ժամկետը չգերազանցող ժամկետում, |
| | | | մեկշաբաթյա ժամկետում, |
| | | | տասնօրյա ժամկետում: |
| | 53 | Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու դիմումը մերժելու դեպում Կենտրոնական բանկը | դիմումը ետ է վերադարձնում դիմողին |
| | | | եռօրյա ժամկետում հիմնավորում է իր որոշումը, |
| | | | մերժման հիմքերի մասին հնգօրյա ժամկետում տեղեկացնում է դիմողին, ընդ որում, այդ ժամկետը կարող է ՀՀ ԿԲ խորհրդի որոշմամբ կասեցվել, բայց ոչ ավելի, քան 5 օր ժամկետով: |
| | | | մերժման մասին որոշում կայացնելու պահից տասնօրյա ժամկետում ծանուցում է դիմողին: |

| | | | |
|---|---|---|---|
| | 54 | Նշել սխալ պատասխանը.<br>Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, Կենտրոնական բանկը մերժում է վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու դիմումը, եթե՝ | անձը դիտավորությամբ կատարված հանցագործություն կատարելու համար ունի դատվածություն, |
| | | | անձը ճանաչվել է սնանկ և ունի չմարված պարտավորություններ, |
| | | | անձը քրեական գործով ներգրավված է որպես մեղադրյալ կամ վկա, |
| | | | անձը վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալում ներդրվելիք միջոցները Կենտրոնական բանկի հիմնավորված կարծիքով ձեռք է բերել ոչ օրինական ճանապարհով: |
| | 55 | Նշել սխալ պատասխանը.<br>Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, Կենտրոնական բանկը մերժում է վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու դիմումը, եթե՝ | անձը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ |
| | | | անձը դիտավորությամբ կատարված հանցագործություն կատարելու համար ունի դատվածություն, |
| | | | անձն այլ վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունի, |
| | | | տվյալ գործարքն ուղղված է, հանգեցնում է կամ կարող է հանգեցնել ազատ տնտեսական մրցակցության սահմանափակմանը: |
| | 56 | Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին»  ՀՀ օրենքի, ներքոհիշյալ որ դեպքում ֆիզիկական կամ իրավաբանական անձը փոխկապակցված չէ վարկային կազմակերպության հետ | իրավաբանական անձի կառավարման մարմնի անդամների մեկ երրորդը միաժամանակ հանդիսանում է վարկային կազմակերպության կառավարման մարմնի անդամ, |
| | | | ֆիզիկական անձը հանդիսանում է վարկային կազմակերպության բաժնետոմսերի 5 տոկոսի սեփականատեր և չունի օրենքով սահմանված այլ ձևով վարկային կազմակերպության որոշումները կանխորոշելու իրավունք, |
| | | | ֆիզիկական անձը վարկային կազմակերպության գործադիր տնօրենի եղբորորդին է, |
| | | | իրավաբանական անձի մասնակիցը (տիրապետում է բաժնետոմսերի 20 տոկոսին) տիրապետում է վարկային կազմակերպության բաժնետոմսերի 5 տոկոսին և ունի վարկային կազմակերպության որոշումները կանխորոշելու հնարավորություն: |
| | 57 | Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, ներքոհիշյալ անձանցից որը չի համարվում վարկային կազմակերպության հետ կապված անձ. | վարկային կազմակերպության գործադիր տնօրենը, |
| | | | վարկային կազմակերպության ղեկավարի հետ փոխկապակցված իրավաբանական անձը, |
| | | | վարկային կազմակերպության բաժնետեր հանդիսացող ֆիզիակական անձը, որի մասնակցությունը վարկային կազմակերպության կանոնադրական հիմնադրամում կազմում է 5 տոկոս և չունի օրենքով սահմանված այլ ձևով վարկային կազմակերպության որոշումները կանխորոշելու իրավունք, |
| | | | վարկային կազմակերպության հետ փոխկապակցված ֆիզիկական անձը: |
| | 58 | Վարկային կազմակերպության գործունեությունը կարգավորող օրենքների իմաստով իրավաբանական անձինք համարվում են փոխկապակցված, եթե | սպասարկվում են կամ ունեն հաշիվներ միևնույն առևտրային բանկում, |
| | | | նրանցից մեկը քվեարկելու իրավունքով տիրապետում է մյուսի՝ ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի 20 և ավելի տոկոսին, |
| | | | նրանցից մեկի գործադիր տնօրենը հանդիսանում է մյուսի՝ նման պարտականություններ կատարող անձ, |
| | | | բոլոր պատասխաններն էլ ճիշտ են: |

| | | | |
|---|---|---|---|
| | 59 | Նշել սխալ պատասխանը.<br>Վարկային կազմակերպության գործունեությունը կարգավորող օրենքների իմաստով ֆիզիկական անձինք համարվում են փոխկապակցված, եթե | միևնույն ընտանիքի անդամ են, |
| | | | աշխատում են վարկային կազմակերպության միևնույն ստորաբաժանումում, |
| | | | գործել են համաձայնեցված՝ ելնելով ընդհանուր տնտեսական |
| | | | վարում են ընդհանուր տնտեսություն: |
| | 60 | Նշեք սխալ տարբերակը.<br>Վարկային կազմակերպության հետ կապված են համարվում վարկային կազմակերպության | կապիտալում մասնակցություն ունեցող անձինք, |
| | | | կապիտալում նշանակալից մասնակցություն ունեցող անձանց հետ համագործակցող անձինք, |
| | | | կապիտալում նշանակալից մասնակցություն ունեցող անձանց հետ փոխկապակցված անձինք, |
| | | | ղեկավարների հետ փոխկապակցված անձինք: |
| | 61 | Նշել ճիշտ պատասխանը.<br>Կենտրոնական բանկը վարկային կազմակերպության նկատմամբ որ պատժամիջոցը չի կիրառում | տույժ ու տուգանք, |
| | | | նախազգուշացում և խախտումները վերացնելու հանձնարարական, |
| | | | վարկային կազմակերպության ղեկավարի որակավորման վկայականից զրկում, |
| | | | լիցենզիայի ուժը կորցրած ճանաչում: |
| | 62 | Տնտեսական նորմատիվի յուրաքանչյուր խախտման համար վարկային կազմակերպության նկատմամբ կիրառվող տուգանքի չափը չի կարող գերազանցել | ՀՀ ԿԲ կողմից սահմանված նվազագույն կանոնադրական հիմնադրամի 5 տոկոսը, |
| | | | նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկը, |
| | | | ՀՀ ԿԲ կողմից սահմանված նվազագույն կանոնադրական հիմնադրամի 1 տոկոսը, |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ: |
| | 63 | Նշեք սխալ պնդումը. | ԿԲ-ն կարող է սահմանել տուգանք վարկային կազմակերպության ղեկավարների նկատմամբ՝ ԿԲ-ի վերստուգումներին խոչընդոտելու համար, |
| | | | ԿԲ-ն կարող է սահմանել տուգանք վարկային կազմակերպության ղեկավարների նկատմամբ հաշվետվությունները ուշ ներկայացնելու համար, |
| | | | ԿԲ-ն կարող է սահմանել տուգանք  վարկային կազմակերպության ղեկավարների նկատմամբ հաշվետվություններում անարժանահավատ տեղեկություններ արտացոլելու համար, |
| | | | վարկային կազմակերպության ղեկավարների վրա դրված տուգանքները գանձվում են նրանց անձնական միջոցներից հօգուտ ՀՀ ԿԲ-ի |
| | 64 | Վարկային կազմակերպության ղեկավարները զրկվում են որակավորման վկայականից. | Կենտրոնական բանկի որոշմամբ, |
| | | | վարկային կազմակերպության հիմնադիրների որոշմամբ, |
| | | | Կենտրոնական բանկի որոշմամբ՝ վարկային կազմակերպության խոշոր պարտատերերի պահանջով, |
| | | | նշված պատասխաններից ոչ մեկը ճիշտ չէ: |
| | 65 | Նշեք սխալ պատասխանը.<br>Վարկային կազմակերպության ղեկավարները զրկվում են որակավորման վկայականից, եթե նրանք | ոչ միտումնավոր կերպով խախտել են օրենքները և այլ իրավական ակտերը, |
| | | | չեն համապատասխանում  ԿԲ-ի կողմից սահմանված որակավորման չափանիշներին, |
| | | | անազնիվ վերաբերմունք են  դրսևորել իրենց ծառայողական պարտականությունների նկատմամբ, |

| | | | |
|---|---|---|---|
| | | | անտեսել են ԿԲ-ի նախազգուշացումը: |
| | 66 | ՀՀ ԿԲ-ի կողմից վարկային կազմակերպության մասնաճյուղի գրանցման դիմումը մերժելու հիմք չի կարող հանդիսանալ՝ | կեղծ կամ անարժանահավատ տեղեկությունների ներկայացումը, |
| | | | ներկայացված փաստաթղթերի թերի, ոչ ամբողջական լինելը կամ ՀՀ օրենքներին և այլ իրավական ակտերին հակասելը, |
| | | | դիմումի քննարկման ժամանակահատվածի ընթացքում վարկային կազմակերպության կողմից հիմնական տնտեսական նորմատիվներից թեկուզ մեկի խախտելը, |
| | | | տվյալ տարածքում այլ վարկային կազմակերպությունների մասնաճյուղերի առկայությունը: |
| | 67 | Նշեք սխալ պատասխանը.<br>ՀՀ տարածքում գործող վարկային կազմակերպությունները գրանցման և լիցենզավորման համար ՀՀ ԿԲ են ներկայացնում՝ | վարկային կազմակերպության գրանցման և լիցենզավորման դիմումը |
| | | | վարկային կազմակերպության կանոնադրությունը՝ վեց օրինակից |
| | | | վարկային կազմակերպության ղեկավարների գործունեության մասին տեղեկանք՝ կազմված ԿԲ-ի սահմանված ձևով. |
| | | | մասնաճյուղի գործունեության հաստատված կանոնակարգը՝ ԿԲ-ի սահմանած ձևով |
| | 68 | Նշեք սխալ պատասխանը.<br>Վարկային կազմակերպության լիցենզիան ուժը կորցրած կարող է ճանաչվել, եթե | վարկային կազմակերպությունն իրականացնում է անհիմն ու վտանգավոր գործունեություն, |
| | | | վարկային կազմակերպությունը ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված ժամկետում չի կատարել  ՀՀ Կենտրոնա-կան բանկի՝ խախտումները վերացնելու մասին հանձնարարականը, |
| | | | դադարել է վարկային կազմակերպության գործունեությունը, |
| | | | վարկային կազմակերպության լիցենզիա ստանալուց հետո մեկ տարվա ընթացքում վարկային կազմակերպությունը գործունեություն չի իրականացրել, |
| | 69 | Նշեք սխալ պատասխանը.<br>Վարկային կազմակերպության լիցենզիան ուժը կորցրած կարող է ճանաչվել, եթե | դրա գրանցման և լիցենզավորման ընթացքում ներկայացվել են կեղծ տեղեկություններ, |
| | | | վարկային կազմակերպությունը ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված ժամկետում չի կատարել  ՀՀ Կենտրոնա-կան բանկի՝ խախտումները վերացնելու մասին հանձնարարականը, |
| | | | դադարել է վարկային կազմակերպության գործունեությունը, |
| | | | վարկային կազմակերպությունը գործունեություն է ծավալում բարձր ռիսկային ոլորտներում: |
| | 70 | Վարկային կազմակերպության լիցենզիան ուժը կորցրած է ճանաչվում՝ | Կենտրոնական բանկի լիցենզավորման հանձնաժողովի որոշմամբ, |
| | | | Կենտրոնական բանկի նախագահի որոշմամբ, |
| | | | Կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ, |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ: |
| | 71 | Նշեք ամբողջական տարբերակը.<br>Նշվածներից (որը) որոնք չունեն իրավաբանական անձի կարգավիճակ.<br>(ա) վարկային կազմակերպությունները,<br>(բ) վարկային կազմակերպության մասնաճյուղերը,<br>(գ) վարկային կազմակերպության ներկայացչությունները: | միայն (ա)  և (բ), |
| | | | միայն (բ)  և (գ), |
| | | | միայն (ա)  և (գ), |
| | | | (ա) և (բ) և (գ): |
| | 72 | Վարկային կազմակերպության ներկայացուցչությունը | ՀՀ կենտրոնական բանկի թույլտվությամբ կարող է իրականացնել որոշ ֆինանսական գործառնություններ, |

| | | | |
|---|---|---|---|
| | | | ներկայացնում է վարկային կազմակերպությունը, ուսումնասիրում է ֆինանսական շուկան, վարկային կազմակերպության անունից կնքում է պայմանագրեր, իրականացնում է համանման այլ գործառույթներ, |
| | | | վարկային կազմակերպության կողմից տրված լիազորությունների շրջանակներում կարող է իրականացնել ֆինանսական գործառնություններ, |
| | | | ՀՀ կենտրոնական բանկի թույլտվությամբ կարող է իրականացնել բոլոր ֆինանսական գործառնությունները: |
| | 73 | Նշել ճիշտ պատասխանը.<br>Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, պահանջվում է ԿԲ նախնական համաձայնությունը. | վարկային կազմակերպության կողմից իր բաժնետոմսերը գրավ ընդունելով՝ վարկեր տրամադրելիս, |
| | | | փաստացի համալրված կանոնադրական հիմնադրամը նվազեցնելիս, |
| | | | վարկային կազմակերպության ՀՀ տարածքում մասնաճյուղ կամ ներկայացչություն բացելիս |
| | | | բոլոր պատասխանները սխալ են: |
| | 74 | Վարկային կազմակերպության հիմնական կապիտալը, դա վարկային կազմակերպության | կանոնադրական հիմնադրամի և լրացուցիչ կապիտալների հանրագումարն է, |
| | | | ընդհանուր և լրացուցիչ կապիտալների հանրագումարն է, |
| | | | ընդհանուր և լրացուցիչ կապիտալների տարբերությունն է, |
| | | | պարտավորությունների և ակտիվների տարբերությունն է: |
| | 75 | Վարկային կազմակերպության լրացուցիչ կապիտալը, դա վարկային կազմակերպության | ընդհանուր և հիմնական կապիտալների հանրագումարն է, |
| | | | հիմնական կապիտալի և կանոնադրական հիմնադրամի տարբերությունն է, |
| | | | ընդհանուր և հիմնական կապիտալների տարբերությունն է |
| | | | ակտիվների և պարտավորությունների տարբերությունն է: |
| | 76 | Վարկային կազմակերպության կապիտալի համարժեքության նորմատիվը | ընդհանուր կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների միջև սահմանային հարաբերակցությունն է, |
| | | | կանոնադրական հիմնադրամի և ռիսկով կշռված ակտիվների միջև սահմանային հարաբերակցությունն է, |
| | | | լրացուցիչ կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների միջև սահմանային հարաբերակցությունն է, |
| | | | հիմնական կապիտալի և բարձր իրացվելի ակտիվների միջև սահմանային հարաբերակցությունն է: |
| | 77 | Նշված օրենսդրության խախտումներից որի դեպքում վարկային կազմակերպության նկատմամբ նշանակված տուգանքի չափը մաքսիմալ է՝ | կապիտալի համարժեքության նորմատիվի խախտման դեպքում, |
| | | | ԿԲ ներկայացվող հաշվետվություններում անարժանահավատ տեղեկատվություն արտացոլելու դեպքում, |
| | | | ԿԲ հանձնարարականները չկատարելու դեպքում, |
| | | | չհիմնավորված ռիսկային գործունեություն վարելու դեպքում: |
| | 78 | Տնտեսական նորմատիվի յուրաքանչյուր խախտման համար, ԿԲ ներկայացվող հաշվետվությունները ուշացնելու համար վարկային կազմակերպության նկատմամբ կիրառվող տուգանքի չափը չի կարող գերազանցել՝ | ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված նվազագույն կանոնադրական հիմնադրամի հինգ տոկոսը, |
| | | | նվազագույն աշխատավարձի 100 պատիկը, |
| | | | նվազագույն աշխատավարձի 1000 պատիկը, |
| | | | նվազագույն աշխատավարձի 2000 պատիկը, |
| | 79 | Նշված որ դեպքերում վարկային կազմակերպությունների ղեկավարների նկատմամբ կարող է նշանակվել տուգանք. | արտարժույթի տնօրինման նորմատիվի խախտման դեպքում, |
| | | | ԿԲ հանձնարարականները չկատարելու դեպքում, |
| | | | վարկային կազմակերպության կողմից լիցենզիա ստանալուց հետո մեկ տարվա ընթացքում վարկային գործունեություն չիրականացնելու դեպքում, |

| | | | |
|---|---|---|---|
| | | | նշված բոլոր դեպքերում էլ վարկային կազմակերպությունների ղեկավարների (բացառությամբ խորհրդի անդամների) նկատմամբ կարող է նշանակվել տուգանք: |
| | 80 | Նշված անձանցից որին ԿԲ-ն չի կարող տուգանել | վարկային կազմակերպության գործադիր տնօրենին, |
| | | | վարկային կազմակերպության գլխավոր հաշվապահին, |
| | | | վարկային կազմակերպության մարքեթինգային դեպարտամենտի ղեկավարին |
| | | | նշվածներից յուրաքանչյուրին ԿԲ-ն իրավասու է տուգանել: |
| | 81 | Վարկային կազմակերպությունը կարող է ճանաչվեն անվճարունակ, եթե վարկային կազմակերպությունը | ԿԲ կողմից սահմանված պարբերականությամբ խախտել է կապիտալի համարժեքության նորմատիվները, |
| | | | նախորդ երեք տարվա ընթացքում շահաբաժիններ չի բաշխել, |
| | | | ԿԲ կողմից սահմանված պարբերականությամբ խախտել է ընդհանուր կապիտալի նվազագույն չափի նորմատիվը, |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ: |
| | 82 | Վարկային կազմակերպությունը կարող է ճանաչվել անվճարունակ, եթե.<br>ա) ի վիճակի չէ բավարարել իր պարտատերերի օրինական պահանջները,<br>բ) սպառել է իր հիմնական կապիտալի 50 տոկոսը կամ ավելին,<br>գ) ԿԲ կողմից սահմանված պարբերականությամբ խախտել է ընդհանուր կապիտալի նվազագույն չափի նորմատիվը, | միայն գ) տարբերակը |
| | | | միայն ա) և բ) տարբերակները |
| | | | միայն ա) և գ) տարբերակները |
| | | | նշված բոլոր պատասխանները ճիշտ են |
| | 83 | Նշել ճիշտ պատասխանը.<br>«Բանկերի, վարկային կազմակերպությունների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» ՀՀ օրենքով սահմանված անվճարունակության հիմքերից որևէ մեկը բացահայտելու դեպքում ԿԲ-ն երկշաբաթյա ժամկետում կարող է.<br>(ա) վարկային կազմակերպությունում նշանակել ժամանակավոր ադմինիստրացիայի ղեկավար,<br>(բ) վարկային կազմակերպության սնանկության մասին դիմում ներկայացնել դատարան,<br>(գ) վարկային կազմակերպության լիցենզիան ճանաչել անվավեր,<br>(դ) վարկային կազմակերպության լիզենզիան ուժը կորցրած ճանաչել, | միայն (ա) կամ (գ) |
| | | | միայն (ա) կամ (բ) |
| | | | միայն (բ) և (գ) |
| | | | միայն (ա) և (դ) |
| | 84 | Նշել ճիշտ տարբերակը.<br>Վարկային կազմակերպության սնանկության մասին դիմումով ԿԲ-ը դատարան է դիմում, եթե<br>(ա) առկա են վարկային կազմակերպությունն անվճարունակ ճանաչելու հիմքերից որևէ մեկը,<br>(բ) վարկային կազմակերպությունը` ժամանակավոր ադմինիստրացիայի գործունեության ընթացքում, ԿԲ կողմից սահմանված պարբերականությամբ խախտել է հիմնական տնտեսական նորմատիվները,<br>(գ) ժամանակավոր ադմինիստրացիայի գործունեության ընթացքում ԿԲ-ին ակնհայտ է դառնում, որ վարկային կազմակերպությունը լուծարվելու դեպքում հնարավոր է պահպանել վարկային կազմակերպության միջոցների ավելի մեծ քանակ, քան ադմինիստարացիայի գործունեությունը շարունակելիս, | միայն (ա) և (բ), |
| | | | միայն (բ) և (գ), |
| | | | միայն (գ), |
| | | | միայն (ա) և/կամ (գ): |
| | 85 | Վարկային կազմակերպությունում ժամանակավոր ադմինիստրացիա նշանակում է | ՀՀ կենտրոնական բանկը, |
| | | | ՀՀ ԿԲ ներկայացմամբ` դատարանը, |

| | | | |
|---|---|---|---|
| | | | ՀՀ արդարադատության նախարարությունը, |
| | | | վարկային կազմակերպության ներկայացմամբ` ՀՀ կենտրոնական բանկը: |
| | 86 | Ստորև թվարկվածներից ինչը՞ չի մտնում վարկային կազմակերպության ժամանակավոր ադմինիստրացիայի ղեկավարի իրավասությունների մեջ` | ժամանակավոր ադմինիստրացիայի կազմի հաստատումը, |
| | | | ֆինանսական առողջացման ծրագրից բխող, վարկային կազմակերպության անունից պայմանագրերի կնքումը, վարկային կազմակերպության ղեկավարներին և աշխատակիցներին աշխատանքից ազատումը |
| | | | ֆինանսական առողջացման ծրագրի ներկայացումը, դրանում փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ առաջարկությունների ներկայացումը Կենտրոնական բանկ, |
| | | | վարկային կազմակերպության վարկային և դեբիտորական պարտքերի գանձման ուղղությամբ միջոցների ձեռնարկումը: |
| | 87 | Բանկի կողմից բանկային գաղտնիք կազմող տեղեկությունների հրապարակում է համարվում նման տեղեկատվության տրամադրումը | բանկերին, |
| | | | ՀՀ բանկերի միությանը, |
| | | | բանկին աուդիտորական ծառայություն մատուցող աուդիտորական ընկերությանը, |
| | | | վարկային կազմակերպությանը: |
| | 88 | Նշել ամբողջական պատասխանը.<br>Որ դեպքերում է առկա բանկային գաղտնիք կազմող տեղեկատվության հրապարակում`<br>(ա) վարկային կազմակերպության կողմից ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններում բանկային գաղտնիք կազմող տեղեկատվության հրապարակումը,<br>(բ) ԿԲ կողմից խոշոր պարտավորություններ ունեցող անպարտաճանաչ պարտապանների անվանումների հրապարակումը,<br>(գ) ՀՀ Բանկերի միության կողմից բանկերի հանդեպ խոշոր պարտավորություններ ունեցող անպարտաճանաչ պարտապանների անվանումների հրապարակումը, | միայն (ա), |
| | | | միայն (բ), |
| | | | միայն (գ), |
| | | | (ա) և (գ): |
| | 89 | Բանկերը բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները տրամադրում են հաճախորդի ժառանգներին, եթե վերջիններս ` | ներկայացրել են ՀՀ կենտրոնական բանկի թույլտվությունը, |
| | | | ներկայացրել են ժառանգության իրավունքները հիմնավորող բավարար փաստաթղթեր, |
| | | | ներկայացրել են ՀՀ արդարադատության նախարարության համապատասխան որոշումը տեղեկությունները տրամադրելու վերաբերյալ, |
| | | | բոլոր պատասխանները ճիշտ են: |
| | 90 | Բանկերը կարող են իրենց հաճախորդների մասին բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները միմյանց տրամադրել` | ինքնուրույնաբար, առանց որևէ համաձայնության, |
| | | | ինքնուրույնաբար իսկ վարկային կազմակերպություններին` Կենտրոնական բանկի համաձայնությամբ, |
| | | | միայն հաճախորդի գրավոր համաձայնությամբ, |
| | | | միայն դատարանի որոշմամբ: |
| | 91 | Ստորև նշվածներից ո՞ր պնդումն է սխալ. | վարկը կարող է տրամադրել միայն բանկը կամ վարկային կազմակերպությունը, իսկ փոխառություն` ցանկացած անձ, |
| | | | փոխառությունը կարող է տրամադրվել թե տոկոսով, թե առանց տոկոս, վարկը կարող է տրամադրվել միայն տոկոսով, |

| | | | |
|---|---|---|---|
| | | | վարկային պայմանագիրը կնքվում է միայն գրավոր, իսկ փոխառության պայմանագիրը` թե՛ գրավոր և թե՛ բանավոր ձևով, |
| | | | փոխառության պայմանագիրը կնքված է համարվում դրամ կամ այլ գույք հանձնելու պահից: |
| | 92 | Վարկեր կարող են տալ | միայն բանկերը, |
| | | | միայն վարկային կազմակերպությունները, |
| | | | միայն բանկերը և այլ վարկային կազմակերպությունները, |
| | | | ցանկացած անձ կամ կազմակերպություն: |
| | 93 | Նշել ամբողջական պատասխանը.<br>Գույքի սեփականության իրավունքը ենթադրում է գույքը<br>(ա) տիրապետելու իրավունք,<br>(բ) օգտագործելու իրավունք,<br>(գ) տնօրինելու իրավունք: | միայն (ա) |
| | | | միայն (գ), |
| | | | միայն (ա) և (գ) |
| | | | (ա) և (բ) և (գ): |
| | 94 | Համաձայն «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին » ՀՀ օրենքի ֆինանսական հաստատությունը քաղաքական ազդեցություն ունեցող անձի հետ գործարար հարաբերություններ կարող է հաստատել | առանց որևէ լրացուցիչ ընթացակարգերի կիրառման |
| | | | միայն ավագ ղեկավարության հավանությամբ |
| | | | միայն խորհրդի որոշմամբ |
| | | | միայն խորհրդի որոշմամբ, եթե առկա է ԿԲ համաձայնությունը |
| | 95 | Ֆինանսական հաստատությունն ահաբեկչության ֆինանսավորման կասկածի առկայության դեպքում | պարտավոր է 5 օրով կասեցնել գործարար հարաբերությունը կամ գործարքը և այդ մասին անմիջապես լիազոր մարմին ներկայացնել կասկածելի գործարքի (գործարար հարաբերության) մասին հաշվետվություն |
| | | | իրավունք ունի ցանկացած ժամկետով կասեցնել գործարար հարաբերությունը կամ գործարքը և այդ մասին անմիջապես լիազոր մարմին ներկայացնել կասկածելի գործարքի (գործարար հարաբերության) մասին հաշվետվություն |
| | | | պարտավոր է 10 օրով կասեցնել գործարար հարաբերությունը կամ գործարքը |
| | | | պարտավոր է 10 օրվա ընթացքում լիազոր մարմին ներկայացնել կասկածելի գործարքի (գործարար հարաբերության) մասին հաշվետվություն |
| | 96 | Նշված պնդումներից ո՞րն է ճիշտ. Համաձայն «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին » ՀՀ օրենքի` | գործարքը կամ գործարար հարաբերությունը կասեցնելու մասին լիազոր մարմնի որոշումը պետք է կատարվի անմիջապես` այն ֆինանսական հաստատության կողմից ստանալու պահից |
| | | | գործարքը կամ գործարար հարաբերությունը կասեցնելու մասին լիազոր մարմնի որոշումը պետք է կատարվի 5 օրվա ընթացքում` այն ֆինանսական հաստատության կողմից ստանալու պահից |
| | | | գործարքը կամ գործարար հարաբերությունը կասեցնելու մասին որոշում կայացնելու իրավասություն վերապահված է միայն ֆինանսական հաստատությանը |
| | | | գործարքը կամ գործարար հարաբերությունը կասեցնելու մասին որոշում կայացնելու իրավասություն վերապահված է միայն լիազոր մարմնին |

| | | | |
|---|---|---|---|
| | 97 | "Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին" ՀՀ օրենքի համաձայն ֆինանսական միջոցների սառեցում  է համարվում | կասկածելի գործարար հարաբերության կամ գործարքի առարկա ֆինանսական միջոցների կամ այլ գույքի փաստացի և իրավաբանական շարժի ժամկետային արգելքը |
| | | | կասկածելի գործարար հարաբերության կամ գործարքի  կատարման համար նախատեսված գործողությունների չիրականացումը |
| | | | ահաբեկչության հետ կապված անձանց ֆինանսական միջոցների փաստացի և իրավաբանական շարժի ժամկետային արգելքը |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 98 | Համաձայն «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության» մասին ՀՀ օրենքի նշվածներից որն է համարվում ոչ ռեզիդենտ | ֆիզիկական անձինք (բացառությամբ անհատ ձեռնարկատերերի), որոնք հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ներառյալ սկսվող կամ ավարտվող տասներկուամսյա ցանկացած ժամանակահատվածում գտնվել են Հայաստանի Հանրա-պետությունում 183 օր և ավելի, |
| | | | ՀՀ-ում պետական գրանցում ստացած, հաշվառված կազմակերպությունների ՀՀ սահմանից դուրս գտնվող |
| | | | միջազգային կազմակերպություններում ՀՀ մշտական ներկայացչությունները, |
| | | | ճիշտ պատասխան նշված չէ: |
| | 99 | Համաձայն «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության» մասին ՀՀ օրենքի նշվածներից որն է համարվում ոչ ռեզիդենտ | օտարերկրյա պետություններում ՀՀ դեսպանությունները, |
| | | | օտարերկրյա պետություններում ՀՀ դեսպանությունների ՀՀ քաղաքացիություն ունեցող աշխատակիցները, |
| | | | ՀՀ տարածքում գտնվող օտարերկրյա պետությունների դեսպանությունները, |
| | | | բոլոր պատասխանները ճիշտ են: |
| | 100 | Համաձայն «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության» մասին ՀՀ օրենքի նշվածներից որն է համարվում ռեզիդենտ | օտարերկրյա պետություններում ստեղծված կազմակերպությունները, |
| | | | օտարերկրյա պետություններում ստեղծված կազմակերպությունների ՀՀ տարածքում գտնվող մասնաճյուղերը, |
| | | | ՀՀ պետական գրանցում ստացած, հաշվառված կազմակերպությունների ՀՀ սահմանից դուրս գտնվող |
| | | | ՀՀ տարածքում գտնվող օտարերկրյա պետությունների դեսպանությունները: |
| | 101 | Համաձայն «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության» մասին ՀՀ օրենքի ընթացիկ արժութային գործարքներ չեն համարվում՝ | կարճաժամկետ վարկերի տրամադրումը, |
| | | | փոխառությունների դիմաց տոկոսների վճարումը, |
| | | | օտարերկրյա ուղղակի ներդրումները, |
| | | | բոլոր պատասխանները ճիշտ են: |
| | 102 | Ներքոհիշյալ պնդումներից ո՞րն է սխալ:<br>Համաձայն «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության» մասին ՀՀ օրենքի ընթացիկ արժութային գործառնությունների գծով վճարումները՝ | ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների միջև ծառայությունների ներմուծման կամ արտահանման հետ կապված վճարումներն են, |
| | | | ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների կարճաժամկետ  վարկերի տրամադրումն է, |
| | | | ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների միջև փոխառությունների դիմաց վճարվող տոկոսներն են, |
| | | | ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների միջև կապիտալի փոխանցումներն են: |

| | | | |
|---|---|---|---|
| | 103 | Նշել ճիշտ պատասխանը.<br>Համաձայն «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության» մասին ՀՀ օրենքի ընթացիկ արժութային հաշվի գործարքների գծով վճարումներ են համարվում ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների միջև<br>(ա) օտարերկրյա կարճաժամկետ պորտֆելային ներդրումները,<br>(բ) երկարաժամկետ վարկերի տրամադրումը,<br>(գ) փոխառությունների դիմաց վճարվող տոկոսները. | միայն (ա), |
| | | | միայն (բ), |
| | | | միայն (գ), |
| | | | (ա) և (գ): |
| | 104 | Ընթացիկ արժութային գործարքների գծով վճարումներ են համարվում ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների միջև. | օտարերկրյա պորտֆելային ներդրումները, |
| | | | օտարերկրյա ուղղակի ներդրումները, |
| | | | երկարաժամկետ վարկերի տրամադրումը, |
| | | | ոչ առևտրային բնույթի փոխանցումները: |
| | 105 | Վարկային կազմակերպությունը կարող է ստեղծվել որպես. | սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն, առևտրային կամ ոչ առևտրային կոոպերատիվ |
| | | | միայն առևտրային և ոչ առևտրային կոոպերատիվ |
| | | | բաժնետիրական ընկերություն, առևտրային և ոչ առևտրային կոոպերատիվ |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 106 | Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, խնայողական միություններ կարող են ստեղծվել բացառապես որպես. | սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններ |
| | | | բաժնետիրական ընկերություն |
| | | | բաժնետիրական ընկերություն և կոոպերատիվ |
| | | | կոոպերատիվ |
| | 107 | Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, վարկային կազմակերպությունների տիպեր չեն համարվում. | ֆակտորինգային միություններ |
| | | | խնայողական միություններ |
| | | | վարկային միություններ |
| | | | լիզինգային կազմակերպությունները |
| | 108 | Նշել սխալ պատասխանը.<br>Վարկային կազմակերպության պետական գրանցման և լիցենզավորման համար նրա հիմնադիրները ԿԲ են ներկայացնում. | գրանցման և լիցենզավորման դիմում |
| | | | վարկային կազմակերպության կանոնադրությունը՝ 3 օրինակից |
| | | | վարկային կազմակերպության ղեկավարների գործունեության մասին տեղեկանք |
| | | | պետական տուրքի վճարման անդորրագիրը |
| | 109 | Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալը համալրվում է. | ՀՀ դրամով և ԱՄՆ դոլարով |
| | | | ՀՀ դրամով և արտարժութային առաջին խմբի մեջ մտնող արտարժույթով |
| | | | ցանկացած արժույթով |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 110 | Վարկային կազմակերպության լիցենզիան. | կարող է գրավադրվել միայն ԿԲ-ում |
| | | | կարող է գրավադրվել այլ վարկային կազմակերպություններում՝ ԿԲ-ի նախնական համաձայնությամբ |
| | | | չի կարող գրավադրվել |
| | | | բոլոր պատասխանները սխալ են |
| | 111 | Օտարերկրյա պետություններում հայկական վարկային կազմակերպությունների մասնաճյուղերը և ներկայացուցիչները ստեղծվում են | ՀՀ օրենսդրությանը համապատասխան |
| | | | ՍԱԿ-ի դիրեկտիվներին համապատասխան |

| | | | |
|---|---|---|---|
| | | | տվյալ պետության օրենսդրությանը և (կամ) ՀՀ միջազգային պայմանագրերին համապատասխան |
| | | | ՀՀ արդարադատության նախարարության նորմատիվ ակտերին համապատասխան |
| | 112 | Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, վարկային կազմակերպության մասնաճյուղի գրանցման դիմումը բավարարում կամ մերժում է. | ԿԲ նախագահը |
| | | | ԿԲ խորհուրդը |
| | | | ԿԲ լիցենզավորման հանձնաժողովի նախագահը |
| | | | ԿԲ գլխավոր վերստուգիչը |
| | 113 | Վարկային կազմակերպությունը կարող է ժամանակավորապես դադարեցնել իր ներկայացուցչության գործունեությունը՝ | դադարեցման նախորդ օրը ԿԲ-ին տեղեկացնելով դադարեցման և դրա ժամկետի մասին |
| | | | դադարեցումից մեկ շաբաթ առաջ ԿԲ-ին տեղեկացնելով դադարեցման և դրա ժամկետի մասին |
| | | | դադարեցումից 15 օր առաջ ԿԲ-ին տեղեկացնելով դադարեցման և դրա ժամկետի մասին |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 114 | Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, վարկային կազմակերպությունը կարող է տրամադրել. | բացառապես ձեռնարկատիրական վարկեր |
| | | | բացառապես սպառողական վարկեր |
| | | | բացառապես ձեռնարկատիրական վարկեր կամ փոխառություններ, իսկ սպառողական վարկերը կամ փոխառությունները՝ ԿԲ սահմանած կարգով և պայմաններով |
| | | | ձեռնարկատիրական և սպառողական վարկեր և փոխառություններ |
| | 115 | Նշել ամբողջական պատասխանը.<br>Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, խնայողական միությունն իրավունք ունի փոխառություններ ներգրավել.<br>(ա) իր մասնակիցներից<br>(բ) Հայաստանի Հանրապետությունից և համայնքներից<br>(գ) միջազգային կազմակերպություններից | միայն (ա) |
| | | | միայն (ա) և (բ), |
| | | | միայն (բ) և (գ) |
| | | | բոլոր պատասխանները սխալ են |
| | 116 | Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, վարկային կազմակերպության ղեկավարներ են. | վարկային կազմակերպության խորհրդի նախագահը, նրա տեղակալը, վարկային կազմակերպության մասնաճյուղի |
| | | | վարկային կազմակերպության գլխավոր հաշվապահը, նրա տեղակալը, վարկային կազմակերպության մասնաճյուղի գլխավոր |
| | | | վարկային կազմակերպության վարչության նախագահը, նրա տեղակալը, վարչության անդամները |
| | | | բոլոր պատասխանները ճիշտ են |
| | 117 | Վարկային կազմակերպության ղեկավարների որակավորման կարգը սահմանում է. | ՀՀ ֆինանսների նախարարությունը |
| | | | ՀՀ ԿԲ-ը՝ ՀՀ վարկային կազմակերպությունների ազգային կոմիտեի հետ համատեղ |
| | | | ՀՀ կենտրոնական բանկը, |
| | | | Հայաստանի բանկերի միությունը |
| | 118 | Նշել ամբողջական պատասխանը.<br>Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, ՀՀ տարածքում գործող վարկային կազմակերպությունները պարտավոր են ԿԲ-ի գրանցմանը ներկայացնել հետևյալ փոփոխությունները.<br>(ա) վարկային կազմակերպության կանոնադրությունում կատարված փոփոխությունները<br>(բ) վարկային կազմակերպության ղեկավարների կազմում կատարված փոփոխությունները<br>(գ) վարկային կազմակերպության կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների կազմում կատարված փոփոխությունները | միայն (ա) և (բ), |

| | | | |
|---|---|---|---|
| | | | միայն (ա) և (գ) |
| | | | միայն (բ) և (գ) |
| | | | (ա), (բ) և (գ) |
| | 119 | Վարկային կազմակերպությունների նկատմամբ վերահսկողություն իրականացնում է. | Կենտրոնական բանկը՝ Վարկային կազմակերպությունների ազգային կոմիտեի հետ համատեղ |
| | | | Կենտրոնական բանկը |
| | | | Կենտրոնական բանկը՝ ֆինանսների նախարարության հետ |
| | | | Կենտրոնական բանկը՝ արդարադատության նախարարության հետ համատեղ |
| | 120 | Նշել սխալ պատասխանը.<br>Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, ցանկացած անձի պահանջով վարկային կազմակերպությունը պարտավոր է նրան հնգօրյա ժամկետում հնարավորություն ընձեռել ծանոթանալու՝ | վարկային կազմակերպության ֆինանսական հաշվետվությունների պատճեններին |
| | | | վարկային կազմակերպության ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ արտաքին աուդիտի եզրակացության պատճեններին |
| | | | վարկային կազմակերպության աշխատակիցների ցուցակի |
| | | | վարկային կազմակերպության կանոնադրության պատճենին |
| | 121 | Նշել ամբողջական պատասխանը.<br>Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, ցանկացած անձի պահանջով վարկային կազմակերպությունը պարտավոր է նրան հնգօրյա ժամկետում հնարավորություն ընձեռել ծանոթանալու.<br>(ա) վարկային կազմակերպության ֆինանսական հաշվետվությունների պատճեններին<br>(բ) վարկային կազմակերպության աշխատակիցների ցուցակի պատճենին<br>(գ) վարկային կազմակերպության կանոնադրության պատճենին | միայն (ա) և (բ), |
| | | | միայն (ա) և (գ) |
| | | | միայն (բ) և (գ) |
| | | | (ա), (բ) և (գ) |
| | 122 | Նշել սխալ պատասխանը.<br>Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, վարկային կազմակերպությունները պարտավոր են առանձին գրքույկի կամ հասարակության համար հասանելի այլ ձևով հրապարակել հետևյալ տեղեկությունները. | վարկային կազմակերպության ղեկավարների ցուցակը և դրանում կատարվող յուրաքանչյուր փոփոխություն |
| | | | իրենց կողմից տրամադրվող վարկերի տոկոսադրույքներ |
| | | | իրենց կողմից տրամադրվող վարկերի ժամկետայնություն |
| | | | ծառայությունների միջնորդավճարներ |
| | 123 | Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, վարկային կազմակերպությունը անկախ աուդիտային կազմակերպության եզրակացությունը կենտրոնական բանկ է ներկայացնում | յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա մինչև 15-ը |
| | | | յուրաքանչյուր կիսամյակին հաջորդող ամսվա մինչև 15-ը |
| | | | ֆինանսական տարվա ավարտից հետո վեցամսյա ժամկետում |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 124 | Կենտրոնական բանկի կողմից վարկային կազմակերպության նկատմամբ կիրառվող պատժամիջոցներից չէ. | տուգանք |
| | | | նախազգուշացում և խախտումները վերացնելու հանձնարարական |
| | | | վարկային կազմակերպության գույքի բռնագրավում |
| | | | բոլոր պատասխանները ճիշտ են |
| | 125 | Վարկային կազմակերպության լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու մասին ԿԲ խորհրդի որոշումը ուժի մեջ է մտնում. | որոշման ընդունման պահից |
| | | | որոշման ընդունման պահից 15 օր հետո |
| | | | զանգվածային լրատվության միջոցներով հրապարակվելու պահից |
| | | | ՀՀ պետական ռեգիստրից վարկային կազմակերպությանը գրանցումից հանելու պահից |

| | | | |
|---|---|---|---|
| | 126 | Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, բանկը կարող է փոխել իր գործունեության տեսակը՝ վերագրանցվելով որպես | ապահովագրական ընկերություն |
| | | | վարկային կազմակերպություն |
| | | | անշարժ գույքի գործակալություն |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 127 | Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, բանկի գործունեության տեսակի փոփոխման ծրագրում սահմանված ժամկետներում բանկը պարտավոր է. | հրաժարվել իր կողմից ստանձնած բոլոր պարտավորություններից |
| | | | կատարել բանկային ավանդի և բանկային հաշվի պայմանագրերով իր ստանձնած բոլոր պարտավորությունները կամ դրանք փոխանցել այլ բանկ |
| | | | ապահովագրել իր մոտ եղած բոլոր բանկային ավանդները |
| | | | ավանդներ ընդունել ավելի բարձր տոկոսադրույքով |
| | 128 | Նշել սխալ պնդումը.<br>Գործունեությունը փոփոխող բանկի վերագրանցման պահից. | դրա գործունեությունը համարվում է դադարած |
| | | | նրա պարտավորությունները համարվում են մարված |
| | | | իրավունքներն ու պարտականությունները (բացառությամբ բանկային ավանդի և բանկային հաշվի պայմանագրերով իր ստանձնած պարտավորությունները) իրավահաջորդության կարգով անցնում են վերագրանցված անձին |
| | | | բանկերի գրանցամատյանում կատարվում է գրառում բանկի գործունեության դադարման վերաբերյալ |
| | 129 | Բանկի վերագրանցման մասին որոշմամբ Կենտրոնական բանկի խորհուրդն ուժը կորցրած է ճանաչում. | բանկի կանոնադրությունը |
| | | | բանկի բանկային գործունեության լիցենզիան |
| | | | բանկի ղեկավարների ցուցակը |
| | | | բոլոր պատասխանները ճիշտ են |
| | 130 | Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, բանկի վերագրանցման և լիցենզավորման համար բանկից. | գանձվում է մեկ միլիոն դրամ, որն ուղղվում է ԿԲ բյուջե |
| | | | գանձվում է մեկ միլիոն դրամ, որն ուղղվում է պետական բյուջե |
| | | | չի գանձվում որևիցե վճար կամ տուրք |
| | | | գանձվում է տուրք, համաձայն «Տուրքերի մասին» ՀՀ օրենքի |
| | 131 | Վարկային կազմակերպության տիպի (խմբի) փոփոխման մասին որոշումը ընդունում է. | վարկային կազմակերպության գլխավոր հաշվապահը |
| | | | վարկային կազմակերպության կառավարման բարձրագույն մարմինը |
| | | | ՀՀ կենտրոնական բանկը |
| | | | ՀՀ ֆինանսների նախարարությունը |
| | 132 | Վարկային կազմակերպությունը կարող է ունենալ. | միայն մեկ տիպի (խմբի) վարկային կազմակերպության լիցենզիա |
| | | | երկու և ավելի տիպի (խմբի) վարկային կազմակերպության լիզենզիա |
| | | | ցանկացած քանակի տիպի (խմբի) վարկային կազմակերպության լիցենզիա |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 133 | Համաձայն «Բանկերի, վարկային կազմակերպությունների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» ՀՀ օրենքի, վարկային կազմակերպության անվճարունակությունը ճանաչվում է. | վարկային կազմակերպության խորհրդի որոշմամբ, |
| | | | կենտրոնական բանկի նախագահի որոշմամբ |
| | | | կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ |
| | | | կենտրոնական բանկի ֆինանսական վերահսկողության վարչության պետի որոշմամբ |

| | | | |
|---|---|---|---|
| | 134 | Վարկային կազմակերպությունում անվճարունակության հիմքերից մեկի բացահայտման դեպքում կենտրոնական բանկը կարող է.<br>(ա) նշանակել ժամանակավոր ադմինիստրացիայի ղեկավար<br>(բ) ուժը կորցրած ճանաչել վարկային կազմակերպության լիցենզիան<br>(գ) դատարանից պահանջել ուժը կորցրած ճանաչել վարկային կազմակերպության լիցենզիան | միայն (ա) |
| | | | միայն (ա) կամ (գ) |
| | | | միայն (ա) կամ (բ) |
| | | | (ա) կամ (բ) կամ (գ) |
| | 135 | Նշել ամբողջական պատասխանը.<br>Վարկային կազմակերպությունը համարվում է անվճարունակ, եթե.<br>(ա) սպառել է իր հիմնական կապիտալի 50 տոկոսը կամ ավելին<br>(բ) ի վիճակի չէ բավարարել իր պարտատերերի օրինական պահանջները<br>(գ) պարբերաբար խախտում է օրենքով սահմանված նորմատիվները | միայն (ա) և (բ), |
| | | | միայն (ա) և (գ) |
| | | | (ա) և (բ) և (գ) |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 136 | Համաձայն «Բանկերի, վարկային կազմակերպությունների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» ՀՀ օրենքի, վարկային կազմակերպության սնանկությունը. | դատարանի վճռի հիման վրա կենտրոնական բանկի կողմից հաստատված նրա անվճարունակությունն է |
| | | | կենտրոնական բանկի դիմումի հիման վրա դատարանի կողմից հաստատված նրա անվճարունակությունն է |
| | | | կենտրոնական բանկի նախագահի կողմից հաստատված նրա անվճարունակությունն է |
| | | | կենտրոնական բանկի խորհրդի կողմից հաստատված նրա անվճարունակությունն է |
| | 137 | Ֆինանսական առողջացման ծրագիրը, դրանում կատարվող փոփոխությունները և լրացումները հաստատում է. | վարկային կազմակերպության խորհուրդը |
| | | | ադմինիստրացիայի ղեկավարը |
| | | | կենտրոնական բանկը |
| | | | վարկային կազմակերպությունների ազգային կոմիտեն |
| | 138 | Նշել ճիշտ պնդումը.<br>Համաձայն «Բանկերի, վարկային կազմակերպությունների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» ՀՀ օրենքի. | ադմինիստրացիայի գործունեության ժամկետը սահմանում է վարկային կազմակերպության խորհուրդը |
| | | | ադմինիստրացիայի գործունեության ժամկետը սահմանվում է վարկային կազմակերպության ֆինանսական առողջացման ծրագրով |
| | | | ադմինիստրացիայի գործունեության համար ժամկետ չի սահմանվում |
| | | | ադմինիստրացիայի գործրծունեության ժամկետը որոշվում է ադմինիստրացիայի ղեկավարի կողմից |
| | 139 | Համաձայն «Բանկերի, վարկային կազմակերպությունների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» ՀՀ օրենքի, կենտրոնական բանկի համաձայնությամբ ադմինիստրացիայի ղեկավարը կարող է վարկային կազմակերպության առանձին ոլորտների կառավարման լիազորությունները վերապահել. | վարկային կազմակերպության աշխատակիցներին |
| | | | կենտրոնական բանկի աշխատակիցներին |
| | | | ադմինիստրացիայի անդամներին |
| | | | բոլոր պատասխանները ճիշտ են |
| | 140 | Նշել սխալ պատասխանը.<br>Համաձայն «Բանկերի, վարկային կազմակերպությունների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» ՀՀ օրենքի, ադմինիստրացիայի ղեկավարը. | իրականացնում է վարկային կազմակերպության կառավարման մարմինների լիազորությունների կատարման նկատմամբ վերահսկողություն |
| | | | միջոցներ է ձեռնարկում վարկային կազմակերպության գույքի պահպանության ուղղությամբ |

| | | | |
|---|---|---|---|
| | | | պարզում է վարկային կազմակերպության պարտատերերին, նրանց պահանջների չափը |
| | | | վարկային կազմակերպության կառավարման մարմիններից վարկային կազմակերպության գործունեության վերաբերյալ ստանում է անհրաժեշտ տեղեկություններ և փաստաթղթեր |
| | 141 | Նշել ամբողջական պատասխանը.<br>Համաձայն «Բանկերի, վարկային կազմակերպությունների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» ՀՀ օրենքի, ադմինիստրացիայի ղեկավարը.<br>(ա) կենտրոնական բանկ է ներկայացնում ֆինանսական առողջացման ծրագիրը, դրանում փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ առաջարկություններ<br>(բ) իրականացնում է վարկային կազմակերպության կառավարման մարմինների լիազորությունների կատարման նկատմամբ վերահսկողություն<br>(գ) վարկային կազմակերպության անունից հայցով դիմում է դատարան և արբիտրաժային տրիբունալ | միայն (ա) |
| | | | միայն (բ) |
| | | | միայն (ա) և (գ) |
| | | | (ա), (բ) և (գ) |
| | 142 | Համաձայն «Բանկերի, վարկային կազմակերպությունների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» ՀՀ օրենքի, ֆինանսական առողջացման միջոցառումների ծրագիրը պարտադիր կարգով պետք է պարունակի. | վարկային կազմակերպության ֆինանսական վիճակի գնահատականը |
| | | | վարկային կազմակերպության պահպանության ծախսերի կրճատմանն ուղղված միջոցառումները |
| | | | վարկային կազմակերպության կազմակերպական կառուցվածքի փոփոխության ուղղությամբ իրականացվելիք միջոցառումները |
| | | | բոլոր պատասխանները ճիշտ են |
| | 143 | Նշել ամբողջական պատասխանը.<br>Համաձայն «Բանկերի, վարկային կազմակերպությունների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» ՀՀ օրենքի, վարկային կազմակերպության առողջացման միջոցառումների ծրագիրը պարտադիր կարգով պետք է պարունակի.<br>(ա) վարկային կազմակերպության աշխատակիցների վերապատրաստման ֆինանսական ծրագիրը<br>(բ) լրացուցիչ եկամուտների ստացմանն ուղղված միջոցառումները<br>(գ) վարկային կազմակերպության մասնակիցների մասնակցության եղանակները վարկային կազմակերպության ֆինանսական առողջացմանը | միայն (ա) |
| | | | միայն (բ) |
| | | | միայն (բ) և (գ) |
| | | | (ա), (բ) և (գ) |
| | 144 | Համաձայն «Բանկերի, վարկային կազմակերպությունների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» ՀՀ օրենքի, վարկային կազմակերպության ֆինանսական առողջացման միջոցառումների ծրագրի իրականացման նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է. | ժամանակավոր ադմինիստրացիայի ղեկավարը |
| | | | վարկային կազմակերպության խորհուրդը |
| | | | կենտրոնական բանկը |
| | | | բոլոր պատասխանները սխալ են |
| | 145 | Կենտրոնական բանկը անվճարունակ վարկային կազմակերպության համար կարող է սահմանել. | հիմնական և հատուկ տնտեսական նորմատիվների այլ սահմանաչափեր |
| | | | հիմնական և հատուկ տնտեսական նորմատիվների հաշվարկման այլ կարգ |
| | | | հիմնական և հատուկ տնտեսական նորմատիվների հաշվարկում ընդգրկվող տարրերի այլ կազմ |
| | | | բոլոր պատասխանները ճիշտ են |

| | | | |
|---|---|---|---|
| | 146 | Նշել ամբողջական պատասխանը.<br>Համաձայն «Բանկերի, վարկային կազմակերպությունների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» ՀՀ օրենքի,կենտրոնական բանկը անվճարունակ վարկային կազմակերպության համար կարող է սահմանել.<br>(ա) հիմնական և հատուկ նորմատիվների հաշվարկման այլ կարգ<br>(բ) այլ հիմնական և հատուկ տնտեսական նորմատիվներ<br>(գ) հիմնական և հատուկ տնտեսական նորմատիվների այլ սահմանաչափեր | միայն (ա) |
| | | | միայն (գ), |
| | | | միայն (ա) և (գ) |
| | | | (ա), (բ) և (գ) |
| | 147 | Համաձայն «Բանկերի, վարկային կազմակերպությունների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» ՀՀ օրենքի, վարկային կազմակերպության մասնակիցների և այլ անձանց ֆինանսական օգնությունը կամ լրացուցիչ ներդրումները կարող են իրականացվել հետևյալ ձևերով. | վարկային կազմակերպությունում ավանդի ներդրում |
| | | | վարկային կազմակերպությունում դեպոզիտի ներդրում |
| | | | վարկերի, փոխառությունների տրամադրում |
| | | | բոլոր պատասխանները ճիշտ են |
| | 148 | Վարկային կազմակերպության ակտիվների կառուցվածքի փոփոխությունը կարող է նախատեսել. | վարկային պորտֆելի որակի բարելավում |
| | | | շահույթ չբերող ակտիվների վաճառք |
| | | | այն ակտիվների վաճառք, որոնց օտարումը չի խոչընդոտում վարկային կազմակերպության կողմից իր գործառույթների պատշաճ իրականացմանը |
| | | | նշված բոլոր պատասխանները ճիշտ են |
| | 149 | Վարկային կազմակերպության պարտավորությունների կառուցվածքի փոփոխությունը կարող է նախատեսել. | վարկային պորտֆելի որակի բարելավում |
| | | | ընդհանուր և (կամ) կանոնադրական կապիտալի չափի մեծացում |
| | | | վարկային կազմակերպության ծախսերի, այդ թվում` պարտքերի սպասարկման և նրա կառավարման գծով իրականացվող ծախսերի կրճատում |
| | | | բոլոր պատասխանները ճիշտ են |
| | 150 | Վարկային կազմակերպության ակտիվների կառուցվածքի փոփոխությունը կարող է նախատեսել. | ընդհանուր կապիտալի չափի մեծացում |
| | | | վարկային կազմակերպության ծախսերի, այդ թվում` պարտքերի սպասարկման և նրա կառավարման գծով իրականացվող ծախսերի կրճատում |
| | | | կանոնադրական կապիտալի չափի մեծացում |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 151 | ընկերությունների սնանկության մասին» ՀՀ օրենքի, վարկային կազմակերպության կազմակերպական կառուցվածքի փոփոխությունը կարող է իրականացվել հետևյալ միջոցներով | վարկային կազմակերպության աշխատակիցների թվաքանակի և կազմի փոփոխություն |
| | | | տարածքային ստորաբաժանումների լուծարում |
| | | | կառուցվածքային ստորաբաժանումների լուծարում |
| | | | բոլոր պատասխանները ճիշտ են |
| | 152 | Վարկային կազմակերպության նկատմամբ սնանկության վարույթ հարուցվում է. | վարկային կազմակերպության մասնակիցների ընդհանուր ժողովի կողմից |
| | | | կենտրոնական բանկի կողմից` նրա խորհրդի որոշմամբ |
| | | | դատարանի կողմից |
| | | | վարկային կազմակերպության խոշոր պարտատերերի կողմից |
| | 153 | Նշել սխալ պնդումը.<br>Համաձայն «Բանկերի, վարկային կազմակերպությունների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» ՀՀ օրենքի, | Վարկային կազմակերպության սնանկության մասին գործերը քննվում են բացառապես ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով |

| | | | |
|---|---|---|---|
| | | | դատարանի կողմից վարկային կազմակերպության սնանկության մասին գործի քննության ժամանակ կիրառվում է միայն լուծարային վարույթ |
| | | | վարկային կազմակերպության սնանկության վարույթի ընթացքում հաշտության համաձայնություն չի կարող կնքվել |
| | | | վարկային կազմակերպության սնանկության գործով դատավարությունում գործին մասնակցող անձինք են պարտապան վարկային կազմակերպությունը, կենտրոնական բանկը և լուծարային կառավարիչը |
| | 154 | Վարկային կազմակերպության սնանկության գործով դատավարությունում գործին մասնակցող անձ (անձինք) չէ (չեն). | պարտապան վարկային կազմակերպությունը |
| | | | պարտապան վարկային կազմակերպության խոշոր պարտատերերը |
| | | | լուծարային կառավարիչը |
| | | | ՀՀ կենտրոնական բանկը |
| | 155 | Նշել սխալ պնդումը.<br>Դատարանի կողմից  Կենտրոնական բանկի դիմումը բավարարելու և լուծարային կառավարիչ նշանակելու մասին որոշման կայացման պահից. | լուծարային կառավարչին են անցնում բանկի գործերի կառավարման լիազորությունները |
| | | | սառեցվում են բանկի բոլոր հաշիվները՝ բացառությամբ ոչ ռեզիդենտ բանկերում գտնվող հաշիվների |
| | | | դադարեցվում են բանկի բոլոր տեսակի պարտավորությունների դիմաց տոկոսների հաշվարկումը և գանձումը |
| | | | դատարաններում կարճվում են բոլոր այն գործերի վարույթները, որտեղ բանկը ճանաչվել է պատասխանող |
| | 156 | Լուծարային կառավարչի դիմումի հիման վրա պետական լիազորված մարմինը լուծարվող վարկային կազմակերպության ֆիրմային անվանման մեջ կատարվում է փոփոխություն՝ ներառելով հետևյալ բառերը. | լուծարված վարկային կազմակերպություն |
| | | | սնանկ վարկային կազմակերպություն |
| | | | լուծարվող վարկային կազմկերպություն |
| | | | բոլոր պատասխանները սխալ են |
| | 157 | Լուծարային կառավարչի կողմից հրապարակված՝ վարկային կազմակերպության պարտատերերի պահանջների ներկայացման ժամկետը պետք է լինի. | մինչև երկու ամիս |
| | | | երկուսից մինչև վեց ամիս |
| | | | վեց ամսից մինչև մեկ տարի |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 158 | Լուծարային կառավարիչը, կենտրոնական բանկի սահմանած կարգով, ցանկով և ձևով իր գործունեության վերաբերյալ տեղեկություններ է հրապարակում մամուլում. | ոչ պակաս, քան շաբաթը մեկ անգամ |
| | | | ոչ պակաս, քան ամիսը մեկ անգամ |
| | | | ամիսը երկու և ավելի անգամ |
| | | | յուրաքանչյուր եռամսյակը մեկ անգամ |
| | 159 | Նշել սխալ պատասխանը.<br>Կենտրոնական բանկը կարող է լուծարային կառավարչի նկատմամբ կիրառել հետևյալ պատասխանատվության միջոցները. | նախազգուշացում և թույլ տված խախտումը վերացնելու հանձնարարական |
| | | | որակավորման վկայականի ուժը կորցրած ճանաչում |
| | | | տուգանք |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 160 | Նշել սխալ պատասխանը.<br>Լուծարային կառավարչի գործողությունները կարող են բողոքարկվել դատարանում. | վարկային կազմակերպության խորհրդի նախագահի կողմից |
| | | | վարկային կազմակերպության պարտատերերի կողմից |
| | | | վարկային կազմակերպության պարտապանների կողմից |
| | | | կենտրոնական բանկի կողմից |
| | 161 | Վարկային կազմակերպությունում նշանակված ադմինիստրացիայի գործունեության հետ կապված ծախսերն իրականացվում են. | ՀՀ կենտրոնական բանկի հաշվին |

| | | | |
|---|---|---|---|
| | | | ՀՀ պետական բյուջեի հաշվին |
| | | | վարկային կազմակերպության հաշվին |
| | | | լուծարային միջոցների հաշվին |
| | 162 | Համաձայն «Բանկերի, վարկային կազմակերպությունների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» ՀՀ օրենքի, ադմինիստրացիայի անդամների և ղեկավարի վարձատրության չափը և այլ ծախսերը սահմանում է. | ադմինիստրացիայի ղեկավարը |
| | | | կենտրոնական բանկը |
| | | | դատարանը՝ կենտրոնական բանկի ներկայացմամբ |
| | | | վարկային կազմակերպության խորհուրդը |
| | 163 | Համաձայն «Բանկերի, վարկային կազմակերպությունների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» ՀՀ օրենքի, լուծարային կառավարչի վարձատրության չափը սահմանում է. | վարկային կազմակերպության մասնակիցների ընդհանուր ժողովը |
| | | | կենտրոնական բանկը |
| | | | դատարանը՝ կենտրոնական բանկի ներկայացմամբ |
| | | | վարկային կազմակերպության խորհուրդը |
| | 164 | Համաձայն «Բանկերի, վարկային կազմակերպությունների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» ՀՀ օրենքի, բանկերի սնանկության վերաբերյալ գործերը քննում է. | ՀՀ կենտրոնական բանկը |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | | | ՀՀ քաղաքացիական դատարանը |
| | | | վարկային կազմակերպությունների միությունը և կենտրոնական |
| | 165 | Համաձայն «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի, բանկային գաղտնիք են համարվում. | հաճախորդին սպասարկելու կապակցությամբ բանկին հայտնի դարձած հաճախորդի հաշիվների վերաբերյալ տեղեկությունները |
| | | | հաճախորդի հանձնարարությամբ կատարված գործառնությունների վերաբերյալ տեղեկությունները |
| | | | հօգուտ հաճախորդի կատարված գործառնությունների վերաբերյալ տեղեկությունները |
| | | | բոլոր պատասխանները ճիշտ են |
| | 166 | Համաձայն «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի, բանկային գաղտնիքի հրապարակում է համարվում. | բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները բանավոր կամ գրավոր ձևով զանգվածային լրատվության միջոցներով տարածելը |
| | | | բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները երրորդ անձին կամ անձանց հայտնի դարձնելը |
| | | | երրորդ անձանց բանկային գաղտնիք կազմող տեղեկություններ հայթայթելու հնարավորություն ուղղակիորեն կամ անուղղակիորեն ընձեռելը |
| | | | բոլոր պատասխանները ճիշտ են |
| | 167 | Համաձայն «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի, կենտրոնական բանկը մամուլով և զանգվածային լրատվության միջոցներով հրապարակում է բանկի հանդեպ անպարտաճանաչ պարտատերերի անունները հետևյալ պարբերականությամբ. | յուրաքանչյուր եռամսյակը մեկ անգամ |
| | | | յուրաքանչյուր ամիսը մեկ անգամ |
| | | | ըստ անհրաժեշտության |
| | | | յուրաքանչյուր կիսամյակը մեկ անգամ |
| | 168 | Համաձայն «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի, կենտրոնական բանկը մամուլով հրապարակում է բանկի հանդեպ խոշոր պարտավորություններ ունեցող անպարտաճանաչ պարտապանների մասին հետևյալ տեղեկատվությունը | ռեզիդենտության երկրները |
| | | | անվանումներն ու անունները |
| | | | պարտավորությունների միջին ամսական մեծությունը |
| | | | բոլոր պատասխանները ճիշտ են |
| | 169 | Համաձայն «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի, կենտրոնական բանկի կողմից հրապարակվող բանկերի հանդեպ խոշոր պարտավորություններ ունեցող անպարտաճանաչ պարտապանների առումով, անպարտաճանաչ պարտապան է համարվում. | պայմանագրով պարտավորությունների կատարման համար սահմանված ժամկետների 90 օր և ավելի խախտում թույլ տված պարտապանը |

| | | | |
|---|---|---|---|
| | | | պայմանագրով պարտավորությունների կատարման համար սահմանված ժամկետների 120 օր և ավելի խախտում թույլ տված պարտապանը |
| | | | պայմանագրով պարտավորությունների կատարման համար սահմանված ժամկետների 180 օր և ավելի խախտում թույլ տված պարտապանը |
| | | | պայմանագրով պարտավորությունների կատարման համար սահմանված ժամկետների 270 օր և ավելի խախտում թույլ տված պարտապանը |
| | 170 | Համաձայն «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի, բանկային գաղտնիքի հրապարակում չի համարվում. | վարկային կազմակերպությանը իրավաբանական ծառայություն մատուցող անձին տվյալ վարկային կազմակերպության կողմից բանկային գաղտնիք կազմող տեղեկություններ հայտնելը |
| | | | կենտրոնական բանկի կողմից յուրաքանչյուր եռամսյակը մեկ անգամ վարկային կազմակերպությունների հանդեպ խոշոր պարտավորություններ ունեցող անպարտաճանաչ պարտապանների անվանումների ու անունների հրապարակելը մամուլով |
| | | | խախտումների և դրանց համար ՀՀ ԿԲ կողմից վարկային կազմակերպության ղեկավարի նկատմամբ կիրառված պատժամիջոցների մասին որոշումների հրապարակումը ՀՀ ԿԲ կողմից |
| | | | բոլոր պատասխանները ճիշտ են |
| | 171 | Համաձայն «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի, վարկային կազմակերպությունները քրեական գործով կասկածյալ կամ մեղադրյալ ներգրավված անձանց վերաբերյալ բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները քրեական հետապնդում իրականացնող մարմիններին տրամադրում են. | վարկային կազմակերպության խորհրդի որոշման հիման վրա |
| | | | դատարանի որոշման հիման վրա |
| | | | կենտրոնական բանկի որոշման հիման վրա |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 172 | "Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին" ՀՀ օրենքի համաձայն գործարար հարաբերության կամ գործարքի իրականացման մերժում է համարվում | կասկածելի գործարար հարաբերության կամ գործարքի առարկա ֆինանսական միջոցների կամ այլ գույքի փաստացի և իրավաբանական շարժի ժամկետային արգելքը |
| | | | կասկածելի գործարար հարաբերության կամ գործարքի կատարման համար նախատեսված գործողությունների չիրականացումը |
| | | | ահաբեկչության հետ կապված անձանց ֆինանսական միջոցների փաստացի և իրավաբանական շարժի ժամկետային արգելքը |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 173 | Ընտրել ճիշտ տարբերակը.<br>Ֆինանսական հաստատությունը անկախ գործարքի դիմաց վճարումը կանխիկ կամ անկանխիկ լինելու հանգամանքից, Լիազորված մարմին տեղեկություն է տրամադրում, եթե.<br>(ա) գործարքի արժեքը գերազանցում է 20 միլիոն դրամը, իսկ անշարժ գույքի առք ու վաճառքի գործարքների դեպքում՝ 40 միլիոն դրամը<br>(բ) անկախ գործարքի գումարի չափից, գործարքի կողմը գրանցված է օֆշորային տարածքում կամ երկրում<br>(գ) հաճախորդն ունի պարտավորություններ բանկային համակարգի նկատմամբ<br>(դ) հաճախորդը նախկինում ունեցել է դատվածություն | ճիշտ պատասխան նշված չէ |
| | | | միայն (ա) և (բ) |
| | | | միայն (ա), (բ) և (գ) |
| | | | միայն (ա), (բ), (գ) և (դ) |
| | 174 | Գործարար հարաբերության կամ գործարքի իրականացումը մերժելու դեպքում, «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի համաձայն, հաշվետվություն տրամադրող անձը պետք է՝ | քննարկի պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի մասին լիազոր մարմին հաշվետվություն ներկայացնելու հարցը, եթե մերժված գործարքի գումարը գերազանցում է պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի մասին հաշվետվության ներկայացման շեմը |

| | | | |
|---|---|---|---|
| | | | անհապաղ պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի մասին լիազոր մարմին հաշվետվություն ներկայացնի, եթե մերժված գործարքի գումարը գերազանցում է պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի մասին հաշվետվության ներկայացման շեմը |
| | | | անհապաղ կասկածելի գործարքի մասին լիազոր մարմին հաշվետվություն ներկայացնի |
| | | | քննարկի կասկածելի գործարքի մասին լիազոր մարմին հաշվետվություն ներկայացնելու հարցը |
| | 175 | ՀՀ օրենքի ահաբեկչության հետ կապված անձանց ֆինանսական միջոցների սառեցման մասին որոշումը կայացնում է՝ | հաշվետվություն տրամադրող անձը |
| | | | հաշվետվություն տրամադրող անձը կամ լիազոր մարմինը |
| | | | հաշվետվություն տրամադրող անձը՝ նախապես ստանալով լիազոր մարմնի համաձայնությունը |
| | | | լիազոր մարմինը |
| | 176 | Համաձայն «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին » ՀՀ օրենքի՝ իրավասու մարմինների կողմից լիցենզավորվող և վերահսկվող՝ հաշվետվություն տրամադրող անձանց կողմից տեղեկության տրամադրման կարգը, ժամկետները և ձևերը սահմանում է | ՀՀ կենտրոնական բանկը՝ նորմատիվ իրավական ակտերով |
| | | | համապատասխան իրավասու մարմինը, ով լիցենզավորում և վերահսկում է հաշվետվությունը տրամադրող անձին |
| | | | ՀՀ կառավարությունը |
| | | | ՀՀ կենտրոնական բանկը՝  համապատասխան իրավասու մարմնի հետ համատեղ |
| | 177 | Համաձայն «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին » ՀՀ օրենքի՝ հաշվետվություն տրամադրող անձինք, Լիազորված մարմնին են տրամադրում տեղեկություններ | գործարքների վերաբերյալ, որոնց արժեքը գերազանցում է 5 միլիոն դրամը |
| | | | գործարքների վերաբերյալ, որոնց արժեքը գերազանցում է 400 հազ. դրամը |
| | | | անշարժ գույքի առքուվաճառքի գործարքների վերաբերյալ՝ անկախ գործարքի արժեքի մեծությունից |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 178 | Համաձայն «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին » ՀՀ օրենքի՝ գործարքը կարող է համարվել կասկածելի | միայն այն դեպքում, երբ գործարքի պայմանները չեն համապատասխանում ձեռնարկատիրական գործունեության տվյալ բնագավառում սովորաբար կնքվող նման գործարքների պայմաններին կամ գործարար շրջանառության սովորույթներին |
| | | | ակնհայտ է դառնում, որ առաջարկվող կամ կնքված գործարքն ակնհայտորեն տնտեսական կամ իրավաչափ նպատակ չի հետապնդում |
| | | | միայն այն դեպքում, երբ գործարքը գերազանցում է 20 միլիոն դրամը |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 179 | «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին » ՀՀ օրենքի համաձայն հաշվետվություն տրամադրող անձի՝ ֆինանսական միջոցների սառեցման մասին որոշումը մինչև սառեցման ժամկետի ավարտը կարող է վերացվել միայն | հաշվետվություն տրամադրող անձի կողմից |
| | | | լիազոր մարմնի կողմից՝ իր նախաձեռնությամբ |
| | | | լիազոր մարմնի կողմից՝ իր նախաձեռնությամբ կամ հաշվետվություն տրամադրող անձի միջնորդությամբ |
| | | | բոլոր պատասխանները ճիշտ են |
| | 180 | «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի համաձայն հաշվետվություն տրամադրող անձինք պետք է նույնականացնեն իրենց հաճախորդներին և ստուգեն նրանց ինքնությունը՝ իրավասու աղբյուրներից ստացված արժանահավատ փաստաթղթերի կամ այլ տեղեկատվության հիման վրա, եթե | հաստատվում են գործարար հարաբերություններ կամ կատարվում է միանգամյա գործարք, |

| | | | |
|---|---|---|---|
| | | | կասկածներ են առաջանում փողերի լվացման և (կամ) ահաբեկչության |
| | | | կասկածներ են առաջանում հաճախորդի նույնականացմանը վերաբերող նախկինում ձեռք բերված տեղեկատվության հավաստիության կամ ամբողջականության մասին |
| | | | բոլոր պատասխանները ճիշտ են |
| | 181 | Նշել ամբողջական պատասխանը.<br>Համաձայն «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի, արժութային արժեքներ համարվող գույքի տեսակներն են.<br>(ա) ԱՄՆ դոլարը<br>(բ) եվրոն<br>(գ) ռուսական ռուբլին | միայն (ա) |
| | | | միայն (բ) |
| | | | միայն (ա) և (բ) |
| | | | (ա), (բ) և (գ) |
| | 182 | Նշել սխալ տարբերակը.<br>Համաձայն «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի, արժութային արժեքներ համարվող գույքի տեսակներն են. | ՀՀ դրամը |
| | | | ՀՀ դրամով արտահայտված վճարային արժեթղթերը |
| | | | բանկային ոսկին |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 183 | Համաձայն «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի, ընթացիկ արժութային գործարքների ծավալը չի կարող գերազանցել. | 400 000 ՀՀ դրամը |
| | | | 500 000 ՀՀ դրամը |
| | | | 500 000 ԱՄՆ դոլարին համարժեք դրամը |
| | | | բոլոր պատասխանները սխալ են |
| | 184 | Համաձայն «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի, ՀՀ-ում ծառայությունների մատուցման և աշխատանքների կատարման դրամական գնանշումը իրականացվում է. | բացառապես ՀՀ դրամով |
| | | | ՀՀ դրամով և առաջին խմբի մեջ մտնող արտարժույթով |
| | | | ՀՀ դրամով, բացառությամբ ՀՀ ԿԲ կողմից սահմանված դեպքերի |
| | | | ցանկացած արժույթով |
| | 185 | Համաձայն «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի, ՀՀ տարածքում դրամական շահումները կարող են գովազդվել և տրվել. | բացառապես ՀՀ դրամով |
| | | | ՀՀ դրամով և առաջին խմբի մեջ մտնող արտարժույթով |
| | | | ՀՀ դրամով, բացառությամբ ՀՀ ԿԲ կողմից սահմանված դեպքերի |
| | | | ցանկացած արժույթով |
| | 186 | Համաձայն «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի, ՀՀ տարածքում սպառողական փոխառությունները տրամադրվում են. | ՀՀ դրամով, բացառությամբ ՀՀ ԿԲ կողմից սահմանված դեպքերի |
| | | | ՀՀ դրամով և առաջին խմբի մեջ մտնող արտարժույթով |
| | | | բացառապես ՀՀ դրամով |
| | | | ցանկացած արժույթով |
| | 187 | Համաձայն «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի, արտարժույթով կարող են իրականացվել. | ՀՀ-ում աշխատանքների կատարման դրամական գնանշումը |
| | | | ռեզիդենտների միջև նվիրատվության գործարքները |
| | | | ներդրումները ՀՀ տարածքում իրավաբանական անձանց բաժնեհավաք կապիտալում |

| | | | |
|---|---|---|---|
| | | | բոլոր պատասխանները ճիշտ են |
| | 188 | Համաձայն «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի, արժութային օրենքների և դրանց հիման վրա ընդունված իրավական ակտերի յուրաքանչյուր պահանջի մի քանի խախտումներ թույլ տալու դեպքում. | յուրաքանչյուր խախտում համարվում է մեկ խախտում |
| | | | յուրաքանչյուր խախտում համարվում է մեկ խախտում, եթե թույլ է տրվել տարբեր անձանց հետ իրականացվող գործարքներում |
| | | | յուրաքանչյուր խախտում համարվում է մեկ խախտում, եթե այդպիսին է ճանաչվել կենտրոնական բանկի հիմնավոր կարծիքով |
| | | | բոլոր խախտումները համարվում են մեկ խախտում |
| | 189 | Նշել ամբողջական պատասխանը.<br>Ներքոհիշյալ անձանցից որո՞նք են համարվում վարկային կազմակերպության հետ կապված անձ.<br>(ա) վարկային կազմակերպության գործադիր տնօրենը<br>(բ) վարկային կազմակերպության գործադիր տնօրենի հետ փոխկապակցված իրավաբանական անձը<br>(գ) վարկային կազմակերպության հետ փոխկապակցված ֆիզիկական անձը | միայն (ա) և (գ) |
| | | | միայն (բ) և (գ) |
| | | | միայն (բ) |
| | | | (ա), (բ) և (գ) |
| | 190 | Վարկային կազմակերպությունները տարեկան աուդիտն իրականացնող կազմակերպությունը. | նշանակվում է վարկային կազմակերպության կողմից` ՀՀ ԿԲ սահմանած կարգով |
| | | | նշանակվում է վարկային կազմակերպության կողմից` ՀՀ ֆինանսների նախարարության սահմանած կարգով |
| | | | նշանակվում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից |
| | | | բոլոր պատասխանները սխալ են |
| | 191 | Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, վարկային կազմակերպության ղեկավար չեն համարվում. | վարկային կազմակերպության գլխավոր հաշվապահը |
| | | | վարկային կազմակերպության վարչության անդամները |
| | | | վարկային կազմակերպության նշանակալից մասնակիցները |
| | | | վարկային կազմակերպության վերստուգիչ հանձնաժողովի |
| | 192 | Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, նշված գործառնություններից որո՞նք չեն կարող իրականացնել վարկային կազմակերպությունը. | մատուցել ֆինանսական խորհրդատվություն |
| | | | ապահովագրական գործունեություն |
| | | | մատուցել վարկային կազմակերպության գործունեության հետ կապված վճարահաշվարկային ծառայություններ |
| | | | ներգրավել փոխառություններ և/կամ կնքել նմանատիպ գործարքներ |
| | 193 | Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի. | վարկային կազմակերպության համար սահմանվում է նորմատիվային ավելի մեղմ ռեժիմ, քան բանկերի նկատմամբ |
| | | | վարկային կազմակերպության համար սահմանվում է նորմատիվների նույն ռեժիմը, ինչպիսին բանկերինն է |
| | | | ԿԲ-ի խորհրդի որոշմամբ կարող է բանկերից ավելի խիստ նորմատիվային ռեժիմ սահմանվել |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 194 | Նշել սխալ պատասխանը.<br>Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, | ՀՀ կառավարությունը, Ազգային Ժողովի թույլտվությամբ, կարող է վարկային կազմակերպության նկատմամբ որոշակի սահմանափակումներ սահմանել |
| | | | ՀՀ կենտրոնական բանկը կարող է վարկային կազմակերպության նկատմամբ որոշակի սահմանափակումներ սահմանել |
| | | | ՀՀ ԿԲ-ը կարող է վարկային կազմակերպությունների կողմից միջոցների ներգրավման սահմանափակում նշանակել |

| | | | |
|---|---|---|---|
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 195 | Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, Կենտրոնական բանկը չի մերժում նշանակալից մասնակցության դիմումը, եթե. | անձն օրինական ուժի մեջ մտած դատավճռով զրկվել է ֆինանսական, բանկային, տնտեսական ոլորտներում պաշտոններ վարելու իրավունքից |
| | | | անձը դիտավորությամբ կատարված հանցագործություն կատարելու համար ունի դատվածություն |
| | | | տվյալ գործարքն ուղղված է, հանգեցնում է կամ կարող է հանգեցնել ազատ տնտեսական մրցակցության սահմանափակմանը |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 196 | Նշել սխալ տարբերակը.<br>Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, վարկային կազմակերպության տիպեր են համարվում. | վարկային միությունները, |
| | | | խնայողական միությունները |
| | | | ունիվերսալ վարկային կազմակերպությունները |
| | | | վճարահաշվարկային վարկային կազմակերպությունները |
| | 197 | Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, նշանակալից մասնակցություն չի համարվում այն մասնակցությունը, որով. | վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալում տվյալ մասնակցի մասնակցությունը կազմում է 5 տոկոս |
| | | | վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալում տվյալ մասնակցի մասնակցությունը կազմում է 15 տոկոս |
| | | | վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալում տվյալ մասնակցի մասնակցությունը կազմում է 25 տոկոս |
| | | | վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալում տվյալ մասնակցի մասնակցությունը կազմում է 35 տոկոս |
| | 198 | Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, նշանակալից մասնակցություն ձեռք բերելու համար ՀՀ ԿԲ ներկայացվող փաստաթղթերը կենտրոնական բանկը քննում է. | փաստաթղթերը և տեղեկությունները ստանալու պահից երկշաբաթյա ժամկետում |
| | | | փաստաթղթերը և տեղեկությունները ստանալու պահից մեկամսյա ժամկետում |
| | | | փաստաթղթերը և տեղեկությունները ստանալու պահից տասօրյա ժամկետում |
| | | | փաստաթղթերը և տեղեկությունները ստանալու պահից տասնհինգօրյա ժամկետում |
| | 199 | Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, կենտրոնական բանկը վարկային կազմակերպությունը գրանցում և լիցենզավորում է փաստաթղթերը ստանալու օրվանից. | երկշաբաթյա ժամկետում |
| | | | մեկամսյա ժամկետում |
| | | | տասնօրյա ժամկետում |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 200 | Վարկային կազմակերպության լիցենզիան կարող է գրավադրվել. | միայն ՀՀ կենտրոնական բանկի համաձայնությամբ |
| | | | վարկային կազմակերպության մասնակիցների ժողովի համաձայնությամբ և ՀՀ ԿԲ թույլտվությամբ |
| | | | ՀՀ ԿԲ թույլտվությամբ |
| | | | վարկային կազմակերպության լիցենզիան գրավադրման ենթակա չէ |

| | | | |
|---|---|---|---|
| | 201 | Նշել ամբողջական պատասխանը.<br>Կենտրոնական բանկը գրանցում և լիցենզավորում է վարկային կազմակերպությունը, եթե պահպանվել են հետևյալ պահանջները.<br>(ա) ամբողջությամբ վճարվել է վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալը<br>(բ) վարկային կազմակերպության վայրը ամբողջությամբ համապատասխանում է տեխնիկական հագեցվածության պահանջներին<br>(գ) վարկային կազմակերպության ղեկավարները համապատասխանում են ԿԲ-ի սահմանած որակավորման և մասնագիտական համապատասխանության չափանիշներին<br>(դ) վարկային կազմակերպության նշանակալից մասնակցություն ունեցող անձինք ստացել են ԿԲ համաձայնությունը<br>(ե) առկա է ՀՀ Կառավարության թույլտվությունը | միայն (ա) և (բ) |
| | | | միայն (ա), (բ), (գ) և (դ) |
| | | | (ա), (բ), (գ), (դ) և (ե) |
| | | | միայն (ա), (գ), (դ) և (ե) |
| | 202 | Նշել սխալ տարբերակը.<br>Կենտրոնական բանկը մերժում է մասնաճյուղի կամ ներկայացուցչության գրանցման դիմումը, եթե. | ներկայացվել են կեղծ կամ անարժանահավատ տեղեկություններ |
| | | | մասնաճյուղի ղեկավարները չեն համապատասխանում ԿԲ-ի սահմանած որակավորման և մասնագիտական համապատասխանության չափանիշներին |
| | | | ներկայացված փաստաթղթերը թերի են, ամբողջական չեն կամ հակասում են ՀՀ օրենքներին և այլ իրավական ակտերին |
| | | | դիմումի տրման պահին, ինչպես նաև դիմումի քննարկման ժամանակահատվածի ընթացքում վարկային կազմակերպությունը խախտել է ԿԲ սահմանած հիմնական տնտեսական նորմատիվներից թեկուզ մեկը |
| | 203 | Համաձայն «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի, իրավաբանական անձինք համարվում են փոխկապակցված, եթե. | տվյալ իրավաբանական անձը քվեարկելու իրավունքով տիրապետում է մյուսի՝ ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի 10 և ավելի տոկոսին |
| | | | նրանցից մեկի ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի 20 տոկոսից ավելիին տիրապետող ֆիզիկական անձն իրավունք ունի անուղղակի կերպով տիրապետել մյուս անձի՝ ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի 20 տոկոսից ավելիին |
| | | | նրանցից մեկի կառավարման մարմնի անդամների թվի մեկ երրորդը տիրապետում է մյուս իրավաբանական անձի բաժնետոմսերի 10 և ավելի տոկոսին |
| | | | բոլոր տարբերակներով էլ իրավաբանական անձինք համարվում են փախկապակցված |
| | 204 | Նշել ամբողջական պատասխանը.<br>Կենտրոնական բանկի կողմից վարկային կազմակերպության մասնաճյուղը կամ ներկայացուցչությունը գրանցումից հանվում է հետևյալ դեպքերում.<br>(ա) վարկային կազմակերպության դիմումի հիման վրա<br>(բ) մասնաճյուղի ղեկավարների դիմումի հիման վրա<br>(գ) վարկային կազմակերպության լուծարման դեպքում<br>(դ) հաճախորդների բողոքների հիման վրա | միայն (ա) |
| | | | միայն (ա), (բ) և (գ) |
| | | | միայն (ա) և (գ) |
| | | | (ա), (բ), (գ) և (դ) |
| | 205 | Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի. | վարկային կազմակերպության լիցենզիայի միասնական ձևը սահմանում է կենտրոնական բանկը |
| | | | վարկային կազմակերպության լիցենզիայի միասնական ձևը սահմանում է ՀՀ կառավարությունը |

| | | | |
|---|---|---|---|
| | | | վարկային կազմակերպության լիցենզիայի միասնական ձևը սահմանում է կենտրոնական բանկը՝ ՀՀ կառավարության լիազոր մարմնի հետ համատեղ |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 206 | Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, ձեռնարկատիրական վարկի կամ փոխառության տրամադրում է համարվում այն գործարքի կնքումը. | որով պարտապանը իրավաբանական կամ ֆիզիկական անձ է |
| | | | որով ֆիզիկական անձը կամ անհատ ձեռնարկատերը գործարքով ստացված միջոցները օգտագործելու է բացառապես իր կողմից իրականացվող կամ իրականացվելիք ձեռնարկատիրական գործունեության համար |
| | | | որով պարտապանը իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր է և գործարքով ստացված միջոցներն օգտագործելու է բացառապես իր կողմից իրականացվող կամ իրականացվելիք ձեռնարկատիրական գործունեության համար |
| | | | որով պարտապանը իրավաբանական անձ, անհատ ձեռնարկատեր կամ ֆիզիկական անձ է և գործարքով ստացված միջոցներն օգտագործելու է բացառապես իր կողմից իրականացվող կամ իրականացվելիք ձեռնարկատիրական գործունեության համար |
| | 207 | Վարկային կազմակերպությունը սպառողական վարկեր կամ փոխառություններ կարող է տրամադրել. | բացառապես ԿԲ-ի սահմանած կարգով |
| | | | բացառապես ԿԲ-ի և ֆինանսների նախարարության հետ համատեղ սահմանած կարգով |
| | | | բացառապես ԿԲ-ի նախնական համաձայնությամբ |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 208 | Կենտրոնական բանկի կողմից հիմնական տնտեսական նորմատիվների ռեժիմը մեղմացնելու դեպքում այդ նորմատիվներն ուժի մեջ են մտնում | կենտրոնական բանկի պաշտոնական հրապարակման պահից, եթե ԿԲ-ն ավելի ուշ ժամկետ չի սահմանել |
| | | | կենտրոնական բանկի պաշտոնական հրապարակման պահից, եթե ԿԲ-ը ՀՀ կառավարության հետ համատեղ ավելի ուշ ժամկետ չեն |
| | | | կենտրոնական բանկի պաշտոնական հրապարակման պահից վեց ամիս հետո |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 209 | Նշել սխալ տարբերակը.<br>Օրենսդրության խախտման դեպքում կենտրոնական բանկը վարկային կազմակերպության նկատմամբ կարող է կիրառել հետևյալ պատժամիջոցներից մեկը. | վարկային կազմակերպության ղեկավարի որակավորման վկայականից զրկում |
| | | | լիցենզիայի ուժը կորցրած ճանաչում |
| | | | տույժի կիրառում |
| | | | տուգանքի կիրառում |
| | 210 | Օրենսդրության խախտման դեպքում կենտրոնական բանկը, որպես լրացուցիչ պատասխանատվության միջոց, կարող է տուգանել. | վարկային կազմակերպության գործադիր մարմնի ղեկավարին կամ գլխավոր հաշվապահին |
| | | | վարկային կազմակերպության վերստուգիչ հանձնաժողովի ղեկավարին |
| | | | վարկային կազմակերպության նշանակալից մասնակցություն ունեցող անձին |
| | | | վարկային կազմակերպության խորհրդի նախագահին |
| | 211 | Օրենսդրության խախտման դեպքում կենտրոնական բանկի կողմից գործադիր մարմնի ղեկավարի նկատմամբ որպես լրացուցիչ պատասխանատվության միջոց կիրառվող տուգանքը չի կարող գերազանցել. | հարյուր հազար դրամը |
| | | | մեկ միլիոն դրամը |
| | | | երկու միլիոն դրամը |
| | | | հինգ հարյուր հազար դրամը |
| | 212 | Վարկային կազմակերպության լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու մասին ԿԲ խորհրդի որոշումը ուժի մեջ է մտնում. | զանգվածային լրատվության միջոցներով հրապարակվելու պահից |

| | | | |
|---|---|---|---|
| | | | զանգվածային լրատվության միջոցներով հրապարակվելու պահից մեկ ամսվա ընթացքում |
| | | | զանգվածային լրատվության միջոցներով հրապարակվելու պահից տասնօրյա ժամկետում |
| | | | արդարադատության նախարարությունում գրանցվելու պահից |
| | 213 | Նշել ճիշտ տարբերակը.<br>Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի. | յուրաքանչյուր տարի վարկային կազմակերպության գործունեությունը պետք է ստուգվի անկախ աուդիտի կողմից, որին նշանակում է կենտրոնական բանկը |
| | | | յուրաքանչյուր տարի վարկային կազմակերպության գործունեությունը պետք է ստուգվի անկախ աուդիտի կողմից, որին նշանակում է վարկային կազմակերպությունը |
| | | | յուրաքանչյուր եռամսյակ վարկային կազմակերպության գործունեությունը պետք է ստուգվի անկախ աուդիտի կողմից, որին նշանակում է վարկային կազմակերպությունը |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 214 | Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի. | տուգանքը գանձվում է ԿԲ նախագահի որոշմամբ |
| | | | տուգանքը գանձվում է ԿԲ հայցով՝ բացառապես դատարանի |
| | | | տուգանքը գանձվում է ԿԲ հայցով՝ ՀՀ բանկերի միության որոշմամբ |
| | | | տուգանքը գանձվում է ԿԲ հայցով՝ դատարանի որոշմամբ, եթե վարկային կազմակերպությունը համաձայն չէ տուգանքի նշանակման կամ չափի հետ |
| | 215 | Նշել սխալ պատասխանը.<br>Իր խնդիրներն իրագործելու նպատակով Կենտրոնական բանկն օրենքով սահմանված կարգով. | իրականացնում է կառավարության բանկային սպասարկումը |
| | | | հանդիսանում է կառավարության ֆինանսական գործակալն ու խորհրդատուն |
| | | | որպես վերջին ատյանի ավանդատու՝ ավանդներ է ստանում |
| | | | տնօրինում է ՀՀ միջազգային պահուստները |
| | 216 | ՀՀ կենտրոնական բանկը, որպես վերջին ատյանի վարկատու, կարող է. | ձեռք բերել բանկի բաժնետոմսերի առավելագույնը 50 տոկոսը, ընդ որում կատարված ներդրումները չպետք է գերազանցեն ՀՀ ԿԲ կապիտալի 5 տոկոսը |
| | | | բանկերին տրամադրել վեց ամիս մարման ժամկետը չգերազանցող վարկեր |
| | | | ձեռք բերել բանկի անհուսալի՝ հաշվեկշռից դուրսգրված պահանջները |
| | | | բանկին տրամադրող պետական կարճաժամկետ պարտատոմսեր |
| | 217 | Վերստուգվող անձանց մոտ ստուգումներն անցկացվում են. | ԿԲ համապատասխան ստորաբաժանման ղեկավարի որոշմամբ |
| | | | ԿԲ խորհրդի կամ նախագահի որոշմամբ |
| | | | ԿԲ խորհրդի և ՀՀ Կառավարության լիազոր մարմնի համատեղ որոշմամբ |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 218 | Նշել սխալ պատասխանը.<br>Կենտրոնական բանկի և խախտումներ թույլ տված վարկային կազմակերպության միջև կնքվող պայմանագրով կարող է նախատեսվել. | որոշակի ժամանակաշրջանում վերակազմակերպման կամ զարգացման ծրագրի իրագործում |
| | | | շահաբաժինների վճարման կասեցում |
| | | | վարկային կազմակերպության սպասարկող անձնակազմի աշխատավարձի նվազեցում և պարգևավճարների դադարեցում |
| | | | գովազդի իրականացման սահմանափակում |
| | 219 | Նշել սխալ պնդումը.<br>Համաձայն «ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի. | կենտրոնական բանկի հանձնարարարկանով վարկային կազմակերպությունը պարտավոր է ապահովել ստուգման արդյունքների վերաբերյալ տեղեկատվության ներկայացումը վարկային կազմակերպության մասնակիցներին |

| | | | |
|---|---|---|---|
| | | | կենտրոնական բանկը պատասխանատվություն է կրում վերստուգվող անձի կողմից վերստուգող խմբի անդամներին կամ կենտրոնական բանկի այլ պաշտոնատար անձանց ժամանակավորապես տրամադրված փաստաթղթերի ապահովության և վերադարձելիության համար |
| | | | ստուգման հաշվետվությունը կազմվում է 2 օրինակից, որոնք վերստուգող խմբի կողմից ստորագրվում և հանձնվում են վերստուգվող անձի ղեկավարությանը |
| | | | վերստուգվող անձը, նրա գործադիր մարմնի ղեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձը տասնհինգօրյա ընթացքում ծանոթանում է հաշվետվությանը և ստորագրում այն «Հաշվետվության հետ ծանոթացել եմ» մակագրությամբ |
| | 220 | Համաձայն «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» ՀՀ օեճքի, վարկային կազմակերպության կանոնադրական հիմնադրամը կարող է համալրվել. | ՀՀ դրամով և արտարժույթով, ընդ որում վարկային կազմակերպության կանոնադրական հիմնադրամի արտարժույթով համալրված մասը վերագնահատման ենթակա չէ |
| | | | միայն ՀՀ դրամով և Կանոնակարգ 14-ով սահմանված առաջին խմբի մեջ մտնող արտարժույթով, ընդ որում վարկային կազմակերպության կանոնադրական հիմնադրամի արտարժույթով համալրված մասը վերագնահատման եբթակա չէ |
| | | | միայն ՀՀ դրամով |
| | | | ՀՀ դրամով և արտարժույթով, ընդ որում վարկային կազմակերպության կանոնադրական հիմնադրամի արտարժույթով համալրված մասը ենթակա է վերագնահատման միայն յուրաքանչյուր հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ին |
| | 221 | Համաձայն «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի, նշված պնդումներից ո՞րն է սխալ. | կարճաժամկետ վարկերի ժամկետայնությունը և փոքրածավալ գումարների չափը սահմանվում են ԿԲ-ի և կառավարության լիազորված մարմնի իրավական ակտերով |
| | | | կապիտալի շարժի և ֆինանսական արժութային գործարքներ են համարվում ռեզիդենտի և ոչ ռեզիդենտի միջև կատարվող այն գործարքները, որոնք չեն համարվում ընթացիկ արժութային գործարքներ |
| | | | եթե ֆիզիկական անձը չի ներկայացնում իր ոչ ռեզիդենտության անհրաժեշտ հիմնավորումները կամ փաստաթղթերը, ապա նա համարվում է ռեզիդենտ ֆիզիկական անձ |
| | | | ում գործող մասնաճյուղերը, վարկային կազմակերպությունները, ինչպես նաև ԿԲ-ի կողմից լիցենզիա ստացած այլ տնտեսվարող սուբյեկտները |
| | 222 | «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի համաձայն հաշվետվություն տրամադրող անձը կարող է իրականացնել հաճախորդի պարզեցված ուսումնասիրություն՝ հաճախորդին կամ իրական շահառուին նույնականացնելիս կամ նրա ինքնությունը ստուգելս, եթե | առկա են ցածր ռիսկի չափանիշներ |
| | | | հաճախորդը քաղաքական ազդեցություն ունեցող անձ է |
| | | | բոլոր պատասխանները սխալ են |
| | | | նման հնարավորություն հաշվետվություն տրամադրող անձի համար նախատեսված չէ |
| | 223 | Համաձայն «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին » ՀՀ օրենքի՝ գործարքը կասկածելի համարելու հիմքերից է | գործարքի գումարը գերազանցում է 5 մլն ՀՀ դրամը |
| | | | հաշվետվություն տրամադրող անձի համար ակնհայտ է, որ գործարքը տնտեսական կամ իրավաչափ նպատակ չի հետապնդում |
| | | | գործարքի գումարը փոքր է 20 մլն ՀՀ դրամից |
| | | | գործարքը կատարվում է լիազորված անձի միջոցով |

| | | | |
|---|---|---|---|
| | 224 | Նշել ամբողջական պատասխանը.<br>«Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի համաձայն` հաշվետվություն տրամադրող անձինք պարտավոր են ունենալ հանցավոր ճանապարհով ձեռք բերված միջոցների շրջանառության և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելմամբ զբաղվող | առանձին աշխատակից |
| | | | կառուցվածքային առանձին ստորաբաժանում |
| | | | անձի պարտականությունները դնել այլ աշխատակցի վրա |
| | | | փողերի լվացման<br>և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելմամբ զբաղվող ներքին դիտարկումների<br>ստորաբաժանում կամ աշխատակից կամ այդ գործառույթները վերապահել մասնագիտացված<br>գործունեություն իրականացնող համապատասխան անձանց |
| | 225 | «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի համաձայն ֆինանսական հաստատությունը պետք է իրականացնի հաճախորդի հավելյալ ուսումնասիրություն | ցածր ռիսկի չափանիշների առկայության դեպքում |
| | | | երբ գործարքում ներգրավված են ֆինանսական հաստատություններ |
| | | | բարձր ռիսկի չափանիշների առկայության դեպքում |
| | | | երբ գործարքում ներգրավված են խոշոր գումարներ |
| | 226 | «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի համաձայն հաշվետվություն տրամադրող անձինք պետք է իրականացնեն հաճախորդի պատշաճ ուսումնասիրություն | բարձր ռիսկի չափանիշների առկայության դեպքում |
| | | | ցածր ռիսկի չափանիշների առկայության դեպքում |
| | | | գործարար հարաբերություն հաստատելիս կամ մեկանգամյա գործարք կնքելիս |
| | | | գործարար հարաբերության ամբողջ ընթացքում |
| | 227 | «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի համաձայն հաշվետվություն տրամադրող անձինք պետք է թարմացնեն գործարար հարաբերությունում հաճախորդի<br>նույնականացման արդյունքում ստացված տվյալները` | բոլոր պատասխանները ճիշտ են |
| | | | իրենց սահմանած հաճախականությամբ |
| | | | պայմանագրի ժամկետի երկարաձգման դեպքում |
| | | | յուրաքանչյուր ամիս |
| | 228 | «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի համաձայն դրամական փոխանցում իրականացնող հաշվետվություն տրամադրող անձինք պետք է մերժեն դրամական փոխանցման ստացումը, եթե դրամական փոխանցումը չի պարունակում | ա) փոխանցում կատարողի անունը, ազգանունը |
| | | | բ) փոխանցում կատարողի հաշվի համարը (բացակայության դեպքում` փոխանցումն ուղեկցող եզակի հղման համարը) |
| | | | «ա» և «բ» կետերից որևէ մեկի առկայության դեպքում |
| | | | ճիշտ պատասխան նշված չէ |
| | 229 | «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի համաձայն հաշվետվություն տրամադրող անձինք լիազոր մարմնի նորմատիվ իրավական ակտերով սահմանված կարգով պետք է պահպանեն առնվազն հինգ տարի | ա) հաճախորդի նույնականացման տվյալները |
| | | | բ) գործարքի (գործարար հարաբերության) հիմնական պայմանների վերաբերյալ<br>տվյալները, որոնք հնարավորություն կտան վերականգնելու գործարքի (գործարար հարաբերության) իրական պատկերը |
| | | | և` «ա», և «բ» կետերում նշված տեղեկությունները |
| | | | նման պարտավորություն սահմանված չէ |

| | | | |
|---|---|---|---|
| | 230 | Նշել սխալ պնդումը.<br>Համաձայն «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի. | բանկերը պարտավոր են տեխնիկական այնպիսի միջոցներ ձեռնարկել և կազմակերպչական այնպիսի կանոններ սահմանել, որոնք անհրաժեշտ են բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները պատշաճ պահպանելու համար |
| | | | բանկային գաղտնիքի հրապարակում է համարվում բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները բանավոր կամ գրավոր ձևով զանգվածային լրատվության միջոցներով կամ այլ կերպ հրապարակելը կամ տարածելը |
| | | | որոշակի հաճախորդի վերաբերյալ բանկային գաղտնիք կազմող տեղեկությունների կարող են հրապարակել տվյալ հաճախորդի գրավոր կամ դատարանում տրված բանավոր թույլտվությամբ |
| | | | օրենքի պահանջների խախտումներն առաջացնում են տուգանք՝ 500.000 դրամից մինչև 20.000.000 դրամը և կարող են առաջացնել օրենքով սահմանված քրեական պատասխանատվություն |
| | 231 | Նշել սխալ պնդումը.<br>Բանկերը բանկային գաղտնիք կազմող տեղեկություններ կարող են. | հրապարակել, եթե առկա է ԿԲ թույլտվությունը |
| | | | տրամադրել հաճախորդի ժառանգներին, եթե վերջիններս բանկին ներկայացրել են ժառանգության իրավունքները հիմնավորող բավարար փաստաթղթեր |
| | | | տրամադրել բանկում աուդիտ իրականացնող աուդիտորական կազմակերպությանը |
| | | | տրամադրել Կենտրոնական բանկին |
| | 232 | Նշել սխալ պատասխանը.<br>«Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի իմաստով, երրորդ անձ չեն համարվում. | կենտրոնական բանկը |
| | | | վարկային կազմակերպությունները |
| | | | իրավապահ մարմինները |
| | | | բանկերը |
| | 233 | Նշել սխալ պատասխանը.<br>Համաձայն «Բանկերի, վարկային կազմակերպությունների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» ՀՀ օրենքի, ադմինիստրացիայի գործունեության խնդիրն է. | վարկային կազմակերպության ակտիվների ու պարտավորությունների մի մասի կամ դրանք ամբողջությամբ վաճառելը |
| | | | վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալն ավելացնելու կամ օրենքով սահմանված կարգով փոխառությունների միջոցով ներդրումների ներգրավմամբ վարկային կազմակերպության ֆինանսական կայունության վերականգնումը |
| | | | վարկային կազմակերպության ակտիվները հնարավոր կարճ ժամկետում հավաքագրելու միջոցով վարկային կազմակերպության ֆինանսական կայունության վերականգնումը |
| | | | բաժնետերերի օրինական պահանջների բավարարումը |
| | 234 | Համաձայն «Բանկերի, վարկային կազմակերպությունների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» ՀՀ օրենքի, ադմինիստրացիայի ղեկավարի դիմումի հիման վրա դատարանը կարող է անվավեր ճանաչել. | ադմինիստրացիայի նշանակմանը նախորդող երեք տարվա ընթացքում բանկի մասնակիցներին (բաժնետերերին, փայատերերին) բաշխված շահութաբաժինները, նրանց կամ այլ անձանց օգտին անհատույց օտարված գույքը |
| | | | ադմինիստրացիայի նշանակմանը նախորդող վեց ամսվա ընթացքում բանկի մասնակիցներին (բաժնետերերին, փայատերերին) բաշխված շահութաբաժինները, նրանց կամ այլ անձանց օգտին անհատույց օտարված գույքը |
| | | | ադմինիստրացիայի նշանակմանը նախորդող մեկ տարվա ընթացքում ղեկավարներին վճարված աշխատավարձը |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |

| | | | |
|---|---|---|---|
| | 235 | Համաձայն «Բանկերի, վարկային կազմակերպությունների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» ՀՀ օրենքի, անվճարունակության հիմքերից որևէ մեկը բացահայտելու դեպքում ԿԲ-ն երկշաբաթյա ժամկետում կարող է.<br>(ա) վարկային կազմակերպությունում նշանակել ժամանակավոր ադմինիստրացիայի ղեկավար<br>(բ) վարկային կազմակերպության սնանկության մասին դիմում ներկայացնել դատարան<br>(գ) վարկային կազմկերպության լիցենզիան ուժը կորցրած ճանաչել<br>(դ) վարկային կազմակերպության լիցենզիան ճանաչել անվավեր | միայն (ա) և (գ) |
| | | | միայն (ա) և (բ) |
| | | | միայն (բ) և (գ) |
| | | | միայն (ա) և (դ) |
| | 236 | Համաձայն «Բանկերի, վարկային կազմակերպությունների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» ՀՀ օրենքի, վարկային կազմակերպության սնանկության մասին դիմումով կենտրոնական բանկը դատարան է դիմում, եթե.<br>(ա) վարկային կազմակերպությունում առկա են վարկային կազմակերպության անվճարունակ ճանաչելու հիմքերից որևէ մեկը<br>(բ) վարկային կազմակերպության ադմինիստրացիայի գործունեության ժամկետում ԿԲ կողմից սահմանված պարբերականությամբ խախտել է հիմնական տնտեսական նորմատիվները<br>(գ) ադմինիստրացիայի գործունեության ընթացքում ԿԲ-ին ակնհայտ է դառնում, որ վարկային կազմակերպությունը լուծարելու դեպքում հնարավոր է պահպանել վարկային կազմակերպության միջոցների ավելի մեծ քանակ, քան ադմինիստրացիայի գործունեությունը շարունակելիս | միայն (ա) և (բ) |
| | | | միայն (բ) և (գ) |
| | | | միայն (գ), |
| | | | միայն (ա) և (գ) |
| | 237 | Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, վարկային կազմակերպության մասնաճյուղերի գրանցման դիմումը կենտրոնական բանկի նախագահը բավարարում կամ մերժում է. | տասնհինգօրյա ժամկետում |
| | | | մեկամսյա ժամկետում |
| | | | մեկամսյա ժամկետում, որը ՀՀ ԿԲ խորհրդի որոշմամբ կարող է կասեցվել մինչև 3 ամիս ժամկետով |
| | | | կենտրոնական բանկը մասնաճյուղը չի գրանցում |
| | 238 | Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, վարկային միությունները դրամական միջոցներ են ներգրավում. | իրենց հաճախորդներից, |
| | | | բացառապես իրենց մասնակիցներից, |
| | | | իրենց մասնակիցներից, իսկ Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով նախատեսված դեպքերում՝ նաև այլ անձանցից, |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ: |
| | 239 | Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, լիզինգային կազմակերպություններ են համարվում այն վարկային կազմակերպությունները, որոնք | բացառապես իրականացնում են լիզինգ, |
| | | | մասնագիտացված են ֆինանսական գործարքների մեջ, |
| | | | հիմնականում իրականացնում են ֆինանսական վարձակալության գործարքերի կնքում, |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ: |
| | 240 | Համաձայն Քաղաքացիական օրենսգրքի, չեկը դա՝ | ներդրումային արժեթուղթ է, որը պարունակում է չեկ տվողի՝ որևէ բանով չպայմանավորված գրավոր կարգադրությունը, չեկում նախատեսված ժամկետը լրանալուն հաջորդող 10 օրվա ընթացքում որոշակի գումարը վճարել չեկը ներկայացնողին, |
| | | | վճարային արժեթուղթ է, որը պարունակում է չեկ տվողի որևէ բանով չպայմանավորված գրավոր կարգադրությունը բանկին՝ չեկը տիրապետողին վճարել դրանում նշված գումարը, |

| | | | |
|---|---|---|---|
| | | | ներդրումային արժեթուղթ է, որը պարունակում է չեկ տվողի՝ որևէ բանով չպայմանավորված գրավոր կարգադրությունը բանկին՝ չեկը տիրապետողին վճարելու չեկում նշված գումարը, |
| | | | ներդրումային արժեթուղթ է, որը հավաստում է չեկ տիրապետողի իրավունքը ստանալ շահաբաժիններ ընկերության շահույթից: |
| | 241 | Համաձայն Քաղաքացիական օրենսգրքի, որպես ֆինանսական գործակալ՝ դրամական պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման պայմանագիր կարող են կնքել՝ | միայն բանկերը, |
| | | | միայն բանկերը և վարկային կազմակերպությունները, |
| | | | միայն բանկերը, վարկային կազմակերպությունները և նման տեսակի գործունեության իրականացման թույլտվություն ունեցող այլ առևտրային կազմակերպությունները: |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ: |
| | 242 | Համաձայն Քաղաքացիական օրենսգրքի, նշված պնդումներից, ո՞րն է սխալ՝ | դրամական պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման պայմանագիրը կնքվում է գրավոր, |
| | | | ֆինանսական գործակալի կողմից դրամական պահանջին հաջորդող զիջում  չի թույլատրվում, եթե այլ բան նախատեսված չէ դրամական պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման պայմանագրով |
| | | | պարտապանը պարտավոր է ֆինանսական գործակալին վճարել՝ պայմանով, եթե նա հաճախորդից կամ ֆինանսական գործակալից գրավոր ծանուցում է ստացել դրամական պահանջը տվյալ ֆինանսական գործակալին զիջելու մասին, և այդ ծանուցման մեջ սահմանված է կատարման ենթակա դրամական պահանջը, ինչպես նաև նշված է այն գործակալը, ում պետք է վճարվի |
| | | | սխալ պատասխանը նշված չէ |
| | 243 | Համաձայն Քաղաքացիական օրենսգրքի, նշված պնդումներից որն է սխալ՝ | ֆինանսական վարձակալության պայմանագիրը կնքվում է գրավոր, |
| | | | ֆինանսական վարձակալության պայմանագրի առարկա կարող է լինել ձեռնարկատիրական գործունեության համար օգտագործվող ցանկացած սպառվող գույք, |
| | | | անշարժ գույքի ֆինանսական վարձակալության պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման: |
| | | | անշարժ գույքի ֆինանսական վարձակալության պայմանագրից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման |
| | 244 | Համաձայն Քաղաքացիական օրենսգրքի, նշված պնդումներից, որն է սխալ՝ Ֆինանսական վարձակալության պայմանգրով կարող է նախատեսվել, որ | վարձակալված գույքը, վարձակալության ժամկետի ավարտից հետո, պայմանագրով նախատեսված գինը վճարելուց հետո, անցնում է վարձակալի սեփականությանը, |
| | | | վարձակալված գույքը, մինչև վարձակալության պայմանագրի ավարտը, պայմանգրով նախատեսված գինը վճարելուց հետո, անցնում է վարձակալի սեփականությանը, |
| | | | վարձատուն պարտավորվում է վարձակալի նշած գույքը առանց վճարի հանձնել վարձակալի ժամանակավոր տիրապետմանը՝ ձեռնարկատիրական նպատակներով օգտագործելու համար:: |
| | | | վարձակալված գույքը, մինչև վարձակալության պայմանագրի ավարտը, պայմանգրով նախատեսված գինը վճարելուց հետո, չի անցնում վարձակալի սեփականությանը, |
| | 245 | Համաձայն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի, փոխառության պայմանագիրը կնքված է համարվում. | նոտարի կողմից վավերացվելու պահից |
| | | | կողմերի ստորագրելու պահից |
| | | | դրամ կամ այլ գույք հանձնելու պահից |
| | | | կենտրոնական բանկում հաստատվելու պահից |
| | 246 | Համաձային ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի, պետական փոխառության պայմանագրով որպես փոխառու կարող է (են) հանդես գալ. | Հայաստանի Հանրապետությունը և իրավաբանական անձինք |

| | | | |
|---|---|---|---|
| | | | Հայաստանի Հանրապետությունը |
| | | | Հայաստանի Հանրապետությունը և միջազգային կազմակերպությունները |
| | | | Հայաստանի Հանրապետությունը և օտարերկրյա |
| | 247 | Նշել սխալ պնդումը. Համաձայն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի. | պետական փոխառությունները կամավոր են |
| | | | փոխառության պայմանագիրը կնքվում է գրավոր կամ բանավոր |
| | | | փոխառության պայմանագիրը կնքված է համարվում դրամ կամ այլ գույք հանձնելու պահից |
| | | | փոխառության գումարը համարվում է վերադարձված այն փոխատուին հանձնելու կամ նրա բանկային հաշվին փոխանցելու պահին, եթե այլ բան նախատեսված չէ փոխառության պայմանագրով |
| | 248 | Համաձայն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի, վարկային պայմանագիրը կնքվում է. | բացառապես գրավոր |
| | | | բանավոր, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ |
| | | | գրավոր կամ բանավոր՝ ըստ կողմերի համաձայնության |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 249 | Համաձայն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի. | փոխառության պայմանագիրը կնքվում է գրավոր |
| | | | վարկային պայմանագիրը կնքվում է գրավոր |
| | | | դրամական պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման պայմանագիրը կնքվում է գրավոր |
| | | | բոլոր պատասխանները ճիշտ են |
| | 250 | Համաձայն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի, բանավոր կարող է կնքվել. | վարկային պայմանագիրը |
| | | | գրավի պայմանագիրը |
| | | | փոխառության պայմանագիրը |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 251 | Համաձայն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի, ընդհանուր համատեղ սեփականության ներքո գտնվող գույքը կարող է գրավ դրվել. | յուրաքանչյուր սեփականատիրոջ գրավոր համաձայնությամբ |
| | | | երկու և ավելի սեփականատերերի գրավոր համաձայնությամբ |
| | | | սեփականատերերի կեսից ավելիի գրավոր համաձայնությամբ |
| | | | բոլոր սեփականատերերի գրավոր համաձայնությամբ |
| | 252 | Համաձայն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի, ընդհանուր բաժնային սեփականության մասնակիցը կարող է ընդհանուր գույքի նկատմամբ իրավունքում իր բաժինը գրավ դնել. | դատարանի թույլտվության հիման վրա |
| | | | մյուս սեփականատերերի գրավոր համաձայնությամբ |
| | | | առանց մյուս սեփականատերերի համաձայնության |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 253 | Նշել սխալ պնդումը. Համաձայն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի. | գրավ դրված գույքը կարող է դառնալ այլ գրավի առարկա |
| | | | հաջորդող գրավը թույլատրվում է ըստ վարկային կազմակերպության խորհրդի որոշման |
| | | | հաջորդող գրավի դեպքում նոր գրավառուի պահանջները բավարարվում են գրավի առարկայի արժեքից նախորդ գրավառուի պահանջները բավարարելուց հետո |
| | | | գրավի իրավունքը ծագում է գրավի պայմանագիրը կնքելու պահից, իսկ այն դեպքում, երբ գրավի իրավունքը ենթակա է պետական գրանցման, ապա այն գրանցելու պահից |
| | 254 | Համաձայն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի, եթե գրավ դրված գույքը գտնվում է գրավատուի մոտ, ապա օրենքով կամ պայմանագրով այլ բան նախատեսված չլինելու դեպքում գրավատուն պարտավոր է. | գրավ դրված գույքը լրիվ արժեքով ապահովագրել կորստյան և վնասվածքի ռիսկերից |
| | | | անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել գրավ դրված գույքը պահպանելու համար |

| | | | |
|---|---|---|---|
| | | | մյուս կողմին անհապաղ տեղեկացնել գրավ դրված գույքի կորստյան կամ վնասվածքի սպառնալիքի ծագման մասին |
| | | | բոլոր պատասխանները ճիշտ են |
| | 255 | Համաձայն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի, գրավառուն իրավունք ունի պահանջել վաղաժամկետ կատարելու գրավով ապահովված պարտավորությունը, իսկ այդ պահանջը չբավարարելու դեպքում` բռնագանձում տարածելու գրավի առարկայի վրա, եթե. | գրավատուի մոտ թողնված գրավի առարկան պայմանագրի պայմանների խախտմամբ դուրս է եկել նրա տիրապետությունից |
| | | | գրավատուն խախտել է գրավի առարկան փոխարինելու կանոնները |
| | | | գրավատուն խախտել է հաջորդող գրավի կանոնը |
| | | | բոլոր պատասխանները ճիշտ են |
| | 256 | Նշել ամբողջական պատասխանը.<br>Համաձայն ՀՀ Քաղաքացիական օրնսգրքի, գրավի առարկայի վրա բռնագանձում կարող է տարածվել միայն դատարանի վճռով, եթե.<br>(ա) գրավի պայմանագիր կնքելու համար պահանջվել է այլ անձի համաձայնություն կամ թույլտվություն<br>(բ) գրավի առարկան հանրության համար նշանակալից պատմական արժեք ունեցող գույք է | միայն (ա) |
| | | | միայն (բ) |
| | | | (ա) և (բ) |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 257 | Համաձայն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի, գրավի տեսակ չի համարվում. | կոշտ գրավը |
| | | | գրավականը |
| | | | իրավունքների գրավի |
| | | | խիստ գրավը |
| | 258 | Համաձայն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի, գրավական է համարվում այն գրավը, որի առարկան. | թողնվում է գրավատուի մոտ` գրավառուի փականքի տակ |
| | | | թողնվում է գրավատուի մոտ` գրավի մասին վկայող նշաններով |
| | | | անցնում է գրավառուի տիրապետմանը |
| | | | պահվում է բանկում կամ նոտարի մոտ |
| | 259 | Համաձայն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի, այն գրավը, որի առարկան թողնվում է գրավատուի մոտ` գրավառուի փականքի տակ կամ գրավի մասին վկայող նշաններով, | շրջանառության մեջ գտնվող ապրանքների գրավ |
| | | | գրավական |
| | | | հիփոթեք |
| | | | կոշտ գրավ |
| | 260 | Համաձայն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի. | օգտագործման իրավունքը գույքը փաստացի օգտագործելու իրավաբանորեն ապահովված հնարավորությունն է |
| | | | տիրապետման իրավունքը գույքից դրա օգտակար բնական հատկությունները քաղելու, ինչպես նաև դրանից օգուտ ստանալու իրավաբանորեն ապահովված հնարավորությունն է |
| | | | տնօրինման իրավունքը գույքի ճակատագիրը որոշելու իրավաբանորեն ապահովված հնարավորությունն է |
| | | | բոլոր պատասխանները ճիշտ են |
| | 261 | Համաձայն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի, ֆինանսական լիզինգի պայմանագրի պարտադիր պայման է, որ. | լիզինգի առարկա հանդիսացող գույքը վաճառողի և ձեռք բերվող գույքի ընտրությունը կատարում է վարձատուն |
| | | | լիզինգի պայմանագրի ավարտից հետո այն անցնում է լիզինգառուին |
| | | | ֆինանսական վարձակալության առարկա կարող է լինել միայն շարժական գույքը |
| | | | անշարժ գույքի ֆինանսական վարձակալության պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման |
| | 262 | Նշել սխալ պնդումը.<br>Համաձայն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի. | վարկային պայմանագրով  բանկը կամ այլ վարկային կազմակերպությունը պարտավորվում է պայմանագրով նախատեսված չափերով և պայմաններով դրամական միջոցներ տրամադրել փոխառուին, իսկ փոխառուն պարտավորվում է վերադարձնել ստացված գումարը և տոկոսներ վճարել դրանից |

| | | | |
|---|---|---|---|
| | | | փոխառության և վարկային պայմանագրերը կնքվում են գրավոր |
| | | | փոխառություն կարող է տրամադրել ցանկացած անձ, իսկ վարկ՝ միայն բանկ կամ այլ վարկային կազմակերպություն |
| | | | փոխառությունը և վարկը կարող է տրամադրվել առանց տոկոսների վճարման պայմանի |
| | 263 | Նշել ամբողջական պատասխանը.<br>Համաձայն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի, արժեթուղթ է համարվում.<br>(ա) պարտատոմսը<br>(բ) բաժնետոմսը<br>(գ) երկակի պահեստային վկայագիրը<br>(դ) հասարակ վկայագիրը | միայն (ա) և (բ) |
| | | | միայն (ա), (բ) և (դ) |
| | | | միայն (ա), (բ) և (գ) |
| | | | (ա), (բ), (գ), (դ) |
| | 264 | Համաձայն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի, արժեթուղթ չի համարվում. | չեկը, |
| | | | կոնոսամենտը |
| | | | բանկային վկայագիրը |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 265 | Նշել սխալ պնդումը.<br>Համաձայն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի. | պարտատոմսը ինվեստիցիոն արժեթուղթ է |
| | | | հասարակ մուրհակը և փոխանցելի մուրհակը վճարային արժեթղթեր |
| | | | կոնոսամենտը տիտղոսային արժեթուղթ է |
| | | | չեկը ինվեստիցիոն արժեթուղթ է |
| | 266 | Համաձայն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի. | որպես ֆինանսական գործակալ՝ կարող են հանդես գալ բանկերը, այլ վարկային կազմակերպությունները, ինչպես նաև նման տեսակի գործունեության իրականացման թույլտվություն ունեցող այլ առևտրային կազմակերպությունները |
| | | | զիջման առարկա կարող է լինել ինչպես ներկա, այնպես էլ ապագա դրամական պահանջը |
| | | | պարտապանի նկատմամբ դրամական պահանջը հաճախորդը կարող է ֆինանսական գործակալին զիջել նաև վերջինիս հանդեպ իր պարտավորությունների կատարումն ապահովելու նպատակով |
| | | | բոլոր պատասխանները ճիշտ են |
| | 267 | Նշել սխալ պնդումը.<br>Համաձայն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի. | փոխառության պայմանագրով մեկ կողմը (փոխատուն) մյուս կողմի (փոխառուի) սեփականությանն է հանձնում դրամ կամ տեսակային հատկանիշներով որոշվող այլ գույք, իսկ փոխառուն պարտավորվում է փոխատուին վերադարձնել միևնույն գումարի դրամ (փոխառության գումար) կամ փոխատուից ստացված գույքին հավասար քանակի և նույն տեսակի ու որակի գույք |
| | | | ի հավաստումն փոխառության պայմանագրի և դրա պայմանների կարող է ներկայացվել փոխառուի տված ստացականը կամ փոխատուի կողմից փոխառուին որոշակի դրամական գումար կամ որոշակի քանակի գույք տալը հավաստող այլ փաստաթուղթ |
| | | | փոխառության պայմանագրում հստակ պետք է սահմանվեն տոկոսների չափը և հաշվարկման կարգը, ընդ որում տոկոսների չափը չի կարող գերազանցել ՀՀ ԿԲ սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքը |
| | | | այն դեպքում, երբ փոխառության գումարը վերադարձնելու ժամկետը պայմանագրով որոշված չէ կամ որոշված է ցպահանջ, փոխառության գումարը փոխառուն պետք է վերադարձնի այդ մասին փոխատուի պահանջը ներկայացնելու օրվանից երեսնօրյա ժամկետում, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով |

| | | | |
|---|---|---|---|
| | 268 | «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի համաձայն, բաժնետիրական ընկերություն հանդիսացող վարկային կազմակերպության տարեկան ժողովի հաստատմանը ներկայացվող տարեկան հաշվետվության, հաշվապահական հաշվեկշռի, շահույթների և վնասների հաշվի հավաստիությունը պետք է հաստատվի՝ | ընկերության խոշոր հաճախորդների եզրակացությամբ, |
| | | | ընկերության վերստուգող հանձնաժողովի եզրակացությամբ, |
| | | | ընկերության կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունեցող բաժնետիրոջ եզրակացությամբ, |
| | | | բոլոր պատասխանները ճիշտ են: |
| | 269 | Համաձայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի, բաժնետիրական ընկերություն հանդիսացող վարկային կազմակերպությունների խորհրդի անդամների պարգևավճարների և/կամ փոխհատուցման չափը և վճարման կարգը սահմանում է | ՀՀ կենտրոնական բանկը, |
| | | | վարկային կազմակերպության մասնակիցների ընդհանուր ժողովի ներկայացմամբ՝ ՀՀ Կենտրոնական բանկը, |
| | | | վարկային կազմակերպության մասնակիցների ընդհանուր ժողովը, |
| | | | վարկային կազմակերպության խորհրդի նախագահը: |
| | 270 | Համաձայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի նշվածներից որն է համարվում բաժնետիրական ընկերություն հանդիսացող վարկային կազմակերպության խորհրդի բացառիկ իրավունք | տարեկան արդյունքներով շահաբաժինների վճարման մասին որոշման ընդունումը, |
| | | | ընկերության կառավարման մարմինների գործունեությունը կանոնակարգող ներքին փաստաթղթերի հաստատումը, |
| | | | ընկերության կանոնադրության հաստատումը, |
| | | | աուդիտ իրականացնող անձի հաստատումը: |
| | 271 | «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի համաձայն, բաժնետիրական ընկերություն հանդիսացող վարկային կազմակերպության գործադիր մարմինը ձևավորվում է | բացառապես վարկային կազմակերպության մասնակիցների ընդհանուր ժողովի կողմից, |
| | | | վարկային կազմակերպության խորհրդի կողմից, |
| | | | վարկային կազմակերպության խորհրդի ներկայացմամբ՝ մասնակիցների ընդհանուր ժողովի կողմից, |
| | | | վարկային կազմակերպության մասնակիցների ընդհանուր ժողովի կողմից, եթե կանոնադրությամբ այդ իրավունքը վերապահված չէ խորհրդին: |
| | 272 | Նշել ճիշտ տարբերակը.<br>«Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի համաձայն, բաժնետիրական ընկերություն հանդիսացող վարկային կազմակերպության հաստիքացուցակը հաստատում է<br>(ա)ընկերության գործադիր մարմինը, եթե կանոնադրությամբ կամ ժողովի որոշմամբ այդ լիազորությունը փոխանցվել է ընկերության գործադիր մարմնին,<br>(բ) ընկերության խորհուրդը,<br>(գ) ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովը. | միայն (ա), |
| | | | միայն (բ), |
| | | | միայն (գ), |
| | | | (ա) կամ (բ): |
| | 273 | Նշված պնդումներից որն է սխալ.<br>«Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ | խորհրդի անդամների լիազորությունների ընդհանուր տևողությունը չի սահմանափակվում, |
| | | | խորհրդի քանակական կազմը սահմանվում է ժողովի կողմից, որը չի կարող 3 անդամից պակաս լինել, |
| | | | խորհրդի անդամ կարող են լինել միայն ընկերության մասնակիցները կամ բաժնետերերը, |
| | | | գործադիր մարմնի ներկայացուցիչները չեն կարող խորհրդում մեծամասնություն կազմել: |

| | | | |
|---|---|---|---|
| | 274 | «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի համաձայն նշված լիազորություններից բաժնետիրական ընկերություն հանդիսացող վարկային կազմակերպության խորհուրդը իրավասու է իրականացնել | ընկերության բաժնետոմսերի անվանական արժեքի մեծացման կամ լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման միջոցով կանոնադրական կապիտալի ավելացումը, եթե կանոնադրությամբ կամ ժողովի որոշմամբ նրան տրված են այդպիսի լիազորություններ |
| | | | միջանկյալ հաշվեկշռի հաստատումը, |
| | | | ուղիղ իրականացնող անձի հաստատումը, եթե կանոնադրությամբ կամ ժողովի որոշմամբ նրան տրված են այդպիսի լիազորություններ, |
| | | | նշված բոլոր լիազորությունների իրականացման բացառիկ իրավասությունը պատկանում է ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովին: |
| | 275 | «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի համաձայն, նշված պնդումներից որն է սխալ | այն կազմակերպություններում որտեղ խորհուրդ ձևավորված չէ, խորհրդի իրավասությունները իրականացնում է մասնակիցների ընդհանուր ժողովը, |
| | | | օրենքով սահմանված մասնակիցների ընդհանուր ժողովի բացառիկ բոլոր իրավասությունները կարող են փոխանցվել ընկերության խորհրդին, եթե կանոնադրությամբ նման դրույթ նախատեսված է, |
| | | | ընկերության խորհրդի նախագահին ընտրում են ընկերության խորհրդի անդամները` խորհրդի անդամների կազմից, |
| | | | խորհրդի անդամների լիազորությունների ընդհանուր տևողությունը չի սահմանափակվում: |
| | 276 | «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի համաձայն, բաժնետիրական ընկերություն հանդիսացող վարկային կազմակերպության ուղիղ իրականացնող անձի հետ պայմանագիրը կնքում է` | վարկային կազմակերպության գործադիր տնօրենը, |
| | | | վարկային կազմակերպության գործադիր տնօրենը, կամ վեջինիս կողմից տրված լիազորագրի հիման վրա` վարկային կազմակերպության աշխատակիցը, |
| | | | վարկային կազմակերպության խորհրդի նախագահը, |
| | | | վարկային կազմակերպության մասնակիցների ընդհանուր ժողովի նախագահը: |
| | 277 | Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն հանդիսացող վարկային կազմակերպության խորհրդի բացառիկ իրավասությունն է | ընկերության տարեկան հաշվապահական հաշվեկշռի հաստատումը, |
| | | | ընկերության մասնաճյուղի ստեղծումը, |
| | | | ընկերության կանոնադրության հաստատումը, |
| | | | ՍՊԸ-ների խորհրդի բացառիկ իրավասությունները սահմանվում են ընկերության կանոնադրությամբ: |
| | 278 | «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի համաձայն, բաժնետիրական ընկերություն հանդիսացող վարկային կազմակերպության գործադիր տնօրենը միաժամանակ հանդիսանում է վարկային կազմակերպության | խորհրդի անդամ, |
| | | | վարչության նախագահ (կանոնադրությամբ վարչություն նախատեսված լինելու դեպքում` ) |
| | | | վերստուգիչ հանձնաժողովի նախագահ, |
| | | | խորհրդի նախագահի տեղակալ: |
| | 279 | Նշված պնդումներից որն է  սխալ.<br>«Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի համաձայն` | ընկերության գլխավոր տնօրենը ներկայացնում է ընկերությունը Հայաստանի Հանրապետությունում, |
| | | | ընկերության գլխավոր տնօրենը ներկայացնում է ընկերությունը արտասահմանում, |
| | | | ընկերության գլխավոր տնօրենը տնօրինում է ընկերության գույքը, բացառությամբ ֆինանսական միջոցների, որը տնօրինում է ընկերության խորհուրդը, |
| | | | ընկերության գլխավոր տնօրենը  գործում է առանց լիազորագրի: |
| | 280 | Համաձայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի, ընկերության ընդհանուր ժողովի իրավասությանն են պատկանում. | կանոնադրության հաստատումը |

| | | | |
|---|---|---|---|
| | | | ընկերության վերակազմակերպումը |
| | | | հաշվիչ հանձնաժողովի ձևավորումը |
| | | | բոլոր պատասխանները ճիշտ են |
| | 281 | Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, վարկային կազմակերպությունը կարող է. | ընդունել ավանդներ միայն ֆիզիկական անձանցից |
| | | | ընդունել ավանդներ միայն իրավաբանական անձանցից |
| | | | ընդունել ավանդներ իրավաբանական, իսկ ԿԲ համաձայնությամբ` նաև ֆիզիկական անձանցից |
| | | | բոլոր  պատասխանները սխալ են |
| | 282 | Համաձայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի, ընկերության ընդհանուր ժողովի իրավասությանն են պատկանում. | ընկերության աուդիտն իրականացնող անձի վճարման չափի սահմանումը |
| | | | ընկերության մասնաճյուղերի և հիմնարկների ստեղծումը |
| | | | ընկերության պահուստային հիմնադրամի օգտագործումը |
| | | | հայտարարված բաժնետոմսերի ծավալի առավելագույն չափի սահմանումը |
| | 283 | Բաժնետիրական ընկերություն հանդիսացող վարկային կազմակերպության բաժնետերերի ընդհանուր ժողովի իրավասությանն են պատկանում. | ընկերության գործունեության հիմնական ուղղությունների որոշումը |
| | | | ընկերության աուդիտն իրականացնող անձի վճարման չափի սահմանումը |
| | | | ամենամյա ծախսերի նախահաշվի և դրա կատարողականի հաստատումը |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 284 | Համաձայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի, հաշվիչ հանձնաժողովի ձևավորումը հանդիսանում է. | ընկերության ընդհանուր ժողովի իրավասությունը |
| | | | ընկերության խորհրդի իրավասությունը |
| | | | ընկերության գլխավոր տնօրենի իրավասությունը |
| | | | ընկերության վերստուգող հանձնաժողովի իրավասությունը |
| | 285 | Համաձայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի, ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք չունեն. | ընկերության հասարակ բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող  բաժնետերերը |
| | | | ընկերության բաժնետերեր չհանդիսացող խորհրդի անդամները |
| | | | ընկերության վերստուգող հանձնաժողովի անդամները |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 286 | Համաձայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի, ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեն. | ընկերության հասարակ բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող  բաժնետերերը` խորհրդակցական ձայնի իրավունքով |
| | | | ընկերության արտոնյալ բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող   բաժնետերերը` խորհրդակցական ձայնի իրավունքով |
| | | | ընկերության բաժնետերեր չհանդիսացող խորհրդի անդամները` խորհրդակցական ձայնի իրավունքով |
| | | | բոլոր պատասխանները ճիշտ են |
| | 287 | Համաձայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի, ընկերությունում պետք է ստեղծվի խորհուրդ, եթե. | ընկերությունն ունի 50 և ավելի բաժնետեր |
| | | | ընկերությունն իրականացնում է առևտրային գործունեություն |
| | | | ընկերության բաժնետերերի 50 և ավելի տոկոսը կայացրել է խորհուրդ ձևավորելու որոշում |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 288 | Համաձայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի, ընկերության խորհրդի բացառիկ իրավասությանն են պատկանում. | կանոնադրությունում փոփոխությունների և լրացումների կատարումը |
| | | | ընկերության աուդիտն իրականացնող անձի հաստատումը |
| | | | ընկերության գործունեության հիմնական ուղղությունների որոշումը |
| | | | բոլոր պատասխանները ճիշտ են |

| | | | |
|---|---|---|---|
| | 289 | Նշել ամբողջական պատասխանը.<br>Համաձայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի, ընկերության ժողովի իրավասությանն են պատկանում.<br>(ա) ընկերության վերակազմակերպումը<br>(բ) բաժնետոմսերի կոնսոլիդացիան<br>(գ) ընկերության պահուստային հիմնադրամի օգտագործումը | միայն (ա) |
| | | | միայն (ա) և (բ) |
| | | | միայն (բ) և (գ) |
| | | | (ա), (բ) և (գ) |
| | 290 | Նշել սխալ պնդումը.<br>Համաձայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի. | խորհուրդը պետք է ստեղծվի 50 և ավելի բաժնետեր ունեցող ընկերությունում |
| | | | խորհրդի բացառիկ իրավասությանն է պատկանում ընկերության գործունեության հիմնական ուղղությունների որոշումը |
| | | | խորհրդի բացառիկ իրավասության ենթակա հարցերը կարող են փոխանցվել ընկերության գործադիր մարմնի լուծմանը միայն ընկերության ժողովի համաձայնությամբ |
| | | | ընկերությունը վարում է խորհրդի անդամների ռեեստր, որը բաց է ընկերության բաժնետերերի ծանոթացման համար |
| | 291 | Համաձայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի, խորհրդի անդամների լիազորությունների ընդհանուր տևողությունը կազմում է. | մեկ տարի |
| | | | երեք տարի |
| | | | հինգ տարի |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 292 | Համաձայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի, եթե ընկերության խորհրդի անդամների թիվը նվազում է կանոնադրությամբ սահմանված թվի կեսից, ապա. | ընկերությունը պետք է լուծարվի |
| | | | ընկերությունը պետք է վերակազմակերպվի |
| | | | ընկերությունը պետք է այն լրացնելու նպատակով արտահերթ ժողով գումարի |
| | | | ընկերությունը պետք է փոփոխի կանոնադրությունը |
| | 293 | Համաձայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի, ընկերության գործադիր մարմինների ձևավորումը կատարվում է. | բացառապես ընկերության ժողովի որոշմամբ |
| | | | բացառապես ընկերության խորհրդի որոշմամբ |
| | | | ընկերության ժողովի և խորհրդի համատեղ որոշմամբ |
| | | | ընկերության ժողովի որոշմամբ, եթե կանոնադրությամբ այդ հարցերը չեն վերապահված խորհրդի իրավասությանը |
| | 294 | Նշել սխալ պնդումը.<br>Համաձայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի. | եթե ընկերության կանոնադրությամբ միաժամանակ նախատեսված են միանձնյա և կոլեգիալ գործադիր մարմիններ, ապա ընկերության խորհրդի որոշմամբ պետք է սահմանազատվի դրանցից յուրաքանչյուրի իրավասությունը |
| | | | ընկերության գործադիր մարմինը կազմակերպում է ժողովի և խորհրդի որոշումների կատարումը |
| | | | ժողովի որոշմամբ, ընկերության գործադիր մարմնի լիազորությունները պայմանագրով կարող են տրվել առևտրային |
| | | | միանձնյա գործադիր մարմինը այլ կազմակերպություններում կարող է վճարովի պաշտոններ զբաղեցնել միայն խորհրդի |
| | 295 | Համաձայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի, ընկերության գույքը, այդ թվում` ֆինանսական միջոցները, տնօրինում է. | ընկերության ժողովը |
| | | | ընկերության խորհուրդը |
| | | | ընկերության տնօրենը |
| | | | ընկերության ներքին աուդիտի ղեկավարը |

| | | | |
|---|---|---|---|
| | 296 | Համաձայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի, ընկերությանը հասցված վնասի դիմաց պատասխանատվությունից ազատվում են խորհրդի կամ վարչության ու տնօրինության այն անդամները, որոնք. | անմեղ են ճանաչվել ընկերության ժողովի որոշմամբ |
| | | | ընկերությանը վնասներ պատճառած որոշման ընդունմանը դեմ են քվեարկել |
| | | | ընկերությանը վնասներ պատճառած որոշման ընդունումից հետո մեկօրյա ժամկետում հրաժարական են տվել |
| | | | բոլոր պատասխանները ճիշտ են |
| | 297 | Համաձայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի, ընկերությանը հասցված վնասի դիմաց պատասխանատվությունից ազատվում են խորհրդի կամ վարչության ու տնօրինության այն անդամները, որոնք. | ընկերությանը վնասներ պատճառած որոշման ընդունմանը դեմ են քվեարկել |
| | | | ընկերությանը վնասներ պատճառած որոշման ընդունման նիստին ներկա չեն գտնվել |
| | | | չէին կարող իմանալ, որ իրենց գործողությունների (անգործության) հետևանքով ընկերությունը կկրի վնասներ |
| | | | բոլոր պատասխանները ճիշտ են |
| | 298 | Համաձայն «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի, ընկերության գործադիր մարմինը ընտրվում է ընդհանուր ժողովի կողմից. | 3 տարի ժամկետով |
| | | | 5 տարի ժամկետով |
| | | | ընկերության կանոնադրությամբ սահմանված ժամկետով |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 299 | Նշել սխալ պնդումը.<br>Համաձայն «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ | վերստուգիչ հանձնաժողովի ստեղծումը պարտադիր է քանից ավելի մասնակից ունեցող ընկերություններում |
| | | | ընկերության վերստուգիչ հանձնաժողովի անդամների թիվը որոշում է ընկերության խորհուրդը |
| | | | ընկերության ընդհանուր ժողովն իրավունք չունի հաստատել ընկերության տարեկան հաշվետվությունները և հաշվապահական հաշվեկշիռները՝ ընկերության վերստուգիչ հանձնաժողովի եզրակացությունների բացակայության դեպքում |
| | | | ընկերության վերստուգիչ հանձնաժողովի անդամ չեն կարող լինել ընկերության խորհրդի անդամը, ընկերության գործադիր մարմնի անդամը |
| | 300 | Համաձայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի, խորհրդի բացառիկ իրավասության ենթակա հարցերը. | կարող է իրականացնել ժողովը |
| | | | կարող են փոխանցվել գործադիր մարմնին |
| | | | կարող են փոխանցվել ընկերության վարչությանը, եթե կանոնադրությամբ դա նախատեսված է |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 301 | Համաձայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի, վարկային կազմակերպության խորհրդի անդամների աշխատանքի վարձատրության պայմանները որոշում է. | ՀՀ կենտրոնական բանկը |
| | | | ՀՀ կենտրոնական բանկը՝ վարկային կազմակերպության մասնակիցների ընդհանուր ժողովի ներկայացմամբ |
| | | | վարկային կազմակերպության մասնակիցների ընդհանուր ժողովը |
| | | | վարկային կազմակերպության խորհրդի նախագահը |
| | 302 | Համաձայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի, վարկային կազմակերպության խորհրդի բացառիկ իրավունքն է հանդիսանում. | լուծարման հաշվեկշռի հաստատումը |
| | | | վարկային կազմակերպության կառավարման մարմինների գործունեությունը կանոնակարգող ներքին փաստաթղթերի հաստատումը |
| | | | վարկային կազմակերպության կանոնադրության հաստատումը |
| | | | աուդիտ իրականացնող անձի հաստատումը |

| | | | |
|---|---|---|---|
| | 303 | Համաձայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի, վարկային կազմակերպության մասնակիցների ժողովը | իրականացնում է վարկային կազմակերպության ընթացիկ գործունեության նկատմամբ օպերատիվ մոնիթորինգ և վերահսկողություն |
| | | | իրականացնում է վարկային կազմակերպության գործունեության ընդհանուր ղեկավարումը, բացառությամբ այն հարցերի, որոնք օրենքով կամ վարկային կազմակերպության կանոնադրությամբ վերապահված են վարկային կազմակերպության խորհրդի բացառիկ իրավասությանը |
| | | | որպես վարկային կազմակերպության կառավարման բարձրագույն մարմին, հաստատում է կանոնադրությունը |
| | | | որպես վարկային կազմակերպության կառավարման գործադիր մարմին, իրականացնում է օրենքով վերապահված լիազորությունները |
| | 304 | Համաձայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի. | վերստուգիչ հանձնաժողովի նախագահն ընտրվում է վարկային կազմակերպության մասնակիցների ընդհանուր ժողովի կողմից՝ ձայների պարզ մեծամասնությամբ |
| | | | վարկային կազմակերպության վերստուգիչ հանձնաժողովի նախագահը ընտրվում է վարկային կազմակերպության խորհրդի կողմից՝ ձայների պարզ մեծամասնությամբ |
| | | | վարկային կազմակերպության վերստուգիչ հանձնաժողովի նախագահը ընտրվում է վարկային կազմակերպության խորհրդի ներկայացմամբ՝ մասնակիցների ընդհանուր ժողովի կողմից՝ ձայների պարզ մեծամասնությամբ |
| | | | վարստուգիչ հանձնաժողովի նախագահը ընտրվում է հանձնաժողովի կողմից՝ հանձնաժողովի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ |
| | 305 | Նշված պնդումներից ո՞րն է սխալ.<br>Համաձայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի, հիմնադիր ժողովը | հաստատում է ընկերության կանոնադրությունը |
| | | | ընտրում է ընկերության խորհուրդը |
| | | | ընտրում է ընկերության վերստուգող հանձնաժողովը |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 306 | Համաձայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի, վարկային կազմակերպության վերստուգիչ հանձնաժողովը ընտրվում է. | վարկային կազմակերպության ընդհանուր ժողովի կողմից |
| | | | վարկային կազմակերպության խորհրդի կողմից |
| | | | խորհրդի ներկայացմամբ՝ ընդհանուր ժողովի կողմից |
| | | | վարկային կազմակերպության գործադիր տնօրենի կողմից (կանոնադրությամբ վարչություն նախատեսված լինելու դեպքում՝ վարչության կողմից) |
| | 307 | Նշել սխալ պնդումը.<br>Համաձայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի, վարկային կազմակերպության վերստուգիչ հանձնաժողովը ընկերության ֆինանսատնտեսական գործունեությունը ստուգում է. | սեփական նախաձեռնությամբ՝ ցանկացած ժամանակ |
| | | | վարկային կազմակերպության գործադիր մարմնի պահանջով |
| | | | վարկային կազմակերպության մասնակիցների ընդհանուր ժողովի որոշմամբ |
| | | | վարկային կազմակերպության խորհրդի որոշմամբ |
| | 308 | Համաձայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի, վարկային կազմակերպության վերստուգիչ հանձնաժողովը ընկերության ֆինանսատնտեսական գործունեությունը ստուգում է. | վարկային կազմակերպության ներքին աուդիտի պահանջով |
| | | | վարկային կազմակերպության բաժնետոմսերի առնվազն 10 տոկոսի սեփականատեր բաժնետիրոջ (բաժնետերերի) պահանջով |
| | | | ՀՀ ԿԲ պահանջով |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |

| | | | |
|---|---|---|---|
| | 309 | Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, վարկային կազմակերպության ղեկավարներ են վարկային | վարչության նախագահի տեղակալը |
| | | | գործադիր տնօրենը |
| | | | վերստուգիչ հանձնաժողովի անդամները |
| | | | բոլոր պատասխանները ճիշտ են |
| | 310 | Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, վարկային միությունները կարող են ստեղծվել հետևյալ կազմակերպաիրավական ձևով (ձևերով) . | սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն |
| | | | բաժնետիրական ընկերություն |
| | | | առևտրային կոոպերատիվ |
| | | | նշված բոլոր պատասխանները ճիշտ են |
| | 311 | Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, ֆինանսական վարձակալություն իրականացնող (լիզինգային) կազմակերպությունները կարող են ստեղծվել հետևյալ կազմակերպաիրավական ձևով (ձևերով) . | սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն |
| | | | բաժնետիրական ընկերություն |
| | | | առևտրային կոոպերատիվ |
| | | | նշված բոլոր պատասխանները ճիշտ են |
| | 312 | Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, վարկային կազմակերպության գործունեություն է համարվում, որպես ձեռնարկատիրական գործունեություն. | ավանդների ներգրավումը |
| | | | ներդրումային հիմնադրամների կողմից թողարկված արժեթղթերի հրապարակային թողարկումը |
| | | | վճարային արժեթղթերի հրապարակային թողարկումը |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 313 | Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, վարկային կազմակերպության գործունեություն է համարվում, որպես ձեռնարկատիրական գործունեություն. | այնպիսի գործարքների կնքումը, որոնք դրամական (փողային) պարտավորություններ են առաջացնում վարկային կազմակերպության համար, սակայն կապված չեն վարկային կազմակերպության կողմից պարտատիրոջն ապրանքներ վաճառելու հետ |
| | | | այնպիսի գործարքների կնքումը, որոնք դրամական (փողային) պարտավորություններ են առաջացնում վարկային կազմակերպության համար, սակայն կապված չեն վարկային կազմակերպության կողմից պարտատիրոջն ծառայություններ մատուցելու  հետ |
| | | | այնպիսի գործարքների կնքումը, որոնք դրամական (փողային) պարտավորություններ են առաջացնում վարկային կազմակերպության համար, սակայն կապված չեն վարկային կազմակերպության կողմից պարտատիրոջն աշխատանքներ կատարելու  հետ |

| | | | |
|---|---|---|---|
| | | | նշված բոլոր պատասխանները ճիշտ են |
| | 314 | Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, վարկային կազմակերպության պետական գրանցման և լիցենզավորման համար նրա հիմնադիրները Կենտրոնական բանկ են ներկայացնում | գրանցման և լիցենզավորման դիմումը Կենտրոնական բանկի կողմից սահմանված ձևով |
| | | | վարկային կազմակերպության հիմնադիրների ժողովի կողմից հաստատված վարկային կազմակերպության կանոնադրությունը՝ 6 օրինակից |
| | | | վարկային կազմակերպության ֆիրմային անվանման գրանցման հայտ |
| | | | նշված բոլոր պատասխանները ճիշտ են |
| | 315 | Նշել սխալ պատասխանը:<br>Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, վարկային կազմակերպության պետական գրանցման և լիցենզավորման համար նրա հիմնադիրները Կենտրոնական բանկ են ներկայացնում | գրանցման և լիցենզավորման դիմումը Կենտրոնական բանկի կողմից սահմանված ձևով |
| | | | վարկային կազմակերպության հիմնադիրների ժողովի կողմից հաստատված վարկային կազմակերպության կանոնադրությունը՝ 6 օրինակից |
| | | | վարկային կազմակերպության գործունեության առաջիկա երեք տարվա տնտեսական ծրագիրը՝ կազմված վարկային կազմակերպության կողմից սահմանված ձևաչափով (ֆորմատով) |
| | | | վարկային կազմակերպության ֆիրմային անվանման գրանցման հայտ |
| | 316 | Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, վարկային կազմակերպության գործունեության կանոնակարգը սահմանում է. | վարկային կազմակերպության գործունեության տեսակը |
| | | | վարկային կազմակերպության միջոցների ներգրավման և տեղաբաշխման մեթոդները |
| | | | վարկային կազմակերպության գործունեության կարգը |
| | | | նշված բոլոր պատասխանները ճիշտ են |
| | 317 | Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, վարկային կազմակերպության գործունեության կանոնակարգը սահմանում է. | վարկային կազմակերպության գործունեության տեսակը |
| | | | կանոնադրական կապիտալի չափը |
| | | | վարկային կազմակերպության նշանակալից մասնակիցներին |
| | | | վարկային կազմակերպության ղեկավարներին |
| | 318 | Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, վարկային կազմակերպության գործունեության կանոնակարգը սահմանում է. | կանոնադրական կապիտալի չափը |
| | | | վարկային կազմակերպության նշանակալից մասնակիցներին |
| | | | վարկային կազմակերպության ղեկավարներին |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |

| | | | |
|---|---|---|---|
| | 319 | Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, Կենտրոնական բանկում գրանցվելու պահից.<br>ա) վարկային կազմակերպությունը ձեռք է բերում իրավաբանական անձի կարգավիճակ<br>բ) վարկային կազմակերպությունը համարվում է լիցենզավորված<br>գ) վարկային կազմակերպությունը վճարում է կանոնադրական կապիտալը<br>դ) վարկային կազմակերպությունը իր գործունեության տարածքը համապատասխանեցնում է Կենտրոնական բանկի կողմից սահմանված պահանջներին | միայն ա) և բ) տարբերակները |
| | | | միայն բ) և գ) տարբերակները |
| | | | միայն ա), բ) և դ) տարբերակները |
| | | | նշված բոլոր պատասխանները ճիշտ են |
| | 320 | Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, Կենտրոնական բանկը քննարկում է գրանցվելու և լիցենզիա ստանալու դիմումը և որոշում է կայացնում դիմումը բավարարելու կամ մերժելու մասին | մեկամսյա ժամկետում |
| | | | երեք ամսյա ժամկետում |
| | | | մեկ տարվա ընթացքում |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 321 | Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, վարկային կազմակերպությունների կանոնադրական կապիտալը համալրվում | ՀՀ դրամով, բացառությամբ բաժնետոմսերի դիմաց վճարումների |
| | | | ՀՀ դրամով, բացառությամբ վարկային կազմակերպությունների վերակազմակերպման դեպքերի |
| | | | ՀՀ դրամով, ինչպես նաև արտարժութային առաջին խմբի մեջ մտնող արժույթներով |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 322 | Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, նշված պնդումներից ո՞րն է ճիշտ. | վարկային կազմակերպության լիցենզիան տրամադրվում է 3 տարի ժամկետով |
| | | | վարկային կազմակերպության լիցենզիան չի կարող այլ անձանց տրվել օգտագործման, օտարվել կամ |
| | | | Վարկային կազմակերպությունների միությունը վարում է տրամադրված լիցենզիաների գրանցամատյանը |
| | | | նշված բոլոր պնդումները ճիշտ են |
| | 323 | Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, Կենտրոնական բանկը սահմանում է.<br>ա) լիցենզիաների գրանցամատյանի ձևը<br>բ) լիցենզիաների գրանցամատյանի վարման կարգը<br>գ) լիցենզիաների գրանցամատյանում ներառվող տեղեկությունները<br>դ) վարկային կազմակերպության լիցենզիայի միասնական ձևր | միայն դ) տարբերակը |
| | | | միայն բ) և գ) տարբերակները |
| | | | միայն ա), գ) և դ) տարբերակները |
| | | | նշված բոլոր պատասխանները ճիշտ են |
| | 324 | Վարկային կազմակերպության ղեկավար չեն կարող լինել | դատարանի կողմից ֆինանսական ոլորտում պաշտոններ վարելու իրավունքից զրկված անձինք |
| | | | դատարանի կողմից մաքսային ոլորտում պաշտոններ վարելու իրավունքից զրկված անձինք |

| | | | |
|---|---|---|---|
| | | | դատարանի կողմից իրավական ոլորտում պաշտոններ վարելու իրավունքից զրկված անձինք |
| | | | բոլոր պատասխանները ճիշտ են |
| | 325 | Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, լիցենզիայի գրանցամատյանները վարում է. | Կենտրոնական բանկը |
| | | | Վարկային կազմակերպությունների միությունը |
| | | | Ֆինանսական հաշտարարը |
| | | | Ֆինանսների նախարարությունը |
| | 326 | Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, Կենտրոնական բանկի կողմից վարկային կազմակերպության մասնաճյուղը գրանցումից հանվում է | վարկային կազմակերպության դիմումի հիման վրա և վարկային կազմակերպության լուծարման դեպքում |
| | | | եթե չի վճարել Ֆինանսական հաշտարարի գրասենյակի տարեկան վճարը |
| | | | վարկային կազմակերպությունը խախտել է Կենտրոնական բանկի սահմանած հիմնական տնտեսական նորմատիվներից թեկուզ մեկը |
| | | | նշված բոլոր պատասխանները ճիշտ են |
| | 327 | Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, Կենտրոնական բանկը մերժում է մասնաճյուղի կամ ներկայացուցչության գրանցման դիմումը, եթե. | դիմումի տրման պահին վարկային կազմակերպությունը խախտել է Կենտրոնական բանկի սահմանած հիմնական տնտեսական նորմատիվներից թեկուզ մեկը |
| | | | դիմումի քննարկման ժամանակահատվածի ընթացքում վարկային կազմակերպությունը խախտել է Կենտրոնական բանկի սահմանած հիմնական տնտեսական նորմատիվներից թեկուզ մեկը |
| | | | ներկայացվել են կեղծ կամ անարժանահավատ տեղեկություններ |
| | | | նշված բոլոր պատասխանները ճիշտ են |
| | 328 | Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, վարկային կազմակերպությունը կարող է | իրականացնել հավատարմագրային (լիազորագրային) կառավարում |
| | | | պետական պարտատոմսերի շուկայում իրականացնել դիլերային գործունեություն |
| | | | պետական պարտատոմսերի շուկայում իրականացնել ենթապահառուական գործունեություն |
| | | | նշված բոլոր պատասխանները ճիշտ են |
| | 329 | Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, վարկային կազմակերպությունը չի կարող. | ի պահ ընդունել արժեթղթեր |
| | | | մատուցել ֆինանսական խորհրդատվություն |
| | | | ստեղծել և սպասարկել հաճախորդների վարկարժանության տեղեկատվական համակարգ |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 330 | Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, վարկային կազմակերպություններին (բացառությամբ սպառողական կրեդիտավորում իրականացնող կազմակերպությունների) արգելվում է. | իրականացնել արտադրական գործունեություն |
| | | | իրականացնել առևտրային գործունեություն |
| | | | իրականացնել լիցենզավորման ենթակա այլ գործունեություն |
| | | | նշված բոլոր պատասխանները ճիշտ են |
| | 331 | Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, վարկային կազմակերպությունները պարտավոր են իրենց կանոնադրության մեջ պարտադիր ներառել դրույթներ. | տնօրենների խորհրդի և վերստուգիչ խմբի ֆունկցիաների տարանջատման վերաբերյալ, |
| | | | արտաքին աուդիտի իրականացման մեխանիզմների վերաբերյալ, |
| | | | տնօրենների, հիմնական ղեկավարների, գլխավոր հաշվապահի, տնօրենների խորհրդի և վերստուգիչ խմբի աշխատանքների մեխանիզմների |

| | | | |
|---|---|---|---|
| | | | նշված բոլոր պատասխանները ճիշտ են |
| | 332 | ՀՀ տարածքում գործող վարկային կազմակերպությունները պարտավոր են ՀՀ կենտրոնական բանկի գրանցմանը ներկայացնել՝ | հաշվապահական հաշվառման ստորաբաժանման պետի փոփոպությունները |
| | | | կանոնադրությունում կատարված փոփոխությունները, |
| | | | վարկային կազմակերպության վարկային վարչության պետի փոփոխությունը, |
| | | | նշված բոլոր պատասխանները ճիշտ են |
| | 333 | Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, Կենտրոնական բանկը հանում է գրանցումից վարկային կազմակերպության ղեկավարին, եթե | նա զրկվել է որակավորման վկայականից |
| | | | ավարտվել է որակավորման վկայականի ժամկետը |
| | | | նա սնանկ է ճանաչված և ունի չմարված պարտավորություններ |
| | | | նշված բոլոր պատասխանները ճիշտ են |
| | 334 | Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, յուրաքանչյուր տարի վարկային կազմակերպության գործունեությունը ստուգվում է աուդիտային գործունեություն իրականացնելու իրավունք ունեցող անկախ աուդիտային կազմակերպության կողմից, | որին նշանակում է վարկային կազմակերպությունը |
| | | | որին նշանակում է Կենտրոնական բանկը |
| | 24 | Համաձայն Կանոնակարգ 14-ի, վարկային կազմակերպության ընդհանուր կապիտալի համարժեքության նորմատիվը սահմանվում է որպես | ընդհանուր կապիտալի և ընդհանուր ակտիվների գումարների միջև նվազագույն հարաբերակցություն |
| | | | ընդհանուր կապիտալի և բարձր իրացվելի ակտիվների գումարների միջև նվազագույն հարաբերակցություն |
| | | | ընդհանուր կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների գումարների միջև նվազագույն հարաբերակցություն |
| | | | բարձր իրացվելի ակտիվների և ընդհանուր կապիտալի գումարների միջև նվազագույն հարաբերակցություն, |
| | 25 | Համաձայն Կանոնակարգ 14-ի, ո՞ր նորմատիվն է սահմանված ՀՀ-ն տարածքում գործող վարկային կազմակերպությունների համար. | ընդհանուր կապիտալի նվազագույն չափի նորմատիվը |
| | | | պարտադիր պահուստավորման նորմատիվը |
| | | | իրացվելիության նորմատիվը |
| | | | վարկային կազմակերպության հետ կապված բոլոր անձանց գծով ռիսկի առավելագույն չափի նորմատիվը |
| | 26 | Վարկային կազմակերպության կողմից մեկ փոխառուին և նրա հետ փոխկապակցված անձանց տրամադրված փոխառությունների հանրագումարը հավասար է 25 մլն. դրամի: Որպեսզի վարկային կազմակերպությունը չխախտի մեկ փոխառուի գծով ռիսկի առավելագույն չափի նորմատիվը, վարկային կազմակերպության նորմատիվային ընդհանուր կապիտալի պետք է լինի՝ | 100 մլն. դրամ և ավելին |
| | | | 75 մլն. դրամ և ավելին |
| | | | մինչև 100 մլն. դրամ |

| | | | |
|---|---|---|---|
| | | | մինչև 125 մլն. դրամ |
| | 27 | Համաձայն Կանոնակարգ 14-ի, վարկային միության համար կանոնադրական կապիտալի նվազագույն չափը սահմանվում է՝ | 50 մլն. դրամ |
| | | | 100 մլն. դրամ |
| | | | 150 մլն. դրամ |
| | | | 200 մլն. դրամ |
| | 28 | Համաձայն Կանոնակարգ 14-ի, վարկային միության համար ընդհանուր կապիտալի նվազագույն չափը սահմանվում է՝ | 50 մլն. դրամ |
| | | | 25 մլն. դրամ |
| | | | 100 մլն. դրամ |
| | | | 150 մլն. դրամ |
| | 29 | Համաձայն Կանոնակարգ 14-ի, լիզինգային կազմակերպությունների համար ընդհանուր կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների գումարների միջև նվազագույն հարաբերակցությունը սահմանվում է՝ | 2% |
| | | | 6% |
| | | | 8% |
| | | | 10% |
| | 30 | Համաձայն Կանոնակարգ 14-ի, ՀՀ տարածքում գործող վարկային կազմակերպությունների համար (բացառությամբ վերաֆինանսավորում իրականացնող վարկային կազմակերպությունների) սահմանված մեկ փոխառուի գծով ռիսկի առավելագույն չափը կազմում է. | 6% |
| | | | 8% |
| | | | 10% |
| | | | 25% |
| | 31 | Համաձայն Կանոնակարգ 14-ի, վարկային կազմակերպությունների համար սահմանված տնտեսական նորմատիվներից ո՞րն է հաշվարկվում օրական կտրվածքով. | մեկ փոխառուի գծով ռիսկի առավելագույն չափի նորմատիվը |
| | | | ընդհանուր կապիտալի համարժեքության նորմատիվը, |
| | | | ընդհանուր կապիտալի նվազագույն չափը |
| | | | ճիշտ տարբերակը նշված չէ |
| | 32 | Նշել առավել ամբողջական պատասխանը.<br>Համաձայն Կանոնակարգ 14-ի, հիմնական տնտեսական նորմատիվների մեծությունը հաշվարկելիս լրացուցիչ կապիտալն ընդհանուր կապիտալի հաշվարկում ընդգրկվում է՝ | հիմնական կապիտալի առավելագույնը 50%-ի չափով |
| | | | հիմնական կապիտալի (հաշվի առած նվազեցումները) առավելագույնը 50%-ի չափով |
| | | | ընդհանուր կապիտալի 50%-ի չափով |
| | | | ընդհանուր կապիտալի (հաշվի առած նվազեցումները) 50%-ի չափով |
| | 33 | Համաձայն Կանոնակարգ 14-ի, հիմնական կապիտալի տարր չէ. | գլխավոր պահուստը |
| | | | չբաշխված շահույթ (եկամուտների պահուստներ) |
| | | | կանոնադրական հիմնադրամը, բացառությամբ բաժնետոմսերի հավելավճարը |
| | | | կանոնադրական հիմնադրամը, ներառյալ բաժնետոմսերի հավելավճարը |
| | 34 | Համաձայն Կանոնակարգ 14-ի, վարկային կազմակերպության ընդհանուր կապիտալը | հիմնական և լրացուցիչ կապիտալների հանրագումարն է |
| | | | հիմնական կապիտալի, լրացուցիչ կապիտալի և երկարաժամկետ փոխառությունների հանրագումարն է |
| | | | հիմնական կապիտալի և վերագնահատման պահուստի հանրագումարն է |
| | | | հիմնական կապիտալի և ստորադաս պարտավորությունների հանրագումարն է |

| | | | |
|---|---|---|---|
| | 35 | Ենթադրենք, վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալը 2.5 մլրդ. դրամ է, գլխավոր պահուստը 3.5 մլրդ. դրամ, չբաշխված շահույթը 500 մլն. դրամ: Վարկային կազմակերպությունը տրամադրել է երկարաժամկետ ստորադաս փոխատվություն՝ 500 մլն. դրամի չափով: Վարկային կազմակերպության լրացուցիչ կապիտալը 4.5 մլրդ. դրամ է: Համաձայն Կանոնակարգ 14-ի, ինչքա՞ն է վարկային կազմակերպության նորմատիվային ընդհանուր կապիտալը. | 10.5 մլրդ. դրամ |
| | | | 11.0 մլրդ. դրամ |
| | | | 9 մլրդ. դրամ |
| | | | 9.250 մլրդ. դրամ |
| | 36 | Նշված պնդումներից ո՞րն է ճիշտ.<br>Համաձայն Կանոնակարգ 14-ի, վարկային կազմակերպության նորմատիվային հիմնական կապիտալը | նվազեցվում է վարկային կազմակերպության գործունեության համար օգտագործվող հիմնական միջոցների չափով |
| | | | նվազեցվում է չբաշխված շահույթի մեծության չափով |
| | | | սահմանվում է լրացուցիչ կապիտալի առավելագույնը 250 տոկոսի չափով |
| | | | բոլոր պնդումները սխալ են |
| | 37 | Համաձայն Կանոնակարգ 14-ի, ներքոնշվածներից ո՞րը չի հանդիսանում հիմնական կապիտալի տարր՝ | կանոնադրական կապիտալը՝ ներառյալ բաժնետոմսերի հավելավճարը |
| | | | արտարժույթի վերագնահատման պահուստը |
| | | | գլխավոր պահուստը |
| | | | չբաշխված շահույթը (եկամուտների պահուստներ) |
| | 38 | Համաձայն Կանոնակարգ 14-ի, ընդհանուր կապիտալի նվազագույն չափի նորմատիվի հաշվարկի ժամանակ նշված տարրերից ո՞րը չի պակասեցվում հիմնական կապիտալի մեծությունից. | վարկային կազմակերպության հիմնական միջոցների վրա կատարված կապիտալ ներդրումների հաշվեկշռային արժեքը |
| | | | վարկային կազմակերպության կողմից հետ գնված սեփական բաժնետոմսերի գումարը |
| | | | այլ բանկերի և վարկային կազմակերպությունների կանոնադրական հիմնադրամներում իրականացված ներդրումները |
| | | | ճիշտ տարբերակը նշված չէ |
| | 39 | Նշել սխալ պատասխանը.<br>Համաձայն Կանոնակարգ 14-ի, հիմնական տնտեսական նորմատիվների հաշվարկման ժամանակ հիմնական կապիտալից պակասեցվում են. | ոչ նյութական ակտիվների հաշվեկշռային արժեքը |
| | | | վարկային կազմակերպության գործունեության ընթացքում օգտագործվող համակարգչային ծրագրերը և դրանց օգտագործման իրավունքները, |
| | | | վարկային կազմակերպության կողմից հետ գնված սեփական բաժնետոմսերի գումարը, |
| | | | վարկային կազմակերպության հիմնական միջոցների վրա կատարված կապիտալ ներդրումների հաշվեկշռային արժեքը |
| | 40 | Համաձայն Կանոնակարգ 14-ի, ընդհանուր կապիտալի նվազագույն չափի նորմատիվի հաշվարկի ժամանակ վարկային կազմակերպության հիմնական կապիտալից նվազեցվում են՝<br>(ա) վարկային կազմակերպության սեփականությունը հանդիսացող և վերջինիս գործունեության համար չօգտագործվող նյութական ակտիվները,<br>(բ) տրամադրված վարկերի դիմաց վարկային կազմակերպությունում գրավադրված տվյալ վարկային կազմակերպության սեփական բաժնետոմսերը,<br>(գ) բաժնետոմսերի հավելավճարները. | միայն (ա) |
| | | | միայն (ա) և (բ) |
| | | | (ա) և (բ) և (գ) |
| | | | միայն (բ) և (գ) |

| | | | |
|---|---|---|---|
| | 41 | Համաձայն Կանոնակարգ 14-ի, նորմատիվային ընդհանուր կապիտալի հաշվարկման ժամանակ վարկային կազմակերպության սեփականությունը հանդիսացող և վերջինիս գոծունեության համար չօգտագործվող հիմնական միջոցները, օրենքով սահմանված կարգով վարկային կազմակերպության սեփականությունը համարվելու պահից վեց ամիս հետո | հաշվեկշռային արժեքի չափով նվազեցվում են հիմնական կապիտալի հաշվարկից |
| | | | հաշվեկշռային արժեքի չափով նվազեցվում են լրացուցիչ կապիտալի հաշվարկից |
| | | | հիմնական կապիտալի հաշվեկշռային մեծությունը գերազանցող գումարի չափով նվազեցվում են հիմնական կապիտալից |
| | | | լրացուցիչ կապիտալի հաշվեկշռային մեծությունը գերազանցող գումարի չափով նվազեցվում են հիմնական կապիտալից |
| | 42 | Համաձայն Կանոնակարգ 14-ի, լրացուցիչ կապիտալի հաշվարկում չի մասնակցում. | գլխավոր պահուստը |
| | | | վարկային կազմակերպության գործունեության համար անհրաժեշտ շենքերի և շինությունների վերագնահատման պահուստը, |
| | | | նշվածներից բոլորն էլ մասնակցում են լրացուցիչ կապիտալի հաշվարկին |
| | | | հաշվեկշիռների միավորման (կոնսոլիդացիայի) ընթացքում առաջացած արտարժութային տարբերությունների պահուստը |
| | 43 | Համաձայն Կանոնակարգ 14-ի, նորմատիվային ընդհանուր կապիտալի հաշվարկման ժամանակ վարկային կազմակերպության գործունեության համար անհրաժեշտ սեփական շենքեր և շինություններ են համարվում այն տարածքները | որոնք ձեռք են բերվել վարկային կազմակերպության հիմնադրման և ԿԲ գրանցման ժամանակ |
| | | | որտեղ վարկային կազմակերպությունը և նրա տարածքային ստորաբաժանումները ծավալում են իրենց գործունեությունը |
| | | | որոնք ԿԲ հիմնավոր կարծիքով ճանաչվել են որպես վարկային կազմակերպության գործունեության համար օգտագործվող |
| | | | որոնք հնարավորություն են տալիս վարկային կազմակերպությանը ընդլայնվել և լիարժեք սպասարկել իրենց հաճախորդներին |
| | 44 | Վարկային կազմակերպության նորմատիվային հիմնական կապիտալը՝ հաշվի առած հիմնական կապիտալից կատարված նվազեցումները, հավասար է 5 մլն. ՀՀ դրամ: Վարկային կազմակերպությանն սեփականության իրավունքով պատկանող շենքերի և շինությունների գծով ձևավորված վերագնահատման պահուստի մեծությունը կազմում է 1,5 մլն. ՀՀ դրամ, որից 0,5 մլն. -ը ձևավորվել է վարկային կազմակերպության գործունեության համար չօգտագործվող շենքերի գծով: Վարկային կազմակերպության նորմատիվային ընդհանուր կապիտալը կկազմի. | 7,25 մլն. ՀՀ դրամ |
| | | | 6 մլն. ՀՀ դրամ |
| | | | 7 մլն. ՀՀ դրամ |
| | | | 5,75 մլն. ՀՀ դրամ |
| | 45 | Ո՞ր պնդումն է սխալ.<br>Համաձայն Կանոնակարգ 14-ի, վարկային կազմակերպության երկարաժամկետ ստորադաս փոխառության պայմաններ են՝ | հինգ տարուց ոչ պակաս ժամկետայնությունը |
| | | | ժամկետից շուտ մարման ենթակա չլինելը, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի |
| | | | փոխառության ամբողջությամբ վճարված լինելը |
| | | | ստորադաս փոխառության դիմաց տոկոսները վճարվում են ոչ պակաս, քան տարին մեկ անգամ |
| | 46 | Համաձայն Կանոնակարգ 14-ի, վարկայի կազմակերպությունը պարտավոր է սահմանված ընդհանուր կապիտալի նվազագույն մեծությունը պահպանել՝ | ամսվա յուրաքանչյուր օրվա դրությամբ |
| | | | յուրաքանչյուր ամսվա վերջին օրվա դրությամբ |
| | | | յուրաքանչյուր ամսվա միջին օրական հաշվարկով |
| | | | յուրաքանչյուր շաբաթվա միջին օրական հաշվարկով |

| | | | |
|---|---|---|---|
| | 47 | Համաձայն Կանոնակարգ 14-ի, վարկային կազմակերպությունը պարտավոր է սահմանված ընդհանուր կապիտալի նվազագույն մեծությունը պահպանել` | ամսվա յուրաքանչյուր օրվա դրությամբ |
| | | | յուրաքանչյուր ամսվա վերջին օրվա դրությամբ |
| | | | յուրաքանչյուր տարվա հունվարի 1-ի դրությամբ, ինչպես նաև յուրաքանչյուր ամսվա միջին օրական հաշվարկով |
| | | | միայն յուրաքանչյուր ամսվա միջին օրական հաշվարկով |
| | 48 | Համաձայն Կանոնակարգ 14-ի, նշեք ամենաբարձր ռիսկի կշիռ ունեցող ակտիվը. | ճանապարհին գտնվող կանխիկ դրամ |
| | | | ՀՀ կառավարության նկատմամբ պահանջներ` հարկային օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկված հարկային պարտավորությունների կանխավճարների գծով |
| | | | Արտարժույթով ՀՀ կենտրոնական բանկի կողմից թողարկված արժեթղթեր |
| | | | կանխիկ դրամական միջոցներ |
| | 49 | Համաձայն Կանոնակարգ 14-ի, առաջին խմբի մեջ մտնող արտարժույթով ճանապարհին գտնվող կանխիկ դրամական միջոցները վարկային կազմակերպության ռիսկով կշռված ակտիվների հաշվարկում ընդգրկվում են | 0% կշռով |
| | | | 10% կշռով |
| | | | 20% կշռով |
| | | | 50% կշռով |
| | 50 | Համաձայն Կանոնակարգ 14-ի, ՀՀ դրամով ճանապարհին գտնվող կանխիկ դրամական միջոցները վարկային կազմակերպության ռիսկով կշռված ակտիվների հաշվարկում ընդգրկվում են | 0% կշռով |
| | | | 10% կշռով |
| | | | 20% կշռով |
| | | | 50% կշռով |
| | 51 | Համաձայն Կանոնակարգ 14-ի, ՀՀ դրամով վարկային գծի չօգտագործված մասը վարկային կազմակերպության ռիսկով կշռված ակտիվների հաշվարկում ընդգրկվում է` | 10% կշռով |
| | | | 20% կշռով |
| | | | 50% կշռով |
| | | | 100% կշռով |
| | 52 | Համաձայն Կանոնակարգ 14-ի, ՀՀ կառավարության նկատմամբ պահանջները հարկային օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկված հարկային պարտավորություններից ավել վճարված գումարների  (գերավճարները) գծով, ռիսկով կշռված ակտիվների հաշվարկում ընդգրկվում են | 0 տոկոս ռիսկի կշռով |
| | | | 20 տոկոս ռիսկի կշռով |
| | | | 50 տոկոս ռիսկի կշռով |
| | | | 100 տոկոս ռիսկի կշռով |
| | 53 | Համաձայն Կանոնակարգ 14-ի,  մեկ փոխառուի գծով ռիսկի առավելագույն չափի նորմատիվի հաշվարկում վարկային կազմակեպության | բանկային հաշիվները չեն ընդգրկվում |
| | | | բանկային հաշիվները ընդգրկվում են, սակայն իրենց համապատասխան պահուստի չափով նվազեցվելուց հետո չեն |
| | | | բանկային հաշիվները ընդգրկվում են, ընդ որում պահուստի չափով նվազեցվելուց հետո կշռվում են իրենց համապատասխան ռիսկի |
| | | | բանկային հաշիվները ընդգրկվում են, եթե տվյալ բանկը փոխկապակցված  է վարկային կազմակերպության փոխառուի հետ |
| | 54 | Համաձայն Կանոնակարգ 14-ի, խնայողական միությունների մեկ փոխառուի գծով ռիսկի հաշվարկում վարկային կազմակերպության կողմից | փոխառուին տրամադրված երաշխիքները չեն ընդգրկվում |
| | | | փոխառուի հետ փոխկապակցված անձանց տրամադրված փոխառությունները չեն ընդգրկվում |
| | | | իրենց մասնակից հանդիսացող փոխառուներին տրամադրված վարկերը չեն ընդգրկվում |
| | | | փոխառուին տրամադրված նախավճարները չեն ընդգրկվում |

| | | | |
|---|---|---|---|
| | 55 | Ենթադրենք վարկային կազմակերպությունն ունի 0.5 մլն. Եվրո ներգրաված միջոցներ և 0.6 մլն. Եվրո ակտիվներ: Եվրոյի փոխարժեքը 600 դրամից 580 դրամի իջնելիս` | փոխարժեքի փոփոխությունը չի ազդի վարկային կազմակերպության ֆինանսական արդյունքների վրա |
| | | | վարկային կազմակերպությունը կստանա եկամուտ 2 մլն. դրամի |
| | | | վարկային կազմակերպությունը կստանա եկամուտ 1 մլն. դրամի |
| | | | վարկային կազմակերպությունը կկրի կորուստներ 2 մլն. դրամի |
| | 56 | Ենթադրենք վարկային կազմակերպությունն ունի 0.1 մլն. ԱՄՆ դոլար ներգրաված միջոցներ և 400 մլն. ՀՀ դրամ ակտիվներ: ԱՄՆ դոլարի հաշվարկային փոխարժեքը 550 դրամից 500 դրամի իջնելիս` | փոխարժեքի փոփոխությունը չի ազդի վարկային կազմակերպության ֆինանսական արդյունքների վրա |
| | | | բանկը կստանա եկամուտ 5 մլն. դրամի չափով |
| | | | բանկը կստանա եկամուտ 0.5 մլն. դրամի չափով |
| | | | բանկը կկրի կորուստներ 5 մլն. դրամի չափով |
| | 57 | Համաձայն Կանոնակարգ 14-ի, վերաֆինանսավորում իրականացնող վարկային կազմակերպության համար կանոնադրական կապիտալի նվազագույն չափը սահմանվում է` | 150 մլն. դրամ, |
| | | | 100 մլն. դրամ, |
| | | | 50 մլն. դրամ, |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 58 | Համաձայն Կանոնակարգ 14-ի, մեկ փոխառուի գծով ռիսկի առավելագույն չափի նորմատիվը (Ն3 նորմատիվը) սահմանվում է 25% | վարկային միությունների համար |
| | | | լիզինգային կազմակերպությունների համար |
| | | | ունիվերսալ վարկային կազմակերպությունների համար |
| | | | բոլոր տարբերակների համար |
| | 59 | Համաձայն Կանոնակարգ 14-ի, ֆակտորինգային կազմակերպության համար կանոնադրական կապիտալի նվազագույն չափը սահմանվում է` | 150 մլն. դրամ, |
| | | | 100 մլն. դրամ, |
| | | | 50 մլն. դրամ, |
| | | | 30 մլն. դրամ |
| | 60 | Համաձայն Կանոնակարգ 14-ի, ՀՀ կառավարության նկատմամբ պահանջները` հարկային օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկված հարկային պարտավորությունների կանխավճարի գծով, ռիսկով կշռված ակտիվների հաշվարկում ընդգրկվում են` | 0% ռիսկի կշռով |
| | | | 10% ռիսկի կշռով |
| | | | 20% ռիսկի կշռով |
| | | | 50% ռիսկի կշռով |
| | 61 | «ՀՀ տարածքում գործող բանկերի վարկերի և դեբիտորական պարտքերի դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման» կարգի համաձայն կատարված պահուստավորման արդյունքները հաշվի չեն առնվում | հարկվող շահույթը որոշելիս |
| | | | հարկվող եկամուտը որոշելիս |
| | | | ընդհանուր կապիտալի համարժեքության նորմատիվի մեծությունը որոշելիս |
| | | | բոլոր պատասխանները ճիշտ են |
| | 62 | Համաձայն «ՀՀ տարածքում գործող բանկերի վարկերի և դեբիտորական պարտքերի դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման» կարգի, նշված ակտիվներից ո՞րն (որո՞նք) է (են) ենթակա դասակարգման` | ՀՀ կենտրոնական բանկում ներդրված ավանդները |
| | | | «Ա» ընկերության պարտատոմսեր |
| | | | բանկի համար վարկային ռիսկ պարունակող հետհաշվեկշռային հոդվածները |
| | | | նշված բոլոր դեպքերում ակտիվներ ենթակա չեն դասակարգման: |
| | 63 | Համաձայն «ՀՀ տարածքում գործող բանկերի վարկերի և դեբիտորական պարտքերի դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման» կարգի, նշված ակտիվներից որը՞ (որո՞նք) ենթակա չէ (չեն) դասակարգման` | կանխիկին հավասարեցված վճարային փաստաթղթերի գծով պահանջները, |
| | | | «Ա» ընկերության պարտատոմսեր |
| | | | առևտրային բանկերում վարկային կազմակերպության սառեցված հաշիվները, |

| | | | |
|---|---|---|---|
| | | | նշված բոլոր  դեպքերում ակտիվները ենթակա չեն դասակարգման |
| | 64 | Վարկային կազմակերպությունները վարկերի և դեբիտորական պարտքերի գծով ձևավորված հատուկ պահուստին կատարված մասհանումները ճանաչում են որպես ծախս ելնելով վարկերի և դեբիտորական պարտքերի գծով՝ | ապագա, բայց դեռևս չպարզաբանված (չբացահայտված) կորուստների առաջացման հավանականությունից |
| | | | նախատեսված կորուստներից, |
| | | | պարզաբանված (բացահայտված) կորուստների առաջացման հավանականությունից |
| | | | արտարժույթի փոխարժեքի փոփոխության հետևանքով պարզաբանված (բացահայտված) կորուստների առաջացման |
| | 65 | Նշված պնդումներից ո՞րն է ճիշտ. | ընդհանուր պահուստը հաշվեկշռում ակտիվներին հակակշիռ գրանցված պահուստ է, որը ձևավորվում է խնդրահարույց ակտիվների գծով |
| | | | ընդհանուր պահուստը հաշվեկշռում պարտավորություններին հակակշիռ գրանցված պահուստ է, որը ձևավորվում է խնդրահարույց ակտիվների գծով |
| | | | հատուկ պահուստը հաշվեկշռում ակտիվներին հակակշիռ գրանցված պահուստ է, որը ձևավորվում է խնդրահարույց ակտիվների գծով |
| | | | հատուկ պահուստը հաշվեկշռում ակտիվներին հակակշիռ գրանցված պահուստ է, որը ձևավորվում է ստանդարտ ակտիվների գծով |
| | 66 | Հատուկ պահուստը հաշվեկշռում՝ | հատուկ պահուստը հաշվեկշռում ակտիվներին հակակշիռ գրանցված պահուստ է, որը ձևավորվում է խնդրահարույց ակտիվների գծով |
| | | | հատուկ պահուստը հաշվեկշռում պարտավորություններին հակակշիռ գրանցված պահուստ է, որը ձևավորվում է ստանդարտ ակտիվների գծով |
| | | | հատուկ պահուստը հաշվեկշռում ակտիվներին հակակշիռ գրանցված պահուստ է, որը ձևավորվում է ստանդարտ ակտիվների գծով |
| | | | բոլոր պնդումները սխալ են |
| | 67 | Ընդհանուր պահուստը հաշվեկշռում՝ | ակտիվին հակակշիռ գրանցված պահուստ է, որը ձևավորվում է ստանդարտ ակտիվների գծով |
| | | | ակտիվին հակակշիռ գրանցված պահուստ է, որը ձևավորվում է խնդրահարույց ակտիվների գծով |
| | | | պարտավորություններին հակակշիռ գրանցված պահուստ է, որը ձևավորվում է ստանդարտ ակտիվների գծով |
| | | | պարտավորություններին հակակշիռ գրանցված պահուստ է, որը ձևավորվում է խնդրահարույց ակտիվների գծով |
| | 68 | Վարկային կազմակերպությունները վարկերի և դեբիտորական պարտքերի գծով ձևավորված ընդհանուր պահուստին կատարված մասհանումները ճանաչում են որպես ծախս՝ ելնելով վարկերի և դեբիտորական պարտքերի գծով՝ | ապագա, բայց դեռևս չպարզաբանված (չբացահայտված) կորուստների առաջացման հավանականությունից |
| | | | պարզաբանված (բացահայտված) կորուստների առաջացման հավանականությունից |
| | | | արտարժույթի փոխարժեքի փոփոխության հետևանքով պարզաբանված (բացահայտված) կորուստների առաջացման |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 69 | Նշված պնդումներից ո՞րն է սխալ. | ակտիվների դասակարգումը ակտիվների խմբավորումն է հետևյալ 5 դասերի՝ ստանդարտ, հսկվող, ոչ ստանդարտ, կասկածելի, անհուսալի |
| | | | հատուկ պահուստը հաշվեկշռում ակտիվներին հակակշիռ գրանցված պահուստ է, որը ձևավորվում է խնդրահարույց ակտիվների գծով, |
| | | | ընդհանուր պահուստը ակտիվին հակակշիռ գրանցված պահուստ է, որը ձևավորվում է ստանդարտ ակտիվների գծով |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 70 | Նշված պնդումներից ո՞րն է ճիշտ. | ակտիվների դասակարգումը ակտիվների խմբավորումն է հետևյալ 5 դասերի՝ ստանդարտ, հսկվող, ոչ ստանդարտ, կասկածելի, անհուսալի |

| | | | |
|---|---|---|---|
| | | | հատուկ պահուստը հաշվեկշռում ակտիվներին հակակշիռ գրանցված պահուստ է, որը ձևավորվում է խնդրահարույց ակտիվների գծով |
| | | | ընդհանուր պահուստը ակտիվին հակակշիռ գրանցված պահուստ է, որը ձևավորվում է ստանդարտ ակտիվների գծով |
| | | | բոլոր պատասխանները ճիշտ են |
| | 71 | Նշել ճիշտ տարբերակը. Հատուկ պահուստ ձևավորվում է (ա) ստանդարտ, (բ) հսկվող, (գ) ոչ ստանդարտ, (դ) կասկածելի դասակարգված ակտիվների գծով. | միայն (ա) և (դ) |
| | | | միայն (ա) |
| | | | միայն (ա) և (բ) |
| | | | միայն (բ) և (գ) և (դ) |
| | 72 | Նշել ճիշտ տարբերակը. Ընդանուր պահուստ ձևավորվում է (ա) ստանդարտ, (բ) հսկվող, (գ) ոչ ստանդարտ, (դ) կասկածելի դասակարգված ակտիվների գծով. | միայն (ա) և (դ) |
| | | | միայն (ա) և (բ) |
| | | | միայն (ա) |
| | | | միայն (բ) և (գ) և (դ) |
| | 73 | Նշվածներից որը՞ չի համարվում հիմք` վարկը օբյեկտիվ հիմքով դասակարգելու համար | վարկի գծով հաշվեգրված տոկոսի վճարումն ուշացել է պայմանագրում նշված ժամկետից 5 օր |
| | | | վարկի մասնակի մարումն իրականացվել է փոխառուի հիմնական միջոցների օտարման արդյունքում առաջացած դրամական միջոցների հաշվին |
| | | | մարման ենթակա գումարը փոխանցվել է նոր վարկի գումարին |
| | | | նշված բոլոր փաստերը հանդիսանում են ակտիվը օբյեկտիվ չափանիշներով դասակարգելու հիմք |
| | 74 | Նշված պնդումներից ո՞րն է սխալ. Այն ակտիվներն են համարվում վերանայված պայմաններով ակտիվներ | որոնց մարումն իրականացվել է նոր ստանձնված պարտավորությունների աղբյուրների հաշվին |
| | | | որոնց մարման ժամկետները վերանայվել են |
| | | | որոնք ապահովված չեն փոխառուի ֆինանսական վիճակը բնութագրող բավարար տեղեկատվությամբ |
| | | | որոնց գումարները փոխանցվել են ակտիվային նոր գործիքներին |
| | 75 | Այն ակտիվներն են համարվում վերանայված պայմաններով ակտիվներ, | որոնք պայմանագրի համաձայն վերաֆինանսավորվել են |
| | | | որոնց գումարները փոխանցվել են ակտիվային նոր գործիքներին |
| | | | որոնց մարման ժամկետները կամ այլ պայմանները վերանայվել (վերաձևակերպվել) են |
| | | | բոլոր պատասխանները ճիշտ են |
| | 76 | Համաձայն «ՀՀ տարածքում գործող բանկերի վարկերի ու դեբիտորական պարտքերի դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման կարգի»` ակտիվների դասակարգման և հնարավոր կորուստների պահուստավորման պատասխանատվությունը կրում է | Կենտրոնական բանկը |
| | | | Հայաստանի հարկային պետական ծառայությունը |
| | | | վարկային կազմակերպությունը |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ: |
| | 77 | Համաձայն «ՀՀ տարածքում գործող բանկերի վարկերի ու դեբիտորական պարտքերի դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման կարգի»` խնդրահարույց ակտիվների գծով | ձևավորվում է ընդհանուր պահուստ |

| | | | |
|---|---|---|---|
| | | | ձևավորվում է հատուկ պահուստ |
| | | | ձևավորվում է գլխավոր պահուստ |
| | | | պահուստ չի ձևավորվում |
| | 78 | Համաձայն Կանոնակարգ 14-ի, ունիվերսալ վարկային կազմակերպության համար ընդհանուր կապիտալի համարժեքության նորմատիվի սահմանաչափը սահմանվում է՝ | 2%, |
| | | | 7%, |
| | | | 6%, |
| | | | 10%: |
| | 79 | Համաձայն «ՀՀ տարածքում գործող բանկերի վարկերի ու դեբիտորական պարտքերի դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման կարգի»՝ ապահովվածություն չունեցող (բլանկային) են դասվում այն ակտիվները, որոնք<br>ա) ապահովված չեն գրավով<br>բ) ապահովված չեն փոխառուի (պարտապանի) ֆինանսական վիճակը բնութագրող տեղեկատվությամբ<br>գ) չեն հանդիսանում ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ձեռք բերման համար կատարված կանխավճար կամ առհաշիվ տրված գումար<br>դ) ապահովված չեն փոխառության (պարտքի) վերադարձելիությունը հիմնավորող տեղեկատվությամբ, ինչպես նաև այլ հիմնավոր փաստաթղթերով | միայն ա)-ն և բ)-ն |
| | | | միայն ա)-ն և գ)-ն |
| | | | միայն ա)-ն, բ)-ն և դ)-ն |
| | | | ա), բ), գ) և դ) |
| | 80 | Համաձայն «ՀՀ տարածքում գործող բանկերի վարկերի ու դեբիտորական պարտքերի դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման կարգի» վարկային կազմակերպությունները պետք է միաժամանակ դասակարգեն բոլոր ակտիվները | առնվազն եռամսյակը մեկ անգամ |
| | | | առնվազն ամիսը մեկ անգամ |
| | | | առնվազն 2 շաբաթը մեկ անգամ |
| | | | ամեն օր |
| | 81 | Համաձայն «ՀՀ տարածքում գործող բանկերի վարկերի ու դեբիտորական պարտքերի դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման կարգի»՝ ակտիվների դասակարգումը ակտիվների խմբավորումն է հետևյալ խմբերի | հսկվող, ոչ ստանդարտ, կասկածելի, անհուսալի |
| | | | ստանդարտ, հսկվող, ոչ ստանդարտ, կասկածելի, դուրս գրված |
| | | | ստանդարտ, հսկվող, ոչ ստանդարտ, կասկածելի, անհուսալի |
| | | | ստանդարտ, ոչ ստանդարտ, կասկածելի, անհուսալի |
| | 82 | «ՀՀ տարածքում գործող բանկերի վարկերի ու դեբիտորական պարտքերի դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման կարգի» իմաստով վարկեր ու դեբիտորական պարտքերի շարքին են դասվում | օվերդրաֆտը |
| | | | ֆակտորինգը |
| | | | օվերդրաֆտը և բանկերում (բացառությամբ ՀՀ կենտրոնական բանկի) ներդրված ավանդները |
| | | | բոլոր պատասխանները ճիշտ են |
| | 83 | Համաձայն «ՀՀ տարածքում գործող բանկերի վարկերի ու դեբիտորական պարտքերի դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման կարգի», եթե ակտիվը ճանաչվում է «անհուսալի» | այն ակտիվների դասակարգման օրը պետք է դուրս գրվի վարկային կազմակերպության հաշվեկշռից «ընդհանուր պահուստի» հաշվին |
| | | | այն պետք է նույն օրվա ընթացքում դուրս գրվի վարկային կազմակերպության հաշվեկշռից «հատուկ պահուստի» հաշվին, և վարկային կազմակերպությունը շարունակում է հաշվառել դրա գծով տոկոսները կուտակային մեթոդով |
| | | | այն պետք է նույն օրվա ընթացքում դուրս գրվի վարկային կազմակերպության հաշվեկշռից «գլխավոր պահուստի» հաշվին |
| | | | այն ակտիվի դասակարգման օրը պետք է դուրս գրվի վարկային կազմակերպության հաշվեկշռից՝ «հատուկ պահուստի» հաշվին, և շարունակվի հաշվառվել հետհաշվեկշռային հաշիվներում |

| | | | |
|---|---|---|---|
| | 84 | «ՀՀ տարածքում գործող բանկերի վարկերի և դեբիտորական պարտքերի դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման» կարգի համաձայն, նշվածներից ո՞ր պնդումն է սխալ:<br>Վարկային կազմակերպությունը ինքնուրույն կարող է ավելացնել հատկացումները հատուկ պահուստին | ստանդարտ ակտիվների համար մինչև 2%-ը |
| | | | ՀՀ դրամով արտահայտված հսկվող ակտիվների համար մինչև 15%-ը |
| | | | ՀՀ դրամով արտահայտված ոչ ստանդարտ ակտիվների համար մինչև 25%-ը |
| | | | արտարժույթով արտահայտված կասկածելի ակտիվների համար մինչև 70%-ը |
| | 85 | Ընտրել ճիշտ տարբերակը.<br>«ՀՀ տարածքում գործող բանկերի վարկերի և դեբիտորական պարտքերի դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման» կարգի համաձայն, նշվածներից որո՞նք են ենթակա դասակարգման՝<br>(ա) աշխատակիցներին տրված առհաշիվ գումարները<br>(բ) ստացված երաշխավորություններ<br>(գ)կանխիկին հավասարեցված վճարային փաստաթղթերը<br>(դ) ֆինանսական վարձակալության գծով պահանջները | միայն (ա) և (դ) |
| | | | միայն (ա), (գ) և (դ) |
| | | | միայն (ա), (բ) և (դ) |
| | | | (ա), (բ), (գ) և (դ) |
| | 86 | Համաձայն «ՀՀ տարածքում գործող բանկերի վարկերի ու դեբիտորական պարտքերի դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման կարգի»՝ կասկածելի են դասակարգվում այն ակտիվները, որոնք | չաշխատող են 91-ից 180 օր |
| | | | չաշխատող են 181-ից 270 օր |
| | | | անհավաքագրելի են և ամբողջությամբ արժեզրկված |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 87 | դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման կարգի»՝ ոչ ստանդարտ ակտիվի համապատասխան դասակարգումը պարզելու համար պետք է հաշվի առնել. | ակտիվի սպասարկման պայմանների շարունակական վերանայումները առանց դրա զգալի մարման |
| | | | փոխառուի կողմից ավելի նպաստավոր պայմաններով ակտիվի մարման վերաբերյալ առաջարկով հանդես գալը՝ կապված վերջինիս ֆինանսական վիճակի հետ |
| | | | ոչ համարժեք գրավի առկայությունը |
| | | | բոլոր պատասխանները ճիշտ են |
| | 88 | Համաձայն «ՀՀ տարածքում գործող բանկերի վարկերի ու դեբիտորական պարտքերի դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման կարգի»՝ հատուկ պահուստը, դա | հաշվեկշռում ակտիվին հակակշիռ գրանցված պահուստ է, որը ձևավորվում է ստանդարտ ակտիվների գծով կատարվող հատկացումների (մասհանումների) հաշվին |
| | | | հսկվող, ոչ ստանդարտ, կասկածելի և անհուսալի դասակարգված ակտիվների գծով կուտակված, սակայն դեռևս փաստացի չհավաքագրված տոկոսին (և (կամ) տուժանքին) հակակշիռ գրանցված պահուստն է |
| | | | հաշվեկշռից դուրս գրված միայն խոշոր վարկերի գծով ձևավորված պահուստն է |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 89 | Համաձայն «ՀՀ տարածքում գործող բանկերի վարկերի ու դեբիտորական պարտքերի դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման կարգի»՝ նշվածներից որո՞նք են հանդիսանում վերաֆինանսավորված վարկեր | X կազմակերպության կողմից ստացված նոր վարկը, որը կազմակերպության վատ ֆինանսական դրության պատճառով, ուղղվել է գործող վարկի մարմանը |
| | | | X կազմակերպությանը տրամադրված վարկի մասնակի մարումները սահմանված ժամկետից ուշացել են 91 օր |
| | | | X կազմակերպությանը տրամադրված վարկի ժամկետը երկարաձգվել է 1 տարով |

| | | | |
|---|---|---|---|
| | | | բոլոր պատասխանները ճիշտ են |
| | 90 | Համաձայն «ՀՀ տարածքում գործող բանկերի վարկերի ու դեբիտորական պարտքերի դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման կարգի», եթե ակտիվը ճանաչվում է անհուսալի, ապա | այն ակտիվի դասակարգման օրը պետք է դուրս գրվի վարկային կազմակերպության հաշվեկշռից՝ «հատուկ պահուստի» հաշվին |
| | | | ամսվա առաջին օրը այն պետք է դուրս գրվի վարկային կազմակերպության հաշվեկշռից՝ «հատուկ պահուստի» հաշվին |
| | | | նույն օրվա ընթացքում այն պետք է դուրս գրվի վարկային կազմակերպության հաշվեկշռից՝ «ընդհանուր պահուստի» հաշվին |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 91 | Համաձայն «ՀՀ տարածքում գործող բանկերի վարկերի ու դեբիտորական պարտքերի դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման կարգի», այն դեպքում, երբ օբյեկտիվ և սուբյեկտիվ չափանիշներով ակտիվների դասակարգման ընթացքում առկա են տարբերություններ, ապա | վարկային կազմկերպության համար առաջնային է առավել խիստ չափանիշը |
| | | | վարկային կազմակերպությունը կարող է ընտրել իր ցանկացած չափանիշը |
| | | | վարկային կազմակերպության համար առաջնային է օբյեկտիվ չափանիշը |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 92 | Համաձայն «ՀՀ տարածքում գործող բանկերի վարկերի ու դեբիտորական պարտքերի դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման կարգի», այն դեպքում, երբ օբյեկտիվ և սուբյեկտիվ չափանիշներով ակտիվների դասակարգման ընթացքում առկա են տարբերություններ, ապա | վարկային կազմակերպության համար առաջնային է սուբյեկտիվ չափանիշը |
| | | | վարկային կազմկերպության համար առաջնային է առավել խիստ չափանիշը |
| | | | վարկային կազմակերպության համար առաջնային է օբյեկտիվ չափանիշը |
| | | | վարկային կազմկերպության համար առաջնային է առավել մեղմ չափանիշը |
| | 93 | Նշվածներից ո՞րի առկայության դեպքում տրամադրված վարկը կդասվի ապահովվածություն չունեցող (բլանկային) վարկերի դասին | ապահովված է գրավով |
| | | | ապահովված է փոխառուի ֆինանսական վիճակը բնութագրող բավարար տեղեկատվությամբ |
| | | | ապահովված է փոխառության վերադարձելիությունը հիմնավորող տեղեկատվությամբ |
| | | | ճիշտ տարբերակը նշված չէ |
| | 94 | Տոկոսների կապիտալացումը գործընթաց է, որի արդյունքում. | չվճարված տոկոսները, պայմանագրի համաձայն, դրանց վճարման կամ վարկի մարման օրը հանվում են ակտիվի չմարված մասից |
| | | | չվճարված տոկոսները, պայմանագրի համաձայն, դրանց վճարման կամ վարկի մարման օրը գումարվում են ակտիվի չմարված մասին, |
| | | | չվճարված տոկոսները դուրս են գրվում հատուկ պահուստի հաշվին, |
| | | | չվճարված տոկոսների մարումն իրականացվում է նոր ստանձնված պարտավորությունների աղբյուրների հաշվին |
| | 95 | Տոկոսների կապիտալացումը գործընթաց է, որի արդյունքում. | չվճարված տոկոսները, պայմանագրի համաձայն, դրանց վճարման կամ վարկի մարման օրը գումարվում են ակտիվի չմարված մասին |
| | | | չվճարված տոկոսները դուրս են գրվում ընդհանուր պահուստի |
| | | | չվճարված տոկոսները դուրս են գրվում հատուկ պահուստի հաշվին |
| | | | չվճարված տոկոսները, պայմանագրի համաձայն, դրանց վճարման կամ վարկի մարման օրը հանվում են ակտիվի չմարված մասից |
| | 96 | Վերաֆինանսավորված ակտիվները այն ակտիվներն են. | որոնց մարման ժամկետները վերանայվել են փոխառուի համար առավել նպաստավոր ուղղությամբ |

| | | | |
|---|---|---|---|
| | | | որոնք փոխառուի ֆինանսական ոչ բարվոք վիճակի հետևանքով վերանայումների ու դրանց շուրջ տարվող բանակցությունների առարկա են |
| | | | այն ակտիվները, որոնց մի մասի մարումը, պայմանավորված փոխառուի վատ ֆինանսական դրությամբ, իրականացվել է նոր ստանձնած պարտավորությունների հաշվին` անկախ այն հանգամանքից, թե նոր պարտավորությունները ձևավորվել են նույն վարկային կազմակերպությունում, թե այլ կազմակերպությունում կամ բանկում |
| | | | որոնց գծով չվճարված տոկոսները դրանց վճարման կամ վարկի մարման օրը ավելացվում են ակտիվի չմարված մասին |
| | 97 | Վերաֆինանսավորված ակտիվները այն ակտիվներն են. | որոնց գծով չվճարված տոկոսները դրանց վճարման կամ վարկի մարման օրը ավելացվում են ակտիվի չմարված մասին |
| | | | որոնց գծով հաշվարկված տոկոսները վերանայվել են |
| | | | այն ակտիվները, որոնց մի մասի մարումը, պայմանավորված փոխառուի վատ ֆինանսական դրությամբ և (կամ) փոխառուի` վարկային կազմակերպության նկատմամբ առկա պարտավորությունները մարելու ոչ բավարար կարողությամբ, իրականացվել է նոր ստանձնած պարտավորությունների հաշվին` անկախ այն հանգամանքից, թե նոր պարտավորությունները ձևավորվել են նույն վարկային կազմակերպությունում, թե այլ կազմակերպությունում |
| | | | որոնք ապահովված չեն գրավով, երաշխիքով |
| | 98 | Նշել ամբողջական տարբերակը.<br>Ապահովվածություն չունեցող (բլանկային) են դասվում այն ակտիվները (կամ դրանց մասերը), որոնք | ապահովված չեն գրավով և չեն հանդիսանում ապրանքների աշխատանքների, ծառայությունների ձեռք բերման համար կատարված կանխավճար |
| | | | ապահովված չեն փոխառուի ֆինանսական վիճակը բնութագրող բավարար տեղեկատվությամբ |
| | | | ապահովված չեն փոխառության վերադարձելիությունը հիմնավորող տեղեկատվությամբ |
| | | | բոլոր պատասխանները միաժամանակ |
| | 99 | Վարկային կազմակերպությունը իրավաբանական անձին տրամադրել է 10 մլն. դրամի վարկ:<br>Համաձայն պայմանագրի` փոխառուն մեկ տարի հետո պետք է մարեր վարկի մայր գումարի 50 տոկոսը` 5 մլն. դրամը, որը սակայն չի մարել:<br>Ակտիվների դասակարգման օրը փոխառուն դեռևս չէր մարել վարկի մայր գումարի 50 տոկոսը` արդեն 250 օր:<br>Վարկը դասակարգելու արդյունքում հատուկ պահուստի մեծությունը կկազմի | 2.5 հազար դրամ |
| | | | 1 մլն. դրամ |
| | | | 5 մլն. դրամ |
| | | | 2.5 մլն. դրամ |
| | 100 | Նշված պնդումներից ո՞րն է ճիշտ.<br>Համաձայն «ՀՀ տարածքում գործող բանկերի վարկերի և դեբիտորական պարտքերի դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման» կարգի | ստանդարտ ակտիվների պորտֆելն իրենից ներկայացնում է համախառն և խնդրահարույց ակտիվների տարբերությունը |
| | | | վարկային կազմակերպություններն առնվազն ամիսը 3 անգամ պետք է դասակարգեն ակտիվները, ընդ որում դասակարգման օր պետք է լինի նաև հաշվետու ամսվա վերջին աշխատանքային օրը |
| | | | վարկային կազմակերպությունների կողմից ակտիվների դասակարգման օրերը սահմանում է Կենտրոնական բանկը` վարկային կազմակերպությունների ներկայացմամբ |
| | | | բոլոր պնդումները սխալ են |

| | | | |
|---|---|---|---|
| | 101 | Համաձայն օբյեկտիվ չափանիշի՝ վարկային կազմակերպության 1 մլն. դրամ արժողությամբ վարկը չաշխատող է արդեն 20 օր: Ընդ որում, փոխառուն համաձայն պայմանագրի չի մարել վարկի մայր գումարի 20 տոկոսը՝ 200 հազար դրամ:<br>Միևնույն ժամանակ, սուբյեկտիվ չափանիշների համաձայն, վարկը բավարարում է ակտիվը՝ կասկածելի դասակարգելու չափանիշներին:<br>Վարկը դասակարգելու արդյունքում հատուկ պահուստի մեծությունը կազմում է. | 500 հազար դրամ |
| | | | 200 հազար դրամ |
| | | | 100 հազար դրամ |
| | | | 40 հազար դրամ |
| | 102 | Վարկային կազմակերպությունը իրավաբանական անձին տրամադրել էր 1 մլն. դրամի վարկ: Ակտիվների դասակարգման օրը փոխառուն դեռևս չէր մարել վարկի գծով հաշվեգրված տոկոսները՝ 20 հազար դրամը, արդեն 120 օր:<br>Ընդ որում, դասակարգման պահին վարկային ռեգիստրից ստացվել է տեղեկատվություն, համաձայն որի տվյալ իրավաբանական անձը բանկից ունի վերցված վարկ, որը չաշխատող է արդեն 50 օր: Տվյալ ակտիվը դասակարգելիս, հատուկ պահուստի մեծությունը կկազմի | 200 հազար դրամ, |
| | | | 4 հազար դրամ, |
| | | | 20 հազար դրամ, |
| | | | 1 մլն. դրամ: |
| | 103 | Վարկային կազմակերպությունը իրավաբանական անձին տրամադրել է 1 մլն. դրամի վարկ: Համաձայն պայմանագրի՝ փոխառուն մեկ տարի հետո պետք է մարեր տվյալ վարկի գծով հաշվեգրված տոկոսները՝ 20 հազար դրամ, որը սակայն չի մարվել: Ակտիվների դասակարգման օրը փոխառուն դեռևս չէր մարել վարկի գծով հաշվեգրված տոկոսները՝ 20 հազար դրամը, արդեն 50 օր: Միևնույն ժամանակ, դասակարգման պահին վարկային ռեգիստրից ստացվել է տեղեկատվություն, համաձայն որի տվյալ իրավաբանական անձը բանկից ունի վերցված վարկ, որը չաշխատող է արդեն՝ 120 օր: Տվյալ ակտիվը դասակարգելիս, հատուկ պահուստի մեծությունը կկազմի. | 200 հազար դրամ, |
| | | | 4 հազար դրամ, |
| | | | 20 հազար դրամ, |
| | | | 100 հազար դրամ: |
| | 104 | Համաձայն պայմանագրի փոխառուն մեկ տարի հետո պետք է մարեր տվյալ վարկի գծով հաշվեգրված տոկոսները՝ 1մլն. դրամ, որը սակայն չի մարվել: Ակտիվների դասակարգման օրը փոխառուն դեռևս չէր մարել վարկի գծով հաշվեգրված տոկոսները՝ 1մլն. դրամը, արդեն 120 օր:<br>Միևնույն ժամանակ, դասակարգման պահին վարկային ռեգիստրից ստացվել է տեղեկատվություն, համաձայն որի տվյալ իրավաբանական անձը բանկից ունի վերցված վարկ, որը չաշխատող է արդեն 190 օր: Տվյալ ակտիվը դասակարգելիս, հատուկ պահուստի մեծությունը կկազմի | 5 մլն դրամ |
| | | | 2.5 մլն դրամ |
| | | | 500 հազար դրամ |
| | | | 1 մլն. դրամ: |
| | 105 | Վարկային կազմակերպությունը իրավաբանական անձին տրամադրել էր 2 մլն. դրամի վարկ: Համաձայն պայմանագրի՝ փոխառուն մեկ տարի հետո պետք է մարեր տվյալ վարկի գծով հաշվեգրված տոկոսները՝ 20 հազար դրամ, որը սակայն չի մարվել: Ակտիվների դասակարգման օրը փոխառուն դեռևս չէր մարել վարկի գծով հաշվեգրված տոկոսները՝ 20 հազար դրամը, արդեն 210 օր:<br>Միևնույն ժամանակ, դասակարգման պահին վարկային ռեգիստրից ստացվել է տեղեկատվություն, համաձայն որի տվյալ իրավաբանական անձը մեկ այլ բանկից ունի վերցված վարկ, որը չաշխատող է արդեն՝ 120 օր: Տվյալ ակտիվը դասակարգելիս, հատուկ պահուստի մեծությունը կկազմի | 1 մլն դրամ |

| | | | |
|---|---|---|---|
| | | | 10 հազար դրամ |
| | | | 400 հազար դրամ |
| | | | 40 հազար դրամ: |
| | 106 | Նշված պնդումներից ո՞րն է ճիշտ.<br>Ելնելով իր կողմից սահմանված ներքին կանոնակարգից՝ վարկային կազմակերպությունը կարող է | ՀՀ դրամով արտահայտված հսկվող ակտիվների գծով ավելացնել հատկացումները հատուկ պահուստին մինչև 15 տոկոս՝ բացառապես ՀՀ ԿԲ համաձայնությամբ, |
| | | | արտարժույթով արտահայտված ոչ ստանդարտ ակտիվների գծով ավելացնել հատկացումները հատուկ պահուստին մինչև 35 տոկոս՝ առանց ՀՀ ԿԲ վերահսկողության ծառայության որևէ միջամտության, |
| | | | ՀՀ դրամով արտահայտված կասկածելի ակտիվների գծով ավելացնել հատկացումները հատուկ պահուստին մինչև 70 տոկոս՝ առանց ՀՀ ԿԲ վերահսկողության ծառայության որևէ միջամտության, |
| | | | ստանդարտ ակտիվների գծով ավելացնել հատկացումները հատուկ պահուստին մինչև 2 տոկոս՝ առանց ՀՀ ԿԲ վերահսկողության ծառայության որևէ միջամտության |
| | 107 | Նշված պնդումներից ո՞րն է սխալ.<br>Ելնելով իր կողմից սահմանված ներքին կանոնակարգից՝ վարկային կազմակերպությունները կարող են առանց ՀՀ ԿԲ վերահսկողության ծառայության միջամտության | ավելացնել հատկացումներն ընդհանուր պահուստին ՀՀ դրամով արտահայաստված կասկածելի ակտիվների գծով՝ մինչև 70 տոկոս, |
| | | | ավելացնել հատկացումները հատուկ պահուստին ՀՀ դրամով արտահայտված  ոչ ստանդարտ ակտիվների գծով՝ մինչև 25 տոկոս, |
| | | | ավելացնել հատկացումները հատուկ պահուստին ՀՀ դրամով արտահայտված հսկվող ակտիվների գծով՝ մինչև 15 տոկոս, |
| | | | կարող են ավելացնել հատկացումները ընդհանուր պահուստին՝ ստանդարտ ակտիվների համար՝ մինչև 2 տոկոս: |
| | 108 | Նշված պնդումներից ո՞րն է ճիշտ.<br>Ելնելով իր կողմից սահմանված ներքին կանոնակարգից, վարկային կազմակերպությունը կարող է | ՀՀ դրամով արտահայտված հսկվող ակտիվների գծով ավելացնել հատկացումները հատուկ պահուստին մինչև 15 տոկոս՝ առանց ՀՀ ԿԲ վերահսկողության ծառայության որևէ միջամտության |
| | | | արտարժույթով արտայտված ոչ ստանդարտ ակտիվների գծով ավելացնել հատկացումները հատուկ պահուստին մինչև 35 տոկոս՝ առանց ՀՀ ԿԲ վերահսկողության ծառայության որևէ միջամտության |
| | | | ՀՀ դրամով արտահայտված կասկածելի ակտիվների գծով ավելացնել հատկացումները հատուկ պահուստին մինչև 75 տոկոս՝ առանց ՀՀ ԿԲ վերահսկողության ծառայության որևէ միջամտության |
| | | | ստանդարտ ակտիվների գծով ավելացնել հատկացումները հատուկ պահուստին մինչև 2 տոկոս՝ առանց ՀՀ ԿԲ վերահսկողության ծառայության որևէ միջամտության |
| | 109 | Ստանդարտ ակտիվներ են համարվում. | ժամկետային ակտիվները, որոնց մարումը ժամկետում հնարավոր չէ փոխառուի (պարտապանի) դրամական միջոցի անբավարար հոսքի պատճառով |
| | | | այն ակտիվները, որոնք ապահոված են համարժեք գրավով |
| | | | այն ակտիվները, որոնք սպասարկվում են պայմանագրի համաձայն և խնդրահարույց չեն |
| | | | այն ակտիվները, որոնք երաշխավորված են ֆիզիկական անձանց կողմից |
| | 110 | Նշել սխալ պատասխանը.<br>Համաձայն «Վարկային կազմակերպությունների հաշվետվությունները, դրանց ներկայացումը և հրապարակումը» Կանոնակարգ 15-ի, վարկային կազմակերպությունների կողմից Կենտրոնական բանկ ներկայացվող առանձին հաշվետվություններից են | հաշվետվություն վարկային կազմակերպության և ոչ ռեզիդենտների միջև իրականացվող գործառնությունների վերաբերյալ |

| | | | |
|---|---|---|---|
| | | | հաշվետվություն վարկային կազմակերպության կողմից թողարկված արժեթղթերի և կատարված ներդրումների վերաբերյալ |
| | | | հաշվետվություն վարկային կազմակերպության աշխատակազմի վերաբերյալ |
| | | | հաշվետվություն վարկային կազմակերպության մասնաճյուղերի գործունեության վերաբերյալ |
| | 111 | Նշել սխալ պատասխանը. «Վարկային կազմակերպությունների հաշվետվությունները, դրանց ներկայացումը և հրապարակումը» Կանոնակարգ 15-ով սահմանվում է (են)՝ | ՀՀ Կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունների ձևերը, ներկայացման կարգն ու ժամկետները |
| | | | տնտեսական նորմատիվների վերաբերյալ հրապարակվող հաշվետվության ձևը |
| | | | ԿԲ կողմից ծանուցումների միջոցով հաշվետվությունների պարզաբանման նպատակով լրացուցիչ տեղեկությունների և պարզաբանումների ներկայացման ժամկետները և կարգը |
| | | | վարկային կազմակերպության հրապարակվող ֆինանսական հաշվետվությունների օրինակելի ձևերը |
| | 112 | Նշել սխալ պատասխանը. Համաձայն «Վարկային կազմակերպությունների հաշվետվությունները, դրանց ներկայացումը և հրապարակումը» Կանոնակարգ 15-ի, վարկային կազմակերպությունների կողմից Կենտրոնական բանկ ներկայացվող առանձին հաշվետվություններից են | հաշվետվություն արտասահմանյան և հայրենական բանկերում բացված հաշիվների վերաբերյալ |
| | | | հաշվետվություն արժեթղթերի թողարկման արդյունքների վերաբերյալ |
| | | | հաշվետվություն վարկային կազմակերպության աշխատակազմի վերաբերյալ |
| | | | հաշվետվություն կանոնադրական կապիտալի ձևավորման |
| | 113 | Նշել սխալ պատասխանը. Համաձայն «Վարկային կազմակերպությունների հաշվետվությունները, դրանց ներկայացումը և հրապարակումը» Կանոնակարգ 15-ի, վարկային կազմակերպությունների կողմից Կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվություններից են. | հաշվետվություն Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում պարտադիր պահուստավորման նորմատիվի վերաբերյալ |
| | | | հաշվետվություն արժեթղթերի թողարկման արդյունքների վերաբերյալ |
| | | | հաշվետվություն վարկային կազմակերպության աշխատակազմի վերաբերյալ |
| | | | հաշվետվություն դրամարկղային շրջանառության վերաբերյալ (ամփոփ և ըստ մասնաճյուղերի) |
| | 114 | «Վարկային կազմակերպությունների հաշվետվությունները, դրանց ներկայացումը և հրապարակումը» Կանոնակարգ 15-ով սահմանված թիվ 9 «Ակտիվների և պարտավորությունների մարման ժամկետայնության վերաբերյալ» հաշվետվության մեջ ակտիվները և պարտավորությունները լրացվում են ըստ | պայմանագրով նախատեսված՝ ժամկետային, ժամկետանց և երկարաձգման օրերի |
| | | | պայմանագրով նախատեսված՝ մարմանը մնացած ժամկետների |
| | | | ռիսկի կշիռների |
| | | | հարաբերական իրացվելիության |
| | 115 | Համաձայն «Վարկային կազմակերպությունների հաշվետվությունները, դրանց ներկայացումը և հրապարակումը» Կանոնակարգ 15-ի, նշված պնդումներից ո՞րն է ճիշտ. | եթե Կանոնակարգ 15-ով սահմանվող հաշվետվությունների ներկայացման օրը համընկնում է հանգստյան օրվա հետ, ապա հաշվետվությունը ներկայացվում է այդ օրվան նախորդող աշխատանքային օրը |
| | | | վարկային կազմակերպությունները պատադիր պետք է ԿԲ ներկայացնեն Կանոնակարգ 15-ով սահմանվող հաշվետվությունները, եթե նույնիսկ դրանցում ներկայացվող տվյալները հաշվետու ժամանակաշրջանում փոփոխություն չեն կրել կամ դրանց հետ առնչվող գործարքներ չեն իրականացվել |

| | | | |
|---|---|---|---|
| | | | հրավիրվել ԿԲ՝ Կանոնակարգ 15-ով սահմանվող հաշվետվությունների վերաբերյալ պարզաբանումներ և մեկնաբանություններ տալու համար, |
| | | | նշված երեք պնդումներն էլ ճիշտ են |
| | 116 | Համաձայն «Վարկային կազմակերպությունների հաշվետվությունները, դրանց ներկայացումը և հրապարակումը» Կանոնակարգ 15-ի ամսական և եռամսյակային հաշվետվությունների ներկայացման ժամկետը կախված է | վարկային կազմակերպության մասնաճյուղերի քանակից |
| | | | վարկային կազմակերպության կողմից իրականացվող գործառնությունների քանակից |
| | | | վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալի չափից |
| | | | վարկային կազմակերպության ընդհանուր կապիտալի չափից |
| | 117 | Համաձայն «Վարկային կազմակերպությունների հաշվետվությունները, դրանց ներկայացումը և հրապարակումը» Կանոնակարգ 15-ի շաբաթական հաշվետվությունները | մինչև հաշվետու շաբաթվան հաջորդող 2-րդ աշխատանքային օրը ներառյալ |
| | | | կախված վարկային կազմակերպության մասնաճյուղերի քանակից |
| | | | մինչև հաշվետու շաբաթվան հաջորդող 3-րդ աշխատանքային օրը ներառյալ |
| | | | մինչև հաշվետու շաբաթվան հաջորդող օրը |
| | 118 | Վարկային ռեգիստրում պարունակվող տեղեկատվության սպառողներն են՝ | ՀՀ-ում տարածքում գործող առևտրային բանկերը |
| | | | վարկային կազմակերպությունները |
| | | | իրավաբանական (թվում անհատ ձեռներեցները) և ֆիզիկական անձինք |
| | | | բոլոր պատասխանները ճիշտ են |
| | 119 | Համաձայն «Վարկային կազմակերպությունների հաշվետվությունները, դրանց ներկայացումը և հրապարակումը» Կանոնակարգ 15-ի, հիմնական տնտեսական նորմատիվների վերաբերյալ հաշվետվությունը ներկայացվում է. | եռամսյակային հաճախականությամբ |
| | | | ամսական հաճախականությամբ |
| | | | շաբաթական հաճախականությամբ |
| | | | կիսամյակային հաճախականությամբ |
| | 120 | Համաձայն «Վարկային կազմակերպությունների հաշվետվությունները, դրանց ներկայացումը և հրապարակումը» Կանոնակարգ 15-ի, թիվ 5 «Վարկային կազմակերպության եկամուտների և ծախսերի վերաբերյալ» հաշվետվությունը լրացվում է՝ | աճողական տվյալներով՝ տարեսկզբից սկսած |
| | | | աճողական տվյալներով՝ նախորդ եռամսյակի առաջին օրվանից |
| | | | աճողական տվյալներով՝ նախորդ ամսվա վերջին օրվանից սկսած |
| | | | աճողական տվյալներով՝ նախորդ եռամսյակի վերջին օրվանից |
| | 121 | Վարկային  ռեգիստրի տեղեկատվության օգտագործողներ են հանդիսանում | Կենտրոնական բանկը |
| | | | վարկատուները |
| | | | վարկառուները |
| | | | բոլոր պատասխանները միասին |
| | 122 | Վարկային կազմակերպությունները Վարկային ռեգիստր են ներկայացնում համապատասխան տեղեկատվություն | յուրաքանչյուր տեղաբաշխված վարկի վերաբերյալ՝ անկախ վարկի մեծությունից |
| | | | 0.5 մլն. դրամը գերազանցող բոլոր վարկերի վերաբերյալ, |
| | | | բոլոր խնդրահարույց վարկերի վերաբերյալ |
| | | | դասակարագված բոլոր այն վարկերի վերաբերյալ, որոնք ունեն պայմանագրով նախատեսված ժամկետին չվճարված գումար կամ տոկոս |
| | 123 | Նշված վարկերից որի՞ (որո՞նց) վերաբերյալ վարկային կազմակերպությոնները տեղեկատվություն չեն ներկայացնում Վարկային ռեգիստր | 1 մլն. դրամ արժողությամբ վարկը, որի գծով հաշվեգրված տոկոսները ժամկետանց են 5 օր |
| | | | 1 մլն. դրամ արժողությամբ վարկը, որի գծով հաշվեգրված տոկոսները ժամկետանց են 180 օր |
| | | | 500000 դրամ արժողությամբ վարկը սուբյեկտիվ չափանիշների հիման վրա դասակարգվել է որպես «ոչ ստանդարտ» ակտիվ |
| | | | 5 մլն. դրամ արժողությամբ հիպոթեքային վարկը |

| | | | |
|---|---|---|---|
| | 124 | Օբյեկտիվ չափանիշների հիման վրա խնդրահարույց համարվող վարկերի (բացառությամբ վարկային գծերի, քարտերի և օվերդրաֆտների) վերաբերյալ Վարկային ռեգիստր տեղեկատվություն ներկայացվում է | 1 ամսյա ժամկետում |
| | | | 10 օրյա ժամկետում |
| | | | դասակարգման օրվան հաջորդող 3 աշխատանքային օրվա |
| | | | ճիշտ պատասխան նշված չէ |
| | 125 | Նշված պնդումներից ո՞րն է ճիշտ. | վարկային կազմակերպությունը կարող է մերժել հաճախորդին և վերջինիս չտրամադրել Վարկային ռեգիստրից ստացված հաճախորդին վերաբերվող տեղեկատվությունը |
| | | | վարկային կազմակերպությունը կարող է իր հաճախորդին տրամադրել վարկային ռեգիստրից ստացված վերջինիս վերաբերվող տեղեկատվությունը՝ բացառապես ՀՀ կենտրոնական բանկի համաձայնության առկայության դեպքում |
| | | | վարկային կազմակերպությունում վարկային ռեգիստր ներկայացված տեղեկատվությունը պետք է պահպանվի էլեկտրոնային եղանակով առնվազն 5 տարի |
| | | | բոլոր պնդումները ճիշտ են |
| | 126 | Նշել սխալ պատասխանը.<br>Վարկային ռեգիստրին տրամադրված տեղեկատվության օգտագործողներն են. | ՀՀ կենտրոնական բանկը |
| | | | ՀՀ տարածքում գործող վարկատուները |
| | | | հարկային մարմինները |
| | | | վարկառուները |
| | 127 | Վարկատուի կողմից վարկային ռեգիստրին փոփոխված տեղեկատվությունը տրամադրվում է | փոփոխությունները կատարելու օրվան հաջորդող 4-րդ աշխատանքային օրը |
| | | | փոփոխությունները կատարելու օրը |
| | | | փոփոխությունները  կատարելու օրվան հաջորդող 5-րդ աշխատանքային օրը |
| | | | փոփոխությունները կատարելու օրվան հաջորդող 3 աշխատանքային օրվա ընթացքում |
| | 128 | Վարկատուն կարող է վարկային ռեգիստրից տեղեկատվություն պահանջել | միայն խնդրահարույց և խոշոր վարկերի վերաբերյալ |
| | | | միայն վարկ ստանալու նպատակով իրեն դիմած կամ վարկատուից ստացված և չմարված վարկ ունեցող անձանց վերաբերյալ |
| | | | բոլոր խոշոր վարկառուների վերաբերյալ |
| | | | բոլոր վարկառուների վերաբերյալ |
| | 129 | Նշել սխալ պատասխանը.<br>Վարկատուն կարող է վարկային ռեգիստրից տեղեկատվություն ստանալ. | վարկ ստանալու համար իրեն դիմած առանձին անձի մասին |
| | | | իր բոլոր վարկառուների մասին՝ ամսվա  վերջի դրությամբ |
| | | | բանկային համակարգի բոլոր վարկառուների վերաբերյալ՝ անկախ իր վարկառուն լինելու հանգամանքից |
| | | | արդեն իսկ վարկ ստացած առանձին անձի մասին |
| | 130 | Վարկային ռեգիստրից տեղեկատվություն չի տրամադրվում. | արդեն իսկ վարկ ստացած առանձին անձի մասին |
| | | | օֆշորային երկրում գրանցված վարկառուների վերաբերյալ |
| | | | ՀՀ կենտրոնական բանկի կողմից իր աշխատակիցներին տրամադրված վարկերի վերաբերյալ |
| | | | նշված բոլոր տեղեկություններն էլ տրամադրվում են |
| | 131 | Վարկային ռեգիստրից հաճախորդի վերաբերյալ տեղեկատվությունը ստանալու դեպքում վարկատուն (վարկային կազմակերպությունը) պարտավոր է | տվյալ հաճախորդի պահանջի դեպքում նրան տրամադրել վարկային ռեգիստրից իր մասին ստացված տեղեկատվությունը |
| | | | տվյալ հաճախորդին պարտադիր տրամադրել վարկային ռեգիստրից ստացված իր մասին տեղեկատվությունը |

| | | | |
|---|---|---|---|
| | | | տվյալ հաճախորդին պարտադիր տեղեկացնել իր վերաբերյալ վարկային ռեգիստրից տեղեկատվություն ստանալու փաստի վերաբերյալ |
| | | | բոլոր պատասխանները սխալ են |
| | 240 | Համաձայն կանոնակարգ 14-ի, վարկային կազմակերպության ռիսկով կշռված ակտիվների հաշվարկում թղթակցային հաշիվները  հայկական դրամով ու դրանց գծով հաշվարկված տոկոսները ընդգրկվում են հետևյալ ռիսկի կշռով. | 0 տոկոս ռիսկի կշռով, |
| | | | 100 տոկոս ռիսկի կշռով, |
| | | | 20 տոկոս ռիսկի կշռով, |
| | | | 30 տոկոս ռիսկի կշռով |
| | 241 | Համաձայն կանոնակարգ 14-ի, վարկային կազմակերպության ռիսկով կշռված ակտիվների հաշվարկում Արժույթի միջազգային հիմնադրամի նկատմամբ արտարժութային պահանջները կշռվում են | 0 տոկոս ռիսկի կշռով |
| | | | 10 տոկոս ռիսկի կշռով |
| | | | 20 տոկոս ռիսկի կշռով |
| | | | 30 տոկոս ռիսկի կշռով |
| | 242 | Համաձայն Կանոնակարգ 14-ի, դատական ակտերի հիման վրա ՀՀ պետական բյուջեից բռնագանձման ենթակա գումարների դիմաց փոխանցելի ՀՀ պետական մուրհակներ և վերջիններով ապահովված պահանջներ, հետհաշվեկշռային պայմանական պարտավորություններ, անավարտ ժամկետային գործառնություններ, ինչպես նաև դրանց գծով հաշվարկված տոկոսները ընդգրկվում են  ռիսկով կշռված ակտիվների հաշվարկում՝ | 0 տոկոս ռիսկի կշռով, |

| | | | |
|---|---|---|---|
| | | | 10 տոկոս ռիսկի կշռով, |
| | | | 20 տոկոս ռիսկի կշռով, |
| | | | 100 տոկոս ռիսկի կշռով |
| | 243 | Համաձայն Կանոնակարգ 13-ի, ՀՀ ԿԲ-ն մերժում է վարկային կազմակերպության գրանցումն ու լիցենզավորումը, եթե | ներկայացվել են կեղծ տեղեկություններ |
| | | | ներկայացվել են անարժանահավատ տեղեկություններ |
| | | | վարկային կազմակերպության գործունեության կանոնակարգում կատարված էական կանխատեսումները Կենտրոնական բանկի հիմնավորված կարծիքով անիրատեսական են |
| | | | բոլոր պատասխանները ճիշտ են |
| | 244 | Համաձայն Կանոնակարգ 13-ի, վարկային կազմակերպության կրճատ ֆիրմային անվանումը պետք է բովանդակի. | վարկային կազմակերպության անվանումը |
| | | | վարկային կազմակերպության կոնկրետ տիպը (խումբը) |
| | | | կազմակերպաիրավական ձևը (հապավումներով) |
| | | | նշված բոլոր պատասխանները միասին |
| | 245 | Համաձայն Կանոնակարգ 13-ի, վարկային կազմակերպության կրճատ ֆիրմային անվանումը պետք է բովանդակի.<br>ա) վարկային կազմակերպության անվանումը<br>բ) վարկային կազմակերպության կոնկրետ տիպը (խումբը)<br>գ) կազմակերպաիրավական ձևը (հապավումներով)<br>դ) վարկային կազմակերպության գտնվելու վայրը<br>ե) վարկային կազմակերպության ֆինանսական գործառնությունները | միայն ա), գ), ե) տարբերակները |
| | | | միայն ա), բ), գ) տարբերակները |
| | | | միայն ա), դ), ե) տարբերակները |
| | | | միայն բ), գ), ե) տարբերակները |
| | 246 | Համաձայն Կանոնակարգ 13-ի, վարկային կազմակերպությունները պետական գրանցման և լիցենզավորման համար Կենտրոնական բանկ են ներկայացնում. | վարկային կազմակերպության կառավարման բարձրագույն մարմնի (հիմնադիրների ժողով) կողմից հաստատված վարկային կազմակերպության գործունեության կանոնակարգը |
| | | | հայտարարագիր վարկային կազմակերպության աշխատանքային ժամերի վերաբերյալ |
| | | | հայտարարագիր վարկային կազմակերպության հետ փոխկապակցված անձանց վերաբեյալ |
| | | | նշված բոլոր պատասխանները ճիշտ են |
| | 247 | Համաձայն «Կանոնակարգ 13»-ի, Կենտրոնական բանկը համապատասխան փաստաթղթերն ու տեղեկությունները ստալու պահից | մեկամսյա ժամկետում գրանցում և լիցենզավորում է վարկային կազմակերպությունը կամ մերժում է դրա գրանցումն ու |
| | | | մեկամսյա ժամկետում գրանցում և լիցենզավորում է վարկային կազմակերպությունը |
| | | | մեկամսյա ժամկետում վարկային կազմակերպությանը ներկայացնում է ստացված փաստաթղթերի ու տեղեկությունների ամբողջականության վերաբերյալ դիտողություններ |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 248 | Համաձայն Կանոնակարգ 13-ի, Կենտրոնական բանկը մերժում է վարկային կազմակերպության գրանցումն ու լիցենզավորումը, եթե ներկայացված փաստաթղթերը թերի են, ամբողջական չեն կամ հակասում են Հայաստանի Հանրապետության օրենքներին և այլ իրավական ակտերին, այդ թվում՝ | չի վճարվել վարկային կազմակերպության գործունեության համար տարեկան պետական տուրքը |
| | | | կազմակերպական կառուցվածքը կամ ներքին հսկողության համակարգը բավարար չեն վարկային կազմակերպության ռիսկերի կառավարման համար |
| | | | վարկային կազմակերպության գործունեության կանոնակարգը չի համապատասխանում Կենտրոնական բանկի կողմից սահմանված պահանջներին, գործունեության կանոնակարգում ներկայացված տվյալներն անարժանահավատ են |

| | | | |
|---|---|---|---|
| | | | նշված բոլոր պատասխաններն էլ ճիշտ են |
| | 249 | Համաձայն «Կանոնակարգ 13»-ի, Կենտրոնական բանկը գրանցում և լիցենզավորում է վարկային կազմակերպությունը, եթե | տարածքում գործող այլ բանկում բացված հաշվին ամբողջությամբ վճարվել է վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալը |
| | | | վարկային կազմակերպության հետ փոխկապակցված անձինք ստացել են Կենտրոնական բանկի համաձայնությունը |
| | | | վարկային կազմակերպության հետ կապված անձինք ստացել են Կենտրոնական բանկի նախնական համաձայնությունը |
| | | | նշված բոլոր պատասխանները ճիշտ են |
| | 250 | լիցենզավորման համար անհրաժեշտ փաստաթղթերի հետ մեկտեղ.<br>ա) Կենտրոնական բանկ պետք է ներկայացվեն վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցության ձեռքբերման նախնական համաձայնություն ստանալու համար անհրաժեշտ փաստաթղթերը<br>բ) վարկային կազմակերպության ղեկավարների թեկնածուները (բացառությամբ խորհրդի նախագահի և խորհրդի անդամների թեկնածուների) պետք է հերթագրվեն՝ ղեկավարների որակավորման և մասնագիտական համապատասխանության քննությանը մասնակցելու համար<br>գ) Կենտրոնական բանկ պետք է ներկայացվի համապատասխան միջնորդագիրը՝ որակավորված լինելու դեպքում | միայն ա) և բ) տարբերակները |
| | | | միայն ա) և գ) տարբերակները |
| | | | ճիշտ են ա), բ) և գ) տարբերակները |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 251 | Համաձայն «Կանոնակարգ 13»-ի, վարկային կազմակերպության պետական գրանցման և լիցենզավորման համար անհրաժեշտ փաստաթղթերի հետ մեկտեղ. | Կենտրոնական բանկ պետք է ներկայացվեն վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցության ձեռքբերման նախնական համաձայնություն ստանալու համար անհրաժեշտ փաստաթղթերը |
| | | | Կենտրոնական բանկ պետք է ներկայացվեն վարկային կազմակերպության հետ փոխկապակցված անձանց նախնական համաձայնություն ստանալու համար անհրաժեշտ փաստաթղթերը |
| | | | Կենտրոնական բանկ պետք է ներկայացնեն վարկային կազմակերպության աշխատանքային օրերի և ժամերի վերաբերյալ հայտարարությունը |
| | | | նշված բոլոր պատասխաններն էլ ճիշտ են |
| | 252 | Համաձայն «ՀՀ տարածքում գործող բանկերի վարկերի ու դեբիտորական պարտքերի դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման» կարգի, նշված պնդումներից ո՞րն է սխալ. | Ակտիվների հերթական դասակարգումը և պահուստների ճշգրտումներն իրականացնելիս, վարկային կազմակերպությունը ընդհանուր և հատուկ պահուստներում առկա ավելցուկային մնացորդներն ուղղում է ծախսերի հաշվին |
| | | | Եթե բանկի հաշվեկշռում հաշվառվող ակտիվները (կամ դրանց մի մասը) բանկի կողմից այլ անձի անհատույց զիջվել են (կամ ներվել) մինչև դրանց անհուսալի ճանաչվելը և (կամ) հաշվեկշռից դուրս գրվելը, դրանք չեն հանդիսանում շահութահարկի հաշվարկման նպատակով համախառն եկամտի նվազեցումներ |
| | | | Յուրաքանչյուր վարկային կազմակերպություն ակտիվների հնարավոր կորուստները ծածկելու նպատակով վարում է առանձին հաշիվ՝ ընդհանուր և հատուկ պահուստների համար |
| | | | Կենտրոնական բանկի վերահսկողության ծառայությունը, Կենտրոնական բանկի կողմից սահմանված կարգով, կարող է վերահսկողության արդյունքում պարտավորեցնել վարկային կազմակերպությանը որոշակի գումարով պահուստ ձևավորել կոնկրետ ակտիվի կամ ակտիվների խմբի համար՝ առանց ակտիվի (ակտիվների) դասակարգման |

| | | | |
|---|---|---|---|
| | 253 | Համաձայն «Կանոնակարգ 13»-ի, գրանցման և լիցենզավորման մասին Կենտրոնական բանկի խորհրդի որոշման ընդունման պահից. | եռօրյա ժամկետում վարկային կազմակերպությանը տրվում է գրանցման վկայականը |
| | | | մեկամսյա ժամկետում տրամադրվում է վարկային կազմակերպության լիցենզիան |
| | | | վարկային կազմակերպությանը տրվում է ֆիրմային անվանման գրանցման վկայականը |
| | | | նշված բոլոր պատասխանները ճիշտ են |
| | 254 | Համաձայն «Կանոնակարգ 13»-ի, Կենտրոնական բանկը լիցենզավորված վարկային կազմակերպությանը լիցենզիան տրամադրելիս ծանուցում է, որ | վարկային կազմակերպությունների գործունեությունը կարգավորող իրավական ակտերի ցանկը գտնվում է Կենտրոնական բանկի պաշտոնական ինտերնետային կայքում |
| | | | վարկային կազմակերպությունը պետք է տարեկան վճարի Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակին |
| | | | վարկային կազմակերպության լիցենզիան չի կարելի փոխանցել, վաճառել կամ փոխանցել |
| | | | նշված բոլոր պատասխանները ճիշտ են |
| | 255 | Համաձայն «Կանոնակարգ 13»-ի, Կենտրոնական բանկը լիցենզավորված վարկային կազմակերպությանը լիցենզիան տրամադրելիս ծանուցում է, որ | Լիցենզիայի կորստի կամ ոչնչացման դեպքում վարկային կազմակերպությունը պետք է Կենտրոնական բանկ դիմում ներկայացնի լիցենզիայի կրկնօրինակը ստանալու համար |
| | | | վարկային կազմակերպությունների գործունեությունը կարգավորող իրավական ակտերի ցանկը վարկային կազմակերպության կողմից պարտադիր պետք է տեղադրվի իր ինտերնետային կայքում |
| | | | պետք է վճարել վարկային կազմակերպության գործունեության համար տարեկան պետական տուրքը |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 256 | Համաձայն «Կանոնակարգ 13»-ի, Կենտրոնական բանկը մերժում է վարկային կազմակերպության գրանցումն ու լիցենզավորումը, եթե | վարկային կազմակերպության առաջարկվող ներքին հսկողության համակարգը բավարար չի վարկային կազմակերպության ռիսկերի կառավարման համար |
| | | | ներկայացվել են կեղծ տեղեկություններ |
| | | | վարկային կազմակերպության գործունեության կանոնակարգը չի համապատասխանում Կենտրոնական բանկի կողմից սահմանված պահանջներին |
| | | | նշված բոլոր պատասխանները ճիշտ են |
| | 257 | Նշել սխալ պատասխանը:<br>Համաձայն «Կանոնակարգ 13»-ի, Կենտրոնական բանկը մերժում է վարկային կազմակերպության գրանցումն ու լիցենզավորումը, եթե | չի վճարվել վարկային կազմակերպության գործունեության համար տարեկան պետական տուրքը |
| | | | վարկային կազմակերպության գործունեության կանոնակարգը չի համապատասխանում Կենտրոնական բանկի կողմից սահմանված պահանջներին |
| | | | վարկային կազմակերպության առաջարկվող ներքին կազմակերպական կառուցվածքը բավարար չէ վարկային կազմակերպության ռիսկերի կառավարման համար |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 258 | Համաձայն «ՀՀ տարածքում գործող բանկերի վարկերի ու դեբիտորական պարտքերի դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման» կարգի, եթե վարկային կազմակերպության հաշվեկշռում հաշվառվող ակտիվները (կամ դրանց մի մասը) վարկային կազմակերպության կողմից այլ անձի անհատույց զիջվել են (կամ ներվել) մինչև դրանց անհուսալի ճանաչվելը և (կամ) հաշվեկշռից դուրս գրվելը, ապա | դրանք չեն հանդիսանում շահութահարկի հաշվարկման նպատակով համախառն եկամտի նվազեցումներ |
| | | | դրանք նույնպես հանդիսանում են շահութահարկի հաշվարկման նպատակով համախառն եկամտի նվազեցումներ |

| | | | |
|---|---|---|---|
| | | | շահութահարկի հաշվարկման նպատակով բանկի հաշվետու ժամանակաշրջանի հարկվող եկամուտն ավելանում է այդ ակտիվի (կամ դրա մի մասի) գումարի չափով |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 259 | Համաձայն Կանոնակարգ 13-ի, նշված պնդումներից ո՞րն է ճիշտ. | Կորած լիցենզիան գտնելու դեպքում վարկային կազմակերպությունը գտնված լիցենզիայի օրինակը վերադարձնում է Կենտրոնական բանկ |
| | | | Կենտրոնական բանկը կորած կամ ոչնչացած լիցենզիայի կրկնօրինակը վարկային կազմակերպությանը տրամադրում է համապատասխան դիմումը Կենտրոնական բանկ ներկայացնելու օրվան հաջորդող 10-օրյա ժամկետում |
| | | | Լիցենզիայի կորստի կամ ոչնչացման դեպքում վարկային կազմակերպությունը Կենտրոնական բանկ դիմում է ներկայացնում լիցենզիայի կրկնօրինակը ստանալու համար` կցելով լիցենզիայի կրկնօրինակը ստանալու համար պետական տուրքի վճարման անդորրագիրը |
| | | | նշված բոլոր պնդումներն էլ ճիշտ են |
| | 260 | Համաձայն Կանոնակարգ 13-ի, լիցենզիայի կորստի դեպքում վարկային կազմակերպությունը | դրա մասին հայտարարություն է տալիս առնվազն 2000 տպաքանակ ունեցող մամուլում |
| | | | դրա մասին հայտարարություն է տալիս զանգվածային լրատվամիջոցներից որևէ մեկով |
| | | | Կենտրոնական բանկ դիմում է ներկայացնում լիցենզիայի կրկնօրինակը ստանալու համար |
| | | | բոլոր պատասխանները ճիշտ են |
| | 261 | Համաձայն Կանոնակարգ 13-ի, լիցենզիայի վերաձևակերպումն իրականացվում է. | Կենտրոնական բանկի նախագահի որոշմամբ` հանձնաժողովի դրական եզրակացության հիման վրա, լիցենզավորված անձի համապատասխան դիմումը Կենտրոնական բանկ ներկայացնելուց հետո մեկշաբաթյա ժամկետում: |
| | | | Կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ` հանձնաժողովի դրական եզրակացության հիման վրա, լիցենզավորված անձի համապատասխան դիմումը Կենտրոնական բանկ ներկայացնելուց հետո մեկամսյա ժամկետում: |
| | | | Կենտրոնական բանկի նախագահի որոշմամբ` հանձնաժողովի դրական եզրակացության հիման վրա, լիցենզավորված անձի համապատասխան դիմումը Կենտրոնական բանկ ներկայացնելուց հետո մեկամսյա ժամկետում: |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 262 | Համաձայն Կանոնակարգ 13-ի, լիցենզիայի վերաձևակերպման համար | լիցենզավորված անձը Կենտրոնական բանկ ներկայացնում է լիցենզիայի վերաձևակերպման մասին դիմում և վարկային կազմակերպության գործունեության համար վճարված տարեկան պետական տուրքի վճարման անդորրագրի պատճենը |
| | | | լիցենզավորված անձը Կենտրոնական բանկ ներկայացնում է լիցենզիայի վերաձևակերպման մասին դիմում` կցելով համապատասխան փոփոխությունները հավաստող փաստաթղթերը և վարկային կազմակերպության գործունեության համար վճարված տարեկան պետական տուրքի վճարման անդորրագրի պատճենը |
| | | | լիցենզավորված անձը Կենտրոնական բանկ ներկայացնում է լիցենզիայի վերաձևակերպման մասին դիմում` կցելով համապատասխան փոփոխությունները հավաստող փաստաթղթերը և լիցենզիայի վերաձևակերպման համար նախատեսված պետական տուրքի վճարման անդորրագիրը |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |

| | | | |
|---|---|---|---|
| | 263 | Նշել սխալ պատասխանը:<br>Վարկային կազմակերպությունները ներկայացուցչությունների բացման և գրանցման համար Կենտրոնական բանկ են ներկայացնում հետևյալ փաստաթղթերը. | ներկայացուցչության ստեղծելու հիմնավորումը |
| | | | ներկայացուցչության կանոնադրությունը |
| | | | վարկային կազմակերպության կառավարման իրավասու մարմնի որոշումը կամ համապատասխան արձանագրությունից քաղվածք` ներկայացուցչություն ստեղծելու մասին |
| | | | ներկայացուցչության գրանցման պետական տուրքի վճարման անդորրագիրը |
| | 264 | Համաձայն «Կանոնակարգ 13»-ի, ՀՀ տարածքում գործող վարկային կազմակերպությունները ՀՀ  տարածքում ստեղծվող մասնաճյուղերի բացման և գրանցման համար Կենտրոնական բանկ են ներկայացնում հետևյալ փաստաթղթերը | վարկային կազմակերպության մասնաճյուղի ֆիրմային անվանման գրանցման հայտը |
| | | | վարկային կազմակերպության կանոնադրությունը |
| | | | վարկային կազմակերպության մասնաճյուղի գրանցման պետական տուրքի վճարման անդորրագրի պատճենը |
| | | | նշված բոլոր պատասխանները ճիշտ են |
| | 265 | Համաձայն «Կանոնակարգ 13»-ի, ՀՀ տարածքում գործող վարկային կազմակերպությունները օտարերկրյա պետությունների տարածքներում մասնաճյուղեր ստեղծելիս Կենտրոնական բանկ են ներկայացնում. | պատճենը կամ նոտարական կարգով վավերացված վարձակալության (ենթավարձակալության) կամ անհատույց օգտագործման պայմանագրի պատճենը և վարձակալության (ենթավարձակալության) կամ օգտագործման իրավունքի գրանցման վկայականի պատճենը |
| | | | մասնաճյուղի տարածքի և տեխնիկական հագեցվածության համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը |
| | | | մասնաճյուղի գրանցման պետական տուրքի վճարման անդորրագրի պատճենը |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 266 | Նշել սխալ պատասխանը:<br>Համաձայն «Կանոնակարգ 13»-ի, ՀՀ տարածքում գործող վարկային կազմակերպությունները օտարերկրյա պետությունների տարածքներում ներկայացուցչություններ ստեղծելիս Կենտրոնական բանկ են ներկայացնում. | ներկայացուցչություն ստեղծելու հիմնավորումը |
| | | | վարկային կազմակերպության կառավարման իրավասու մարմնի որոշումը կամ համապատասխան արձանագրությունից քաղվածք` ներկայացուցչություն ստեղծելու մասին |
| | | | պատճենը կամ նոտարական կարգով վավերացված վարձակալության (ենթավարձակալության) կամ անհատույց օգտագործման պայմանագրի պատճենը և վարձակալության (ենթավարձակալության) կամ օգտագործման իրավունքի գրանցման վկայականի պատճենը |
| | | | ներկայացուցչության կանոնադրությունը |
| | 267 | Համաձայն Կանոնակարգ 13-ի, վարկային կազմակերպության ներկայացուցչությունը Կենտրոնական բանկի կողմից գրանցումից հանվում է | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | | | մեկշաբաթյա ժամկետում |
| | | | ընդունման օրվանից եռօրյա ժամկետում |
| | | | ընդունման օրվանից մեկամսյա ժամկետում |
| | 268 | Համաձայն Կանոնակարգ 13-ի, գործող վարկային կազմակերպությունները ՀՀ տարածքում ստեղծվող մասնաճյուղերի բացման և գրանցման համար ԿԲ են ներկայացնում | վարկային կազմակերպության մասնաճյուղի գրանցման դիմումը` 3 օրինակից |
| | | | մասնաճյուղի հաստատված կանոնադրությունը` 6 օրինակից |
| | | | վարկային կազմակերպության հաստատված կանոնադրությունը` 3 օրինակից |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |

| | | | |
|---|---|---|---|
| | 269 | Համաձայն Կանոնակարգ 13-ի, գործող վարկային կազմակերպությունների կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ստանալու համար ԿԲ նախնական համաձայնությունը պարտադիր է. | ֆիզիկական անձանց համար |
| | | | իրավաբանական անձանց համար |
| | | | միջազգային կազմակերպությունների համար |
| | | | բոլոր պատասխանները ճիշտ են |
| | 270 | Համաձայն «Կանոնակարգ 13»-ի, ՀՀ տարածքում գործող վարկային կազմակերպությունները օտարերկրյա պետությունների տարածքներում մասնաճյուղեր (կամ ներկայացուցչություններ) բացելիս այդ պետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ պետությունում գրանցվելուց (լիցենզավորվելուց, արտոնագրվելուց) հետո | յոթ օրվա ընթացքում Կենտրոնական բանկ են ներկայացնում համապատասխան փաստաթղթեր՝ Կենտրոնական բանկում ևս գրանցվելու և լիցենզավորվելու նպատակով |
| | | | Կենտրոնական բանկին տեղեկացնում են համապատասխան մասնաճյուղի (ներկայացուցչության) բացման վերաբերյալ |
| | | | յոթ օրվա ընթացքում Կենտրոնական բանկ են ներկայացնում գրանցման (լիցենզավորման, արտոնագրման) փաստը վկայող փաստաթուղթը՝ Կենտրոնական բանկում գրանցվելու նպատակով |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 271 | կազմակերպությունների ՀՀ տարածքում ներկայացուցչությունների բացման և գրանցման համար  վարկային կազմակերպությունները Կենտրոնական բանկ են ներկայացնում հետևյալ փաստաթղթերը | ներկայացուցչության ստեղծելու հիմնավորումը |
| | | | ներկայացուցչության կանոնադրությունը |
| | | | վարկային կազմակերպության կառավարման իրավասու մարմնի որոշումը կամ համապատասխան արձանագրությունից քաղվածք՝ ներկայացուցչություն ստեղծելու մասին |
| | | | նշված բոլոր պատասխանները ճիշտ են |
| | 272 | Նշել ամբողջական պատասխանը.<br>Համաձայն Կանոնակարգ 13-ի, գործող վարկային կազմակերպության կանոնադրական հիմնադրամում նշանակալից մասնակցություն ակնկալող իրավաբանական անձը ԿԲ նախնական համաձայնությունը ստանալու համար ԿԲ է ներկայացնում իրավաբանական անձի վերջին երեք տարիների տարեկան և վերջին միջանկյալ<br>ա) հաշվապահական հաշվեկշիռը<br>բ) ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը<br>գ) տնտեսական նորմատիվների մասին հաշվետվությունը<br>դ) դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը | միայն (բ) և (գ) |
| | | | միայն (ա), (գ) և (դ) |
| | | | միայն (ա), (բ) և (դ) |
| | | | միայն (բ) , (գ) և (դ) |
| | 273 | Համաձայն «Կանոնակարգ 13»-ի, վարկային կազմակերպության կանոնադրական հիմնադրամում նշանակալից մասնակցություն ակնկալող պետությունը պարտավոր է նախնական համաձայնություն ստանալու համար դիմել Կենտրոնական բանկ՝ ներկայացնելով հետևյալ փաստաթղթերը | նշանակալից մասնակցություն ակնկալող պետության հայտարարագիրը՝ մասնակցություն ձեռք բերելուց հետո վարկային կազմակերպության ռազմավարության մեջ իր կողմից առաջարկվող փոփոխությունների վերաբերյալ |
| | | | հայտարարագիր՝ չմարված և չներված պարտավորությունների մասին |
| | | | ներդրման ենթակա միջոցների ծագման օրինականությունը հիմնավորող փաստաթղթեր |
| | | | նշված բոլոր պատասխանները ճիշտ են |
| | 274 | Համաձայն «Կանոնակարգ 13»-ի, թեկնածուները (բացառությամբ խորհրդի նախագահի և խորհրդի անդամի թեկնածուների) քննությանը մասնակցելու համար կարող են հերթագրվել. | հեռախոսով |
| | | | ԿԲ ինտերնետային կայքի համապատասխան էջում տվյալներ մուտքագրելով |
| | | | գրավոր ձևով ուղարկված դիմումով |
| | | | նշված բոլոր պատասխանները ճիշտ են |

| | | | |
|---|---|---|---|
| | 275 | Համաձայն «Կանոնակարգ 13»-ի, թեկնածուները (բացառությամբ խորհրդի նախագահի և խորհրդի անդամի թեկնածուների) քննությանը մասնակցելու համար կարող են հերթագրվել.<br>ա) հեռախոսով<br>բ) գրավոր ձևով ուղարկված դիմումով<br>գ) էլեկտրոնային փոստով<br>դ) ԿԲ ինտերնետային կայքի համապատասխան էջում տվյալներ մուտքագրելով | միայն ա) և բ) տարբերակները |
| | | | միայն գ) և դ) տարբերակները |
| | | | միայն դ) տարբերակը |
| | | | նշված բոլոր պատասխանները ճիշտ են |
| | 276 | Համաձայն «Կանոնակարգ 13»-ի, նշել ճիշտ պնդումը. | Վարկային կազմակերպության գլխավոր հաշվապահը չի կարող լինել տվյալ վարկային կազմակերպության տնօրինության անդամ |
| | | | Վարկային կազմակերպության գլխավոր հաշվապահը չի կարող լինել տվյալ վարկային կազմակերպության վարչության անդամ |
| | | | Վարկային կազմակերպության գլխավոր հաշվապահը կարող է լինել նաև տվյալ վարկային կազմակերպության տնօրինության անդամ՝ միայն տնօրինության անդամի որակավորման վկայական ստանալու դեպքում |
| | | | Վարկային կազմակերպության գլխավոր հաշվապահը կարող է լինել նաև տվյալ վարկային կազմակերպության տնօրինության անդամ՝ առանց տնօրինության անդամի որակավորման վկայական ստանալու |
| | 277 | Համաձայն «Կանոնակարգ 13»-ի, բանկի գլխավոր հաշվապահի որակավորման վկայական ստացած անձը կարող է աշխատել վարկային կազմակերպությունում | միայն որպես գլխավոր հաշվապահ |
| | | | միայն որպես գլխավոր հաշվապահի տեղակալ |
| | | | որպես գլխավոր հաշվապահ կամ հաշվապահի տեղակալ |
| | | | որպես վերստուգիչ հանձնաժողովի անդամ |
| | 278 | Համաձայն «Կանոնակարգ 13»-ի, վարկային կազմակերպության վերստուգիչ հանձնաժողովի նախագահը միաժամանակ կարող է լինել | տվյալ վարկային կազմակերպության գլխավոր հաշվապահ |
| | | | տվյալ վարկային կազմակերպության գլխավոր հաշվապահի |
| | | | տվյալ վարկային կազմակերպության գործադիր տնօրենի տեղակալ (առկայության դեպքում) |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 279 | Համաձայն «Կանոնակարգ 13»-ի, նշված պնդումներից ո՞րն է ճիշտ. | Բանկի գլխավոր հաշվապահի որակավորման վկայական ստացած անձը կարող է աշխատել վարկային կազմակերպության վերստուգիչ հանձնաժողովի նախագահ |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | | | Բանկի գլխավոր հաշվապահի որակավորման վկայական ստացած անձը կարող է աշխատել վարկային կազմակերպության գլխավոր հաշվապահ, գլխավոր հաշվապահի տեղակալ |
| | | | Վարկային կազմակերպության վերստուգիչ հանձնաժողովի անդամը միաժամանակ կարող է աշխատել վարկային կազմակերպության գլխավոր հաշվապահ |
| | 280 | Համաձայն «Կանոնակարգ 13»-ի, վարկային կազմակերպության վերստուգիչ հանձնաժողովի նախագահը | միաժամանակ կարող է աշխատել վարկային կազմակերպության գլխավոր հաշվապահ, գլխավոր հաշվապահի տեղակալ |
| | | | միաժամանակ կարող է աշխատել վարկային կազմակերպության գործադիր տնօրեն (վարչության նախագահ), գործադիր տնօրենի (վարչության նախագահի) տեղակալ, տնօրինության (վարչության) անդամ |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | | | միաժամանակ չի կարող լինել տվյալ վարկային կազմակերպության այլ աշխատակից |

| | | | |
|---|---|---|---|
| | 281 | Համաձայն «Կանոնակարգ 13»-ի, խնայողական միության վերստուգիչ հանձնաժողովի նախագահը | կարող է միաժամանակ լինել տվյալ խնայողական միության գործադիր տնօրեն |
| | | | կարող է միաժամանակ լինել տվյալ խնայողական միության այլ աշխատակից |
| | | | կարող է միաժամանակ լինել տվյալ խնայողական միության գլխավոր հաշվապահ |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 282 | Համաձայն «Կանոնակարգ 13»-ի, նշված պնդումներից ո՞րն է սխալ. | Վարկային կազմակերպության  վերստուգիչ հանձնաժողովի նախագահը, վերստուգիչ հանձնաժողովի անդամը միաժամանակ չի կարող լինել տվյալ վարկային կազմակերպության այլ աշխատակից |
| | | | Բանկի ներքին աուդիտի ղեկավարի, բանկի ներքին աուդիտի անդամի որակավորման վկայական ստացած անձը կարող է աշխատել վարկային կազմակերպության վերստուգիչ հանձնաժողովի նախագահ (վերստուգող), վերստուգիչ հանձնաժողովի նախագահի տեղակալ, վերստուգիչ հանձնաժողովի անդամ |
| | | | Բանկի գլխավոր հաշվապահի որակավորման վկայական ստացած անձը կարող է աշխատել վարկային կազմակերպության գլխավոր հաշվապահ, գլխավոր հաշվապահի տեղակալ |
| | | | Վարկային կազմակերպության  վերստուգիչ հանձնաժողովի նախագահը, վերստուգիչ հանձնաժողովի անդամը միաժամանակ կարող է լինել տվյալ վարկային կազմակերպության գործադիր մարմնի ղեկավար |
| | 283 | Համաձայն «Կանոնակարգ 13»-ի, վարկային կազմակերպության խորհրդի նախագահի և անդամների  որակավորումը տրվում է | մինչև նրանց պաշտոնավարման ժամկետի ավարտը |
| | | | ատորագրման պահից հաշված երեք տարի ժամկետով |
| | | | ատորագրման պահից հաշված երկու տարի ժամկետով |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 284 | Համաձայն «Կանոնակարգ 13»-ի, վարկային կազմակերպության խորհրդի նախագահի և անդամների որակավորումը տրվում է. | ատորագրման պահից հաշված երեք տարի ժամկետով |
| | | | մինչև նրանց պաշտոնավարման ժամկետի ավարտը |
| | | | ատորագրման պահից հաշված հինգ տարի ժամկետով |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 285 | Համաձայն «Կանոնակարգ 13»-ի, նշված պնդումներից ո՞րն է ճիշտ. | Որակավորման և մասնագիտական համապատասխանության չափանիշներին չբավարարած թեկնածուները կրկին կարող են մասնակցել քննությանը՝ համապատասխան որակավորման վկայական ստանալու համար |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | | | Որակավորման և մասնագիտական համապատասխանության չափանիշներին չբավարարած թեկնածուները  երեք շաբաթվա ընթացքում կրկին կարող են մասնակցել քննությանը՝ համապատասխան որակավորման վկայական ստանալու համար |
| | | | Որակավորման և մասնագիտական համապատասխանության չափանիշներին չբավարարած թեկնածուները կրկին կարող են մասնակցել քննությանը՝  քննության անցկացման օրվանից 3 ամիս հետո |
| | 286 | Համաձայն «Կանոնակարգ 13»-ի, Կենտրոնական բանկի նախագահի որոշմամբ վարկային կազմակերպության ղեկավարը հանվում է գրանցումից, եթե. | որակավորման վկայականի ժամկետը լրացել է, և ղեկավարը չի ստացել նոր որակավորման վկայական |
| | | | ղեկավարը զրկվել է որակավորման վկայականից |
| | | | ղեկավարը զրկվել է հարկային, մաքսային, ֆինանսական ոլորտներում պաշտոններ վարելու իրավունքից |
| | | | նշված բոլոր պատասխանները ճիշտ են |

| | | | |
|---|---|---|---|
| | 287 | Համաձայն «Կանոնակարգ 13»-ի, վարկային կազմակերպության ղեկավարի կամ ղեկավարների կազմում փոփոխությունները գրանցելու համար ղեկավարները պետք է | ՀՀ ԿԲ նախնական համաձայնությունը |
| | | | ԿԲ կողմից տրամադրված համապատասխան որակավորման վկայական |
| | | | ԿԲ նախագահի բանավոր կամ գրավոր թույլտվությունը |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 288 | Համաձայն «Կանոնակարգ 13»-ի, վարկային կազմակերպության ղեկավարների գրանցումը մերժվում է ԿԲ որոշմամբ, եթե ղեկավարների թեկնածուները | սնանկ են ճանաչվել |
| | | | ունեն չմարված պարտավորություններ |
| | | | ունեն չներված պարտավորություններ |
| | | | բոլոր պատասխանները ճիշտ են |
| | 289 | Համաձայն «Կանոնակարգ 13»-ի, վարկային կազմակերպության ղեկավարների գրանցումը մերժվում է ԿԲ որոշմամբ, եթե | ղեկավարների թեկնածուները ունեն մարված (ներված) պարտավորություններ |
| | | | ղեկավարների թեկնածուները քրեական գործով ներգրավված չեն որպես կասկածյալ, մեղադրյալ կամ մեղադրյալ |
| | | | ղեկավարների թեկնածուները ունեն դիտավորությամբ կատարված հանցագործությունների համար դատվածություն |
| | | | բոլոր պատասխանները ճիշտ են |
| | 290 | Համաձայն «Կանոնակարգ 13»-ի, եթե վարկային կազմակերպության ղեկավարը զրկվել է որակավորման վկայականից, ապա նա չի կարող գրանցվել որպես վարկային կազմակերպության ղեկավար ղեկավարին որակավորման վկայականից զրկելու մասին ԿԲ որոշման ընդունման պահից | մեկ տարվա ընթացքում |
| | | | երեք տարվա ընթացքում |
| | | | հինգ տարվա ընթացքում |
| | | | տասը տարվա ընթացքում |
| | 291 | Համաձայն «Կանոնակարգ 13»-ի, վարկային կազմակերպության գլխավոր հաշվապահի ժամանակավոր պաշտոնակատար կարող է լինել (նշված պարտականությունը կարող է կատարել) տվյալ վարկային կազմակերպության | գործադիր տնօրենը |
| | | | գլխավոր հաշվապահի տեղեկալը |
| | | | վերստուգիչ հանձնաժողովի նախագահը |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 292 | Համաձայն «Կանոնակարգ 13»-ի, վարկային կազմակերպության վարչության նախագահի ժամանակավոր պաշտոնակատար կարող է նշանակվել (նշված պարտականությունը կարող են կատարել) միայն տվյալ վարկային կազմակերպության<br>ա) գործադիր տնօրենի տեղակալը<br>բ) վարչության նախագահի տեղակալը<br>գ) գլխավոր հաշվապահի տեղակալը<br>դ) վարչության (տնօրինության) անդամը | միայն ա) և բ) տարբերակները |
| | | | միայն ա), բ), գ) տարբերակները |
| | | | միայն ա), բ), դ) տարբերակները |
| | | | միայն բ) և դ) տարբերակները |
| | 293 | Համաձայն «Կանոնակարգ 13»-ի, վարկային կազմակերպության վարչության նախագահի ժամանակավոր պաշտոնակատար կարող է նշանակվել (նշված պարտականությունը կարող են կատարել) միայն տվյալ վարկային կազմակերպության<br>ա) գլխավոր հաշվապահի որակավորման վկայական ունեցող վարկային կազմակերպության այլ աշխատակիցը<br>բ) գլխավոր հաշվապահը<br>գ) գլխավոր հաշվապահի տեղակալը<br>դ) վերստուգիչ նախագահը | միայն ա), բ), գ) տարբերակները |
| | | | միայն ա), բ), դ) տարբերակները |
| | | | միայն բ) և դ) տարբերակները |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |

| | | | |
|---|---|---|---|
| | 294 | Համաձայն «Կանոնակարգ 13»-ի, ՀՀ տարածքում գործող վարկային կազմակերպությունները պետք է ԿԲ գրանցման ներկայացնեն | վարկային կազմակերպության կանոնադրությունում կատարված փոփոխությունը |
| | | | վարկային կազմակերպության մասնաճյուղի կանոնադրությունում կատարված փոփոխությունը |
| | | | վարկային կազմակերպության ներկայացուցչության կանոնադրությունում կատարված փոփոխությունը |
| | | | բոլոր պատասխանները ճիշտ են |
| | 295 | Համաձայն «Կանոնակարգ 13»-ի, վարկային կազմակերպության և դրա տարածքային ստորաբաժանումների կանոնադրությունների փոփոխություններն ուժի մեջ են մտնում | ԿԲ-ում գրանցման պահից |
| | | | ԿԲ-ում գրանցման պահից վեց ամիս հետո |
| | | | վարկային կազմակերպության ընդհանուր ժողովի կողմից հաստատվելուց հետո |
| | | | վարկային կազմակերպության ընդհանուր ժողովի կողմից հաստատվելուց հետո վեց ամիս հետո |
| | 296 | Համաձայն «Կանոնակարգ 13»-ի, նշել ճիշտ պնդումը. | Բանկի գլխավոր հաշվապահի որակավորման վկայական ստացած անձը կարող է աշխատել վարկային կազմակերպության գլխավոր հաշվապահ, գլխավոր հաշվապահի տեղակալ |
| | | | Վարկային կազմակերպության խորհրդի նախագահի և անդամների որակավորումը տրվում է մինչև նրանց պաշտոնավարման ժամկետի ավարտը |
| | | | Վարկային կազմակերպության գտնվելու վայրը նրա կանոնադրությունում նշված մշտական գործող մարմնի գտնվելու վայրն է |
| | | | բոլոր պատասխանները ճիշտ են |
| | 297 | Համաձայն «Կանոնակարգ 13»-ի, վարկային կազմակերպությունը Կենտրոնական բանկ ի գիտություն է ներկայացնում. | վարկային կազմակերպության գործունեության ներքին իրավական ակտերի փոփոխությունները և այդ փոփոխությունները ներառող փոփոխված ներքին իրավական ակտերը |
| | | | տարածքային ստորաբաժանման գործունեության վայրի փոփոխության գրացման համար պահանջվող փաստաթղթերը |
| | | | վարկային կազմակերպության փոփոխված կանոնակարգը |
| | | | նշված բոլոր պատասխանները ճիշտ են |
| | 298 | Համաձայն «Կանոնակարգ 13»-ի, նշված պնդումներից ո՞րն է սխալ. | Կանխիկ դրամով և (կամ) այլ արժեքներով գործառնություններ իրականացնող վարկային կազմակերպությունը և դրա մասնաճյուղը պետք է ունենան շուրջօրյա պահպանիչ-հակահրդեհային ազդարարման և շուրջօրյա անվտանգության ահազանգման համակարգեր |
| | | | Դրամապահոցի բացակայության պարագայում վարկային կազմակերպությունը կարող է չիրականացնել դրամարկղում առկա կանխիկ դրամի ինկասացում, եթե դրամարկղում կանխիկ  դրամի տվյալ  օրվա    մնացորդը չի գերազանցում 6 միլիոն ՀՀ դրամը |
| | | | Վարկային կազմակերպությունը, վարկային կազմակերպության մասնաճյուղը դրամարկղի ներսում փոխարժեքներն արտացոլող վահանակը տեղադրում է այնպես, որպեսզի այն փակ տարածքից դուրս տեսանելի չլինի |
| | | | նշված բոլոր պատասխաններն էլ ճիշտ են |

| | | | |
|---|---|---|---|
| | 299 | Համաձայն «Կանոնակարգ 13»-ի, դրամապահոցի բացակայության պարագայում վարկային կազմակերպությունը կարող է չիրականացնել դրամարկղում առկա կանխիկ դրամի ինկասացում, եթե<br>ա) դրամարկղում կանխիկ դրամի տվյալ օրվա մնացորդը չի գերազանցում 5 միլիոն ՀՀ դրամը,<br>բ) վարկային կազմակերպությունում կամ վարկային կազմակերպության մասնաճյուղում տեղադրված է հատուկ չհրկիզվող պահարան, որն ամրացված է դրամարկղի հատակին ու պատին<br>գ) ունի շուրջօրյա պահպանիչ-հակահրդեհային ազդարարման և շուրջօրյա անվտանգության ահազանգման համակարգեր<br>դ) վարկային կազմակերպությունը և դրա տարածքային ստորաբաժանումը միացված են միմյանց կապող համակարգչային ցանցի հետ | միայն ա) և բ) տարբերակները |
| | | | միայն ա), բ), գ) տարբերակները |
| | | | միայն ա), բ), դ) տարբերակները |
| | | | միայն ա), գ) և դ) տարբերակները |
| | 300 | Համաձայն «Կանոնակարգ 13»-ի, վարկային կազմակերպությունը արտարժույթի առուվաճառքի գործառնություններ իրականացնելիս փոխարժեքներն արտացոլող վահանակը տեղադրում է | իր սպասարկման տարածքում այնպես, որ այն տեսանելի լինի սպասարկման սրահի բոլոր կողմերից |
| | | | միայն իր դրամարկղում այնպես, որպեսզի այն փակ տարածքից դուրս տեսանելի չլինի |
| | | | իր սպասարկման տարածքում այնպես, որ այն տեսանելի լինի նույնիսկ սպասարկման սրահից դուրս հաճախորդներին |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 301 | Համաձայն «Կանոնակարգ 13»-ի, վարկային կազմակերպությունը կարող է Կենտրոնական բանկի կողմից սահմանած տեխնիկական հագեցվածության պահանջների փոխարեն | «Բանկերս Բլանկետ Բոնդ (BBB)» ապահովագրության պայմանագիր |
| | | | Ստանդարտ և Փուրզի «ԲԲԲ» խմբի միջազգային վարկանշող կազմակերպության կողմից տրված ԲԲԲ - վարկանիշ |
| | | | Մուդիզի «Բաա» խմբի միջազգային վարկանշող կազմակերպության կողմից տրված Բաա3 վարկանիշ |
| | | | նշված բոլոր պատասխանները ճիշտ են |
| | 302 | Համաձայն «Կանոնակարգ 14»-ի, ունիվերսալ վարկային կազմակերպության համար սահմանված արտարժույթի տնօրինման նորմատիվը սահմանված է | 5 տոկոս |
| | | | 10 տոկոս |
| | | | 12 տոկոս |
| | | | նման նորմատիվ չի սահմանվում |
| | 303 | Համաձայն Կանոնակարգ 14-ի, ՀՀ տարածքում գործող վարկային միությունները կարող են. | հաճախորդներից արժեթղթերով գործարքների կատարման հանձնարարականների ընդունումը և հաղորդումը |
| | | | մատուցել ֆինանսական խորհրդատվություն |
| | | | իրականացնել ֆինանսական վարձակալություն լիզինգ |
| | | | իրականացնել պարտքի կամ առևտրային գործարքների ֆինանսավորում |
| | 304 | Համաձայն Կանոնակարգ 14-ի, ՀՀ տարածքում գործող վարկային միությունները կարող են. | հաճախորդներից արժեթղթերով գործարքների կատարման հանձնարարականների ընդունումը և հաղորդումը |
| | | | անկանխիկ ձևով կնքել դրամի և արտարժույթի ֆյուչերսներ |
| | | | իրականացնել ֆինանսական վարձակալություն լիզինգ |
| | | | իրականացնել պարտքի կամ առևտրային գործարքների ֆինանսավորում |
| | 305 | Համաձայն Կանոնակարգ 14-ի, հաշվետեր վարկային կազմակերպությունները ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ բանկերում հաշվի բացման մասին պարտավոր են գրավոր տեղեկացնել | Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկին |
| | | | ՀՀ տարածքում գործող բոլոր վարկային կազմակերպություններին |
| | | | իր բոլոր հաճախորդներին |

| | | | |
|---|---|---|---|
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 306 | Համաձայն Կանոնակարգ 14-ի, նշված պնդումներից ո՞րն է ճիշտ. | Վարկային կազմակերպությունները չեն կարող իրենց հաճախորդների և մասնակիցների համար բացել և վարել բանկային |
| | | | Վարկային կազմակերպությունները կարող են բացել բանկային հաշիվներ միայն իրենց մասնակիցների համար |
| | | | Վարկային կազմակերպությունները կարող են իրենց հաճախորդների և մասնակիցների համար բացել բանկային հաշիվներ, սակայն այդ հաշիվների սպասարկումն իրականացնում են սպասարկող բանկերի միջոցով |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 307 | Համաձայն Կանոնակարգ 14-ի, նշված պնդումներից ո՞րն է ճիշտ. | Վարկային կազմակերպությունները չեն կարող իրենց հաճախորդների և մասնակիցների համար բացել և վարել բանկային |
| | | | Վարկային կազմակերպություններն անկանխիկ դրամական հաշվարկները կատարում են վարկային կազմակերպությանը սպասարկող բանկի միջոցով |
| | | | Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը կարող է վարկային կազմակերպության համար բացել և վարել հատուկ հաշիվներ |
| | | | նշված բոլոր պատասխանները ճիշտ են |
| | 308 | Համաձայն Կանոնակարգ 14-ի, ո՞ր նորմատիվն է սահմանված ՀՀ տարածքում գործող վարկային կազմակերպությունների համար. | պարտադիր պահուստավորման նորմատիվը, |
| | | | արտարժույթի տնօրինման նորմատիվը |
| | | | խոշոր պարտատերերի գծով ռիսկի առավելագույն չափի նորմատիվը, |
| | | | մեկ փոխառուի գծով ռիսկի առավելագույն չափի նորմատիվը |
| | 309 | Համաձայն Կանոնակարգ 14-ի, ո՞ր նորմատիվն է սահմանված ՀՀ տարածքում գործող վարկային կազմակերպությունների համար. | պարտադիր պահուստավորման նորմատիվը, |
| | | | արտարժույթի տնօրինման նորմատիվը |
| | | | խոշոր պարտատերերի գծով ռիսկի առավելագույն չափի նորմատիվը, |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 310 | Համաձայն Կանոնակարգ 14-ի, լիզինգային կազմակերպությունների համար կանոնադրական կապիտալի նվազագույն չափը սահմանվում է. | 50 մլն. դրամ |
| | | | 100 մլն. դրամ |
| | | | 150 մլն. դրամ |
| | | | 200 մլն. դրամ |
| | 311 | Համաձայն Կանոնակարգ 14-ի, ֆակտորինգային կազմակերպությունների համար կանոնադրական կապիտալի նվազագույն չափը սահմանվում է. | 50 մլն. դրամ |
| | | | 100 մլն. դրամ |
| | | | 150 մլն. դրամ |
| | | | 200 մլն. դրամ |
| | 312 | Համաձայն Կանոնակարգ 14-ի, եթե վարկային կազմակերպության կանոնադրության համաձայն վարկային կազմակերպությունը հրապարակային օֆերտաների միջոցով չի ներգրավում փոխառություններ, ապա վերջինիս վրա չի տարածվում. | կանոնադրական կապիտալի նվազագույն չափի նորմատիվը |
| | | | ընդհանուր կապիտալի համարժեքության և մեկ փոխառուի գծով ռիսկի առավելագույն չափի նորմատիվները |
| | | | ընդհանուր կապիտալի նվազագույն չափի նորմատիվը |
| | | | նշված բոլոր պատասխանները ճիշտ են |
| | 313 | Համաձայն Կանոնակարգ 14-ի, եթե վարկային կազմակերպության կանոնադրության համաձայն վարկային կազմակերպությունը հրապարակային օֆերտաների միջոցով չի ներգրավում փոխառություններ, ապա վերջինիս վրա չի տարածվում. | կանոնադրական կապիտալի նվազագույն չափի նորմատիվը |
| | | | ընդհանուր կապիտալի նվազագույն չափի նորմատիվը |

| | | | |
|---|---|---|---|
| | | | արտարժույթի տնօրինման նորմատիվը |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 314 | Վարկային միությունների և ունիվերսալ վարկային կազմակերպությունների համար մեկ փոխառուի գծով ռիսկի առավելագույն չափի նորմատիվը սահմանվում է. | 25%, |
| | | | 8%, |
| | | | 50%, |
| | | | 10%: |
| | 315 | Համաձայն Կանոնակարգ 14-ի, հրապարակային օֆերտայի միջոցով փոխառություն չներգրավող վարկային կազմակերպությունների կողմից մեկ անձին և նրա հետ փոխկապակցված անձանց տրամադրված չմարված (երաշխիքի) երաշխիքների մեծությունը չի կարող գերազանցել | վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալի մեծությունը |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | | | վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալի եռապատիկը |
| | | | վարկային կազմակերպության ակտիվների մեծությունը |
| | 316 | Համաձայն Կանոնակարգ 14-ի, վարկային կազմակերպությունների վերակազմակերպման դեպքում կանոնադրական կապիտալի վճարումը և ավելացումը կարող է կատարվել. | բացառապես ՀՀ դրամով |
| | | | միայն բաժնետոմսերի և (կամ) բաժնեմասերի փոխարկման միջոցով |
| | | | ինչպես ՀՀ դրամով, այնպես էլ բաժնետոմսերի և (կամ) բաժնեմասերի փոխարկման միջոցով |
| | | | ինչպես ՀՀ դրամով, այնպես էլ առաջին արտարժութային խմբի մեջ մտնող արժույթներով |
| | 317 | Համաձայն Կանոնակարգ 14-ի, վարկային կազմակերպությունների վերակազմակերպման դեպքում կանոնադրական կապիտալի վճարումը և ավելացումը կարող է կատարվել. | բացառապես ՀՀ դրամով |
| | | | ինչպես առաջին արտարժութային խմբի մեջ մտնող արժույթով, այնպես էլ բաժնետոմսերի և (կամ) բաժնեմասերի փոխարկման |
| | | | ինչպես ՀՀ դրամով, այնպես էլ առաջին արտարժութային խմբի մեջ մտնող արժույթներով |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 318 | Նշել սխալ պատասխանը.<br>Վարկային միության պարտատոմսերը կարող են շրջանառվել | իրավաբանական անձանց միջև |
| | | | ֆիզիկական անձանց միջև |
| | | | անհատ ձեռնարկատերերի միջև |
| | | | վարկային կազմակերպության մասնակիցների միջև |
| | 319 | Վարկային կազմակերպության պարտատոմսերը կարող են շրջանառվել | միայն առաջնային շուկայում |
| | | | միայն երկրորդային շուկայում |
| | | | ինչպես առաջնային, այնպես էլ երկրորդային շուկայում |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 320 | Համաձայն Կանոնակարգ 14-ի, վարկային կազմակերպության գործունեություն իրականացնող վերագրանցվող վարկային կազմակերպությունները կանոնադրական և ընդհանուր կապիտալի նվազագույն չափերը պետք է համալրեն | գրանցման և լիցենզավորման ընթացքում |
| | | | գրանցումից և լիցենզավորումից հետո մեկ տարվա ընթացքում |
| | | | գրանցումից և լիցենզավորումից հետո վեց ամսվա ընթացքում |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 321 | Համաձայն Կանոնակարգ 14-ի, վարկային կազմակերպության գործունեություն իրականացնող վերագրանցվող վարկային կազմակերպությունները կանոնադրական և ընդհանուր կապիտալի նվազագույն չափերը պետք է համալրեն | գրանցման փուլում |
| | | | գրանցումից և լիցենզավորումից հետո մեկ տարվա ընթացքում |
| | | | մինչև լիցենզավորման փաստաթղթերը Կենտրոնական բանկ ներկայացնելը |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |

| | | | |
|---|---|---|---|
| | 322 | Համաձայն Կանոնակարգ 14-ի, հրապարակային օֆերտայի միջոցով փոխառություն չներգրավող վարկային կազմակերպությունների կողմից մեկ անձին և նրա հետ փոխկապակցված անձանց տրամադրված չմարված (երաշխիքի) երաշխիքների մեծությունը չի կարող գերազանցել | վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալի մեծությունը |
| | | | վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալի եռապատիկը |
| | | | վարկային կազմակերպության ընդհանուր կապիտալի եռապատիկը |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 323 | Համաձայն Կանոնակարգ 14-ի, հրապարակային օֆերտայի միջոցով փոխառություն չներգրավող վարկային կազմակերպությունների կողմից մեկ անձին և նրա հետ փոխկապակցված անձանց տրամադրված չմարված (երաշխիքի) երաշխիքների մեծությունը չի կարող գերազանցել | վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալի մեծությունը |
| | | | վարկային կազմակերպության ընդհանուր կապիտալի մեծությունը |
| | | | վարկային կազմակերպության ընդհանուր կապիտալի եռապատիկը |
| | | | վարկային կազմակերպության ակտիվների մեծությունը |
| | 324 | Համաձայն Կանոնակարգ 14-ի, հրապարակային օֆերտայի միջոցով փոխառություն չներգրավող վարկային կազմակերպությունների կողմից բոլոր անձանց տրամադրված չմարված (երաշխիքի) երաշխիքների մեծությունը չի կարող գերազանցել | վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալի մեծությունը |
| | | | վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալի եռապատիկը |
| | | | վարկային կազմակերպության ընդհանուր կապիտալի մեծությունը |
| | | | վարկային կազմակերպության ընդհանուր կապիտալի եռապատիկը |
| | 325 | Համաձայն Կանոնակարգ 14-ի, վարկային կազմակերպության Ն1, Ն3 նորմատիվները հաշվարկվում են | օրական կտրվածքով |
| | | | շաբաթական կտրվածքով |
| | | | ամսական կտրվածքով |
| | | | եռամսյակային կտրվածքով |
| | 326 | Նշել սխալ պատասխանը.<br>Համաձայն Կանոնակարգ 14-ի, վարկային կազմակերպության հիմնական կապիտալի տարր է հանդիսանում. | վարկային կազմակերպության կանոնադրական հիմնադրամը |
| | | | հաշվեկշռի միավորման (կոնսոլիդացիայի) ընթացքում առաջացած արտարժութային տարբերությունների պահուստը |
| | | | գլխավոր պահուստը |
| | | | չբաշխված շահույթը |
| | 327 | Համաձայն Կանոնակարգ 14-ի, վարկային կազմակերպություններն իրենց հաճախորդների և մասնակիցների համար կարող են բացել և վարել բանկային հաշիվներ | հաճախորդների և մասնակիցների բանավոր կարգադրությամբ |
| | | | հաճախորդների և մասնակիցների գրավոր կարգադրությամբ |
| | | | վարկային կազմակերպության գործադիր տնօրենի գրավոր համաձայնությամբ |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 328 | Համաձայն Կանոնակարգ 14-ի, նշված պնդումներից ո՞րն է ճիշտ. | ՍԴՌ-ի զամբյուղի մեջ մտնում են ԱՄՆ դոլարը, եվրոն, ճապոնական իենը և անգլիական ֆունտ ստեռլինգը |
| | | | ՍԴՌ-ի զամբյուղի մեջ մտնող արժույթներին են հավասարեցվում շվեյցարական ֆրանկը, կանադական դոլարը, շվեդական կրոնը, դանիական կրոնը և ավստրալական դոլարը |
| | | | Անավարտ ժամկետային գործառնությունների թվին են դասվում ֆորվարդը, ֆյուչերսը, սվոպը, օպցիոնը |
| | | | նշված բոլոր պնդումներն էլ ճիշտ են |
| | 329 | Համաձայն Կանոնակարգ 14-ի, նշված պնդումներից ո՞րն է ճիշտ. | Վարկային կազմակերպության հիմնական կապիտալի տարր է հանդիսանում հիմնական միջոցների վերագնահատման պահուստը |
| | | | Վարկային կազմակերպության լրացուցիչ կապիտալի տարր է հանդիսանում գլխավոր պահուստը |

| | | | |
|---|---|---|---|
| | | | Վարկային կազմակերպության ընդհանուր կապիտալի նվազագույն չափը, Ն1, Ն3 հիմնական տնտեսական նորմատիվները հաշվարկվում են տարեկան կտրվածքով |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 330 | Վարկային կազմակերպության կողմից մեկ փոխառուին և նրա հետ փոխկապակցված անձանց տրամադրված փոխառությունների հանրագումարը հավասար է 50 մլն. դրամի: Որպեսզի վարկային կազմակերպությունը չխախտի մեկ փոխառուի գծով ռիսկի առավելագույն չափի նորմատիվը, վարկային կազմակերպության նորմատիվային ընդհանուր կապիտալը պետք է լինի՝ | 200 մլն. դրամ և ավելին, |
| | | | 125 մլն. դրամ և ավելին |
| | | | մինչև 200 մլն. դրամ, |
| | | | մինչև 125 մլն. դրամ: |
| | 331 | Ենթադրենք, վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալը 3 մլրդ. դրամ է, գլխավոր պահուստը 2.5 մլրդ. դրամ, չբաշխված շահույթը 750 մլն. դրամ: Վարկային կազմակերպությունը տրամադրել է երկարաժամկետ ստորադաս փոխառություն՝ 250 մլն. դրամի չափով: Վարկային կազմակերպության լրացուցիչ կապիտալը 5 մլրդ. դրամ է: Համաձայն Կանոնակարգ 14-ի, ինչքան է վարկային կազմակերպության նորմատիվային ընդհանուր կապիտալը. | 11.5 մլրդ. դրամ, |
| | | | 11.0 մլրդ. դրամ, |
| | | | 8.5 մլրդ. դրամ, |
| | | | 9 մլրդ. դրամ: |
| | 332 | Ենթադրենք, վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալը 2 մլրդ. դրամ է, գլխավոր պահուստը 1.5 մլրդ. դրամ, չբաշխված շահույթը 750 մլն. դրամ: Վարկային կազմակերպության կողմից հետ գնված սեփական բաժնետոմսերի գումարը՝ 250 մլն. դրամ է: Վարկային կազմակերպության լրացուցիչ կապիտալը 3.5 մլրդ. դրամ է: Համաձայն Կանոնակարգ 14-ի, ինչքան է վարկային կազմակերպության նորմատիվային ընդհանուր կապիտալը. | 5.57 մլրդ. դրամ, |
| | | | 6.75 մլրդ. դրամ, |
| | | | 6.5 մլրդ. դրամ, |
| | | | 6 մլրդ. դրամ: |
| | 333 | Համաձայն Կանոնակարգ 14-ի, վարկային կազմակերպության երկարաժամկետ ստորադաս փոխառության պայմաններից է (են)՝ | հինգ տարուց ոչ պակաս ժամկետայնությունը, |
| | | | ժամկետից շուտ մարման ենթակա չլինելը, |
| | | | փոխառությունը ենթակա չէ մարման, եթե փոխառության գումարի և/կամ դրա տոկոսների մարումը վճարման օրվա դրությամբ կհանգեցնի վարկային կազմակերպության տնտեսական նորմատիվներից որևէ մեկի խախտմանը |
| | | | նշված բոլոր պատասխանները ճիշտ են |
| | 334 | Համաձայն Կանոնակարգ 14-ի, վարկային կազմակերպության երկարաժամկետ ստորադաս փոխառության պայմաններից չէ (չեն)՝ | հինգ տարուց ոչ պակաս ժամկետայնությունը, |
| | | | ժամկետից շուտ մարման ենթակա չլինելը, |
| | | | փոխառությունը ենթակա չէ մարման, եթե փոխառության գումարի և/կամ դրա տոկոսների մարումը վճարման օրվա դրությամբ կհանգեցնի վարկային կազմակերպության տնտեսական նորմատիվներից որևէ մեկի խախտմանը |
| | | | փոխառությունը տրամադրվել է երեք տարի ժամկետով |
| | 335 | Համաձայն Կանոնակարգ 14-ի, նշեք ամենաբարձր ռիսկի կշիռ ունեցող ակտիվը. | ՀՀ դրամով ճանապարհին գտնվող կանխիկ միջոցներ, |
| | | | արտարժույթով ՀՀ կենտրոնական բանկի կողմից թողարկված արժեթղթեր |

| | | | |
|---|---|---|---|
| | | | ՀՀ դրամով և առաջին խմբի մեջ մտնող արտարժույթով կանխիկ դրամական միջոցներ |
| | | | բոլոր ակտիվներն ունեն միևնույն ռիսկի կշիռը |
| | 336 | Համաձայն Կանոնակարգ 14-ի, ՀՀ կառավարության նկատմամբ պահանջներ՝ հարկային օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկված հարկային պարտավորություններից ավելի վճարված գումարները (գերավճարները) ռիսկով կշիռների հաշվարկում ընդգրկվում են | 50 տոկոս ռիսկի կշռով |
| | | | 10 տոկոս ռիսկի կշռով |
| | | | 20 տոկոս ռիսկի կշռով |
| | | | 100 տոկոս ռիսկի կշռով |
| | 337 | Ենթադրենք վարկային կազմակերպությունն ունի 1 մլն. Եվրո ներգրաված միջոցներ և 0.6 մլն. Եվրո ակտիվներ: Եվրոյի փոխարժեքը 520 դրամից 510 դրամի իջնելիս՝ | փոխարժեքի փոփոխությունը չի ազդի վարկային կազմակերպության ֆինանսական արդյունքների վրա, |
| | | | վարկային կազմակերպությունը կստանա եկամուտ 6 մլն. դրամի չափով, |
| | | | վարկային կազմակերպությունը կստանա եկամուտ 4 մլն. դրամի չափով, |
| | | | վարկային կազմակերպությունը կկրի կորուստներ 6 մլն. դրամի |
| | 338 | Ենթադրենք վարկային կազմակերպությունն ունի 100 մլն. ԱՄՆ դոլար ներգրաված միջոցներ և 1 մլրդ ՀՀ դրամ ակտիվներ: ԱՄՆ դոլարի հաշվարկային փոխարժեքը 400 դրամից 350 դրամի իջնելիս՝ | փոխարժեքի փոփոխությունը չի ազդի վարկային կազմակերպության ֆինանսական արդյունքների վրա, |
| | | | վարկային կազմակերպությունը կստանա եկամուտ 5 մլն. դրամի չափով, |
| | | | վարկային կազմակերպությունը կստանա եկամուտ 5 մլրդ. դրամի չափով |
| | | | վարկային կազմակերպությունը կկրի կորուստներ 6 մլն. դրամի |
| | 339 | Համաձայն Կանոնակարգ 14-ի, ընդհանուր կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների գումարների միջև նվազագույն հարաբերակցությունը (Ն1 նորմատիվը) սահմանվում է 10% | վարկային միությունների համար |
| | | | ֆակտորինգային կազմակերպությունների համար |
| | | | խնայողական միությունների համար |
| | | | բոլոր տարբերակների համար |
| | 340 | Համաձայն Կանոնակարգ 14-ի, վարկային կազմակերպության բաժնետոմսերի հավելավճարը հանդիսանում է՝ | գլխավոր պահուստի տարր, |
| | | | հիմնական կապիտալից նվազեցվող տարր |
| | | | լրացուցիչ կապիտալի տարր, |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 341 | Համաձայն Կանոնակարգ 14-ի, եթե վարկային կազմակերպությունը խախտել է Ն1 (ընդհանուր կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների գումարների միջև նվազագույն հարաբերակցությունը) նորմատիվը, ապա վարկային կազմակերպությունը միանշանակորեն կխախտի. | ընդհանուր կապիտալի նվազագույն չափի նորմատիվը, |
| | | | կանոնադրական կապիտալի նվազագույն չափի նորմատիվը |
| | | | մեկ փոխառուի գծով ռիսկի առավելագույն չափի նորմատիվը, |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 63 | Վարկային կազմակերպությունների շահութաբերության ցուցանիշ է հանդիսանում. | վարկերի գծով պահուստաֆոնդի հաշվարկային մեծության հարաբերությունը վարկային ներդրումներին, |
| | | | վարկերի և դեբիտորական պարտքերի հարաբերությունը ժամկետային պարտավորություններին, |
| | | | զուտ շահույթի հարաբերությունը բաժնետոմսերի քանակին, |
| | | | վարկերի գծով հետհաշվեկշռից վերադարձների հարաբերությունը դասակարգված վարկերին: |
| | 64 | Այլ հավասար պայմաններում նշվածներից որը չի վկայում վարկային կազմակերպության շահութաբերության` զուտ շահույթ հարկումից հետո / միջին ընդհանուր ակտիվներ, ցուցանիշի նվազման վերաբերյալ | տարեկան արդյունքներով շահաբաժիններ բաշխելը, |
| | | | տոկոսային եկամուտների նվազումը, |
| | | | գործառնական ծախսերի ավելացումը, |
| | | | շահութահարկի դրույքաչափի ավելացումը: |
| | 65 | Պահուստաֆոնդին կատարված մասհանումների հարաբերությունը վարկերին և դեբիտորական պարտքերին (հատկացումներ պահուստաֆոնդին/վարկեր և դեբիտորական պարտքեր)` ֆինանսական ցուցանիշը ցույց է տալիս | վարկային կազմակերպության վարկերի և դեբիտորական պարտքերի շահութաբերության մակարդակը, |
| | | | վարկերի և դեբիտորական պարտքերի գծով ստեղծված պահուստին կատարվող մասհանումների մեծությունը, |
| | | | վարկային պորտֆելի որակը |
| | | | անհուսալի դասակարգված վարկերի և դեբիտորական պարտքերի տեսակարար կշիռը ընդհանուր վարկերի և դեբիտորկան պարտքերի մեջ: |
| | 66 | Նշված ֆինանսական գործակիցներից որի միջոցով հնարավոր չէ բնորոշել վարկային կազմակերպության ակտիվների և պարտավորությունների ժամկետայնությունը. | կարճաժամկետ պարտավորությունների հարաբերությունը ընդհանուր պարտավորություններին, |
| | | | կարճաժամկետ ակտիվների հարաբերությունը ընդհանուր ակտիվներին, |
| | | | երկարաժամկետ վարկերի գծով ձևավորված պահուստաֆոնդին կատարված մասհանումների հարաբերությունը ընդհանուր վարկային ներդրումներին, |
| | | | 365 օր և ավել մարման ժամկետ ունեցող ակտիվների հարաբերությունը 365 օր և ավելի մարման ժամկետ ունեցող |
| | 67 | Նշված պնդումներից որն է ճիշտ. | ֆորվարդը բորսայական գործիք է, |
| | | | ֆորվարդը պահանջում է երաշխիքային գումարի ներդրում, |
| | | | ֆյուչերսի հիմքում ընկած կարող է լինել միայն արտարժույթ, |

| | | | |
|---|---|---|---|
| | | | բոլոր պնդումները սխալ են: |
| | 68 | Նշված պնդումներից որն է սխալ. | ֆորվարդի դեպքում առկա է որևէ կողմի չվճարելու ռիսկը, |
| | | | ֆորվարդը կարող է կնքվել բորսայի` միայն աշխատանքային |
| | | | ֆորվարդային պայմանագիրը ըստ պահանջվող հատկանիշների կազմված պայմանագիր է, |
| | | | ֆյուչերս պայմանագիրը պահանջում է երաշխիքային գումարի ներդրում: |
| | 69 | Նշված պնդումներից որն է ճիշտ | ֆյուչերսը բորսայական գործիք է, իսկ ֆորվարդը` ոչ, |
| | | | ֆորվարդը պահանջում է երաշխիքային գումարի ներդրում, իսկ ֆյուչերսը` ոչ, |
| | | | ֆորվարդի հիմքում ընկած ակտիվը կարող է լինել ցանկացած ակտիվ, իսկ ֆյուչերսինը` միայն արտարժույթ, |
| | | | բոլոր պնդումները ճիշտ են: |
| | 70 | Նշված պնդումներից որն է սխալ. | ֆյուչերսը կարող է կնքվել բորսայի` միայն աշխատանքային ժամերին, իսկ ֆորվարդը` օրվա ընթացքում ցանկացած պահին, |
| | | | ֆյուչերսային պայմանագրի հիմքում ընկած ակտիվների մեծությունը որոշվում է լոտերի միջոցով կամ մեծությամբ, իսկ ֆորվարդայինի դեպքում` ըստ պայմանագրի կողմերի համաձայնության, |
| | | | ֆորվարդի դեպքում առկա է գործընկերոջ կողմից չվճարելու ռիսկ, իսկ ֆյուչերսի դեպքում` ոչ, |
| | | | ֆորվարդը պահանջում է երաշխիքային գումարի ներդրում, իսկ ֆյուչերսը` ոչ: |
| | 71 | Նշված պնդումներից որն է ճիշտ. | գնման օպցիոնը (call option), ակտիվը որոշակի գնով ապագա ամսաթվին կամ նախքան այդ ամսաթիվը վաճառելու պարտավորությունն է, |
| | | | գնման օպցիոնը (call option), ակտիվը որոշակի գնով ապագա ամսաթվին կամ նախքան այդ ամսաթիվը գնելու իրավունքն է` օպցիոն գնողի համար, |
| | | | վաճառքի օպցիոնի (put option) դեպքում օպցիոն վաճառողը ձեռք է բերում ապագա ամսաթվին կամ նախքան այդ ամսաթիվը ակտիվը որոշակի գնով գնելու կամ վաճառելու  իրավունքը, |
| | | | բոլոր պնդումները սխալ են: |
| | 72 | Օպցիոնի վաճառքի դեպքում, օպցիոն վաճառողը պոտենցիալ ձևով կարող է. | ստանալ ինչպես անսահմանափակ օգուտներ, այնպես էլ անսահմանափակ վնասներ, |
| | | | ստանալ անսահմանափակ օգուտներ այն դեպքում, երբ վնասները սահմանափակված են, |
| | | | կրել անսահմանափակ վնասներ այն դեպքում, երբ օգուտները սահմանափակված են, |
| | | | ստանալ սահմանափակ օգուտներ և սահմանափակ վնասներ: |
| | 73 | Վարկային կազմակերպությունն իր հաշվեկշռային արտարժութային երկար դիրքով պայմանավորված ռիսկը մեղմելու համար կարող է | կնքել արտարժույթի վաճառքի ֆորվարդային գործարք, |
| | | | կնքել արտարժույթի գնման ֆորվարդային գործարք, |
| | | | գնել արտարժույթի գնման օպցիոն, |
| | | | կնքել նշված բոլոր գործարքները: |
| | 74 | Վարկային կազմակերպության ակտիվները ցույց են տալիս. | թե որտեղից են գոյացել վարկային կազմակերպության միջոցները, |
| | | | որտեղ են տեղաբաշխվել վարկային կազմակերպության միջոցները, |
| | | | թե որտեղից  է ձևավորվել վարկային կազմակերպության կանոնադրական հիմնադրամը, |
| | | | թե որտեղից են գոյացել և որտեղ են տեղաբաշխվել վարկային կազմակերպության միջոցները: |
| | 75 | Նշվածներից որը չի համարվում վարկային կազմակերպության ակտիվային գործառնություն. | ռեպո գործառնությունը` արժեթղթերի գնման դեպքում, |
| | | | ռեպո գործառնությունը` արժեթղթերի վաճառքի դեպքում, |

| | | | |
|---|---|---|---|
| | | | արժեթղթերում ներդրումների իրականացումը, |
| | | | Ֆակտորինգային գործառնությունը: |
| | 76 | Եթե հաշվապահական հաշվեկշռի կազմման արդյունքում վարկային կազմակերպության ակտիվները գերազանցում են վարկային կազմակերպության պարտավորությունների և կապիտալի հանրագումարը, ապա վարկային կազմակերպությունը | ճանաչվում է անվճարունակ, |
| | | | պարտավոր է թողարկել լրացուցիչ արտոնյալ բաժնետոմսեր, |
| | | | պարտավոր է ներգրավել երկարաժամկետ ստորադաս փոխառություններ, |
| | | | պետք է ճշտի իր հաշվապահական հաշվեկշիռը` այն համեմատելով հաշվապահական գրանցամատյանների տվյալների հետ |
| | 77 | Այլ հավասար պայմաններում, նշվածներից որը կարող է պատճառ հանդիսանալ վարկային կազմակերպության զուտ տոկոսային եկամուտների նվազման համար. | հիմնական միջոցների ամորտիզացիոն մասհանումների ավելացումը, |
| | | | վերավաճառքի համար նախատեսված արժեթղթերի բացասական վերագնահատումը, |
| | | | վարկային կազմակերպության աշխատակիցների աշխատավարձի դրույքաչափի բարձրացումը, |
| | | | ճիշտ պատասխան նշված չէ: |
| | 78 | ԱՄՆ դոլարի փոխարժեքը ՀՀ դրամի նկատմամբ (AMD/USD) ժամանակաշրջանի սկզբի նկատմամբ արժեքավորվել է 50 դրամով և կազմել 300 դրամ 1 դոլլարի դիմաց: Նույն ժամանակահատվածում ՀՀ դրամի փոխարժեքը ԱՄՆ դոլարի նկատմամբ (USD/AMD) | արժեքավորվել է 16.7 տոկոսով, |
| | | | արժեզրկվել է 16.7 տոկոսով, |
| | | | արժեքավորվել է 20.0 տոկոսով, |
| | | | արժեզրկվել է 20.0 տոկոսով: |
| | 79 | ԱՄՆ դոլարի փոխարժեքը ՀՀ դրամի նկատմամբ ժամանակաշրջանի սկզբի նկատմամբ արժեզրկվել է 50 դրամով և կազմել 500 դրամ 1 դոլարի դիմաց: Նույն ժամանակահատվածում ՀՀ դրամի փոխարժեքը ԱՄՆ դոլարի նկատմամբ | արժեքավորվել է 9.0 տոկոսով, |
| | | | արժեզրկվել է 9.0 տոկոսով, |
| | | | արժեքավորվել է 10.0 տոկոսով, |
| | | | արժեզրկվել է 10.0 տոկոսով: |
| | 80 | 1 կանադական դոլարը (USD/CAD) գնվում է 0.70 և վաճառվում է 0.75 ԱՄՆ դոլարով: CAD/USD` ԱՄՆ դոլարի համապատասխանաբար առքի և վաճառքի փոխարժեքները արտահայտված կանադական դոլարով կկազմեն | 070 - 0.75, |
| | | | 0.75 - 0.70, |
| | | | 1.33-1.43, |
| | | | 1.23 - 1.33: |
| Դրամավարկային | 1 | Նշվածներից ո՞րն է հանդիսանում ընթացիկ հաշվի դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուր | արտերկրից մասնավոր տրանսֆերտների նվազումը, |
| | | | ռեզիդենտ բանկերի կողմից օտարերկրյա բանկերին կարճաժամկետ վարկերի տրամադրումը, |
| | | | օտարերկրյա ուղղակի ներդրումների աճը, |
| | | | նշված բոլոր պատասխանները սխալ են, |
| | 2 | Շրջանառության մեջ գտնվող դրամի քանակն այլ հավասար պայմաններում աճում է եթե` | ՀՀ կենտրոնական բանկը ռեպո համաձայնագրով արժեթղթեր է վաճառում, |
| | | | ՀՀ կենտրոնական բանկը ռեպո համաձայնագրով արժեթղթեր է գնում, |
| | | | ՀՀ կենտրոնական բանկը բարձրացնում է պարտադիր պահուստավորման նորմատիվը, |
| | | | ՀՀ կենտրոնական բանկը երկրորդային շուկայում վաճառում է Պետական կարճաժամկետ պարտատոմսեր: |
| | 3 | ՀՀ ԿԲ հիմնական խնդիրը | ՀՀ-ում տոկոսադրույքների կայունության ապահովումն է, |
| | | | ՀՀ-ում դրամի փոխարժեքի կայունության ապահովումն է, |
| | | | ՀՀ-ում գների կայունության ապահովումն է, |
| | | | ՀՀ-ում ֆինանսական կայունության ապահովումն է: |

| | | | |
|---|---|---|---|
| | 4 | Նշել ճիշտ պատասխանը.<br>Նշված գործառնություններից ո՞րն է վկայում ԿԲ կողմից կիրառվող ընդլայնողական դրամավարկային քաղաքականության վերաբերյալ`<br>(ա) ՀՀ Կենտրոնական բանկն առևտրային բանկերից գնել է արտարժույթ,<br>(բ) ՀՀ կենտրոնական բանկը բարձրացրել է պարտադիր պահուստավորման նորմատիվը,<br>(գ) ՀՀ ԿԲ-ը երկրորդային շուկայում վաճառել է Պետական կարճաժամկետ պարտատոմսեր. | (ա), |
| | | | (բ), |
| | | | (գ), |
| | | | (բ) և (գ): |
| | 5 | Նշված պնդումներից ո՞րն է ճիշտ.<br>Պարտադիր պահուստավորման նորմատիվը հանդիսանում է.<br>(ա) բնակչությունից ներգրաված միջոցների ապահովագրման գործիք,<br>(բ) դրամավարկային քաղաքականության գործիք,<br>(գ) բանկի անվճարունակության ռիսկի նվազեցման պահանջ, | (ա) և (բ), |
| | | | (բ) և (գ), |
| | | | միայն (բ), |
| | | | (ա) և (գ): |
| | 6 | Փողի զանգվածի նվազեցումը, այլ հավասար պայմաններում, ուղեկցվում է. | տոկոսադրույքների նվազմամբ, |
| | | | տոկոսադրույքների աճով, |
| | | | տոկոսադրույքների անփոփոխ մակարդակով, |
| | | | նախ տոկոսադրույքների նվազմամբ, հետո աճով: |
| | 7 | Նշված պնդումներից ո՞րն է ճիշտ.<br>Ազգային արժույթի արժեքավորումը, այլ հավասար պայմաններում, կարող է հանգեցնել<br>(ա) ապրանքների և ծառայությունների արտահանման աճին,<br>(բ) ապրանքների և ծառայությունների ներմուծման նվազմանը,<br>(գ) ապրանքների և ծառայությունների արտահանման նվազմանը,<br>(դ) ապրանքների և ծառայությունների ներմուծման աճին. | (ա) և (բ) |
| | | | (բ) և (գ), |
| | | | (ա) և (դ), |
| | | | (գ) և (դ): |
| | 8 | Նշված պնդումներից ո՞րն է սխալ.<br>Ընդլայնողական դրամավարկային քաղաքականությունը, այլ հավասար պայմաններում, կհանգեցնի | ՀՆԱ (համախառն ներքին արդյունքի) աճին, |
| | | | համախառն պահանջարկի նվազման, |
| | | | տոկոսադրույքների նվազման, |
| | | | վարկավորման ծավալների աճին: |
| | 9 | 2012 թվականին մեկ շնչին ընկնող ՀՆԱ (Համախառն Ներքին Արդյունք) մոտավորապես հավասար է | 21 000 000 ՀՀ դրամ |
| | | | 177 961 ՀՀ դրամ |
| | | | 956 567 ՀՀ դրամ |
| | | | 1 313 508 ՀՀ դրամ |
| | 10 | 2012 թվականի Հայաստանի Հանրապետության Հ.Ն.Ա. (Համախառն Ներքին Արդյունք) մոտավորապես հավասար է | 2 446 000 մլրդ. ՀՀ դրամ |
| | | | 3509.6 մլն. ՀՀ դրամ |
| | | | 3 981 506.5 մլն ՀՀ դրամ |
| | | | 1 024 4 մլրդ. ՀՀ դրամ |
| | 11 | Նշված պնդումներից ո՞րն է ճիշտ.<br>ՀՆԱ` Համախառն ներքին արդյունքը հաշվարկվում է | միայն եկամուտների մեթոդով, |
| | | | միայն ծախսերի մեթոդով, |
| | | | միայն ավելացված արժեքի մեթոդով, |
| | | | եկամուտների, ծախսերի և ավելացված արժեքի մեթոդներով: |
| | 12 | Ծախսերի մեթոդով ՀՆԱ-ի հաշվարկման ժամանակ նշվածներից ո՞րը չի մտնում ՀՆԱ-ի մեջ | արտահանումը, |

| | | | |
|---|---|---|---|
| | | | սպառումը |
| | | | օտարերկրյա ներդրումները, |
| | | | նշվածներից բոլորն էլ մտնում են ՀՆԱ-ի մեջ: |
| | 13 | Անվանական ՀՆԱ-ի ծավալը ցույց է տալիս. | բնակչության տնօրինած եկամուտների ընդհանուր մակարդակը, |
| | | | որոշակի ժամանակահատվածում վերջնական օգտագործման նպատակով ոչ ռեզիդենտների կողմից արտադրված ապրանքների և ծառայությունների ծավալը, |
| | | | մեկ տարվա ընթացքում երկրի ներսում արտադրված ապրանքների ու ծառայությունների արժեքը, |
| | | | մեկ տարվա ընթացքում ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների կողմից արտադրված ապրանքների ծավալը: |
| | 14 | Սպառողական գների ինդեքսի փոփոխությունը ցույց է տալիս. | տեղական սպառողական ապրանքների գների փոփոխությունը, |
| | | | ներմուծված սպառողական ապրանքների գների փոփոխությունը, |
| | | | բնակչության սպառողական զամբյուղի արժեքի փոփոխությունը |
| | | | ՀՆԱ-ի տարրերի գների փոփոխությունը: |
| | 15 | Համախառն ազգային արդյունքը հաշվարկվում է որպես | ՀՆԱ-ի և զուտ գործոնային եկամտի հանրագումար, |
| | | | մասնավոր սպառման, պետական սպառման և համախառն ներքին ներդրումների հանրագումար, |
| | | | մասնավոր սպառման, պետական սպառման, համախառն ներքին ներդրումների, ապրանքների և ծառայությունների զուտ արտահանման գումար, |
| | | | մարդկանց եկամուտների և ծախսերի տարբերություն: |
| | 16 | Այլ հավասար պայմաններում նշվածներից ո՞րը չի կարող հանգեցնել գների աճի (սղաճի) | ներմուծվող գների աճը, |
| | | | մասնավոր տրանսֆերտների ավելացումը, |
| | | | բոլոր պատասխանները սխալ են: |
| | | | ամբողջական պահանջարկի աճը, |
| | 17 | Նշեք ճիշտ տարբերակը.<br>Այլ հավասար պայմաններում տոկոսադրույքների աճը կարող է հանգեցնել<br>(ա) վարկավորման ծավալների նվազմանը,<br>(բ) ազգային արժույթի արժեքավորմանը,<br>(գ) բանկերում ներդրված ավանդների ծավալի նվազմանը. | (ա) և (գ), |
| | | | (ա) և (բ), |
| | | | (բ) և (գ), |
| | | | (ա) և (բ) և (գ): |
| | 18 | Արժույթի Միջազգային Հիմնադրամի կողմից տրամադրված վարկերը ուղղվում են | ՀՀ Կենտրոնական բանկ՝ արտաքին արտարժութային պահուստների համալրմանը, |
| | | | ՀՀ կառավարություն՝ ՀՀ պետական բյուջե, |
| | | | Ծրագրերի Իրականացման գրասենյակներին, |
| | | | Սոցիալական Ապահովագրության հիմնադրամին |
| | 19 | Փողի զանգվածը մեծանալու դեպքում, այլ հավասար պայմաններում, վարկային կազմակերպությունների համար արտարժութային որ դիրքն է առավել շահեկան. | կարճ դիրքը, |
| | | | երկար դիրքը, |
| | | | բաց դիրքը, |
| | | | փակ դիրքը: |
| | 20 | Նշեք ճիշտ տարբերակը.<br>Այլ հավասար պայմաններում, ՀՀ ԿԲ զսպողական դրամավարկային քաղաքականությունը կհանգեցնի.<br>(ա) հայկական դրամի արժեքավորմանը,<br>(բ) ԱՄՆ դոլարի արժեզրկմանը,<br>(գ) հայկական դրամի արժեզրկմանը,<br>(դ) ԱՄՆ դոլարի արժեքավորմանը. | (գ) և (դ), |
| | | | (ա) և (բ), |

| | | | |
|---|---|---|---|
| | | | միայն (ա), |
| | | | միայն (բ): |
| | 21 | Նշված հանգամանքներից ո՞րն է վկայում ԿԲ կողմից կիրառվող ընդլայնողական դրամավարկային քաղաքականության մասին | ՀՀ Կենտրոնական բանկը առևտրային բանկերից գնել է արտարժույթ |
| | | | ՀՀ Կենտրոնական բանկը բարձրացրել է վերաֆինանսավորման տոկոսադրույքը |
| | | | ՀՀ Կենտրոնական բանկը երկրորդային շուկայում վաճառել է պետական կարճաժամկետ պարտատոմսեր |
| | | | ճիշտ պատասխանը բացակայում է |
| | 22 | Փողի զանգվածի նվազեցումը այլ հավասար պայմաններում կարող է ուղեկցվել | տոկոսադրույքների անփոփոխ մակարդակով |
| | | | տոկոսադրույքների նվազմամբ |
| | | | տոկոսադրույքների աճով |
| | | | ճիշտ պատասխանը բացակայում է |
| | 23 | ՀՆԱ՝ Համախառն ներքին արդյունքը կարող է հաշվարկվել | միայն ավելացված արժեքի ու ծախսերի մեթոդով |
| | | | միայն եկամուտների մեթոդով |
| | | | միայն եկամուտների ու ծախսերի մեթոդով |
| | | | ճիշտ պատասխանը բացակայում է |
| | 24 | Ծախսերի մեթոդով ՀՆԱ-ի հաշվարկման ժամանակ հաշվարկում չի ընդգրկվում | պետական ծախսերը |
| | | | ներքին սպառումը |
| | | | արտահանումը |
| | | | ճիշտ պատասխանը բացակայում է |
| | 25 | Անվանական ՀՆԱ-ի ծավալը ցույց է տալիս | մեկ տարվա ընթացքում միայն ռեզիդենտների կողմից արտադրված ապրանքների ու ծառայությունների ծավալը |
| | | | մեկ տարվա ընթացքում ոչ ռեզիդենտների կողմից արտադրված ապրանքների ու ծառայությունների արժեքը |
| | | | մեկ տարվա ընթացքում երկրի ներսում ստեղծած արդյունքը |
| | | | ճիշտ պատասխանը բացակայում է |
| | 26 | Այլ հավասար պայմաններում նշվածներից ո՞րը կարող է հանգեցնել գների աճին | վերաֆինանսավորման տոկոսադրույքի աճը |
| | | | վարկավորման ծավալների նվազումը |
| | | | ամբողջական պահանջարկի աճը |
| | | | ճիշտ պատասխանը բացակայում է |
| | 27 | Այլ հավասար պայմաններում տոկոսադրույքների աճը կարող է հանգեցնել | արտահանման ծավալի աճին |
| | | | վարկավորման ծավալների նվազմանը |
| | | | բանկերում ներդրված ավանդների ծավալի նվազմանը |
| | | | բոլոր պատասխանները սխալ են |
| | 28 | ՀՀ Կենտրոնական բանկի դրամավարկային քաղաքականության ծրագիրը հաստատում | ՀՀ Կենտրոնական բանկի խորհուրդը |
| | | | ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավարը |
| | | | ՀՀ Բանկերի միությունը |
| | | | ճիշտ պատասխանը բացակայում է |
| | 29 | ՀՀ Կենտրոնական բանկի հիմնական խնդիրն է | կայուն բանկային համակարգի ձևավորում |
| | | | գործուն վճարահաշվարկային համակարգի ձևավորում |
| | | | կայուն փոխարժեքի պահպանում |
| | | | ճիշտ պատասխանը բացակայում է |
| | 30 | Կենտրոնական բանկի կողմից իրականացվող գնաճի նպատակադրման ռազմավարության դեպքում դրամավարկային քաղաքականության գործառնական նպատակ է հանդիսանում | կարճաժամկետ տոկոսադրույքը |
| | | | փողի բազան |
| | | | բանկերի ավելցուկային իրացվելիությունը |
| | | | ճիշտ պատասխանը բացակայում է |
| | 31 | Տնտեսությունում խնայողությունների աճին նպաստում է | տոկոսադրույքների աճը |
| | | | տոկոսադրույքների նվազումը |
| | | | տոկոսադրույքի անփոփոխ մակարդակը |

| | | | |
|---|---|---|---|
| | | | ճիշտ պատասխանը բացակայում է |
| | 32 | ՀՀ-ում կիրառվում է հետևյալ արժութային ռեժիմը | ֆիքսված փոխարժեքի ռեժիմ |
| | | | կարգավորվող լողացող փոխարժեքի ռեժիմ |
| | | | ազատ լողացող փոխարժեքի ռեժիմ |
| | | | ճիշտ պատասխանը բացակայում է |
| | 33 | Եթե Կենտրոնական բանկը բանկերից գնի 50մլն ԱՄՆ դոլար (400 ՀՀ դրամ փոխարժեքով) և միաժամանակ բանկերին վաճառի 5 մլրդ ՀՀ դրամի պետական արժեթուղթ: Այլ հավասար պայմաններում ինչ տեղի կունենա փողի բազայի հետ | փողի բազան կաճի 15 մլրդ դրամով |
| | | | փողի բազան կնվազի 15 մլրդ դրամով |
| | | | փողի բազան չի փոփոխվի |
| | | | ճիշտ պատասխանը բացակայում է |
| | 34 | Կենտրոնական բանկն իր հաշվին ՀՀ պետական (գանձապետական) պարտատոմսեր կարող է ձեռք բերել | միայն առաջնային տեղաբաշխման ընթացքում |
| | | | միայն պարտատոմսերի երկրորդային շուկայում |
| | | | և առաջնային, և երկրորդային շուկաներում |
| | | | ճիշտ պատասխանը բացակայում է |
| | 35 | Նշվածներից ո՞րը չի հանդիսանում ընթացիկ հաշվի գործարք | ապրանքների արտահանումը |
| | | | ապրանքների ներմուծումը |
| | | | մասնավոր տրանսֆերտների տրամադրումը |
| | | | վարկերի տրամադրումը ոչ ռեզիդենտ բանկին |
| | 36 | Այլ հավասար պայմաններում ի՞նչ տեղի կունենա շուկայական տոկոսադրույքների հետ, եթե փողի զանգվածը աճի 1 %-ով | տոկոսադրույքները ևս կաճեն 1 %-ով |
| | | | տոկոսադրույքները կնվազեն 1 %-ով |
| | | | տոկոսադրույքները չեն փոփոխվի |
| | | | տոկոսադրույքների փոփոխությունը կախված կլինի տոկոսադրույքների նկատմամբ փողի պահանջարկի էլաստիկությունից |
| | 37 | Որ՞ գործիքն է հանդիսանում ՀՀ կենտրոնական բանկի դրամավարկային քաղաքականության հիմնական գործիք | լոմբարդային վարկ |
| | | | ռեպո գործառնություն |
| | | | արտարժույթի առք ու վաճառք |
| | | | արտարժութային սվոփ |
| Հարկեր | 1 | Համաձայն «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի, եկամուտ է համարվում հաշվետու տարվա ընթացքում՝ | ակտիվների ներհոսքը, աճը կամ պարտավորությունների նվազումը, որոնք հանգեցնում են հարկատուի սեփական կապիտալի ավելացմանը, |
| | | | դրամական միջոցների ներհոսքը, աճը կամ պարտավորությունների նվազումը, որոնք հանգեցնում են հարկատուի ընդհանուր ակտիվների ավելացմանը, |
| | | | ակտիվների ներհոսքը, աճը կամ պարտավորությունների նվազումը, որոնք հանգեցնում են հարկատուի գործունեության ծավալների ընդլայնմանը, |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ: |
| | 2 | Համաձայն «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի, եկամուտ չեն համարվում՝ | շահաբաժինները, |
| | | | ապրանքների, արտադրանքի իրացումից ստացվող հասույթը, |
| | | | ապահովագրական հատուցումները, |
| | | | հարկատուի բաժնետոմսերի տեղաբաշխման գնի և անվանական արժեքի դրական տարբերությունը: |
| | 3 | Համաձայն «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի, եկամուտ են համարվում | արտարժույթի և արտարժույթով արտահայտված այլ ակտիվների և պարտավորությունների վերագնահատման դրական արդյունքը |
| | | | ոչ առևտրային կազմակերպությունների անհատույց ստացած ակտիվները և ծառայությունները |

| | | | |
|---|---|---|---|
| | | | մասնակիցների կողմից հարկատուի կանոնադրական կապիտալում կատարված ներդրումները |
| | | | հարկատուի ստացած ապահովագրական հատուցումները |
| | 4 | Համաձայն «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի, ծախս չեն համարվում` | այլ անձի կանոնադրական կապիտալում հարկատուի կատարած ներդրումները |
| | | | հաշվետու տարում հայտնաբերված` դրան անմիջապես նախորդ երեք տարիներում պակաս ցույց տրված ծախսերը |
| | | | չփոխհատուցվող /չհաշվանցվող/ հարկերը, տուրքերը և այլ պարտադիր վճարները |
| | | | հարկատուի կողմից պատճառված վնասի հատուցումը |
| | 5 | Համաձայն «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի, հարկվող շահույթը որոշելիս համախառն եկամուտը նվազեցվում է. | փոխառության դիմաց ստացվող տոկոսներով |
| | | | հաշվետու տարում հայտնաբերված` դրան անմիջապես նախորդող երեք տարիներում պակաս ցույց տրված |
| | | | շահաբաժինների չափով |
| | | | ճիշտ տարբերակը նշված չէ |
| | 6 | Համաձայն «Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, հարկվող շահույթի որոշման ժամանակ որպես ծախս չեն դիտվում` | երաշխիքների և երաշխավորությունների համար վճարները |
| | | | վարկերի և այլ փոխառությունների տոկոսները |
| | | | աշխատանքի վարձատրության վճարումները |
| | | | ճիշտ տարբերակը նշված չէ |
| | 7 | - ծառայությունների իրացումից հասույթ` 700 միավոր<br>- հիմնական միջոցների իրացումից հասույթ` 80 միավոր<br>- արտարժութային ակտիվների վերագնահատումից դրական արդյունք` 50 միավոր<br>- հիմնական միջոցի վերագնահատման դրական արդյունք` 300 միավոր<br>- աշխատանքի վարձատրություն և դրան հավասարեցված այլ վճարումներ` 110 միավոր.<br>- շահաբաժինների վճարում մասնակիցներին` 70 միավոր<br>- այլ անձանց կանոնադրական կապիտալում կատարված ներդրումներ` 20 միավոր<br>- հիմնական միջոցի ընթացիկ վերանորոգում` 10 միավոր<br>- ֆակտորինգային գործառնությունների գծով ծախսեր` 60 միավոր:<br>Վարկային կազմակերպության հարկվող շահույթը կկազմի | 840 միավոր |
| | | | 660 միավոր |
| | | | 600 միավոր |
| | | | 960 միավոր: |
| | 8 | - ծառայությունների իրացումից հասույթ` 1000 միավոր<br>- հիմնական միջոցների իրացումից հասույթ` 800 միավոր<br>- հիմնական միջոցի իրացման հետ կապված ծախսեր 680 միավոր<br>- արտարժույթի առքուվաճառքից եկամուտներ` 350 միավոր<br>- արտարժութային ակտիվների վերագնահատումից դրական արդյունք` 70 միավոր<br>- հիմնական միջոցի վերագնահատման դրական արդյունք` 150 միավոր<br>- աշխատանքի վարձատրություն և դրան հավասարեցված այլ վճարումներ` 200 միավոր.<br>- հիմնական միջոցի ընթացիկ վերանորոգում` 90 միավոր<br>- գործուղման ծախսեր (օրենսդրությամբ սահմանված չափը չգերազանցող)` 80 միավոր: | 1320 միավոր |
| | | | 1250 միավոր |
| | | | 1100 միավոր |
| | | | 1180 միավոր: |

| | | | |
|---|---|---|---|
| | 9 | - հիմնական միջոցի վերագնահատումից օգուտներ՝ 500 միավոր<br>- արտարժույթի վերագնահատումից ստացված օգուտներ՝ 200 միավոր<br>- արտարժույթի առք ու վաճառքից ստացված օգուտներ՝ 800 միավոր<br>- հիմնական միջոցի իրացումից ստացված օգուտներ՝ 150 միավոր<br>- հիմնական միջոցի վրա կատարված ընթացիկ ծախս՝ 120 միավոր<br>- վարկերի և այլ փոխատվություններից ստացված տոկոսներ՝ 450 միավոր<br>- պարտադիր սոցիալական ապահովագրության վճարներ՝ 50 միավոր<br>- գործուղման ծախսեր՝ 180 միավոր (օրենսդրությամբ սահմանված չափը չգերազանցող):<br>Վարկային կազմակերպության շահութահարկի գումարը կկազմի. | 330 միավոր, |
| | | | 350 միավոր, |
| | | | 210 միավոր, |
| | | | 310 միավոր: |
| | 10 | Վարկային կազմակերպության վերաբերյալ ունենք հետևյալ տվյալները.<br>- հիմնական միջոցի գործառնական վարձակալությունից ստացված եկամուտներ՝ 600 միավոր<br>- հիմնական միջոցի վերագնահատումից օգուտներ՝ 100 միավոր<br>- արտարժույթի առք ու վաճառքից ստացված օգուտներ՝ 300 միավոր<br>- հիմնական միջոցի իրացումից ստացված օգուտներ՝ 400 միավոր<br>- հիմնական միջոցի վրա կատարված ընթացիկ ծախս՝ 70 միավոր<br>- վարկերի և այլ փոխատվություններից ստացված տոկոսներ՝ 270 միավոր<br>- արտարժույթի վերագնահատումից ստացված օգուտներ՝ 50 միավոր<br>- պարտադիր սոցիալական ապահովագրության վճարներ՝ 50 միավոր:<br>Վարկային կազմակերպության շահութահարկի գումարը կկազմի. | 310 միավոր, |
| | | | 300 միավոր, |
| | | | 290 միավոր, |
| | | | 320 միավոր: |
| | 11 | արժեքով, օգտակար ծառայության ժամկետը գնահատվել է 15 տարի, մնացորդային արժեք՝ 0 միավոր: Վարկային կազմակերպությունը ընտրել է մաշվածության հաշվարկման գծային մեթոդը: Հարկման նպատակով համախառն եկամտից հիմնական միջոցի գծով մաշվածության գումարի նվազեցվող մեծությունը 2003 թվականի համար կկազմի. | 220 միավոր, |
| | | | 165 միավոր, |
| | | | 200 միավոր, |
| | | | 143 միավոր: |
| | 12 | Վարկային կազմակերպությունը ձեռք է բերել շենք՝ 6000 միավորով, որի օգտակար ծառայության ժամկետը գնահատվել է 20 տարի: Ամորտիզացիայի հաշվարկը վարկային կազմակերպությունը կատարում է մաշվածության հաշվարկման գծային մեթոդով: Հարկվող շահույթն որոշելիս համախառն եկամտից նվազեցվող գումարը շենքի մաշվածության գծով կկազմի | 250 միավոր, |
| | | | 310 միավոր, |
| | | | 330 միավոր, |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ: |
| | 13 | Վարկային կազմակերպությունը ձեռք է բերել շենք՝ 5000 միավորով, որի օգտակար ծառայության ժամկետը գնահատվել է 20 տարի, մնացորդային արժեքը՝ 500: Ամորտիզացիայի հաշվարկը վարկային կազմակերպությունը կատարում է մաշվածության հաշվարկման արագացված մեթոդով: Հարկվող շահույթն որոշելիս համախառն եկամտից նվազեցվող գումարը շենքի մաշվածության գծով կկազմի | 225 միավոր, |
| | | | 476 միավոր, |
| | | | 226 միավոր, |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ: |

| | | | |
|---|---|---|---|
| | 14 | «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի համաձայն, վարկային կազմակերպությունն իրեն պատկանող շինությունների համար գույքահարկի չափը հաշվարկում  է հիմք | դրանց մնացորդային արժեքը, |
| | | | դրանց  կադաստրային արժեքը, |
| | | | դրանց սկզբնական արժեքը, |
| | | | դրանց հաշվեկշռային արժեքը: |
| | 15 | Վարկային կազմակերպությունը արտադրողից ձեռք է բերել հինգ նստատեղ ունեցող մարդատար ավտոմեքենա, որի քաշող շարժիչի հզորությունը 120 ձիաուժ է: Վարկային կազմակերպության կողմից վճարվելիք տարեկան գույքահարկի գումարը՝ շահագործման առաջին տարվա համար, կկազմի. | 12.000 դրամ, |
| | | | 60.000 դրամ, |
| | | | 24.000 դրամ, |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ: |
| | 16 | Համաձայն  «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի՝ ԱԱՀ-ով չեն հարկվում. | վարկային կազմակերպության վերակազմակերպման |
| | | | ՀՀ տարածքով օտարերկրյա բեռների տարանցիկ փոխադրումը, |
| | | | հատուցման դիմաց իրավաբանական անձին պատկանող անշարժ գույքի սեփականության իրավունքն այլ      անձի փոխանցման գործարքը, |
| | | | փոխանակման գործարքը: |
| | 17 | Համաձայն «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքի, ոչ գյուղատնտեսական նշանակության հողերի համար հողի հարկով հարկման օբյեկտ է հանդիսանում. | հողի շուկայական գնահատմամբ որոշված արժեքը, |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | | | հողի կադաստրային գնահատման արժեքը, |
| | | | օրենքով սահմանված կարգով որոշված հաշվարկային զուտ եկամուտը: |
| | 18 | Համաձայն «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքի, ոչ գյուղատնտեսական նշանակության հողերի համար հողի հարկով հարկման օբյեկտ չի հանդիսանում. | հողի շուկայական գնահատմամբ որոշված արժեքը, |
| | | | հողի հաշվեկշռային արժեքը, |
| | | | օրենքով սահմանված կարգով որոշված հաշվարկային զուտ եկամուտը: |
| | | | բոլոր պատասխանները ճիշտ են: |
| | 19 | Համաձայն «Հարկերի մասին» ՀՀ օրենքի՝ հարկ վճարողն իրավունք ունի | ծանոթանալ իր գործունեության ստուգումների ակտերին |
| | | | հարկային մարմին ներկայացնել բացատրություններ հարկերի հաշվարկման ու վճարման և ստուգումների արդյունքների վերաբերյալ |
| | | | դիմել հարկային արտոնություն ստանալու համար |
| | | | բոլոր տարբերակները ճիշտ են |
| | 20 | Համաձայն «Հարկերի մասին» ՀՀ օրենքի՝ հարկային պարտավորությունը դադարում է | հարկային պարտավորության կատարման դեպքում |
| | | | հարկի վերացման դեպքում |
| | | | ֆիզիկական անձի մահվան դեպքում, եթե օրենսդրությամբ այլ բան սահմանված չէ |
| | | | բոլոր տարբերակները ճիշտ են |
| | 21 | Համաձայն «Հարկերի մասին» ՀՀ օրենքի՝վարկային կազմակերպություններում հարկերի հաշվարկման և վճարման կարգի նկատմամբ հսկողությունն իրականացնում է | ՀՀ կենտրոնական բանկը |
| | | | ՀՀ կենտրոնական բանկը ՀՀ ֆինանսների նախարարության հետ համատեղ |
| | | | բացառապես Հարկային տեսչությունը |
| | | | հարկային մարմինը, իսկ հարկային օրենսդրությամբ սահմանված դեպքերում նաև մաքսային մարմինը |

| | | | |
|---|---|---|---|
| | 22 | - միջնորդային ծառայությունների արդյունքում ստացված օգուտներ 900 միավոր,<br>- վարկերի և այլ փոխատվություններից ստացված տոկոսներ՝ 300 միավոր,<br>- վարչական ծախսեր 150 միավոր<br>- հիմնական միջոցի վերագնահատումից օգուտներ՝ 300 միավոր,<br>- աշխատավարձի գծով ծախսեր 350 միավոր,<br>- պարտադիր սոցիալական ապահովագրության վճարներ՝ 30 միավոր,<br>- արտարժույթի վերագնահատումից ստացված օգուտներ՝ 200 միավոր,<br>- հիմնական միջոցի վրա կատարված ընթացիկ վերանորոգման գծով ծախս՝ 70 միավոր,<br>- գովազդային ծախսեր՝ 30 միավոր (օրենսդրությամբ սահմանված չափը չգերազանցող),<br>- գործուղման ծախսեր՝ 80 միավոր (որից 10 միավորը՝ գերազանցում է օրենսդրությամբ սահմանված չափը):<br>Բանկի շահութահարկի գումարը կկազմի | 104 միավոր |
| | | | 102 միավոր |
| | | | 100 միավոր |
| | | | 98 միավոր: |
| | 23 | Նշեք սխալ պատասխանը.«Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի համաձայն եկամուտ են համարվում. | կոմիսիոն վարձատրությունները, որոնք ստացվել են վերաապահովագրության փոխանցման պայմանագրերից |
| | | | պատճառված վնասի (կրած կորստի) հատուցումից ստացվող եկամուտները |
| | | | ոչ առևտրային կազմակերպությունների անհատույց ստացած ակտիվները (այդ թվում՝ անդամավճարները) և ծառայությունները |
| | | | հարկատուի կողմից ստացված ապահովագրական |
| | 24 | «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի համաձայն ծախս չեն համարվում՝ | հարկատուի կողմից վճարված ապահովագրավճարները |
| | | | ապահովագրական այլ ծառայությունների համար հարկատուի կողմից կատարված վճարները |
| | | | պարտադիր սոցիալական ապահովագրության վճարները |
| | | | ճիշտ տարբերակը նշված չէ |
| | 25 | Վարկային կազմակերպություններում հարկերի հաշվարկման և վճարման կարգի նկատմամբ հսկողությունն իրականացնում է. | ՀՀ կենտրոնական բանկը, |
| | | | ՀՀ Ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը, |
| | | | բացառապես հարկային մարմինը |
| | | | հարկային տեսչությունը, իսկ հարկային օրենսդրությամբ սահմանված դեպքերում՝ մաքսային մարմինը |
| | 26 | Համաձայն «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի, ԱԱՀ-ից ազատվելը, դա | հարկվող շրջանառության նկատմամբ ԱԱՀ չհաշվարկելն է, |
| | | | զրոյական դրույքաչափով հարկումն է, |
| | | | հարկային հաշիվների դուրս գրումն է, |
| | | | 20 %-ի փոխարեն 16.67 % հաշվարկային դրույքաչափով հարկումն է: |
| | 27 | Համաձայն «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի, վարկային կազմակերպության կողմից իրականացվող որ գործառնությունը չի  ազատվում ԱԱՀ-ից. | կանխիկի տրամադրման ծառայությունները, |
| | | | արժեթղթերի հավատարմագրային կառավարումը, |
| | | | վարկերի տրամադրումը, |
| | | | վարկավորման գործընթացի հետ կապված քաղվածքների և տեղեկությունների տրամադրումը: |
| | 28 | Համաձայն «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքի, վարձակալության պայմաններով օգտագործման տրամադրված հողի համար հողի հարկը գանձվում է. | վարձատուից, |
| | | | վարձակալից, |
| | | | և վարձատուից, և վարձակալից, |
| | | | վարձակալությամբ տրամադրված հողից հողի հարկ չի գանձվում: |
| | 29 | Համաձայն «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի, նախորդ տարվա նկատմամբ ընթացիկ տարվա հարկվող շահույթը պակաս նախատեսելու դեպքում հարկ վճարողը. | շահութահարկի  ամսական կանխավճար չի վճարում, |

| | | | |
|---|---|---|---|
| | | | շահութահարկի ամսական կանխավճար չի վճարում՝ նախօրոք այդ մասին հայտնելով հարկային տեսչության մարմիններին, |
| | | | ինքնուրույն՝ հարկային տեսչության մարմիններ ներկայացնելով վերադաս հարկային մարմնի կողմից հաստատված ձևի հայտարարություն |
| | | | շահութահարկի գծով կանխավճար է վճարում նախորդ տարվա շահութահարկի փաստացի գումարի չափով: |
| | 30 | Նշեք սխալ պնդումը.<br>Համաձայն «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի | եթե հարկատուն շահութահարկի գծով ամսական կանխավճարի մեծությունը որոշում է ինքնուրույն, կանխավճարի տարեկան հանրագումարը տվյալ տարվա փաստացի շահութահարկի 75 %-ից պակաս լինելու դեպքում հարկատուն վճարում է տույժ, |
| | | | եթե շահութահարկի գծով կատարված կանխավճարների հանրագումարը պակաս է տվյալ հաշվետու տարվա փաստացի շահութահարկի գումարից, ապա վերահաշվարկ է կատարվում միայն շահութահարկի գծով, և հարկատուն պարտավոր է առաջացած տարբերությունը վճարել պետական բյուջե, |
| | | | շահութահարկի կանխավճարների նկատմամբ հաշվարկված տույժերի գումարները ենթակա են վերահաշվարկման կամ վերադարձման, |
| | | | այն հարկատուն, որը նախորդ տարում հարկվող շահույթ չի ունեցել, կարող է շահութահարկի հաշվարկը ներկայացնելուց հետո շահութահարկի կանխավճարներ չկատարել: |
| | 31 | Համաձայն «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի, հարկվող շահույթը որոշելիս համախառն եկամուտը նվազեցվում է՝ | հաշվարկված շահաբաժինների չափով, |
| | | | այլ անձանց կանոնադրական կապիտալներում կատարված ներդրումների չափով, |
| | | | համախառն եկամտի ստացման հետ կապված անհրաժեշտ և փաստաթղթերով հիմնավորված ծախսերի չափով, |
| | | | բոլոր պատասխանները ճիշտ են: |
| | 32 | Համաձայն «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի, հարկվող շահույթը որոշելիս վարկային կազմակերպության համախառն եկամտից չեն նվազեցվում | վարկերի և դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների պահուստներին ուղղված գումարները, |
| | | | դատական ծախսերը, |
| | | | ներված պարտավորությունները, |
| | | | հիմնական միջոցների վրա կատարված ընթացիկ ծախսերը: |
| | 33 | Նշել սխալ պատասխանը.<br>Համաձայն «Հարկերի մասին» ՀՀ օրենքի, հարկ վճարողը պարտավոր է. | ժամանակին վճարել օրենքով սահմանված հարկերը և դրանց կանխավճարային մուծումները, |
| | | | հարկային մարմնի ստուգումների հետևանքով բացահայտված, թաքցված կամ պակաս ցույց տրված հարկվող օբյեկտի գումարի չափով ուղղումներ կատարել հաշվապահական հաշվառման փաստաթղթերում, |
| | | | ներկայացնել հարկային արտոնությունների իր իրավունքը հաստատող փաստաթղթերը, |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 34 | Համաձայն «Հարկերի մասին» ՀՀ օրենքի, հարկ վճարողը իրավունք ունի | հարկային մարմին ներկայացնել բացատրություններ հարկերի հաշվարկման ու վճարման և ստուգումների արդյունքների վերաբերյալ, |
| | | | ծանոթանալ իր գործունեության ստուգումների ակտերին |
| | | | օրենքով սահմանված կարգով գանգատարկել հարկային մարմնի պաշտոնատար անձանց գործողությունները, |
| | | | նշված բոլոր պատասխանները ճիշտ են |
| | 35 | Ներքոհիշյալ ո՞ր խախտումը չի կարող առաջացնել «Հարկերի մասին» ՀՀ օրենքով սահմանված հարկային պատասխանատվություն. | հարկերը ժամանակին չվճարելը, |

| | | | |
|---|---|---|---|
| | | | հարկվող օբյեկտը թաքցնելը կամ այն պակաս ցույց տալը, |
| | | | տնտեսական նորմատիվները խախտելը, |
| | | | հաշվապահական հաշվառում չվարելը կամ սահմանված կարգի խախտումներով այն վարելը: |
| | 36 | Համաձայն «Հարկերի մասին» ՀՀ օրենքի, հարկային օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկված որևէ հարկային պարտավորություններից ավելի վճարված գումարները | հարկային մարմնի կողմից հաշվանցվում են հարկ վճարողի այլ պարտավորությունների հաշվին կամ վերադարձվում են ոչ ուշ, քան վերադարձման մասին հարկ վճարողի դիմումը ստանալուց հետո 30 օրվա ընթացքում |
| | | | վերադարձվում են ՀՀ կենտրոնական բանկի կողմից, |
| | | | չեն վերադարձվում և չեն հաշվանցվում հարկ վճարողի այլ պարտավորությունների հաշվին |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 37 | Համաձայն հարկային օրենսդրության՝ հարկային արտոնություն չի հանդիսանում. | հարկի հաշվարկման ժամկետի հետաձգումը, |
| | | | հարկի դրույքաչափի նվազեցումը, |
| | | | հարկի նվազեցումը, |
| | | | հաշվարկված հարկային պարտավորությունների սահմանված չափից ավել վճարված գումարների վերադարձումը: |
| | 38 | «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի համաձայն, վարկային կազմակերպության համար գույքահարկով հարկվող օբյեկտ են համարվում՝ | վարկային կազմակերպության ներքին կառավարման համար օգտագործվող գրասենյակային գույքը, |
| | | | վարկային կազմակերպությունում գրավադրված հիմնական միջոցները, |
| | | | վարկային կազմակերպությանը պատկանող ավտոմոբիլային տրանսպորտի միջոցները, |
| | | | բոլոր պատասխանները ճիշտ են: |
| | 39 | Համաձայն  «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի՝ ԱԱՀ-ի համար կիրառվում | 20 տոկոս դրույքաչափը |
| | | | 16.67 տոկոս դրույքաչափը |
| | | | 0 տոկոս դրույքաչափը |
| | | | բոլոր տարբերակները ճիշտ են: |
| | 40 | Հարկային օրենսդրության խախտումներ հայտնաբերելու դեպքում հարկային պարտավորություններ չեն կարող առաջանալ, եթե | խախտումը հայտնաբերվել է այն կատարելուն հաջորդող տարում |
| | | | խախտումը հայտնաբերվել է այն կատարելու տարվան անմիջապես հաջորդող երեք տարին լրանալուց առաջ |
| | | | խախտումը հայտնաբերվել է այն կատարելու տարվան անմիջապես հաջորդող մեկ տարին լրանալուց հետո |
| | | | ճիշտ պատասխանը բացակայում է |
| | 41 | Հարկային օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկված որևէ հարկային պարտավորություններից ավելի վճարված գումարները | հաշվանցվում են հարկ վճարողի այլ տնտեսվարող սուբյեկտներին ունեցած պարտավորություններին |
| | | | չեն վերադարձվում |
| | | | հաշվանցվում են հարկ վճարողի այլ հարկային պարտավորությունների հաշվին |
| | | | ճիշտ պատասխանը բացակայում է |
| | 42 | Համաձայն «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի՝ գործարքը համարվում է ՀՀ տարածքում իրականացված, | եթե ծառայությունների մատուցման վայրը գտնվում է ԱՊՀ տարածքում |
| | | | եթե ծառայությունների մատուցման վայրը անորոշ է |
| | | | եթե ապրանքի մատակարարման կամ ծառայության մատուցման վայրը ՀՀ-ում է |
| | | | ճիշտ պատասխանը բացակայում է |
| | 43 | Նշել սխալ պատասխանը: Հարկային հաշիվներ դուրս չեն գրվում՝ | ԱԱՀ վճարող անձանց կողմից |
| | | | օրենքով ԱԱՀ-ից ազատված ապրանքների ու ծառայությունների համար |
| | | | զրոյական դրույքաչափով հարկվող գործարքների համար |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |

| | | | |
|---|---|---|---|
| Հաշվապա հություն | 1 | Համաձայն Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների՝ իրացման (մարման) արժեքի սկզբունքով ակտիվները ճանաչելիս, ակտիվները գրանցվում են | դրամական միջոցների այն գումարի չափով, որը կարող էր ներկա պահին ստացվել ակտիվները սովորական պայմաններում |
| | | | դրամական միջոցների ապագա զուտ մուտքերի զեղչված գումարի չափով, որոնք պետք է ստեղծեն ակտիվները կազմակերպության սովորական գործունեության ընթացքում, |
| | | | դրամական միջոցների այն գումարի չափով, որը կվճարվեր, եթե ներկա պահին միևնույն կամ համանման այլ ակտիվ ձեռք բերվեր, |
| | | | դրանց ձեռքբերման ժամանակ վճարված դրամական միջոցների գումարի չափով կամ դրանց ձեռք-բերման պահին կողմերի համաձայնությամբ որոշված արժեքով: |
| | 2 | Համաձայն Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների՝ պարտավորության սկզբնական արժեքը | կազմակերպության ակտիվների և սեփական կապիտալի տարբերությունն է, |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ, |
| | | | ներկա պահին առաջացող միևնույն տիպի պարտավորությունները մարելու համար անհրաժեշտ դրամական միջոցների գումարն է, |
| | | | սովորական գործունեության ընթացքում դրանք մարելու համար անհրաժեշտ դրամական միջոցների  ապագա զուտ հատուցումների զեղչված գումարն է: |
| | 3 | Համաձայն Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների՝ պարտավորության սկզբնական արժեքը | ընթացիկ գործունեության ժամանակ դրանք մարելու համար անհրաժեշտ դրամական միջոցների գումարն է |
| | | | դրանց դիմաց ստացված ակտիվների կամ սովորական գործունեության ընթացքում այդ պարտավորությունները մարելու համար անհրաժեշտ դրամական միջոցների գումարն է |
| | | | ներկա պահին առաջացող միևնույն տիպի պարտավորությունները մարելու համար անհրաժեշտ դրամական միջոցների գումարն է |
| | | | սովորական գործունեության ընթացքում դրանք մարելու համար անհրաժեշտ դրամական միջոցների  ապագա զուտ հատուցումների զեղչված գումարն է |
| | 4 | Համաձայն «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի, նշված պնդումներից ո՞րն է ճիշտ. | տարեկան ֆինանսական հաշվետվությունները կարող են հրապարակվել միայն աուդիտի ենթարկվելուց հետո՝ աուդիտորական եզրակացության հետ |
| | | | Կազմակերպությունները, որոնց ֆինանսական հաշվետվություններն օրենքին համապատասխան ենթակա են հրապարակման, պարտավոր են տարեկան հաշվետվությունները հրապարակել մինչև հաշվետու տարվան հաջորդող հուլիսի 1-ը, իսկ միջանկյալ ֆինանսական հաշվետվությունները՝ միջանկյալ հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո ոչ ուշ, քան 60 օրվա ընթացքում, եթե օրենքով այլ ժամկետ սահմանված չէ |
| | | | Ֆինանսական հաշվետվությունները կարող են հրապարակվել մամուլում, ինտերնետով կամ տարածվել գրքույկների ձևով |
| | | | նշված բոլոր պնդումներն էլ ճիշտ են |
| | 5 | Համաձայն Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների ֆինանսական հաշվետվությունների տարրերի չափումը այն դրամական մեծության որոշումն է՝ | որով դրանք ենթակա են ճանաչման դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունում, |
| | | | որով դրանք հաշվանցվում են պարտավորությունների հետ, |
| | | | որով դրանք կազմակերպության գլխավոր հաշվապահի կողմից գրանցվում են հաշվապահական հաշվառման փաստաթղթերում, |
| | | | որով դրանք ենթակա են ճանաչման  ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում և   համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում |
| | 6 | Համաձայն Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների  եկամուտը հաշվետու ժամանակաշրջանում տնտեսական օգուտների ավելացումն է, որը տեղի է ունենում ակտիվների ներհոսքի կամ աճի կամ պարտավորությունների նվազման ձևով, և որը | հանգեցնում է սեփական կապիտալի աճի, ներառյալ մասնակիցների կողմից սեփական կապիտալում կատարված ներդրումների հետևանքով սեփական կապիտալի ավելացման, |

| | | | |
|---|---|---|---|
| | | | հանգեցնում է սեփական կապիտալի աճի, բացառությամբ մասնակիցների կողմից սեփական կապիտալում կատարված ներդրումների հետևանքով սեփական կապիտալի ավելացման, |
| | | | հանգեցնում է սեփական կապիտալի նվազման, բացառությամբ մասնակիցների միջև հիմնական կապիտալի բաշխման հետևանքով դրա նվազման, |
| | | | հանգեցնում է սեփական կապիտալի աճի, բացառությամբ մասնակիցների կողմից սեփական կապիտալում կատարված ներդրումների  և հիմնական միջոցների վերագնահատման արդյունքների: |
| | 7 | հաշվետու ժամանակաշրջանում տնտեսական օգուտների նվազումն է, որը տեղի է ունենում ակտիվների արտահոսքի կամ նվազման կամ պարտավորությունների առաջացման կամ աճի ձևով, և որը | հանգեցնում է սեփական կապիտալի աճի, բացառությամբ մասնակիցների կողմից սեփական կապիտալում կատարված ներդրումների հետևանքով հիմնական կապիտալի ավելացման, |
| | | | հանգեցնում է սեփական կապիտալի նվազման, բացառությամբ մասնակիցների միջև սեփական կապիտալի բաշխման հետևանքով սեփական կապիտալի նվազման դեպքի, |
| | | | հանգեցնում է սեփական կապիտալի նվազման, ներառյալ մասնակիցների միջև սեփական կապիտալի բաշխման հետևանքով սեփական կապիտալի նվազման դեպքի, |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ: |
| | 8 | Համաձայն «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի, նշված պնդումներից ո՞րն է ճիշտ. | ֆինանսական հաշվետվությունները կազմակերպության վրա ազդող իրադարձությունների և կազմակերպության իրականացրած գործառնությունների համակարգված ֆինանսական ներկայացումն է |
| | | | ֆինանսական հաշվետվությունները ստորագրում են կազմակերպության ղեկավարը և գլխավոր հաշվապահը |
| | | | ֆինանսական հաշվետվությունները կնքվում են կազմակերպության կնիքով` կնիքի առկայության դեպքում |
| | | | նշված բոլոր պնդումներն էլ ճիշտ են |
| | 9 | Համաձայն «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի, խոշոր կազմակերպություն է համարվում այն կազմակերպությունը, | որը բավարարում է հետևյալ ցուցանիշներից առնվազն մեկին<br>ա) հաշվետու տարվա գործունեությունից հասույթը գերազանցում է մեկ միլիարդ դրամը<br>բ)հաշվետու տարվա վերջի դրությամբ ակտիվների հաշվեկշռային արժեքը գերազանցում է մեկ միլիարդ դրամը |
| | | | որը միաժամանակ բավարարում է հետևյալ ցուցանիշներին<br>ա) նախորդ տարվա գործունեությունից հասույթը գերազանցում է 500 միլիոն դրամը<br>բ) նախորդ տարեվերջի դրությամբ ակտիվներից հասույթը չի գերազանցում 500 միլիոն դրամը |
| | | | որը միաժամանակ բավարարում է հետևյալ ցուցանիշներին<br>ա) նախորդ տարեվերջի դրությամբ ակտիվների հաշվեկշռային արժեքը գերազանցում է 500 միլիոն դրամը<br>բ) նախորդ տարեվերջի դրությամբ ակտիվներից հասույթը չի գերազանցում 500 միլիոն դրամը |
| | | | որը  բավարարում է հետևյալ ցուցանիշին<br>ա) նախորդ տարեվերջի դրությամբ ակտիվներից հասույթը չի գերազանցում 500 միլիոն դրամը |
| | 10 | Համաձայն Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների, ակտիվի ընթացիկ (վերականգնման) արժեքը, դա | դրամական միջոցների այն գումարն է, որը կվճարվեր, եթե ներկա պահին միևնույն կամ համանման ակտիվ ձեռք բերվեր, |
| | | | դրամական միջոցների այն գումարն է, որը կարող էր ներկա պահին ստացվել ակտիվը սովորական պայմաններում վաճառելով, |
| | | | դրամական միջոցների այն գումարն է, որը վճարվել է ակտիվի ձեռքբերման պահին, |

| | | | |
|---|---|---|---|
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ: |
| | 11 | Համաձայն Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների, պարտավորության ընթացիկ (վերականգնման) արժեքը, դա | դրամական միջոցների այն գումարն է, որը կպահանջվի սովորական գործունեության ընթացքում պարտավորությունը ստանձնելու համար, |
| | | | դրամական միջոցների այն գումարն է, որը անհրաժեշտ կլիներ այդ պարտավորությունը ներկա պահին մարելու համար, |
| | | | պարտավորության դիմաց ստացված ակտիվների (ծառությունների) գումարն է, |
| | | | գումարն է, որն ակնկալվում է, որ կպահանջվի կազմակերպության սովորական գործունեության ընթացքում այդ պարտավորությունը մարելու համար: |
| | 12 | Համաձայն  Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների, պարտավորության ներկա արժեքը, դա | գումարն է, որն ակնկալվում է, որ կպահանջվի կազմակերպության սովորական գործունեության ընթացքում այդ պարտավորությունը մարելու համար, |
| | | | դրամական միջոցների ապագա զուտ ներհոսքերի զեղչված գումարն է, որն ակնկալվում է, որ կպահանջվի կազմակերպության սովորական գործունեության ընթացքում այդ պարտավորությունը մարելու համար |
| | | | դրամական միջոցների այն գումարն է, որը անհրաժեշտ կլիներ այդ պարտավորությունը սովորական գործունեության ընթացքում մարելու համար |
| | | | դրամական միջոցների այն գումարն է, որը անհրաժեշտ կլիներ այդ պարտավորությունը ներկա պահին մարելու համար: |
| | 13 | Համաձայն  Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների, ակտիվի ներկա արժեքը, դա | դրամական միջոցների այն գումարն է, որը ակնկալվում է, որ կստացվի ակտիվի սովորական գործունեության ընթացքում, |
| | | | դրամական միջոցների այն գումարն է, որը կստացվի այդ ակտիվը սովորական գործունեության ընթացքում իրացնելիս, |
| | | | դրամական միջոցների այն գումարն է, որը վճարվել է այն ձեռք բերելիս, |
| | | | դրամական միջոցների ապագա զուտ ներհոսքերի զեղչված գումարն է, որն ակնկալվում է, որ կստեղծի այդ ակտիվը կազմակերպության սովորական գործունեության ընթացքում: |
| | 14 | Նշեք ճիշտ տարբերակը.<br>Համաձայն Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների՝ | եկամուտները չափվում են այն գումարով, որով չափվում է պարտավորությունների աճը, |
| | | | ծախսերը չափվում են այն գումարով, որով չափվում է ակտիվների համապատասխան աճը կամ պարտավորության համապատասխան նվազումը, |
| | | | եկամուտները չափվում են այն գումարով, որով չափվում է ակտիվների համապատասխան աճը կամ պարտավորությունների համապատասխան նվազումը, |
| | | | եկամուտները չափվում են այն գումարով, որով չափվում են ակտիվների համապատասխան աճը կամ պարտավորությունների համապատասխան աճը: |
| | 15 | Համաձայն Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների՝ հաշվապահական հաշվառում վարելու և ֆինանսական հաշվետվություններ կազմելու հաշվեգրման սկզբունքը ենթադրում է, որ | ակտիվների, սեփական կապիտալի և պարտավորությունների, եկամուտների և ծախսերի հոդվածները չի թույլատրվում հաշվեգրել, |
| | | | տնտեսական գործառնությունների և դեպքերի արդյունքները ճանաչվում են  և հաշվապահական հաշվառման մեջ գրանցվում են միայն այն ժամանակ, երբ դրանց հետ կապված դրամական միջոցները վճարվել կամ ստացվել են, |

| | | | |
|---|---|---|---|
| | | | տնտեսական գործառնությունների և դեպքերի արդյունքները ճանաչվում են և հաշվապահական հաշվառման մեջ գրանցվում են այն ժամանակ, երբ դրանք տեղի են ունեցել, անկախ դրանց հետ կապված դրամական միջոցների վճարման կամ ստացման ժամկետից, և արտացոլվում են այն ժամանակաշրջանների ֆինանսական հաշվետվություններում, որոնց դրանք վերաբերում են |
| | | | բոլոր պատասխանները սխալ են: |
| | 16 | Համաձայն «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի, նոր ստեղծվող վարկային կազմակերպությունների համար առաջին հաշվետու ժամանակաշրջան է համարվում. | տվյալ տարվա հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածը, |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | | | ՀՀ ԿԲ-ի կողմից լիցենզիայի տրման ամսաթվից մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածը, |
| | | | պետական գրանցման օրվանից մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 31-ը ներառյալ ընկած ժամանակահատվածը |
| | 17 | Համաձայն «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում» ՀՀՄՍ 1-ի Ֆինանսական հաշվետվություններում ներկայացվում են տեղեկություններ կազմակերպության | միայն ակտիվների և պարտավորությունների մասին, |
| | | | ակտիվների, պարտավորությունների, դրամական հոսքերի և կանոնադրական կապիտալի ձևավորման մասին, |
| | | | ակտիվների, պարտավորությունների, դրամական հոսքերի և հիմնական տնտեսական նորմատիվների մասին, |
| | | | ակտիվների, պարտավորությունների, սեփական կապիտալի, եկամուտների և ծախսերի՝ ներառյալ օգուտներն ու վնասները, սեփականատիրական հարաբերություններից բխող՝ սեփականատերերի կողմից ներդրումների և սեփականատերերին բաշխումների և դրամական հոսքերի մասին: |
| | 18 | Համաձայն «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում» ՀՀՄՍ 1-ի ընդհանուր նշանակության ֆինանսական հաշվետվություններն այն հաշվետվություններն են, որոնց նպատակն է՝ | բավարարել ՀՀ ԿԲ-ի կարիքները ՀՀ տարածքում գործող բանկերի և վարկային կազմակերպությոնների նկատմամբ արդյունավետ վերահսկողություն իրականացնելու համար, |
| | | | բավարարել ՀՀ տարածքում գործող կազմակերպությունների ղեկավարների կարիքները՝ արդյունավետ կառավարման համար |
| | | | բավարարել այն օգտագործողների կարիքները, որոնք ի զորու չեն պահանջել կազմակերպությունից՝ պատրաստել իրենց հատուկ տեղեկատվական կարիքները բավարարող հաշվետվություններ, |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ: |
| | 19 | Համաձայն «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում» ՀՀՄՍ 1-ի նշված պնդումներից ո՞րն է ճիշտ՝ | կազմակերպությունը իր ֆինանսական հաշվետվությունները, բացառությամբ դրամական միջոցների հոսքերի մասին տեղեկատվության, պետք է պատրաստի հաշվապահական հաշվառման հաշվեգրման սկզբունքի հիման վրա, |
| | | | կազմակերպությունը իր ֆինանսական հաշվետվությունները, բացառությամբ հաշվապահական հաշվեկշռի մասին տեղեկատվության, պետք է պատրաստի հաշվապահական հաշվառման հաշվեգրման սկզբունքի հիման վրա, |
| | | | կազմակերպությունը իր ֆինանսական հաշվետվությունները, բացառությամբ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության, պետք է պատրաստի հաշվապահական հաշվառման հաշվեգրման սկզբունքի հիման վրա, |
| | | | կազմակերպությունը իր ֆինանսական հաշվետվությունները, բացառությամբ սեփական կապիտալի փոփոխությունների մասին հաշվետվության, պետք է պատրաստի հաշվապահական հաշվառման հաշվեգրման սկզբունքի հիման վրա: |

| | | | |
|---|---|---|---|
| | 20 | Համաձայն Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների՝ հաշվեգրման սկզբունքի համաձայն տնտեսական գործառնությունները և դեպքերի արդյունքները հաշվապահական հաշվառման մեջ գրանցվում են | դրանց հետ կապված դրամական միջոցների վճարման պահին, |
| | | | դրանց հետ կապված դրամական միջոցների ստացման պահին, |
| | | | այն ժամանակ, երբ դրանք տեղի են ունեցել, անկախ դրանց հետ կապված դրամական միջոցների վճարման կամ ստացման ժամկետից |
| | | | բոլոր պատասխանները ճիշտ են: |
| | 21 | Համաձայն ՀՀՄՍ «Պաշարներ» 2-ի, պաշարները հաշվապահական հաշվեկշռում չափվում | ինքնարժեքով |
| | | | իրացման զուտ արժեքով |
| | | | ինքնարժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով |
| | | | ինքնարժեքից և իրացման զուտ արժեքից առավելագույնով |
| | 22 | «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացումը» ՀՀՄՍ 1-ի նպատակն է ընդհանուր նշանակության ֆինանսական հաշվետվությունների կազմման և ներկայացման հիմունքների սահմանումը՝ ապահովելու համար | կազմակերպության նախորդ ժամանակաշրջանների ֆինանսական հաշվետվությունների, ինչպես նաև տվյալ կազմակերպության և այլ կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների համադրելիությունը, |
| | | | ՀՀ ԿԲ ներկայացվող հաշվետվությունների արժանահավատությունը, |
| | | | աուդիտորական ստուգման արդյունավետությունը, |
| | | | ճիշտ պատասխան նշված չէ: |
| | 23 | Համաձայն «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացումը» ՀՀՄՍ 1-ի, նշվածներից որը չի ներառվում ֆինանսական հաշվետվությունների փաթեթում. | սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը |
| | | | շահութահարկի հաշվարկը, |
| | | | ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը |
| | | | համապարփակ ֆինանսական արդյունքների մասին |
| | 24 | Նշել սխալ պատասխանը:<br>Համաձայն «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացումը» ՀՀՄՍ 1-ի, ակտիվը համարվում է ընթացիկ, երբ այն | ակնկալվում է իրացնել, |
| | | | ակնկալվում է պահել վաճառքի կամ սպառման համար կազմակերպության սովորական գործառնական փուլի ընթացքում |
| | | | ակնկալվում է պահել կազմակերպության արտադրանքի արտադրության և աշխատանքների կատարման համար |
| | | | պահվում է ակտիվը հիմնականում վաճառքի համար |
| | 25 | Համաձայն «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացումը» ՀՀՄՍ 1-ի, պարտավորությունը համարվում է ընթացիկ, երբ այն | ենթակա է մարման հաշվեկշռի ամսաթվից հետո երեք տարվա ընթացքում |
| | | | ակնկալվում է մարել կազմակերպության սովորական գործառնական փուլի ընթացքում |
| | | | ներգրավվել են կազմակերպության իրացվելիության հետ կապված դժվարությունները հաղթահարելու նխատակով |
| | | | բոլոր պատասխանները սխալ են: |
| | 26 | Համաձայն «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացումը» ՀՀՄՍ 1-ի, նշվածներից որը չի հանդիսանում ոչ ընթացիկ ակտիվ | հիմնական միջոցներ |
| | | | ոչ նյութական ակտիվներ |
| | | | դեպբիտորական պարտավորություններ |
| | | | բոլորը հանդիսանում են: |
| | 27 | Նշել սխալ պատասխանը:<br>Համաձայն «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացումը» ՀՀՄՍ 1-ի, համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում պետք է ընդգրկվեն հետևյալ հոդվածները | հասույթները |
| | | | ոչ նյութական ակտիվները |
| | | | ֆինանսական ծախսերը |
| | | | հարկի գծով ծախսերը |
| | 28 | Նշել սխալ պատասխանը:<br>Համաձայն ՀՀՄՍ «Պաշարներ» 2-ի՝ պաշարները դրանք ակտիվներ են, որոնք | պահվում են սովորական գործունեության ընթացքում վաճառքի համար |

| | | | |
|---|---|---|---|
| | | | արտադրության ընթացքում են |
| | | | ձեռք են բերվել առաջիկա տարիների ընթացքում կազմակերպության գործունեությունը ապահովելու համար |
| | | | արտահայտված են նյութերի և արագամաշ առարկաների ձևով |
| | 29 | Համաձայն «Պաշարներ» ՀՀՄՍ 2-ի պաշարների ինքնարժեքը, բացառությամբ փոխադարձ փոխարկելի չհանդիսացող պաշարների, ինչպես նաև հատուկ նախագծերի համար նախատեսված ու արտադրված ապրանքների կամ ծառայությունների միավորի ինքնարժեքի, պետք է որոշվի հետևյալ բանաձևերով. | «Առաջինը մուտք՝ առաջինը ելք» ԱՄԱԵ և «Վերջինը մուտք՝ առաջինը ելք» ՎՄԱԵ |
| | | | «Վերջինը մուտք՝ առաջինը ելք» ՎՄԱԵ և միջին կշռված արժեքի բանաձևով |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | | | «Առաջինը մուտք՝ առաջինը ելք» ԱՄԱԵ կամ միջին կշռված արժեքի բանաձևով |
| | 30 | Համաձայն ՀՀՄՍ «Պաշարներ» 2-րդ ստանդարտի՝ նշվածներից բոլորը հանդիսանում են պաշար, բացառությամբ | նյութեր |
| | | | պատրաստի արտադրանք |
| | | | դրամական միջոցներ |
| | | | արտադրանքի թողարկման կամ ծառայություններ մատուցման ընթացքում օգտագործելու համար նախատեսված հումք |
| | 31 | Համաձայն ՀՀՄՍ «Պաշարներ» 2-րդ ստանդարտի՝ նշվածներից որն է հանդիսանում պաշար | ոչ նյութական ակտիվներ |
| | | | պատրաստի արտադրանք |
| | | | դրամական միջոցներ |
| | | | բոլոր պատասխանները ճիշտ են |
| | 32 | Համաձայն ՀՀՄՍ «Պաշարներ» 2-ի՝ ԱՄԱԵ բանաձևը ենթադրում է, որ | առաջինը գնված կամ արտադրված պաշարների միավորները, ելքագրվում են առաջինը |
| | | | պաշարի յուրաքանչյուր միավորի արժեքի որոշվում է միջին կշռված արժեքով |
| | | | վերջինը գնված կամ արտադրված պաշարների միավորները, ելքագրվում են առաջինը |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 33 | Համաձայն ՀՀՄՍ 2 «Պաշարներ» ստանդարտի, երբ պաշարները վաճառվում են, ապա | դրանց հաշվեկշռային արժեքը պետք է ճանաչվի որպես ծախս այն ժամանակաշրջանում, երբ ճանաչվում է դրանց հետ կապված հասույթը |
| | | | արժեքի տարբերությունը պետք է ճանաչվի որպես ծախս կամ եկամուտ այն հաշվետու ժամանակաշրջանում, որում կատարվել է գործարքը |
| | | | դրանց հաշվեկշռային արժեքը պետք է ճանաչվի որպես հասույթ այն ժամանակաշրջանում, երբ ճանաչվում է դրանց հետ կապված |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 34 | Համաձայն ՀՀՄՍ 2 «Պաշարներ» ստանդարտի պաշարների ինքնարժեքը պետք է ներառի. | ձեռք բերման ծախսումները |
| | | | արտադրանքի վերամշակման ծախսումները |
| | | | պաշարները ներկա գտնվելու վայր և վիճակի բերելու հետ կապված այլ ծախսումներ |
| | | | բոլոր պատասխանները ճիշտ են |
| | 35 | Վարկային կազմակերպությունը միանվագ վճարել է մատակարարից ձեռքբերված հիմնական միջոցի և արագամաշ առարկայի համար: Այդ դեպքում դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունում | մատակարարին վճարված գումարն ամբողջությամբ դասակարգվում է որպես գործառնական հոսք, |
| | | | մատակարարին վճարված գումարն ամբողջությամբ դասակարգվում է որպես ներդրումային հոսք, |
| | | | հիմնական միջոցի համար վճարված գումարը դասակարգվում է որպես գործառնական հոսք, իսկ արագամաշ առարկայի համար վճարված գումարը՝ որպես ներդրումային հոսք, |

| | | | |
|---|---|---|---|
| | | | հիմնական միջոցի համար վճարված գումարը դասակարգվում է որպես ներդրումային, իսկ արագամաշ առարկայի համար վճարված գումարը՝ որպես գործառնական հոսք: |
| | 36 | «դրամական միջոցների համարժեքների մեջ չընդգրկվող երկարաժամկետ ակտիվների և այլ ներդրումների ձեռքբերումն ու օտարումն է» հանդիսանում է հետևյալ գործունեության սահմանում | գործառնական, |
| | | | ներդրումային, |
| | | | ֆինանսական, |
| | | | արտասովոր: |
| | 37 | Համաձայն ՀՀՄՍ «Հաշվետվություն դրամական միջոցների հոսքերի մասին» ստանդարտ 7-ի՝ «կազմակերպության սեփական կապիտալի և փոխառու միջոցների ծավալում ու կառուցվածքում փոփոխություններ առաջացնող գործունեությունն է» հանդիսանում է հետևյալ գործունեության սահմանում | գործառնական, |
| | | | ներդրումային, |
| | | | ֆինանսական, |
| | | | արտասովոր |
| | 38 | Համաձայն ՀՀՄՍ «Հաշվետվություն դրամական միջոցների հոսքերի մասին» ստանդարտ 7-ի՝ «կազմակերպության եկամուտ բերող հիմնական գործունեությունն է» հանդիսանում է հետևյալ գործունեության սահմանում | գործառնական, |
| | | | ներդրումային, |
| | | | ֆինանսական, |
| | | | արտասովոր |
| | 39 | Համաձայն ՀՀՄՍ «Հաշվետվություն դրամական միջոցների հոսքերի մասին» ստանդարտ 7-ի՝ ներդրումային գործունեությունը դա | գործունեություն է, որի հետևանքով տեղի են ունենում կազմակերպության սեփական կապիտալի ծավալի ու կառուցվածքի փոփոխություններ |
| | | | գործունեություն է, որի հետևանքով տեղի են ունենում կազմակերպության փոխառու միջոցների ծավալի ու կառուցվածքի փոփոխություններ |
| | | | դրամական միջոցների համարժեքների մեջ չընդգրկվող երկարաժամկետ ակտիվների և այլ ներդրումների ձեռքբերումն ու օտարումն է |
| | | | երկարաժամկետ ակտիվների և այլ ներդրումների ձեռքբերումն ու օտարումն է, որոնք ընդգրկվում են դրամական միջոցների համարժեքների մեջ |
| | 40 | Համաձայն ՀՀՄՍ «Հաշվետվություն դրամական միջոցների հոսքերի մասին» ստանդարտ 7-ի՝ ֆինանսական գործունեությունը դա | կազմակերպությանը եկամուտ բերող հիմնական գործունեությունն է |
| | | | կազմակերպության սեփական կապիտալի և փոխառու միջոցների ծավալում ու կառուցվածքում փոփոխություններ առաջացնող գործունեությունն է |
| | | | բարձր իրացվելի ներդրումների փոխարկումն է դրամական միջոցների |
| | | | երկարաժամկետ ակտիվների ձեռքբերման և օտարման հետ կապված գործունեությունն է |
| | 41 | Համաձայն «Հաշվետվություն դրամական միջոցների հոսքերի մասին» ՀՀՄՍ 7-ի, հիմնական միջոցների վաճառքից ստացված դրամական հոսքը դասակարգվում է որպես | գործառնական, |
| | | | ներդրումային, |
| | | | ֆինանսական, |
| | | | արտասովոր |
| | 42 | Համաձայն «Հաշվետվություն դրամական միջոցների հոսքերի մասին» ՀՀՄՍ 7-ի, դրամական գործառնություններ չեն և հետևաբար դրամական հոսքերի մասին հաշվետվությունում չեն ներառվում. | փոխառությունների ներգրավումը |
| | | | հարկերի վճարումը |
| | | | կրեդիտորական պարտքի մարումը |

| | | | |
|---|---|---|---|
| | | | բաժնետոմսերի թողարկման միջոցով կազմակերպության ձեռքբերումը: |
| | 43 | հաշվապահական հաշվառման գնահատումներում և սխալներում» ՀՀՄՍ 8-ի, հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխություններ չեն համարվում նոր հաշվապահական հաշվառման քաղաքականության ընդունումն այնպիսի դեպքերի և գործարքների համար, | որոնք նախկինում հանդիսացել են էական |
| | | | որոնք նախկինում տեղի չեն ունեցել կամ հանդիսացել են ոչ էական, |
| | | | որոնք նախկինում տեղի են ունեցել |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 44 | Համաձայն «Հաշվապահական հաշվառման քաղաքականություն, փոփոխություններ հաշվապահական հաշվառման գնահատումներում և սխալներում» ՀՀՄՍ 8-ի՝ | հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխություն պետք է կատարվի, եթե այդ փոփոխությունը ՖՀՄՍ-ի պահանջ է |
| | | | հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխություն չէ նոր հաշվապահական հաշվառման քաղաքականության ընդունումը այնպիսի գործառնությունների, իրադարձությունների համար, որոնք նախկինում տեղի չեն ունեցել |
| | | | բոլոր պատասխանները ճիշտ են |
| | | | հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխություն չէ նոր հաշվապահական հաշվառման քաղաքականության ընդունումը այնպիսի գործառնությունների, իրադարձությունների համար, որոնք նախկինում հանդիսացել են ոչ էական |
| | 45 | Համաձայն «Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն» ՀՀՄՍ 7-ի՝ ֆինանսական կազմակերպությունների կողմից վարկերի տրամադրումը համարվում է | գործառնական գործունեություն |
| | | | ներդրումային գործոնեություն |
| | | | ֆինանսական գործունեություն |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 46 | Համաձայն «Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն» ՀՀՄՍ 7-ի՝ գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր են. | ռոյալթիներից, վարձավճարներից ստացված դրամական միջոցների մուտքերը, |
| | | | բաժնետոմսերի թողարկումից դրամական մուտքերը, |
| | | | հիմնական միջոցների վաճառքից դրամական մուտքերը |
| | | | պարտատոմսերի թողարկումից դրամական մուտքերը |
| | 47 | 2006 թ. ընկերությունը ճանաչել է 5 մլն. ՀՀ դրամի հասույթ կեղծ պայմանագրերից: Այդ փաստը հայտնաբերվել է 2007թ. և որակվել է որպես էական: Կիրառելով հիմնական մոտեցումը՝ 2007թ. սկզբին այդ գումարի չափով | փոփոխություն տեղի չի ունենա |
| | | | կարտացոլվի ծախսերում |
| | | | կնշգրտվի նախորդ ժամանակաշրջանի չբաշխված շահույթը |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 48 | Վարկային կազմակերպության գործադիր մարմինը 2004թ. մարտի 5-ին կազմել է 2003թ. ֆինանսական հաշվետվությունների նախագիծը, 2004թ. մարտի 10-ին նախագիծը գործադիր միրմինը վավերացվել է բաժնետերերի ընդհանուր ժողովին ներկայացնելու համար: 2004թ. մարտի 17-ին բաժնետերերի ժողովի կողմից դրանք հաստատվել են: 2004թ. ապրիլի 1-ին հանձնվել է Կենտրոնական բանկին:<br>Ֆինանսական հաշվետվությունները համարվում են ներկայացման համար վավերացված | 2004թ. մարտի 10-ին, |
| | | | 2004թ. մարտի 17-ին, |
| | | | 2004թ. ապրիլի 1-ին, |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ: |

| | | | |
|---|---|---|---|
| | 49 | 2004 թվականի մարտի 12-ին վարկային կազմակերպությունը տեղեկացել է, որ իր խոշոր դեբիտորներից մեկը, որի գծով դեբիտորական պարտքը նախորդ տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ դասակարգվել էր հսկվող, դատարանի որոշմամբ սնանկ է ճանաչվել, Այս դեպքում նախքան 2003թ.-ի ֆինասական հաշվետվությունների վավերացումը և աուդիտորական եզրակացության ներկայացումը, վարկային կազմակերպությունը | չպետք է ճշգրտի իր 2003թ.-ի ֆինանսական հաշվետվություններում ճանաչված դեբիտորական պարտքի հաշվեկշռային արժեքը քանի որ հաշվապահական հաշվեկշռի ամսաթվի դրությամբ կորուստը գոյություն չուներ, |
| | | | պետք է ճշգրտի իր 2003թ.-ի ֆինանսական հաշվետվություններում ճանաչված դեբիտորական պարտքի հաշվեկշռային արժեքի ճշգրտում, քանի որ հաշվապահական հաշվեկշռի ամսաթվի դրությամբ կորուստը գոյություն ուներ, |
| | | | պետք է միայն դեպքը բացահայտի իր 2003թ.-ի ֆինանսական հաշվետվությունների կից ծանոթագրություններում, |
| | | | դեպքը պետք է հասանելի դարձնի հասարակությանը: |
| | 50 | Նշված պնդումներից որն է ճիշտ 2004թ. փետրվարի 5-ին վարկային կազմակերպության գործադիր մարմինը վավերացրել է ֆինանսական հաշվետվությունները բաժնետերերի ժողովին ներկայացնելու համար: 2004թ. հունվարի 30-ին ստացվել է տեղեկատվություն այն մասին, որ վարկային կազմակերպությանը պատկանող արժեթղթերի պորտֆելի շուկայական արժեքը՝ 31.12.2003թ.ին ճշտված տվյալ արժեթղթերի շուկայական գնի համեմատ, նվազել է: Հետևաբար վարկային կազմակերպությունը | պետք է ճշգրտի 2003թ. ֆինանսական հաշվետվությունները, |
| | | | պետք է բացահայտի դեպքը, եթե նույնիսկ այդ տեղեկատվության չբացահայտումը էական ազդեցություն չի ունենա ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների որոշումների ընդունման կարողության վրա, |
| | | | արժեթղթերի շուկայական արժեքի անկումն արտացոլում է այն հանգամանքները, որոնք առաջացել են հետագա ժամանակաշրջանում |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ: |
| | 51 | Նշել սխալ տարբերակը. Համաձայն «Հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող դեպքեր» ՀՀՄՍ 10-ի՝ հաշվապահական հաշվեկշռի ամսաթվից հետո տեղի ունեցած ճշգրտող դեպքեր են. | կեղծիքների կամ սխալների հայտնաբերում, որոնք ցույց են տալիս, որ ֆինանսական հաշվետվությունները ճիշտ չեն |
| | | | հաշվետու ժամանակաշրջանից հետո շահույթի բաշխումների կամ պարգևավճարների գումարի որոշումը |
| | | | ներդրումների շուկայական արժեքի նվազումը հաշվեկշռի ամսաթվի և այն ամսաթվի միջև ընկած ժամանակաշրջանում, երբ ֆինանսական հաշվետվությունները վավերացվում են հրապարակման համար |
| | | | հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղեկատվության ստացումը, որը ցույց է տալիս հաշվեկշռի ամսաթվի դրությամբ ակտիվը արժեզրկված էր |
| | 52 | Համաձայն «Հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող դեպքեր» ՀՀՄՍ 10-ի՝ չճշգրտող դեպքերի օրինակներ են . ա) ակտիվների խոշոր բռնագրավումը պետության կողմից բ) արտարժույթի փոխարժեքների անսովոր փոփոխությունները գ) դատարանի վճիռը, որը հաստատում է, որ հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ ընկերությունն արդեն ուներ պարտավորություն | «ա», «բ» և «գ» |
| | | | «բ» և «գ» |
| | | | «ա» և «բ» |
| | | | «գ» |
| | 53 | Համաձայն ՀՀՄՍ 12 «Շահութահարկ» ստանդարտի, հարկի գծով ծախսը բաղկացած է՝ | ընթացիկ հարկի գումարից և ոչ ընթացիկ հարկի գումարից, |
| | | | ընթացիկ հարկի գումարից և ժամկետանց հարկի գումարից, |

| | | | |
|---|---|---|---|
| | | | հարկի գծով նվազեցվող գումարից և հարկի գծով չնվազեցվող գումարից, |
| | | | ընթացիկ հարկի գումարից և հետաձգված հարկի գումարից: |
| | 54 | Նշեք սխալ պատասխանը. Համաձայն ՀՀՄՍ «Շահութահարկ» 12-րդ ստանդարտի՝ հետաձգված հարկային ակտիվն ապագա ժամանակաշրջաններում փոխհատուցման ենթակա շահութահարկի գումարներն են, կապված | նվազեցվող ժամանակավոր տարբերությունների հետ |
| | | | չօգտագործված հարկային վնասը հաջորդ ժամանակաշրջաններ տեղափոխելու հետ |
| | | | հարկվող ժամանակավոր տարբերությունների հետ |
| | | | չօգտագործված հարկային զեղչերը հաջորդ ժամանակաշրջաններ տեղափոխելու հետ |
| | 55 | Համաձայն «Շահութահարկ» ՀՀՄՍ 12-րդ ստանդարտի՝ հետաձգված հարկային պարտավորությունը ապագա ժամանակաշրջաններում վճարման ենթակա շահութահարկի գումարներն են, կապված | չօգտագործված հարկային վնասը հաջորդ ժամանակաշրջաններ տեղափոխելու հետ |
| | | | նվազեցվող (հանվող) ժամանակավոր տարբերությունների հետ |
| | | | չօգտագործված հարկային զեղչերը հաջորդ ժամանակաշրջաններ տեղափոխելու հետ |
| | | | հարկվող ժամանակավոր տարբերությունների հետ |
| | 56 | Վարկային կազմակերպությունը 2002թ հունվարի 1-ին ձեռք է բերել համակարգիչ, որի օգտակար ծառայության ժամկետը սահմանվել է 5 տարի: 2003 թվականի հունվարի 1-ին համակարգչի օգտակար ծառայության ժամկետը վերանայվել է, որի համաձայն գնահատվել է 2 տարի: Այլ հավասար պայմաններում. | համակարգչի մաշվածության գումարը 2003թ. համար կկազմի ավելի փոքր գումար քան նախորդ տարի և կտրվեն համապատասխան ճշգրտումներ 2002 թ. ֆինանսական հաշվետվություններում, |
| | | | համակարգչի մաշվածության գումարը 2003թ. համար կկազմի ավելի մեծ գումար, քան նախորդ տարի և կտրվեն համապատասխան ճշգրտումներ 2002 թ. ֆինանսական հաշվետվություններում , |
| | | | համակարգչի մաշվածության գումարը 2003թ. համար կկազմի ավելի մեծ գումար, քան նախորդ տարի և 2002 թ.-ի ֆինանսական հաշվետվություններում համապատասխան ճշգրտումներ չեն տրվի, |
| | | | ճիշտ տարբերակը նշված չէ |
| | 57 | Հիմնական միջոցի ձեռքբերման արժեքը 150 միավոր է, ամորտիզացվել է 30 միավորով, պետք է կատարվի վերագնահատում վերականգնման արժեքի գործակցի միջոցով՝ 10 %-ով (դրական վերագնահատում): Կտրվեն հետևյալ ձևակերպումները | Դտ- Հիմնական միջոցներ 15 միավոր<br>Կտ- Հիմնական միջոցների վերագնահատման պահուստ 15 միավոր<br>Դտ- Հիմնական միջոցների վերագնահատման պահուստ 3 միավոր<br>Կտ- Հիմնական միջոցների ամորտիզացիա 3 միավոր |
| | | | Դտ- Հիմնական միջոցների ամորտիզացիա 30 միավոր<br>Կտ- Հիմնական միջոցներ 30 միավոր<br>Դտ- Հիմնական միջոցների ամորտիզացիոն ծախսեր 30 միավոր<br>Կտ- Հիմնական միջոցներ 30 միավոր |
| | | | Դտ- Հիմնական միջոցներ 150 միավոր<br>Կտ- Դրամական միջոցներ 150 միավոր<br>Դտ- Հիմնական միջոցի ամորտիզացիոն ծախսեր 30 միավոր<br>Կտ- Հիմնական միջոցների ամորտիզացիա 30 միավոր |
| | | | Դտ- Հիմնական միջոցներ 15 միավոր<br>Կտ- Հիմնական միջոցի վերագնահատումից օգուտներ 15միավոր<br>Դտ- Հիմնական միջոցների ամորտիզացիոն ծախսեր 3 միավոր<br>Կտ- Հիմնական միջոցների ամորտիզացիա 3 միավոր: |
| | 58 | Վարկային կազմակերպությունը 01.01.2000թ ձեռք է բերել սարքավորում 5000 միավորով, որի օգտակար ծառայության ժամկետը գնահատվել է 7 տարի, մնացորդային արժեքը 500 միավոր: Սարքավորման մաշվածությունը պետք է հաշվարկվի գծային մեթոդով: 2003թ համար սարքավորման մաշվածության գումարը կկազմի. | 482 միավոր, |
| | | | 643 միավոր, |

| | | | |
|---|---|---|---|
| | | | 714 միավոր, |
| | | | 892 միավոր: |
| | 59 | Համաձայն ՀՀՄՍ 16 «Հիմնական միջոցներ» ստանդարտի, հիմնական միջոցները նյութական ակտիվներ են, որոնք առկա են կազմակերպությունում արտադրանքի արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման, վարձակալության տալու կամ վարչական նպատակներով օգտագործելու համար և | որոնք նախատեսվում է օգտագործել ավելի քան մեկ տարի ժամկետով |
| | | | որոնք իրենց ծառայության ընթացքում պահպանում են իրենց բնահրային տեսքը |
| | | | որոնց ձեռքբերման արժեքը ավել է 25.000 ՀՀ դրամից |
| | | | որոնք նախատեսվում է օգտագործել ավելի քան մեկ տարի ժամկետով և որոնց ձեռքբերման արժեքը ավել է 25.000 ՀՀ դրամից |
| | 60 | Համաձայն ՀՀՄՍ 16 «Հիմնական միջոցներ» ստանդարտի, նշված ակտիվներից որը չի համարվի հիմնական միջոց | նյութական ակտիվը, որը առկա է կազմակերպությունում արտադրանքի արտադրության համար, նախատեսվում է օգտագործել ավելի քան մեկ տարի ժամկետով և որի ձեռքբերման արժեքը պակաս է 25.000 ՀՀ դրամից |
| | | | նյութական ակտիվը, որը առկա է կազմակերպությունում վարչական նպատակներով օգտագործելու համար և նախատեսվում է օգտագործել ավելի քան մեկ տարի ժամկետով և որի ձեռքբերման արժեքը ավել է 25.000 ՀՀ դրամից |
| | | | նյութական ակտիվը, որը առկա է կազմակերպությունում վարձակալության տալու համար և որը նախատեսվում է օգտագործել ավելի քան մեկ տարի ժամկետով |
| | | | բոլոր նշվածներն էլ կհամարվեն հիմնական միջոց |
| | 61 | Համաձայն «Հիմնական միջոցներ» ՀՀՄՍ 16-ի հիմնական միջոցների միավորը ճանաչվում է որպես ակտիվ, երբ<br>ա) հավանական է, որ դրա հետ կապված ապագա տնտեսական օգուտները կհոսեն դեպի կազմակերպություն,<br>բ) դրա արժեքը կարող է արժանահավատորեն չափվել | ա) և բ) տարբերակները միասին |
| | | | միայն ա) տարբերակը |
| | | | միայն բ) տարբերակը |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 62 | Նշել սխալ պատասխանը.<br>Համաձայն «Հիմնական միջոցներ» ՀՀՄՍ 16-ի ֆինանսական հաշվետվությունները, ըստ հիմնական միջոցների յուրաքանչյուր դասի, պետք է բացահայտեն՝ | մաշվածության հաշվարկման օգտագործվող մեթոդները |
| | | | հաշվեկշռային արժեքի համեմատությունը հաշվետու ժամանակաշրջանի սկզբում և վերջում |
| | | | օգտակար ծառայությունը կամ մաշվածության հաշվարկման օգտագործվող դրույքաչափերը |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 63 | Համաձայն ՀՀՄՍ 16 «Հիմնական միջոցներ» ստանդարտի, նշված ծախսումներից որը միանշանակորեն չի ներառվում հիմնական միջոցների սկզբնական արժեքում՝ | հիմնական միջոցների տեղափոխման ծախսումները, |
| | | | հիմնական միջոցների ապատեղակայման ծախսումները, |
| | | | հիմնական միջոցների կառուցման համար օգտագործվող գումարների գծով փոխառության ծախսումները, |
| | | | նշված բոլոր ծախսումներն էլ կարող են ներառվել հիմնական միջոցների սկզբնական արժեքում: |
| | 64 | Համաձայն ՀՀՄՍ 16-ի «Հիմնական միջոցներ», կազմակերպության կողմից ձեռք բերված հիմնական միջոցները որպես ակտիվ ճանաչելուց հետո պետք է հաշվառվեն՝ | սկզբնական արժեքով, |
| | | | սկզբնական արժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով, |
| | | | իրական արժեքից և սկզբնական արժեքից նվազագույնով, |

| | | | |
|---|---|---|---|
| | | | սկզբնական արժեքով կամ վերագնահատված արժեքով՝ կախված կազմակերպության կողմից ընտրված հաշվապահական հաշվառման քաղաքականությունից: |
| | 65 | Համաձայն «Հիմնական միջոցներ» ՀՀՄՍ 16-ի հիմնական միջոցների դասերի օրինակ չի հանդիսանում. | արտադրական գույքը |
| | | | տնտեսական գույքը |
| | | | փոխանցող համակարգերը |
| | | | հեղինակային իրավունքը |
| | 66 | Համաձայն ՀՀՄՍ 16-ի «Հիմնական միջոցներ», հիմնական միջոցները սկզբնական ճանաչումից հետո պետք է չափվեն. | բացառապես սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումը, |
| | | | բացառապես վերագնահատված արժեքով, |
| | | | իրական արժեքից և սկզբնական արժեքից նվազագույնով, |
| | | | սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումը, կամ վերագնահատված արժեքով՝ կախված կազմակերպության կողմից ընտրված հաշվապահական հաշվառման քաղաքականությունից: |
| | 67 | Համաձայն ՀՀՄՍ 16-ի «Հիմնական միջոցներ»՝ վերագնահատման հետևանքով հիմնական միջոցի հաշվեկշռային արժեքի աճը պետք է վերագրվի. | բացառապես սեփական կապիտալին |
| | | | բացառապես եկամուտներին |
| | | | սեփական կապիտալին, եթե այդ աճը վերականգնում է նախկին վերագնահատումների արդյունքում առաջացած նվազումը |
| | | | այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում և կուտակվի սեփական կապիտալի վերագնահատումից արժեքի աճի հոդվածում, եթե այդ աճը չի վերականգնում նախկին վերագնահատումների արդյունքում առաջացած նվազումը |
| | 68 | Համաձայն ՀՀՄՍ 16-ի «Հիմնական միջոցներ»՝ վերագնահատման հետևանքով հիմնական միջոցի հաշվեկշռային արժեքի նվազումը պետք է վերագրվի. | բացառապես ծախսերին |
| | | | բացառապես սեփական կապիտալին |
| | | | կամ ծախսերին կամ սեփական կապիտալին՝ կախված հաշվապահական հաշվառման ընտրված քաղաքականությունից |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 69 | Համաձայն ՀՀՄՍ 16-ի «Հիմնական միջոցներ», ո՞ր պնդումն է ճիշտ | Հողամասը և այդ հողամասի վրա գտնվող շենքերն ու շինությունները առանձին ակտիվներ չեն և հաշվառման նպատակով դիտվում են միասին, նույնիսկ այն դեպքում, երբ դրանք ձեռք են բերվում առանձին - առանձին |
| | | | Հողամասը և այդ հողամասի վրա գտնվող շենքերն ու շինությունները առանձին ակտիվներ են և հաշվառման նպատակով դիտվում են առանձին-առանձին, նույնիսկ այն դեպքում, երբ դրանք ձեռք են բերվում միասին |
| | | | Հողամասը և այդ հողամասի վրա գտնվող շենքերն ու շինությունները առանձին ակտիվներ են և հաշվառման նպատակով դիտվում են առանձին-առանձին, սակայն եթե վերջիններս ձեռք են բերվում միասին ապա հաշվառվում են որպես մեկ ակտիվ |
| | | | Հողամասը և այդ հողամասի վրա գտնվող շենքերն ու շինությունները առանձին ակտիվներ չեն, սակայն հաշվառման նպատակով դիտվում են առանձին-առանձին այն դեպքում, երբ դրանք ձեռք են բերվում առանձին |
| | 70 | Համաձայն ՀՀՄՍ 16-ի «Հիմնական միջոցներ», նշված պնդումներից ո՞րն է ճիշտ | հիմնական միջոցի միավորի սկզբնական արժեքը պետք է ճանաչվի որպես ակտիվ այն և միայն այն դեպքում, երբ հավանական է, որ այդ միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները կհոսեն դեպի կազմակերպություն |

| | | | |
|---|---|---|---|
| | | | հիմնական միջոցի միավորի սկզբնական արժեքը պետք է ճանաչվի որպես ակտիվ այն և միայն այն դեպքում, երբ հավանական է, որ միավորի սկզբնական արժեքը կարող է արժանահավատորեն չափվել |
| | | | Պահեստամասերը կամ սպասարկող սարքավորումները սովորաբար հաշվառվում են որպես պաշարներ և ճանաչվում են շահույթում կամ վնասում` սպառմանը զուգընթաց |
| | | | նշված բոլոր պնդումներն էլ ճիշտ են |
| | 71 | Նշեք ճիշտ պատասխանը. Վարկային կազմակերպության կողմից տրամադրվել է 1000 միավորի վարկ: Ընդհանուր պահուստ ձևավորելիս տրվում է հետևյալ հաշվապահական ձևակերպումը. | Դտ - Վարկերի հնարավոր կորուստների ծածկման ընդհանուր պահուստ 10 միավոր<br>Կտ - Վարկ 10 միավոր |
| | | | Դտ - Ծախս 10 միավոր<br>Կտ - Վարկերի հնարավոր կորուստների ծածկման ընդհանուր պահուստ 10 միավոր |
| | | | Դտ - Վարկերի հնարավոր կորուստների ծածկման ընդհանուր պահուստ 10 միավոր<br>Կտ - եկամուտ 10 միավոր |
| | | | Դտ - Եկումուտ 10 միավոր<br>Կտ - Վարկերի հնարավոր կորուստների ծածկման ընդհանուր պահուստ 10 միավոր: |
| | 72 | Վարկային կազմակերպության աշխատակիցներին տրված առհաշիվ գումարների օգտագործման վերաբերյալ հաշվետվություն ստանալիս «Առհաշիվ տրված գումարներ» հաշիվից գումարը դուրս է գրվում` | միայն ծախսերով, |
| | | | միայն ակտիվային հաշիվներով, |
| | | | միայն պասիվային հաշիվներով, |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ: |
| | 73 | Հիմնական միջոցների մաշվածության հաշվեգրումը ձևակերպվում է. | դտ- հիմնական միջոցների ամորտիզացիա<br>կտ- հիմնական միջոցներ, |
| | | | դտ- հիմնական միջոցների ամորտիզացիա<br>կտ- ամորտիզացիոն ծախսեր |
| | | | դտ- ամորտիզացիոն ծախսեր<br>կտ- հիմնական միջոցների ամորտիզացիա, |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ: |
| | 74 | Օտարվող հիմնական միջոցների կուտակված մաշվածության գումարները դուրսգրելիս ձևակերպվում է. | դտ- հիմնական միջոց<br>կտ- հիմնական միջոցների ամորտիզացիա, |
| | | | դտ- ամորտիզացիոն ծախսեր<br>կտ- հիմնական միջոց, |
| | | | դտ- հիմնական միջոցների ամորտիզացիա<br>կտ- ամորտիզացիոն ծախսեր, |
| | | | դտ- հիմնական միջոցների ամորտիզացիա<br>կտ- հիմնական միջոց: |
| | 75 | Օտարվող հիմնական միջոցների կուտակված արժեզրկման գումարները դուրս գրելիս ձևակերպվում է. | դտ - հիմնական միջոցների արժեզրկում<br>կտ - հիմնական միջոց, |
| | | | դտ - արժեզրկման գծով ծախս<br>կտ - հիմնական միջոցների արժեզրկում, |
| | | | դտ - հիմնական միջոցների արժեզրկում<br>կտ - արժեզրկման գծով ծախս |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ: |
| | 76 | Համաձայն «Վարձակալություն» ՀՀՄՍ 17-ի, վարձակալությունը համարվում է ֆինանսական, եթե | վարձակալության հետ կապված ռիսկերը մնում են վարձատուի մոտ |
| | | | վարձակալին են անցնում ակտիվի սեփականության հետ կապված գրեթե բոլոր ռիսկերն ու օգուտները |
| | | | հիմնական միջոցի ամորտիզացիա չի իրականացվում |

| | | | |
|---|---|---|---|
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 77 | Համաձայն «Վարձակալություն» ՀՀՄՍ 17-ի, նշված ո՞ր իրավիճակների դեպքերն են սովորաբար հանգեցնում վարձակալության դասակարգմանը` որպես ֆինանսականի. | վարձակալված ակտիվի սեփականության իրավունքը վարձակալության ժամկետի վերջում փոխանցվում է վարձակալին |
| | | | վարձակալության ժամկետի մեջ է ներառվում ակտիվի օգտակար ծառայության մեծ մասը, եթե նույնիսկ սեփականության իրավունքը չի փոխանցվում |
| | | | վարձակալված ակտիվների յուրահատուկ բնույթի պատճառով միայն վարձակալն է ի վիճակի օգտագործելու դրանք առանց էական ձևափոխությունների |
| | | | բոլոր պատասխանները ճիշտ են |
| | 78 | Համաձայն ՀՀՄՍ 18 «Հասույթ» ստանդարտի, հասույթը պետք է չափվի` | ստացված կամ ստացվելիք հատուցման անվանական արժեքով, |
| | | | ստացված կամ ստացվելիք հատուցման իրական արժեքով, |
| | | | տրված կամ տրվելիք հատուցման անվանական արժեքով, |
| | | | տրված կամ տրվելիք հատուցման սկզբնական արժեքով: |
| | 79 | ՀՀ ԿԲ հաշվարկային փոխարժեքի նվազման դեպքում արտարժույթով ակտիվների վերագնահատումը ձևակերպվում է. | Դտ- համապատասխան արտարժույթով ակտիվի հաշիվ<br>Կտ- արտարժույթի վերագնահատումից եկամուտներ |
| | | | Դտ- համապատասխան արտարժույթով ակտիվի հաշիվ<br>Կտ- արտարժույթի վերագնահատման պահուստ |
| | | | Դտ- արտարժույթի վերագնահատումից կորուստներ<br>Կտ- համապատասխան արտարժույթով ակտիվի հաշիվ |
| | | | Դտ- արտարժույթի վերագնահատման պահուստ<br>Կտ- համապատասխան արտարժույթով ակտիվի հաշիվ: |
| | 80 | ՀՀ ԿԲ հաշվարկային փոխարժեքի բարձրացման դեպքում արտարժույթով ակտիվների վերագնահատումը ձևակերպվում է. | Դտ- համապատասխան արտարժույթով ակտիվի հաշիվ<br>Կտ- արտարժույթի վերագնահատման պահուստ |
| | | | Դտ- համապատասխան  արտարժույթով ակտիվի հաշիվ<br>Կտ- արտարժույթի վերագնահատումից ստացված օգուտներ |
| | | | Դտ- արտարժույթի վերագնահատումից կորուստներ<br>Կտ-  համապատասխան արտարժույթով ակտիվի հաշիվ |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ: |
| | 81 | Համաձայն «Արտարժույթի փոխանակման փոխարժեքի փոփոխությունների հետևանքները» ՀՀՄՍ 21-ի, դրամային հոդվածներ են | առկա դրամական միջոցները |
| | | | դրամական միջոցներով ստացման և վճարման ենթակա ակտիվները |
| | | | դրամական միջոցներով ստացման և վճարման ենթակա պարտավորությունները |
| | | | բոլոր պատասխանները ճիշտ են |
| | 82 | Համաձայն «Փոխառության ծախսումներ» ՀՀՄՍ 23-ի, փոխառության ծախսումները. | փոխառու միջոցների ստացման հետ կապված` բացառապես տոկոսների վճարման ծախումներն են, որոնք կատարում է կազմակերպությունը |
| | | | տոկոսների վճարման և այլ ծախսումներն են, որոնք կազմակերպությունը կատարում է` կապված փոխառու միջոցների ստացման հետ |
| | | | կազմակերպության բոլոր գործառնական ծախսերն են` կապված փոխառության տրամադրման և/կամ ստացման հետ |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |

| | | | |
|---|---|---|---|
| | 83 | Համաձայն «Փոխառության ծախսումներ» ՀՀՄՍ 23-ի, փոխառության ծախսումները կարող են ներառել.<br>ա) ֆինանսական վարձակալությանը վերաբերող ֆինանսական վճարները (տոկոսները)՝ ճանաչված համաձայն «Վարձակալություն» ՀՀՄՍ 17-ի<br>բ) փոխառության տրամադրման հետ կապված բոլոր տոկոսային վճարները<br>գ) արտարժույթի փոխանակման փոխարժեքային տարբերությունները, որոնք առաջանում են արտարժույթով փոխառություններից, այն պայմանով, որ դրանք դիտվում են որպես տոկոսների վճարման ծախսումների ճշգրտում<br>դ) փոխառության ներգրավման և/կամ տրամադրման հետ կապված բոլոր գործառնական ծախսումները | միայն «ա» և «բ» |
| | | | միայն «ա» և «գ» |
| | | | միայն «բ» և «դ» |
| | | | միայն «ա», «բ» և «դ» |
| | 84 | Համաձայն ՀՀՄՍ 27-ի «Համախմբված և առանձին ֆինանսական հաշվետվություններ», համախմբված ֆինանսական հաշվետվությունները դրանք | խմբի՝ որպես մեկ կազմակերպության կողմից ներկայացվող ֆինանսական հաշվետվություններն են |
| | | | փոքրամասնության բաժնեմասի սեփականատերերի համաձայնությամբ խմբի՝ որպես մեկ կազմակերպության կողմից ներկայացվող ֆինանսական հաշվետվություններն են |
| | | | այն ֆինանսական հաշվետվություններ են, որոնք արտացոլում են մայր կազմակերպության ֆինանսական վիճակի վերաբերյալ ամբողջական տեղեկատվությունը, անկախ խմբի կազմում գտնվող առանձին իրավաբանական անձանց գործունեության ոլորտի իրավական սահմանափակումների |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 85 | Նշված պնդումներից ո՞րն է ճիշտ. Համաձայն ՀՀՄՍ 27-ի «Համախմբված և առանձին ֆինանսական հաշվետվություններ».<br>ա) Մայր կազմակերպությունը մեկ կամ ավելի դուստր կազմակերպություն ունեցող կազմակերպություն է բ) Խումբը մայր կազմակերպությունը և իր բոլոր դուստր կազմակերպություններն են<br>գ)համախմբված ֆինանսական հաշվետվությունները խմբի՝ որպես մեկ կազմակերպության կողմից ներկայացվող ֆինանսական հաշվետվություններն են, | բոլոր պատասխանները ճիշտ են |
| | | | միայն «ա» և «բ» տարբերակները |
| | | | միայն «ա» և «գ» տարբերակները |
| | | | միայն «բ» և «գ» տարբերակները |
| | 86 | Համաձայն ՀՀՄՍ 28 «Ասոցիացված կազմակերպություններում ներդրումների հաշվառում» ստանդարտի, ասոցիացված կազմակերպությունը այնպիսի կազմակերպություն է | որում ներդրողն ունի ձայնի իրավունք տվող բաժնետոմսեր, բայց որը չի հանդիսանում ներդրողի ոչ դուստր ընկերությունը, ոչ էլ համատեղ կազմակերպությունը |
| | | | որտեղ ներդրողն ունի նշանակալի ազդեցություն, և որը չի հանդիսանում ներդրողի ոչ դուստրը, ոչ էլ համատեղ կազմակերպությունը |
| | | | որի ֆինանսական և գործառնական քաղաքականությունը կառավարվում է ներդրողի կողմից |
| | | | որտեղ սահմանված է համատեղ պայմանագրային կարգավորում |
| | 87 | Համաձայն ՀՀՄՍ 28 «Ասոցիացված կազմակերպություններում ներդրումների հաշվառում» ստանդարտի, ասոցիացված կազմակերպությունը այնպիսի կազմակերպություն է | որում ներդրողն ունի ձայնի իրավունք տվող բաժնետոմսեր |
| | | | որում ներդրողն ունի տվյալ կազմակերպության ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի 50%-ից ավելին |
| | | | որում ներդրողն ունի տվյալ կազմակերպության ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի 75%-ից ավելին |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |

| | | | |
|---|---|---|---|
| | 88 | Համաձայն «Պահուստներ, պայմանական պարտավորություններ և պայմանական ակտիվներ» ՀՀՄՍ 37-ի. Պահուստը պետք է ճանաչվի, երբ<br>ա) կազմակերպությունն ունի ներկա պարտականություն (իրավական կամ կառուցողական)՝ որպես անցյալ դեպքերի արդյունք<br>բ) պարտականության գումարը հնարավոր է արժանահավատորեն գնահատել<br>գ)հավանական է, որ այդ պարտականությունը մարելու համար կպահանջվի տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսք | միայն ա) և բ) տարբերակները |
| | | | միայն ա) և գ) տարբերակները |
| | | | միայն բ) և գ) տարբերակները |
| | | | բոլոր տարբերակները ճիշտ են |
| | 89 | Համաձայն «Պահուստներ, պայմանական պարտավորություններ և պայմանական ակտիվներ» ՀՀՄՍ 37-ի. Պահուստը պետք է ճանաչվի, երբ՝ | կազմակերպությունն ունի ներկա պարտականություն (իրավական կամ կառուցողական)՝ որպես անցյալ դեպքերի արդյունք |
| | | | պարտականության գումարը հնարավոր է արժանահավատորեն գնահատել |
| | | | հավանական է, որ այդ պարտականությունը մարելու համար կպահանջվի տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսք |
| | | | բոլոր պատասխանները ճիշտ են |
| | 90 | Համաձայն ՀՀՄՍ 32-ի «Ֆինանսական գործիքներ. ներկայացումը»՝ ֆինանսական ակտիվ | վարձակալված ակտիվները |
| | | | ապրանքների ձեռք բերման համար վճարված կանխավճարները |
| | | | ծառայությունների համար վճարված կանխավճարները |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 91 | Ընտրեք ամբողջական ճիշտ պատասխանը. Համաձայն «Ֆինանսական գործիքներ. ներկայացումը» ՀՀՄՍ 32-ի ֆինանսական ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են<br>ա) երբ առկա է հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք,<br>բ) երբ կազմակերպությունը մտադիր է հաշվարկն իրականացնել զուտ հիմունքով,<br>գ) երբ կազմակերպությունը մտադիր է ակտիվն իրացնել և պարտավորությունը մարել միաժամանակ,<br>դ) երբ դրանք միևնույն անձի գծով են | «ա», «բ» և «գ» |
| | | | «ա», «բ», «գ» և «դ» |
| | | | «ա» և «բ» |
| | | | «բ» և «դ» |
| | 92 | Համաձայն ՀՀՄՍ «Միջանկյալ ֆինանսական հաշվետվություններ» 34-ի՝ միջանկյալ ժամանակաշրջան է. | ֆինանսական հաշվետու ժամանակաշրջանը |
| | | | լրիվ ֆինանսական տարուց կարճատև ֆինանսական հաշվետու ժամանակաշրջանը |
| | | | ֆինանսական հաշվետու ժամանակաշրջանից երկարատև ժամանակաշրջանը |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 93 | Համաձայն ՀՀՄՍ «Ակտիվների արժեզրկում» 36-ի ակտիվի փոխհատուցվող գումարը | ակտիվի վաճառքի զուտ գնից և օգտագործման արժեքից նվազագույնն է |
| | | | ակտիվի վաճառքի զուտ գնից և օգտագործման արժեքից առավելագույնն է |
| | | | ակտիվի վաճառքի զուտ գինն է |
| | | | ակտիվի վաճառքի զուտ գնից և հաշվեկշռային արժեքից նվազագույնն է |
| | 94 | Համաձայն ՀՀՄՍ «Ակտիվների արժեզրկում» 36-ի՝ ակտիվի վաճառքի զուտ գինը | այն գումարն է, որը կարելի է ստանալ ակտիվի վաճառքից իրազեկ և պատրաստակամ կողմերի միջև «պարզած ձեռքի հեռավորության» գործարքում |

| | | | |
|---|---|---|---|
| | | | այն գումարն է, որը կարելի է ստանալ ակտիվի վաճառքից իրազեկ և պատրաստակամ կողմերի միջև «պարզած ձեռքի հեռավորության» գործարքում՝ հանած օտարման ծախսումները |
| | | | այն գումարն է, որով ակտիվի հաշվեկշռային արժեքը գերազանցում է նրա փոխհատուցվող գումարը |
| | | | այն գումարն է որով ակտիվի փոխհատուցվող գումարը գերազանցում է նրա հաշվեկշռային արժեքը |
| | 95 | Համաձայն ՀՀՄՍ «Ակտիվների արժեզրկում» 36-րդ ստանդարտի՝ արժեզրկումից կորուստ | այն գումարն է, որով ակտիվի հաշվեկշռային արժեքը գերազանցում է նրա փոխհատուցվող գումարը |
| | | | այն գումարն է որով ակտիվի փոխհատուցվող գումարը գերազանցում է նրա հաշվեկշռային արժեքը |
| | | | դրամական միջոցների գնահատված ապագա հոսքերի ներկա (զեղչված) արժեքն է |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 96 | Համաձայն «Ակտիվների արժեզրկում» ՀՀՄՍ 36-ի՝ արժեզրկման հակադարձման արդյունքում ակտիվի հաշվեկշռային արժեքը չպետք է՝ | փոքր լինի հաշվեկշռային արժեքից, որը որոշված կլիներ (առանց համապատասխան մաշվածության կամ ամորտիզացիայի), եթե այդ ակտիվի  գծով նախորդ տարիներին արժեզրկումից կորուստ ճանաչված չլիներ |
| | | | գերազանցի հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլիներ (առանց համապատասխան մաշվածության կամ ամորտիզացիայի), եթե այդ ակտիվի  գծով նախորդ տարիներին արժեզրկումից կորուստ ճանաչված չլիներ |
| | | | փոքր լինի վաճառքի զուտ գնից և օգտագործման արժեքից նվազագույնից |
| | | | գերազանցի վաճառքի զուտ գնից և օգտագործման արժեքից նվազագույնը |
| | 97 | Վարկային կազմակերպությունը տրամադրել է  երաշխիք: Համաձայն  «Պահուստներ, պայմանական պարտավորություններ և պայմանական ակտիվներ» ՀՀՄՍ 37-ի, վարկային կազմակերպությունը | չպետք է ճանաչի պահուստ, քանի որ չկա իրավական պարտականություն, |
| | | | չպետք է ճանաչի պահուստ, քանի որ չկա պարտավորեցնող դեպք, հետևաբար չկա նաև պարտականություն, |
| | | | պետք է ճանաչի պահուստ, եթե անցյալ փորձը ցույց է տալիս, որ տրամադրված երաշխիքների գծով ներկայացվելու են պահանջներ և դրա հետևանքով տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսքը հնարավոր է արժանահավատորեն որոշել, |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ: |
| | 98 | Համաձայն «Պահուստներ, պայմանական պարտավորություններ և պայմանական ակտիվներ» ՀՀՄՍ 37-ի՝ ստեղծված պահուստը պետք է օգտագործվի | Ցանկացած տեսակի ծախսերի համար |
| | | | Միայն այն ծախսերի դիմաց,որի համար այն ստեղծվել է |
| | | | Միայն դատական ծախսերի համար |
| | | | Միայն ֆինանսական ծախսերի համար |
| | 99 | Թվականին օրենսդրությամբ պահանջ է դրվել, տվյալ տիպի հիմնական միջոցները յուրաքանչյուր 4 տարին մեկ անգամ վերանորոգել: Համաձայն  «Պահուստներ, պայմանական պարտավորություններ և պայմանական ակտիվներ» ՀՀՄՍ 37-ի, վարկային կազմակերպությունը պետք է | պահուստ ճանաչի, եթե հնարավոր է արժանահավատորեն որոշել այդ պարտականության համար պահանջվող տնտեսական օգուտներ մամնավորող միջոցների արտահոսքը |
| | | | պահուստ չճանաչի, քանի որ չնայած իրավական պարտականության առկայությանը, վերանորոգում կատարելու պարտականություն գոյություն չունի |
| | | | ճանաչի պայմանական պարտականություն կատարվելիք ծախսերի չափով՝ հիմք ընդունելով նախկին փորձը |
| | | | պահուստ ճանաչի, եթե ակնհայտ է հիմնական միջոցների վերանորոգման անհրաժեշտությունը: |

| | | | |
|---|---|---|---|
| | 100 | Համաձայն ՀՀՄՍ «Ոչ նյութական ակտիվներ» 38-ի նկարագրված հիմնական մոտեցման համաձայն` ոչ նյութական ակտիվը պետք է սկզբնական ճանաչումից հետո հաշվառվի. | սկզբնական արժեքով` հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստ |
| | | | իրական արժեքով |
| | | | ամորտիզացված արժեքով |
| | | | ներկա զեղչված արժեքով |
| | 101 | Համաձայն «Ֆինանսական գործիքներ. ճանաչումը և չափումը» ՀՀՄՍ 39-ի` սկզբնական ճանաչումից հետո իրական արժեքով չեն հաշվառվում նշվածներից` | Ածանցյալ գործիքները |
| | | | Վաճառքի համար մատչելի արժեթղթերը |
| | | | Մինչև մարման ճամկետ պահվող արժեթղթերը |
| | | | Ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 102 | Համաձայն «Ֆինանսական գործիքներ. ճանաչումը և չափումը» ՀՀՄՍ 39-ի` սկզբնական ճանաչումից հետո իրական արժեքով են հաշվառվում նշվածներից` | մինչև մարման ժամկետը պահվող արժեթղթերը |
| | | | բաժնային գործիքների մեջ ներդրումները, որոնք գործող շուկայում չունեն գնանշված շուկայական գին |
| | | | Ճիշտ պատասխանը նշված չէ |
| | | | Դեբիտորական պարտքերը, բացառությամբ նրանց, որոնք տրամադրվել են կարճ ժամկետում վաճառելու մտադրությամբ |
| | 103 | Համաձայն «Ֆինանսական գործիքներ. ճանաչումը և չափումը» ՀՀՄՍ 39-ի` մինչև մարման ժամկետը պահվող արժեթղթերի պետք է չափվեն ամորտիզացված արժեքով կիրառելով` | համամասնական մեթոդը |
| | | | արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը |
| | | | տարիների գումարի մեթոդը |
| | | | տարիների նվազման մեթոդը |
| | 104 | Համաձայն «ֆինանսական գործիքներ. ճանաչումը և չափումը» ՀՀՄՍ 39-ի ածանցյալ գործիք` ֆինանսական գործիք է.<br>ա) որի արժեքը փոփոխվում է հիմքում ընկած ֆինանսական գործիքի փոփոխություններին ի պատասխան<br>բ) որը չի պահանջում սկզբնական զուտ ներդրում կամ պահանջում է աննշան զուտ ներդրում<br>գ) որի գծով վերջնահաշվարկը կատարվում է ապագա որևէ ամսաթվին:<br>Նշեք ամբողջական պատասխանը | «գ» |
| | | | «դ» |
| | | | «ա», «բ», «գ» |
| | | | «ա» և «գ» |
| | 105 | Վարկային կազմակերպությունը ձեռք է բերել հիմնական միջոց, որի համար մատակարարին վճարել է 200 միավոր: Հիմնական միջոցը տեղակայելու համար վարկային կազմակերպությունը կատարել է որոշակի ծախսեր` 50 միավորի չափով: Այդ դեպքում վարկային կազմակերպությունն իր հաշվապահական  գրքերում կճանաչի. | հիմնական միջոցը` 250 միավորով |
| | | | հիմնական միջոցը` 200 միավորով և հաշվետու ժամանակաշրջանի ծախս` 50 միավորով |
| | | | հիմնական միջոցը` 150 միավորով |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ: |
| | 106 | Վարկային կազմակերպությունը 01.01.2001թ. ձեռք է բերել շենք 10000 միավորով: Մնացորդային արժեքը գնահատվել է 0 միավոր: 2002թ ընթացքում վարկային կազմակերպությունը շենքի վրա կատարել է ներքին հարդարման աշխատանքներ, որի համար ծախսվել է 1000 միավոր: 2004թ իրականացրել է վերանորոգման աշխատանքներ, որի համար ծախսվել է 3000 միավոր, ինչի արդյունքում շենքի սկզբանապես գնահատված օգտակար ծառայության ժամկետը 10-ից դարձել է 20 տարի: Շենքի մաշվածության հաշվարկը կատարվում է գծային մեթոդով: 2004թ.-ից սկսած շենքի տարեկան մաշվածության գումարը այլ հավասար պայմաններում | կավելանա, |
| | | | կփոքրանա, |
| | | | չի փոփոխվի, |
| | | | սկզբում կավելանա, հետո կփոքրանա: |

| | | | |
|---|---|---|---|
| | 107 | Համաձայն «Ֆինանսական գործիքներ. ճանաչումը և չափումը» ՀՀՄՍ 39-ի՝ եթե կազմակերպություններից որևէ մեկի դիրքը ցույց է տալիս, որ փոխանցողը պահպանել է փոխանցված ակտիվի նկատմամբ վերահսկողությունը , ապա | փոխանցողը պետք է շարունակի ճանաչել ակտիվը |
| | | | փոխանցողը պետք է դուրս գրի ակտիվն իր հաշվեկշռից, եթե ակտիվը ստացողն այն արդեն ճանաչել է իր հաշվեկշռում |
| | | | փոխանցողը պետք է դուրս գրի ակտիվն իր հաշվեկշռից, եթե ակտիվը փոխանցողը պարտավոր է հետ գնել փոխանցված ակտիվը |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 108 | Համաձայն «Ֆինանսական գործիքներ. ճանաչումը և չափումը» ՀՀՄՍ 39-ի՝ հետևյալ պնդումներից որն է սխալ | Ածանցյալ գործիքների գծով վերջնահաշվարկը կատարվում է ապագա որևէ ամսաթվի |
| | | | Ածանցյալ գործիքների իրական արժեքը փոփոխվում է ի պատասխան «հիմքում ընկած փոփոխականի» փոփոխության |
| | | | Ածանցյալ գործիքը չի պահանջում սկզբնական զուտ ներդրում, կամ պահանջում է աննշան սկզբնական զուտ ներդրում պայմանագրերի այլ տեսակների համեմատ, որոնք շուկայական պայմանների փոփոխություններին հակազդում են համանման ձևով, |
| | | | Ֆինանսական գործիքը, որի գծով վերջնահաշվարկը կատարվում է ներկա ամսաթվին |
| | 109 | Համաձայն «Ֆինանսական գործիքներ. ճանաչումը և չափումը» ՀՀՄՍ 39-ի՝ հետևյալ պնդումներից որն է ճիշտ | Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների գծով արժեզրկում չի ճանաչվում |
| | | | արժեզրկում ճանաչելիս սեփական կապիտալում ճանաչված կորուստը փոխանցվում է շահույթ/վնասին՝ չնայած ակիվը չի ապաճանաչվում |
| | | | արժեզրկում ճանաչելիս սեփական կապիտալում ճանաչված կորուստը փոխանցվում է շահույթ/վնասին՝ երբ ակիվը ապաճանաչվում է |
| | | | Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների գծով արժեզրկում ճանաչելիս սեփական կապիտալում ճանաչված կորուստը շարունակվում է հաշվառվել սեփական կապիտալում՝ վերլուծական հաշվով |
| | 110 | Համաձայն «ֆինանսական գործիքներ. ճանաչումը և չափումը» ՀՀՄՍ 39-ի՝ գործարքի հետ կապված ծախսումները չեն ներառում | գործարքի հետ կապված հարկերը և տուրքերը |
| | | | բրոքերին և դիլերներին վճարված վճարները |
| | | | արժեթղթերի բորսաների կողմից գանձվող վճարներ |
| | | | պարտքային գործիքների գծով հավելավճարները կամ զեղչեր |
| | 111 | Համաձայն «ֆինանսական գործիքներ. ճանաչումը և չափումը» ՀՀՄՍ 39-ի՝ եթե պահանջվում է, որ ֆինանսական ակտիվը հաշվառվի իրական արժեքով, որը սակայն զրոյից | այն հաշվառվում է հաշվապահական հաշվեկշռում զրո հաշվեկշռային արժեքով |
| | | | այն հաշվառվում է հետհաշվեկշռում զրո արժեքով |
| | | | այն հաշառվում է որպես ֆինանսական պարտավորություն |
| | | | այն չի հաշվառվում կազմակերպության կողմից |
| | 112 | Համաձայն «ֆինանսական գործիքներ. ճանաչումը և չափումը» ՀՀՄՍ 39-ի՝ կազմակերպության կողմից տրամադրված փոխառությունները հաշվառվում են | բացառապես սկզբնական արժեքով |
| | | | բացառապես ամորտիզացված արժեքով |
| | | | ամորտիզացված արժեքով, եթե պահվում են առևտրական նպատակներով |
| | | | ամորտիզացված արժեքով, եթե չեն պահվում առևտրական նպատակներով |

| | | | |
|---|---|---|---|
| | 113 | 18. Համաձայն «ֆինանսական գործիքներ. ճանաչումը և չափումը» ՀՀՄՍ 39-ի` որպես մինչև մարման ժամկետը պահվող ներդրում չեն դասակարգվում.<br>ա)փոփոխական տոկոսադրույքով պարտքային արժեթղթեր<br>բ) բաժնային արժեթղթերը<br>գ) ժամկետից շուտ մարման իրավունքով ֆինանսական ակտիվը, եթե տիրապետողը չի իրագործելու այդ իրավունքը | «ա» և «բ» |
| | | | «բ» |
| | | | «ա» և «գ» |
| | | | «գ» |
| | 114 | Համաձայն «Վարձակալություն» ՀՀՄՍ 17-ի, վարձակալությունը` դա | պայմանավորվածություն է, որով վարձատուն վճարի կամ վճարների շարքի դիմաց համաձայնեցված ժամկետով վաճառում է ակտիվը վարձակալին |
| | | | պայմանավորվածություն է, որով վարձատուն համաձայնեցված ժամկետով անհատույց վարձակալին է փոխանցում ակտիվի օգտագործման իրավունքը |
| | | | պայմանավորվածություն է, որով վարձատուն վճարի կամ վճարների շարքի դիմաց համաձայնեցված ժամկետով վարձակալին է փոխանցում ակտիվի օգտագործման իրավունքը |
| | | | շարքի դիմաց համաձայնեցված ժամկետով վարձակալին է փոխանցում ակտիվի օգտագործման, տնօրինման և տիրապետման իրավունքը |
| | | | դասակարգվում է որպես մինչև մարման ժամկետը պահվող, եթե կազմակերպությունը մտադրված է և հնարավորություն ունի դրանք պահել մինչև դրա մարման ժամկետը և դրանք կազմակերպության կողմից տրամադրված փոխառություններ ու դեբիտորական պարտքեր չեն |
| | | | բացառապես դասակարգվում են որպես կազմակերպության կողմից տրամադրված փոխառություններ և դեբիտորական պարտքեր |
| | 204 | Համաձայն «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի, կազմակերպության ղեկավարը պատասխանատու է. | հաշվապահական հաշվառման փաստաթղթերի պահպանումը կազմակերպելու համար, |
| | | | հաշվապահական հաշվառման վարման համար, |

| | | | |
|---|---|---|---|
| | | | հաշվապահական հաշվառման գրանցամատյանները ժամանակին և ամբողջական կազմելու համար, |
| | | | ֆինանսական հաշվետվությունների օրինակելի ձևեր սահմանելու համար: |
| | 205 | Վարկային կազմակերպություններում հաշվապահական հաշվառման կարգավորումն իրականացնում է | ՀՀ կենտրոնական բանկը, |
| | | | ՀՀ ֆինանսների նախարարությունը, |
| | | | ՀՀ կենտրոնական բանկը` ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության հետ համատեղ, |
| | | | ՀՀ կենտրոնական բանկը` ՀՀ աուդիտորների և հաշվապահների ասոցիացիայի հետ համատեղ: |
| | 206 | Համաձայն «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի, կազմակերպության գործադիր մարմնի ղեկավարը պատասխանատվություն է կրում. | հաշվապահական հաշվառում վարելու, ֆինանսական հաշվետվությունները ժամանակին կազմելու և ներկայացնելու համար |
| | | | հաշվապահական հաշվառումը կարգավորող իրավական ակտերի պահանջներին համապատասխան հաշվապահական հաշվառում կազմակերպելու համար, |
| | | | միայն հաշվապահական հաշվառումը վարելու, ֆինանսական հաշվետվությունները ժամանակին կազմելու և ներկայացնելու |
| | | | կազմակերպության գլխավոր հաշվապահի որակավորման քննությունների ծրագրի հաստատման համար: |
| | 207 | Համաձայն «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի, առանձին տնտեսական գործառնությունների իրականացման հետ կապված, կազմակերպության ղեկավարի և գլխավոր հաշվապահի միջև տարաձայնությունների դեպքում գլխավոր հաշվապահը. | պարտավոր է ենթարկվել կազմակերպության ղեկավարին և կրել համապատասխան պատասխանատվություն այդ գործառնությունների իրականացման հետևանքների համար, |
| | | | ղեկավարի գրավոր կարգադրությամբ և պատասխանատվություն է կրում նման գործառնությունների իրականացման հետևանքների համար, |
| | | | կատարման է ընդունում փաստաթղթերը կազմակերպության ղեկավարի գրավոր կարգադրությամբ և նման գործառնությունների իրականացման հետևանքների համար պատասխանատվություն է կրում կազմակերպության ղեկավարը, |
| | | | չպետք է իրականացնի տնտեսական այնպիսի գործառնություններ, որոնց հետ կապված առկա են տարաձայնություններ կազմակերպության ղեկավարի հետ: |
| | 208 | Համաձայն «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի, ֆինանսական հաշվետվությունները ստորագրվում են կազմակերպության` | գլխավոր հաշվապահի կողմից, |
| | | | հաշվապահական հաշվառման վարման համար պատասխանատու հաշվապահական ծառայության ղեկավարի կողմից, |
| | | | կազմակերպության գործադիր մարմնի ղեկավարի և գլխավոր հաշվապահի կողմից, |
| | | | հաշվապահական հաշվառումը կարգավորող պետական մարմնի կողմից: |
| | 209 | Համաձայն «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի, ակտիվների և պարտավորությունների գույքագրման նպատակն է հաշվապահական հաշվառման և հաշվետվությունների | էականության ապահովումը, |
| | | | արժանահավատության ապահովումը, |
| | | | տեղին լինելն ապահովելը, |
| | | | բոլոր պատասխանները ճիշտ են: |
| | 210 | Համաձայն «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի, ոչ պարտադիր գույքագրման դեպքերում գույքագրման օբյեկտների կազմը, անցկացման կարգը և ժամկետները սահմանվում է. | կազմակերպության գլխավոր հաշվապահի կողմից, |
| | | | կազմակերպության ղեկավարի կողմից, |
| | | | նյութապես պատասխանատու ցանկացած անձի կողմից, |

| | | | |
|---|---|---|---|
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ; |
| | 211 | Համաձայն «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի, պարտադիր գույքագրումների դեպքերում գույքագրման օբյեկտների կազմը, անցկացման կարգը և ժամկետները սահմանվում է. | կազմակերպության գլխավոր հաշվապահի կողմից, |
| | | | կազմակերպության ղեկավարի կողմից, |
| | | | նյութապես պատասխանատու անձի կողմից |
| | | | ՀՀ կառավարության կողմից |
| | 212 | Համաձայն «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի, ֆինանսական հաշվետվությունները չեն ստորագրվում. | կազմակերպության ղեկավարի կողմից, |
| | | | կազմակերպության ղեկավարի և գլխավոր հաշվապահի կողմից, |
| | | | կազմակերպության աուդիտն իրականացրած աուդիտորական խմբի ղեկավարի կողմից |
| | | | գլխավոր հաշվապահի կողմից, որը որակավորված է հաշվապահական հաշվառումը կարգավորող մարմնի կողմից: |
| | 213 | Համաձայն Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների, սեփական կապիտալը, դա կազմակերպության | ակտիվների և պասիվների տարբերությունն է, |
| | | | ակտիվներն են՝ պարտավորությունները հանելուց հետո, |
| | | | հիմնական կապիտալն է, |
| | | | ընդհանուր կապիտալի և լրացուցիչ կապիտալի տարբերությունն է: |
| | 214 | Համաձայն Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների, ֆինանսական հաշվետվությունների տարրերն են. | «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքը, հաշվապահական հաշվառման հաշվային պլանը, ՀՀՄՍ-ները և այլ |
| | | | ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը, դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը, սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը և կից ծանոթագրությունները |
| | | | ակտիվները, պարտավորությունները, սեփական կապիտալը, եկամուտներն ու ծախսերը, |
| | | | ակտիվները, պարտավորությունները, սեփական կապիտալը, եկամուտները, ծախսերը և հետհաշվեկշռային հոդվածները: |
| | 215 | Համաձայն «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի, միջանկյալ ֆինանսական հաշվետվությունները պետք է կազմվեն | բոլոր կազմակերպությունների կողմից պարտադիր հիմունքով, |
| | | | օրենքով սահմանված դեպքերում կամ կազմակերպությունների հայեցողությամբ, |
| | | | հաշվապահական հաշվառումը կարգավորող միջազգային ստանդարտներով նախատեսված դեպքերում, |
| | | | բացառապես կազմակերպության հայեցողությամբ: |
| | 216 | Հետևյալ գործառնություններից ո՞րը ակտիվային չէ՝ | վարկերի, փոխառությունների տրամադրումը, պարտքի կամ առևտրային գործարքների ֆինանսավորումը, ֆակտորինգը, |
| | | | փոխառությունների ներգրավումը, արժեղթերի թողարկումը, |
| | | | ֆինանսական վարձակալությամբ գույքի տրամադրումը, |
| | | | արժեթղթերում ներդրումներ կատարելը: |
| | 217 | Նշել սխալ պատասխանը.<br>Համաձայն «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի, հաշվապահական հաշվառումը վարվում է՝ | ՀՀ արժույթով՝ հայկական դրամով, |
| | | | կրկնակի գրանցման եղանակով՝ հաշվապահական հաշվառման հաշվային պլանին համապատասխան, |
| | | | անընդհատ՝ կազմակերպության պետական գրանցման պահից մինչև օրենսդրությամբ սահմանված կարգով նրա վերակազմավորումը կամ լուծարումը, |
| | | | վերահսկողական սկզբունքով՝ ԿԲ-ի վերահսկողական սկզբունքներին համաձայն: |

| | | | |
|---|---|---|---|
| | 218 | Համաձայն «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի՝ ակտիվների և պարտավորությունների գույքագրման անցկացումը պարտադիր չէ. | տարերային աղետների և այլ պատճառների հետևանքով առաջացած արտակարգ իրավիճակների դեպքում, |
| | | | տարեկան ֆինանսական հաշվետվությունները կազմելուց առաջ, |
| | | | նյութական պատասխանատու անձի փոփոխման դեպքում |
| | | | նշված բոլոր պատասխանները ճիշտ են |
| | 219 | Համաձայն «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի, բոլոր տնտեսական գործառնությունների արդյունքները հաշվապահական հաշիվներում. | պետք է  գրանցվեն ժամանակին, |
| | | | պարտադիր չէ գրանցվեն ժամանակին, եթե դրանք նշանակալից չեն |
| | | | պետք է գրանցվեն գործառնությունների իրականացման հաջորդ օրը, |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ: |
| | 220 | Համաձայն «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի՝ ակտիվների և պարտավորությունների գույքագրման անցկացումը պարտադիր չէ. | տարերային աղետների և այլ պատճառների հետևանքով առաջացած արտակարգ իրավիճակների դեպքում, |
| | | | տարեկան ֆինանսական հաշվետվությունները կազմելուց առաջ, |
| | | | նյութական պատասխանատու անձի փոփոխման դեպքում |
| | | | ՀՀ ԿԲ ներկայացվող հաշվետվությունները կազմելուց առաջ: |
| | 221 | Ֆինանսական հաշվետվությունների ամբողջական փաթեթը ներառում է՝ | ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը, սեփական կապիտալի փոփոխությունների մասին հաշվետվությունը, դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը և ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ հաշվապահական հաշվառման քաղաքականությունը, |
| | | | ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը, միջոցների ներգրավման և տեղաբաշխման մասին հաշվետվությունը, դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը և ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ հաշվապահական հաշվառման քաղաքականությունը, |
| | | | ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, վարկային ներդրումների մասին հաշվետվությունը, սեփական կապիտալի փոփոխությունների մասին հաշվետվությունը, դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը և ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ հաշվապահական հաշվառման քաղաքականությունը, |
| | | | ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը, կանոնադրական կապիտալի ձևավորման մասին հաշվետվությունը, դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը և ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ հաշվապահական հաշվառման քաղաքականությունը: |
| | 222 | Ստորև ներկայացված գործարքներից ո՞րն է պասիվային՝ | վարկի տրամադրում, |
| | | | ներդրում պետական արժեթղթերում, |
| | | | փոխառությունների ներգրավումը, |
| | | | հիմնական միջոցների ձեռքբերում: |
| | 223 | Ներքոնշված սահմանումներից ո՞րն է ճիշտ.<br>Վերլուծական (մանրամասնեցված) հաշվառման և սինթետիկ (ընդհանրացված) հաշիվների տվյալները | պետք է համապատասխանեն միմյանց, |
| | | | չպետք է գերազանցեն նորմատիվ ակտերով սահմանված սահմանաչափերը, |
| | | | կարող են չհամապատասխանել միմյանց, եթե նորմատիվ ակտերով այն թույլատրվում է, |
| | | | պետք է չգերազանցեն առաջին կարգի հաշիվների տվյալներին: |

| | | | |
|---|---|---|---|
| | 224 | Համաձայն «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի՝ նշված պնդումներից ո՞րն է ճիշտ. | Հաշվապահական հաշվառումը վարվում է ՀՀ արժույթով՝ հայկական դրամով |
| | | | Հաշվապահական հաշվառումը վարվում է կրկնակի գրանցման եղանակով՝ հաշվապահական հաշվառման հաշվային պլանին համապատասխան |
| | | | Անալիտիկ (վերլուծական) հաշվառման և սինթետիկ (ընդհանրացված) հաշիվների տվյալները պետք է |
| | | | նշված բոլոր պնդումներն էլ ճիշտ են |
| | 225 | հաշվետվությունների կազմման սկզբունք չէ ա) անընդհատությունը,<br>բ) հաշվեգրումը<br>գ) հաշվանցումը,<br>դ) էականությունը | «ա» |
| | | | «ա», «դ» |
| | | | «ա», «բ», «գ» և «դ» |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 226 | Համաձայն «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի՝ սկզբնական փաստաթղթի պարտադիր վավերապայման չէ | հերթական համարը |
| | | | գործառնության մասնակիցների (մասնակցի) անվանումը (անուն, ազգանուն) |
| | | | տնտեսական գործառնության մասնակիցների անձնագրի տվյալները |
| | | | տնտեսական գործառնության բովանդակությունը |
| | 227 | Համաձայն «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի՝ սխալների ուղղում թույլատրվում է | բոլոր սկզբնական փաստաթղթերում |
| | | | բոլոր սկզբնական փաստաթղթերում, բացի բանկային և դրամարկղային փաստաթղթերից |
| | | | բոլոր սկզբանական փաստաթղթերում, եթե առկա է գլխավոր հաշվապահի գրավոր համաձայնությունը |
| | | | բոլոր սկզբանական փաստաթղթերում, եթե առկա է գլխավոր հաշվապահի  և գործադիր տնօրենի գրավոր համաձայնությունը |
| | 228 | Համաձայն «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի՝ հաշվապահական հաշվառումը կարգավորող պետական մարմինն իր իրավասության սահմաններում | կարող է հաստատել ֆինանսական հաշվետվությունների օրինակելի ձևեր և դրանց լրացման ցուցումներ՝ հիմք ընդունելով ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտները և միջազգային ստանդարտների ուղեցույցները |
| | | | հաստատում է հաշվապահական հաշվառման հաշվային պլանները և դրանց կիրառման մասին հրահանգները |
| | | | հաստատում է արտադրական ծախսերի (ինքնարժեքի) հաշվառման վերաբերյալ մեթոդական ցուցումները, հրահանգները |
| | | | բոլոր պատասխանները ճիշտ են |
| | 229 | Նշել սխալ պատասխանը. Համաձայն «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի՝ հաշվապահական հաշվառումը կարգավորող մարմինն իր իրավասության սահմաններում | կարող է հաստատել ֆինանսական հաշվետվությունների օրինակելի ձևեր և դրանց լրացման ցուցումներ՝ հիմք ընդունելով ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտները և միջազգային ստանդարտների ուղեցույցները |
| | | | հաստատում է արտադրական ծախսերի (ինքնարժեքի) հաշվառման վերաբերյալ մեթոդական ցուցումները, հրահանգները |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | | | հաստատում է հաշվապահական հաշվառման հաշվային պլանները և դրանց կիրառման մասին հրահանգները |
| | 230 | Համաձայն Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների՝ «կազմակերպության կողմից վերահսկվող միջոց՝ որպես կատարված գործառնությունների արդյունք, որից ակնկալվում է ապագա տնտեսական օգուտների ներհոսք կազմակերպություն» սահմանումը համապատասխանում է | ակտիվներին |

| | | | |
|---|---|---|---|
| | | | պարտավորություններին |
| | | | եկամուտներին |
| | | | ծախսերին |
| | 231 | Համաձայն Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների՝ ֆինանսական հաշվետվությունների տարրերի ճանաչման համար անհրաժեշտ չափանիշ է համարվում<br>ա) հավանականությունը, որ հոդվածի հետ կապված ապագա տնտեսական օգուտները կներհոսեն կազմակերպություն կամ կարտահոսեն կազմակերպությունից<br>բ) տվյալ տարրի գծով գումարի վճարումը տեղի է ունեցել<br>գ) արժեքը, որը կարող է արժանահավատորեն չափվել | «ա» |
| | | | «ա», «գ» |
| | | | «ա», «բ» և «գ» |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 232 | Համաձայն Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների՝ ակտիվների համապատասխան նվազման կամ պարտավորությունների համապատասխան աճի գումարով են չափվում | եկամուտները |
| | | | ծախսերը |
| | | | սեփական կապիտալը |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 233 | Համաձայն Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների՝ ակտիվների համապատասխան աճի կամ պարտավորությունների համապատասխան նվազման գումարով են չափվում | եկամուտները |
| | | | ծախսերը |
| | | | սեփական կապիտալը |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 234 | Համաձայն «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի, կազմակերպության ղեկավարը իրավունք ունի հաշվապահական հաշվառումը վարել | կազմակերպության աշխատակից համարվող հաշվապահի միջոցով |
| | | | անձամբ |
| | | | հաշվապահական ծառայություններ մատուցող կազմակերպության միջոցով |
| | | | բոլոր պատասխանները ճիշտ են: |
| | 235 | Նշել սխալ պատասխանը<br>Համաձայն «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի, կազմակերպության ղեկավարը իրավունք ունի հաշվապահական հաշվառումը վարել | հաշվապահի որակավորում ունեցող ցանկացած անձի միջոցով |
| | | | անձամբ |
| | | | հաշվապահական ծառայություններ մատուցող կազմակերպության միջոցով |
| | | | կառուցվածքային ստորաբաժանում համարվող հաշվապահական ծառայության միջոցով |
| | 236 | Համաձայն «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի, կազմակերպության ղեկավարը պարտավոր է ապահովել. | հաշվապահական հաշվառում վարելը |
| | | | ֆինանսական հաշվետվություններ կազմելը |
| | | | ֆինանսական հաշվետվություններ ներկայացնելը |
| | | | բոլոր պատասխանները ճիշտ են |
| | 237 | Համաձայն ՀՀՄՍ 2 «Պաշարներ» ստանդարտի, պաշարների ինքնարժեքի մեջ չներառվող և դրանց կատարման ժամանակաշրջանում ծախս ճանաչվող ծախսումներից են | վաճառքի ծախսումները |
| | | | վարչական վերադիր ծախսումները |
| | | | պահպանման ծախսումները |
| | | | նշված բոլոր պատասխանները ճիշտ են |

| | | | |
|---|---|---|---|
| | 238 | Համաձայն ՀՀՄՍ 2 «Պաշարներ» ստանդարտի, իրական արժեքը | այն գումարն է, որով ակտիվը կարող է փոխանակվել կամ պարտավորությունը մարվել իրազեկ, պատրաստակամ կողմերի միջև |
| | | | սովորական գործունեության ընթացքում վաճառքի ենթադրվող գինն է |
| | | | սովորական գործունեության ընթացքում վաճառքի ենթադրվող գինն է՝ հանած համալրման ենթադրվող ծախսումները և վաճառքը կազմակերպելու համար անհրաժեշտ ծախսումները |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 239 | Համաձայն ՀՀՄՍ «Պաշարներ» 2-րդ ստանդարտի՝ իրացման զուտ արժեքը | սովորական գործունեության ընթացքում վաճառքի ենթադրվող գինն է՝ հանած համալրման ենթադրվող ծախսումները և արժեզրկման կորուստը |
| | | | սովորական գործունեության ընթացքում վաճառքի ենթադրվող գինն է՝ հանած համալրման ենթադրվող ծախսումները և վաճառքը կազմակերպելու համար անհրաժեշտ ենթադրվող ծախսումները |
| | | | սովորական գործունեության ընթացքում վաճառքի ենթադրվող գնի և արժեզրկման կորուստի տարբերությունն է |
| | | | այն գումարն է, որով պաշարի միավորը առևտրական գործարքի ընթացքում կարող է փոխանակվել իրազեկ և պատրաստակամ կողմերի միջև |
| | 240 | Համաձայն ՀՀՄՍ 2 «Պաշարներ» ստանդարտի պաշարների ինքնարժեքը պետք է ներառի. | ձեռք բերման ծախսումները |
| | | | արտադրանքի վերամշակման ծախսումները |
| | | | պաշարները ներկա գտնվելու վայր և վիճակի բերելու հետ կապված այլ ծախսումներ |
| | | | բոլոր պատասխանները ճիշտ են |
| | 241 | Համաձայն ՀՀՄՍ 2 «Պաշարներ» ստանդարտի, պաշարների ինքնարժեքը կարող է չփոխհատուցվել, եթե | դրանք փչացել են |
| | | | դրանց վաճառքի գինը նվազել է |
| | | | աճել են համալրման ենթադրվող ծախսումները, կամ այնպիսի ենթադրվող ծախսումները, որոնք պետք է կատարվեն վաճառ-քը կազմակերպելու համար |
| | | | նշված բոլոր պատասխանները ճիշտ են |
| | 242 | Համաձայն ՀՀՄՍ 2 «Պաշարներ» ստանդարտի, նշված պնդումներից ո՞րն է ճիշտ. | Պաշարները պետք է չափվեն ինքնարժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով |

| | | | |
|---|---|---|---|
| | | | իրացման զուտ արժեքը դա սովորական գործունեության ընթացքում վաճառքի ենթադրվող գինն է՝ հանած համալրման ենթադրվող ծախսումները և վաճառքը կազմակերպելու համար անհրաժեշտ ենթադրվող ծախսումները |
| | | | Իրական արժեքը այն գումարն է, որով ակտիվը կարող է փոխանակվել կամ պարտավորությունը մարվել իրազեկ, պատրաստակամ կողմերի միջև |
| | | | նշված բոլոր պատասխանները ճիշտ են |
| | 243 | Համաձայն ՀՀՄՍ «Պաշարներ» 2-րդ ստանդարտի՝ պաշարների ինքնարժեքի չափման բանաձևեր են.<br>(ա) «Առաջինը մուտք՝ առաջինը ելք»<br>(բ) «Վերջինը մուտք՝ առաջինը ելք»<br>(գ) «Միջին կշռված արժեք» | (ա) և (բ) |
| | | | (բ) և (գ) |
| | | | (ա) և (գ) |
| | | | (ա), (բ) և (գ) |
| | 244 | Համաձայն ՀՀՄՍ «Պաշարներ» 2-րդ ստանդարտի, երբ պաշարները վաճառվում են | դրանց հաշվեկշռային արժեքը պետք է ճանաչվի որպես ծախս այն ժամանակաշրջանում, երբ ճանաչվում է դրանց հետ կապված հասույթը |
| | | | դրանց գինը պետք է որոշվի ինքնարժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով |
| | | | դրանց հաշվեկշռային արժեքը պետք է ճանաչվի եկամուտ |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 245 | Համաձայն ՀՀՄՍ «Ֆինանսական գործիքներ. ներկայացումը» 32-րդ ստանդարտի՝ ֆինանսական ակտիվ են | վարձակալված ակտիվները |
| | | | ապրանքների ձեռքբերման համար վճարված կանխավճարները |
| | | | ծառայությունների համար վճարված կանխավճարները |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 246 | Համաձայն ՀՀՄՍ «Ֆինանսական գործիքներ. ներկայացումը» 32-րդ ստանդարտի՝ ֆինանսական ակտիվ չէ. | դրամական միջոցը |
| | | | մեկ այլ կազմակերպությունից դրամական միջոցներ ստանալու պայմանագրային իրավունքը |
| | | | մեկ այլ կազմակերպությանը դրամական միջոց կամ այլ ֆինանսական ակտիվ տրամադրելու պայմանագրային պարտականությունը |
| | | | այլ կազմակերպության բաժնային գործիքը |
| | 247 | Համաձայն ՀՀՄՍ «Ֆինանսական գործիքներ. ներկայացումը» 32-րդ ստանդարտի՝ ֆինանսական ակտիվ է | այլ կազմակերպության բաժնային գործիքը |
| | | | մեկ այլ կազմակերպությունից դրամական միջոցներ ստանալու պայմանագրային իրավունքը |

| | | | |
|---|---|---|---|
| | | | մեկ այլ կազմակերպության հետ պոտենցիալ նպաստավոր պայմաններով ֆինանսական գործիքների փոխանակման պայմանագրային իրավունքը |
| | | | բոլոր պատասխաններն էլ ճիշտ են |
| | 248 | Համաձայն ՀՀՄՍ 7 «Հաշվետվություն դրամական միջոցների հոսքերի մասին» ստանդարտի, աշխատակիցներին և նրանց անունից դրամական վճարումները դրամական միջոցների հոսքեր են, որոնք առաջանում են | գործառնական գործունեության արդյունքում |
| | | | ներդրումային գործունեության արդյունքում |
| | | | ֆինանսական գործունեության արդյունքում |
| | | | բոլոր պատասխանները սխալ են |
| | 249 | Համաձայն ՀՀՄՍ 7 «Հաշվետվություն դրամական միջոցների հոսքերի մասին» ստանդարտի, դիլերային և առևտրային պայմանագրերից դրամական միջոցների մուտքերը և վճարումները դրամական միջոցների հոսքեր են, որոնք առաջանում են | գործառնական գործունեության արդյունքում |
| | | | ներդրումային գործունեության արդյունքում |
| | | | ֆինանսական գործունեության արդյունքում |
| | | | բոլոր պատասխանները սխալ են |
| | 250 | Համաձայն ՀՀՄՍ 7 «Հաշվետվություն դրամական միջոցների հոսքերի մասին» ստանդարտի, գործառնական, ներդրումային և ֆինանսավորման գործունեություններից առաջացող հետևյալ դրամական միջոցների հոսքերի մասին տեղեկատվությունը կարող է ներկայացվել զուտ հիմունքով. | հաճախորդների անունից կատարվող դրամական վճարումները և մուտքերը, եթե այդ դրամական միջոցների հոսքերն արտահայտում են հաճախորդի, այլ ոչ թե կազմակերպության գործունեությունը |
| | | | այն հոդվածներով դրամական վճարումները և մուտքերը, որոնց շրջանառությունն արագ է, գումարները՝ մեծ |
| | | | այն հոդվածներով դրամական վճարումները և մուտքերը, որոնց մարման ժամկետները կարճ են |
| | | | նշված բոլոր պատասխանները ճիշտ են |
| | 251 | Համաձայն ՀՀՄՍ 7 «Հաշվետվություն դրամական միջոցների հոսքերի մասին» ստանդարտի, դրամական միջոցների համարժեքները | դրամարկղում առկա միջոցներն են |
| | | | կարճաժամկետ, բարձր իրացվելի ներդրումներն են, որոնք հեշտ փոխանակվում են դրամական միջոցների `նախապես հայտնի գումարներով, և որոնց արժեքի փոփոխման ռիսկը նշանակալի չէ |
| | | | դրամական միջոցների ներհոսքերն ու արտահոսքերն են |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 252 | Համաձայն ՀՀՄՍ 7 «Հաշվետվություն դրամական միջոցների հոսքերի մասին» ստանդարտի, դրամական միջոցների համարժեքները պահվում են | երկարաժամկետ դրամական պարտավորությունները |
| | | | կարճաժամկետ դրամական պարտավորությունները բավարարելու նպատակով |
| | | | ներդրման նպատակով |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 253 | Համաձայն «Ֆինանսական գործիքներ. ճանաչումը և չափումը» ՀՀՄՍ 39-ի՝ բոլոր ֆինանսական ակտիվները սկզբնական ճանաչումից հետո չափվում են՝ | Սկզբնական արժեքից և իրական արժեքից նվազագույնով |
| | | | Սկզբնական արժեքից և իրացման արժեքից առավելագույնով |

| | | | |
|---|---|---|---|
| | | | Իրական արժեքով |
| | | | Նշված բոլոր պատասխաններն սխալ են |
| | 254 | Համաձայն «Ֆինանսական գործիքներ. ճանաչումը և չափումը» ՀՀՄՍ 39-ի՝ սկզբնական ճանաչումից հետո իրական արժեքով չեն հաշվառվում նշվածներից՝ | Շահույթ կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող արժեթղթերը |
| | | | Վաճառքի համար մատչելի արժեթղթերը |
| | | | Մինչև մարման ճամկետ պահվող արժեթղթերը |
| | | | Ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 255 | Համաձայն «Ֆինանսական գործիքներ. ճանաչումը և չափումը» ՀՀՄՍ 39-ի՝ սկզբնական ճանաչումից հետո իրական արժեքով հաշվառվում են նշվածներից՝ | Դեբիտորական պարտքերը, բացառությամբ նրանց, որոնք տրամադրվել են կարճ ժամկետում վաճառելու մտադրությամբ |
| | | | Մինչև մարման ժամկետը պահվող արժեթղթերը |
| | | | Շահույթ կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող արժեթղթերը |
| | | | Ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 256 | Համաձայն «Ֆինանսական գործիքներ. ճանաչումը և չափումը» ՀՀՄՍ 39-ի՝ կազմակերպությունը ճանաչում է ֆինանսական ակտիվը իր ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում միայն | այն դեպքում, երբ ձեռք է բերում տվյալ ակտիվը սպասարկելու իրավունքը |
| | | | այն դեպքում, երբ կազմակերպությունը դառնում է գործիքի պայմանագրային կողմ |
| | | | ապագա գործառնությունները պլանավորելիս |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 257 | Համաձայն «Ֆինանսական գործիքներ. ճանաչումը և չափումը» ՀՀՄՍ 39-ի՝ եթե կազմակերպությունը ոչ փոխանցում է, ոչ էլ պահպանում է ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները և եթե կազմակերպությունը պահպանել է վերահսկողությունը այդ ակտիվի նկատմամբ, | պետք է շարունակի ճանաչել ֆինանսական ակտիվը |
| | | | պետք է դուրս գրի ակտիվն իր հաշվեկշռից, եթե ակտիվը ստացողն այն արդեն ճանաչել է իր հաշվեկշռում |
| | | | այն պետք է ապաճանաչի ֆինանսական ակտիվը և փոխանցման ընթացքում առաջացած կամ պահպանված որևէ իրավունք և պարտականություն ճանաչի առանձին որպես ակտիվներ կամ պարտավորություններ |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 258 | Համաձայն «Հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող դեպքեր» ՀՀՄՍ 10-ի՝ հաշվապահական հաշվեկշռի ամսաթվից հետո տեղի ունեցած ճշգրտող դեպքեր են. | կեղծիքների կամ սխալների հայտնաբերում, որոնք ցույց են տալիս, որ ֆինանսական հաշվետվությունները ճիշտ չեն |
| | | | հաշվետու ժամանակաշրջանից հետո շահույթի բաշխումների կամ պարգևավճարների գումարի որոշումը |

| | | | |
|---|---|---|---|
| | | | հաշվետու ամսաթվից հետո կայացված դատարանի վճիռը, որը հավաստում է, որ կազմակերպությունը հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ ուներ ներկա պարտականություն |
| | | | նշված բոլոր պատասխանները ճիշտ են |
| | 259 | Համաձայն «Հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող դեպքեր» ՀՀՄՍ 10-ի, չճշգրտող դեպքերի օրինակներ են . | հաշվետու ժամանակաշրջանից հետո սովորական բաժնետոմսերով խոշոր գործարքները |
| | | | հաշվետու ժամանակաշրջանից հետո հրդեհի պատճառով խոշոր արտադրական հզորությունների ոչնչացում |
| | | | ակտիվների դասակարգում որպես վաճառքի համար պահվող |
| | | | նշված բոլոր պատասխանները ճիշտ են |
| | 260 | Համաձայն «Հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող դեպքեր» ՀՀՄՍ 10-ի, կազմակերպությունը չպետք է պատրաստի իր ֆինանսական հաշվետվությունները անընդհատության հիմունքով, եթե ղեկավարությունը հաշվետու ժամանակաշրջանից հետո որոշում է, որ | առկա է կազմակերպությունը լուծարելու մտադրություն |
| | | | առկա է կազմակերպության գործունեությունը դադարեցնելու մտադրություն |
| | | | չկա դրանից խուսափելու իրատեսական այլընտրանք |
| | | | նշված բոլոր պատասխանները ճիշտ են |
| | 261 | Համաձայն ՀՀՄՍ 12 «Շահութահարկ» ստանդարտի, հարկի գծով ծախսը իրենից ներկայացնում է. | հարկվող շահույթի (հարկային վնասի) գծով վճարման (փոխհատուցման) ենթակա շահութահարկերի գումարն է |
| | | | ժամանակաշրջանի շահույթի կամ վնասի հաշվարկում ներառված համախառն գումարն է՝ ընթացիկ հարկի և հետաձգված հարկի գծով |
| | | | ապագա ժամանակաշրջաններում փոխհատուցման ենթակա շահութահարկերի գումարներն են |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 262 | Նշեք սխալ պատասխանը.<br>Համաձայն ՀՀՄՍ «Շահութահարկ» 12-րդ ստանդարտի՝ հետաձգված հարկային ակտիվն ապագա ժամանակաշրջաններում փոխհատուցման ենթակա շահութահարկի գումարներն են, կապված | նվազեցվող ժամանակավոր տարբերությունների հետ |
| | | | չօգտագործված հարկային վնասը հաջորդ ժամանակաշրջաններ տեղափոխելու հետ |
| | | | հարկվող ժամանակավոր տարբերությունների հետ |
| | | | չօգտագործված հարկային զեղչերը հաջորդ ժամանակաշրջաններ տեղափոխելու հետ |
| | 263 | Համաձայն «Շահութահարկ» ՀՀՄՍ 12-րդ ստանդարտի՝ հետաձգված հարկային պարտավորությունը ապագա ժամանակաշրջաններում վճարման ենթակա շահութահարկի գումարներն են, կապված | չօգտագործված հարկային վնասը հաջորդ ժամանակաշրջաններ տեղափոխելու հետ |
| | | | նվազեցվող (հանվող) ժամանակավոր տարբերությունների հետ |

| | | | |
|---|---|---|---|
| | | | չօգտագործված հարկային զեղչերը հաջորդ ժամանակաշրջաններ տեղափոխելու հետ |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 264 | Համաձայն «Շահութահարկ» ՀՀՄՍ 12-րդ ստանդարտի՝ հետաձգված հարկային ակտիվները ապագա ժամանակաշրջաններում փոխհատուցման ենթակա շահութահարկի գումարներն են, կապված | չօգտագործված հարկային վնասը հաջորդ ժամանակաշրջաններ տեղափոխելու հետ |
| | | | նվազեցվող (հանվող) ժամանակավոր տարբերությունների հետ |
| | | | չօգտագործված հարկային զեղչերը հաջորդ ժամանակաշրջաններ տեղափոխելու հետ |
| | | | նշված բոլոր պատասխանները ճիշտ են |
| | 265 | Համաձայն «Շահութահարկ» ՀՀՄՍ 12-րդ ստանդարտի՝ նշված պնդումներից ո՞րն է ճիշտ. | Հաշվապահական շահույթը ժամանակաշրջանի շահույթը կամ վնասն է՝ մինչև հարկի գծով ծախսը հանելը |
| | | | Ընթացիկ հարկը ժամանակաշրջանի հարկվող շահույթի (հարկային վնասի) գծով վճարման (փոխհատուցման) ենթակա շահութահարկերի գումարն է |
| | | | Հետաձգված հարկային պարտավորությունները ապագա ժամանակաշրջաններում վճարման ենթակա շահութահարկերի գումարներն են՝ կապված հարկվող ժամանակավոր տարբերությունների հետ |
| | | | նշված բոլոր պատասխանները ճիշտ են |
| | 266 | Համաձայն ՀՀՄՍ «Հիմնական միջոցներ» 16-րդ ստանդարտի՝ եթե ակտիվների հաշվեկշռային արժեքը վերագնահատման հետևանքով աճում է, ապա աճը պետք է ճանաչվի. | բացառապես համապարփակ ֆինանսական արդյունքներում |
| | | | շահույթում կամ վնասում |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | | | այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում և կուտակվի սեփական կապիտալի վերագնահատումից արժեքի աճի հոդվածում, եթե այդ աճը չի վերականգնում նախկին վերագնահատումների արդյունքում առաջացած նվազումը |
| | 267 | Համաձայն ՀՀՄՍ «Հիմնական միջոցներ» 16-րդ ստանդարտի՝ հիմնական միջոցի արժեզրկումից կորուստը | այն գումարն է, որով ակտիվի հաշվեկշռային արժեքը գերազանցում է փոխհատուցվող գումարը |
| | | | այն գումարն է, որով ակտիվը ճանաչվում և ներառվում է հաշվապահական հաշվեկշռում |
| | | | այն գումարն է, որով հիմնական միջոցն առևտրական գործարքի ընթացքում կարող է փոխանակվել իրազեկ և պատրաստակամ կողմերի միջև |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 268 | Համաձայն ՀՀՄՍ «Հիմնական միջոցներ» 16-րդ ստանդարտի, հիմնական միջոցների միավորի ինքնարժեքն ընդգրկում է. | գնման գինը, ներառյալ ներկրման տուրքերը և չփոխհատուցվող հարկերը՝ հանած առևտրային զեղչերը և արտոնությունները |

| | | | |
|---|---|---|---|
| | | | ակտիվը համապատասխան վայր հասցնելու և ղեկավարության նախանշած նպատակներով օգտագործման համար աշխատանքային վիճակի բերելու հետ ուղղակիորեն կապված ցանկացած ծախսում |
| | | | հիմնական միջոցների ապատեղակայման և քանդման, ինչպես նաև իր զբաղեցրած տեղանքի վերականգնման սկզբնապես գնահատված ծախսումների գումարը |
| | | | նշված բոլոր պատասխանները ճիշտ են |
| | 269 | Համաձայն «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի, նշված վավերապայմաններից (ռեկվիզիտներից) ո՞րի առկայությունը պարտադիր չէ սկզբնական  հաշվառման փաստաթղթերում | փաստաթղթի անվանումը |
| | | | ներքական համարը |
| | | | հարկ վճարողի հաշվառման համարը |
| | | | պատասխանատու անձանց պաշտոնները և նրանց ստորագրությունները |
| | 270 | Համաձայն «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի, նշված պնդումներից ո՞րն է սխալ. | Սկզբնական հաշվառման փաստաթղթերը կազմվում են գործառնության կատարման պահին, իսկ եթե դա հնարավոր չէ, ապա գործառնության ավարտից անմիջապես հետո |
| | | | Սկզբնական հաշվառման փաստաթղթերը արձանագրում են տնտեսական գործառնության կատարումը |
| | | | Սկզբնական հաշվառման փաստաթղթերը կազմվում են միայն գործառնության ավարտից անմիջապես հետո |
| | | | Սկզբնական հաշվառման փաստաթղթերում առկա տեղեկատվությունը հավաքվում և համակարգվում է հաշվապահական հաշվառման գրանցամատյաններում |
| | 271 | Համաձայն «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի, ակտիվների և պարտավորությունների գույքագրման նպատակն է | հաշվապահական հաշվառման և հաշվետվությունների էականության ապահովումը |
| | | | հաշվապահական հաշվառման և հաշվետվությունների տվյալների արժանահավատության ապահովումը |
| | | | հաշվապահական հաշվառման և հաշվետվությունների տեղին լինելու ապահովումը |
| | | | բոլոր պատասխանները ճիշտ են |
| | 272 | Համաձայն «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի, գույքագրման անցկացումը պարտադիր է. | տարեկան ֆինանսական հաշվետվությունները կազմելուց առաջ |
| | | | վարկային կազմակերպության վերակազմակերպման և լուծարման դեպքերում |
| | | | գույքի հափշտակման, փչացման և կորստի փաստերի բացահայտման դեպքերում |
| | | | նշված բոլոր պատասխանները ճիշտ են |
| | 273 | Համաձայն «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի՝ ոչ պարտադիր գույքագրման անցկացման ժամանակ գույքագրման օբյեկտների կազմը, անցկացման կարգը և ժամկետները սահմանվում է | գլխավոր հաշվապահի կողմից |

| | | | |
|---|---|---|---|
| | | | վարկային կազմակերպության գործադիր մարմնի ղեկավարի կողմից |
| | | | նյութապես պատասխանատու անձի կողմից |
| | | | ՀՀ կառավարության կողմից |
| | 274 | Համաձայն «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի՝ պարտադիր գույքագրման անցկացման ժամանակ գույքագրման օբյեկտների կազմը, անցկացման կարգը և ժամկետները սահմանվում է | գլխավոր հաշվապահի կողմից |
| | | | վարկային կազմակերպության գործադիր մարմնի ղեկավարի կողմից |
| | | | նյութապես պատասխանատու անձի կողմից |
| | | | ՀՀ կառավարության կողմից |
| | 275 | Համաձայն «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի՝ վարկային կազմակերպության գործադիր մարմնի ղեկավարը պատասխանատու է | հաշվապահական հաշվառման գրանցամատյանները ժամանակին և ամբողջական կազմելու համար |
| | | | ֆինանսական հաշվետվությունների օրինակելի ձևեր սահմանելու համար |
| | | | հաշվապահական հաշվառման փաստաթղթերի պահպանումը կազմակերպելու համար |
| | | | հաշվապահական հաշվառումը վարելու համար |
| | 276 | Համաձայն «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի, գույքագրման անցկացումը պարտադիր է. | տարերային աղետների, հրդեհների և այլ պատճառների հետևանքով առաջացած արտակարգ իրավիճակների դեպքերում |
| | | | վարկային կազմակերպության վերակազմակերպման և լուծարման դեպքերում |
| | | | գույքի հափշտակման, փչացման և կորստի փաստերի բացահայտման դեպքերում |
| | | | նշված բոլոր պատասխանները ճիշտ են |
| | 277 | Համաձայն «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի, վարկային կազմակերպության գործադիր մարմնի ղեկավարը պարտավոր է | սահմանել վարկային կազմակերպության հաշվապահական հաշվառման քաղաքականությունը |
| | | | ապահովել հաշվապահական հաշվառում վարելը |
| | | | ֆինանսական հաշվետվություններ կազմելն ու ներկայացնելը |
| | | | նշված բոլոր պատասխանները ճիշտ են |
| | 278 | Համաձայն «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի, հաշվապահական հաշվառման աշխատանքների ծավալից կախված՝ վարկային կազմակերպության գործադիր մարմնի ղեկավարն իրավունք ունի հաշվապահական հաշվառումը վարել | կառուցվածքային ստորաբաժանում համարվող հաշվապահական ծառայության միջոցով |
| | | | կազմակերպության աշխատակիցը համարվող հաշվապահի միջոցով |
| | | | հաշվապահական ծառայություններ մատուցող կազմակերպության կամ անհատ ձեռնարկատերերի միջոցով |
| | | | նշված բոլոր պատասխանները ճիշտ են |

| | | | |
|---|---|---|---|
| | 279 | Համաձայն «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի, վարկային կազմակերպության գործադիր մարմնի ղեկավարն իրավունք չունի հաշվապահական հաշվառումը վարել | անձամբ |
| | | | հաշվապահական ծառայություններ մատուցող կազմակերպության միջոցով |
| | | | հաշվապահական ծառայություններ մատուցող անհատ ձեռնարկատերերի միջոցով |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 280 | Համաձայն «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի, վարկային կազմակերպության գործադիր մարմնի ղեկավարը պատասխանատվություն է կրում. | հաշվապահական հաշվառում վարելու |
| | | | կրում հաշվապահական հաշվառումը կարգավորող իրավական ակտերի պահանջներին համապատասխան հաշվապահական հաշվառում կազմակերպելու համար |
| | | | ֆինանսական հաշվետվությունները ժամանակին կազմելու համար |
| | | | ֆինանսական հաշվետվությունները ներկայացնելու համար |
| | 281 | Համաձայն «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի, վարկային կազմակերպության գործադիր մարմնի ղեկավարը պատասխանատվություն է կրում. | հաշվապահական հաշվառում վարելու |
| | | | ֆինանսական հաշվետվությունները ժամանակին կազմելու համար |
| | | | ֆինանսական հաշվետվությունները ներկայացնելու համար |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 282 | Համաձայն «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի, վարկային կազմակերպության գլխավոր հաշվապահը պատասխանատու է. | հաշվապահական հաշվառում վարելու |
| | | | ֆինանսական հաշվետվությունները ժամանակին կազմելու համար |
| | | | ֆինանսական հաշվետվությունները ներկայացնելու համար |
| | | | նշված բոլոր պատասխանները ճիշտ են |
| | 283 | Համաձայն «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի, նշված պնդումներից ո՞րն է ճիշտ. | Գլխավոր հաշվապահի պահանջների կատարումը՝ կապված հաշվապահական հաշվառման համար անհրաժեշտ տվյալների ու փաստաթղթերի ներկայացման հետ, պարտադիր է վարկային կազմակերպության բոլոր աշխատողների համար |
| | | | Գլխավոր հաշվապահը պատասխանատու է հաշվապահական հաշվառում վարելու համար |
| | | | Գլխավոր հաշվապահը պատասխանատու է ֆինանսական հաշվետվությունները ժամանակին կազմելու և ներկայացնելու համար |
| | | | նշված բոլոր պնդումներն էլ ճիշտ են |

| | | | |
|---|---|---|---|
| | 284 | Համաձայն «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի՝ գլխավոր հաշվապահի պահանջների կատարումը՝ կապված հաշվապահական հաշվառման համար անհրաժեշտ տվյալների ու փաստաթղթերի ներկայացման հետ՝ | պարտադիր է կազմակերպության կառավարման մարմինների համար |
| | | | պարտադիր է կազմակերպության բոլոր աշխատողների համար |
| | | | պարտադիր է միայն  հաշվապահական հաշվառման ստորաբաժանման աշխատակիցների համար |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 285 | Համաձայն «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի, հաշվապահական հաշվառումը չի վարվում՝ | Հայաստանի Հարապետության արժույթով՝ հայկական դրամով |
| | | | կրկնակի գրանցման եղանակով՝ հաշվապահական հաշվառման հաշվային պլանին համապատասխան |
| | | | անընդհատ՝ կազմակերպության պետական գրանցման պահից մինչև օրենսդրությամբ սահմանված կարգով նրա վերակազմավորումը կամ լուծարումը |
| | | | Հայաստանի Հարապետության արժույթով՝ հայկական դրամով և 1-ին խմբի արտարժույթով |
| | 286 | Համաձայն «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի, հաշվապահական հաշվառումը վարվում է՝ | Հայաստանի Հարապետության արժույթով՝ հայկական դրամով |
| | | | կրկնակի գրանցման եղանակով՝ հաշվապահական հաշվառման հաշվային պլանին համապատասխան |
| | | | անընդհատ՝ կազմակերպության պետական գրանցման պահից մինչև օրենսդրությամբ սահմանված կարգով նրա վերակազմավորումը կամ լուծարումը |
| | | | նշված բոլոր պատասխանները ճիշտ են |
| | 287 | Համաձայն «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի, նշված պնդումներից ո՞րն է սխալ. | Վերլուծական (մանրամասնեցված) հաշվառման և սինթետիկ (ընդհանրացված) հաշիվների տվյալները պետք է համապատասխանեն միմյանց |
| | | | Բոլոր տնտեսական գործառնությունների արդյունքները պետք է հաշվապահական հաշվառման հաշիվներում գրանցվեն ժամանակին այնպես, որ դրանք արտացոլվեն այն ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվություններում, որին վերաբերում են |
| | | | Վերլուծական (մանրամասնեցված) հաշվառման և սինթետիկ (ընդհանրացված) հաշիվների տվյալները չեն կարող համապատասխանել միմյանց |
| | | | Հաշվապահական հաշվառման գրանցումները կատարվում են սկզբնական հաշվառման փաստաթղթերի հիման վրա, որոնք արձանագրում են տնտեսական գործառնության կատարումը |
| | 288 | Համաձայն «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի կազմակերպության կողմից ակտիվների և պարտավորությունների գույքագրումը  պարտադիր չէ | եռամսյակային  ֆինանսական հաշվետվությունները կազմելուց առաջ |

| | | | |
|---|---|---|---|
| | | | վարկային կազմակերպության վերակազմակերպման և լուծարման դեպքերում |
| | | | տարերային աղետների, հրդեհների և այլ պատճառների հետևանքով առաջացած արտակարգ իրավիճակների դեպքերում |
| | | | նյութական պատասխանատու անձի փոփոխման դեպքերում |
| | 289 | Նշել սխալ պատասխանը: Համաձայն «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի վարկային կազմակերպություններում հաշվապահական հաշվառումը վարվում է | հայաստանի արժույթով՝ հայկական դրամով |
| | | | կրկնակի գրանցման եղանակով՝ հաշվապահական հաշվառման հաշվային պլանին համապատասխան |
| | | | անընդհատ՝ կազմակերպության պետական գրանցման պահից մինչև օրենսդրությամբ սահմանված կարգով նրա վերակազմակերպումը կամ լուծարումը |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 290 | Համաձայն «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի, ներքոհիշյալ տարբերակներից ո՞րը հաշվապահական հաշվառման վարման կանոն չէ | կրկնակի գրանցման եղանակը |
| | | | վերլուծական հաշվառման և սինթեթիկ հաշիվների տվյալների  համապատասխանությունը |
| | | | չեզոքությունը |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 291 | Համաձայն «Հիմնական միջոցներ» ՀՀՄՍ 16-ի հիմնական միջոցների դասերի օրինակ են հանդիսանում. | հողամասերը և շենքերը |
| | | | ավտոմեքենաները |
| | | | գրասենյակային գույքը |
| | | | նշված բոլոր պատասխանները ճիշտ են |
| | 292 | Համաձայն «Հիմնական միջոցներ» ՀՀՄՍ 16-ի, եթե ակտիվները նախկինում դրական վերագնահատման չեն ենթարկվել, և հաշվետու ժամանակաշրջանում հաշվեկշռային արժեքը վերագնահատման հետևանքով նվազում է, ապա | նվազումը պետք է ճանաչվի շահույթում կամ վնասում |
| | | | նվազումը ուղղակիորեն պետք է ճանաչվի այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում և կուտակվի սեփական կապիտալի վերագնահատումից արժեքի աճի հոդվածում |
| | | | նվազումը վերականգնում է այլ ակտիվների նախկին վերագնահատումների արդյունքում առաջացած աճը |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 293 | Համաձայն ՀՀՄՍ «Հիմնական միջոցներ» 16-րդ ստանդարտի, նշված պնդումներից ո՞րն է ճիշտ. | ՀՀՄՍ «Հիմնական միջոցներ» 16-րդ ստանդարտը չի կիրառվում օգտակար հանածոների արդյունահանման և օգտագործման իրավունքների և օգտակար հանածոների պաշարների նկատմամբ |
| | | | Հաշվեկշռային արժեքը այն գումարն է, որով ակտիվը ճանաչվում է կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները հանելուց հետո |
| | | | Մաշվածությունը ակտիվի մաշվող գումարի պարբերական բաշխումն է դրա օգտակար ծառայության ընթացքում |

| | | | |
|---|---|---|---|
| | | | նշված բոլոր պնդումները ճիշտ են |
| | 294 | Համաձայն «Վարձակալություն» ՀՀՄՍ 17-ի, որ իրավիճակն է (իրավիճակներն են), որ կարող է (են) հանգեցնել վարձակալության դասակարգմանը որպես ֆինանսականի. | վարձակալված ակտիվի սեփականության իրավունքը վարձակալության ժամկետի ավարտին փոխանցվում է վարձակալին |
| | | | վարձակալության ժամկետի մեջ է ներառվում ակտիվի տնտեսական ծառայության մեծ մասը, եթե նույնիսկ սեփականության իրավունքը չի փոխանցվում |
| | | | վարձակալության սկզբում նվազագույն վարձավճարների ներկա արժեքը վարձակալված ակտիվի առնվազն ըստ էության իրական արժեքն է |
| | | | նշված բոլոր պատասխանները ճիշտ են |
| | 295 | Համաձայն «Արտարժույթի փոխանակման փոխարժեքի փոփոխությունների հետևանքները» ՀՀՄՍ 21-ի, ներկայացման արժույթը | այն հիմնական տնտեսական միջավայրի արժույթն է, որտեղ կազմակերպությունը իրականացնում է գործունեություն |
| | | | այն հիմնական տնտեսական միջավայրի արժույթն է, որտեղ կազմակերպությունը պատրաստվում է իրացնել իր կողմից արտադրված արտադրանքը |
| | | | մեկ արժույթի արտահայտումն է մեկ այլ արժույթով |
| | | | արժույթ է, որով ֆինանսական հաշվետվությունները ներկայացվում են |
| | 296 | Նշել սխալ պատասխանը:<br>Համաձայն «Արտարժույթի փոխանակման փոխարժեքի փոփոխությունների հետևանքները» ՀՀՄՍ 21-ի, | փոխարժեքային տարբերությունը առաջանում է մեկ արժույթով մեկ այլ արժույթի միևնույն քանակը տարբեր փոխանակման փոխարժեքներով վերահաշվարկելու արդյունքում |
| | | | փոխանակման փոխարժեքը երկու արժույթների փոխանակման հարաբերակցությունն է |
| | | | փոխարժեքային տարբերությունը առաջանում է մեկ արժույթով մեկ այլ արժույթի միևնույն քանակը փոխանակելու արդյունքում |
| | | | Արտարժույթը արժույթ է, որը տարբերվում է կազմակերպության ֆունկցիոնալ արժույթից |
| | 297 | Համաձայն «Արտարժույթի փոխանակման փոխարժեքի փոփոխությունների հետևանքները» ՀՀՄՍ 21-ի փոխարժեքային տարբերություն է առաջանում, երբ | դրամային հոդվածները առաջանում են արտարժույթով գործառնություններից, և առկա է գործառնության ամսաթվի և մարման ամսաթվի միջև փոխանակման փոխարժեքի փոփոխություն |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | | | դրամային հոդվածները առաջանում են դրամային գործառնություններից, և առկա է գործառնության ամսաթվի և մարման ամսաթվի միջև փոխանակման փոխարժեքի փոփոխություն |
| | | | դրամային հոդվածները փոխարինվում են արտարժութային հոդվածներով |